



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԹՈՒՐՔԻԱ - ԵՄ - ՀԱՅԱՍՏԱՆ.

ՄԱՐՏԱՀՐԱԿԵՐՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջմասնագիտական հետազոտություն

3. 56)
10-98
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԹՈՒՐՔԻԱ — ԵՄ — ՀԱՅԱՍՏԱՆ.

ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջմասնագիտական հետազոտություն

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2009



4456

Փորձագիտական խմբի ղեկավար և խմբագիր՝ Արթուր Ղազինյան, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Փորձագիտական խմբի համակարգող՝ Վլադիմիր Մարտիրոսյան, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի փոխտնօրեն, քաղաքական գիտությունների թեկնածու

Փորձագետներ՝

Նորա Սարգսյան	(իրավաբան փորձագետ)
Աննա Հակոբյան	(իրավաբան փորձագետ)
Արման Սարգսյան	(իրավաբան փորձագետ)
Գրիգոր Հայրապետյան	(տնտեսագետ փորձագետ)
Կարինե Գևորգյան	(տնտեսագետ փորձագետ)
Լիաննա Պետրոսյան	(քաղաքագետ փորձագետ)
Լիլիթ Հակոբյան	(քաղաքագետ փորձագետ)
Նարինե Գալստյան	(քաղաքագետ փորձագետ)

Տվյալ հետազոտական աշխատանքին մասնակցել են նաև Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի «Եվրոպական ուսումնասիրություններ» մագիստրոսական ծրագրի ուսանողները:

Թ 988 Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները: Միջմասնագիտ. հետազոտ.— Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 176 էջ:

Սույն միջմասնագիտական հետազոտությունը նվիրված է ԵՄ-ին Թուրքիայի հավանական անդամակցության գործընթացում առկա իմունսիտիվների, ինչպես նաև այդ համատեքստում Հայաստանի Հանրապետության հնարավորությունների և մարտահրավերների ուսումնասիրությանը: Այն նախատեսված է ՀՀ-ԵՄ, Թուրքիա-ԵՄ և ՀՀ-Թուրքիա հարաբերությունների միջև ներդրավիված պետական և ոչ պետական կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և պետական ծառայողների, ակադեմիական շրջանակների, ինչպես նաև նշված ոլորտում մասնագիտացած փորձագիտական և հետազոտական կառույցների համար:

ԳՄՆ 67.91

ISBN 978-5-8084-1158-6

© Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն, 2009
© ԵՊՀ հրատ., 2009

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն	5
Գլուխ 1	
ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ	8
<i>1/1 Թուրքիայի քաղաքական համակարգը</i>	<i>8</i>
<i>1/2 Քաղաքական կուսակցություններ</i>	<i>10</i>
<i>1/3 Քաղաքացիական հասարակությունը</i>	<i>15</i>
<i>1/4 Քաղաքական Իսլամ</i>	<i>20</i>
<i>1/5 Թուրքիայի տնտեսական համակարգի վերլուծությունը</i>	<i>23</i>
<i>1/6 Թուրքիայի տնտեսության սոցիալտնտեսական զարգացման առանձնահատկությունները</i>	<i>25</i>
<i>1/7 Թուրքիայի տնտեսության զարգացման ժամանակակից առանձնահատկությունները</i>	<i>26</i>
<i>1/8 Թուրքիայի տնտեսության ներկայիս վիճակը</i>	<i>28</i>
<i>1/9 Թուրքիայի իրավական համակարգի ընդհանուր բնութագիրը</i>	<i>34</i>
<i>1/10 Մարդու իրավունքների երաշխիքները Թուրքիայում</i>	<i>38</i>
<i>1/11 Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակը Թուրքիայում</i>	<i>44</i>
Գլուխ 2	
ԹՈՒՐԻՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈւԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	49
<i>2/1 Թուրքիայի արտաքին քաղաքականությունը</i>	<i>49</i>
<i>2/2 Թուրքիան և իր հարևանները</i>	<i>53</i>
<i>2/3 Թուրքիան և Արևմուտքը</i>	<i>56</i>
<i>2/4 Թուրքիա - ՆԱՏՕ</i>	<i>61</i>
<i>2/5 Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունները</i>	<i>66</i>
<i>2/6 Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունները</i>	<i>70</i>
Գլուխ 3	
ԹՈՒՐԻՔԻԱ - ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	77
<i>3/1 Թուրքիայի և ԵՄ միջև հարաբերությունների իրավական նախապայմանները մինչև անդամակցության գործընթացը. ընկերակցությունների և Թուրքիայի միջև փոխկապակցման համաձայնագիրը</i>	<i>79</i>

Ներածություն

Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության, ինչպես նաև ընդհանրապես ԵՄ-Թուրքիա հարաբերությունների խնդիրը վաղուց արդեն տարատեսակ քաղաքական և վերլուծական շրջանակների քննարկման հիմնական թեմաներից մեկն է, օրակարգային հիմնահարց ԵՄ-ի և նրա առանձին պետությունների արտաքին քաղաքականության հարթությունում: Թուրքիային մինչ այժմ մեծ մասամբ հաջողվել է արդյունավետորեն կառուցել իր արտաքին և անվտանգության քաղաքականությունը՝ օգտվելով իր աշխարհագրական առավելություններից, զրոքալ աշխարհաքաղաքական և տնտեսաքաղաքական տեղաշարժերից, և նա, համղես գալով որպես Կասպյան-Սևծովյան տարածաշրջանի ամենաազդեցիկ դերակատարներից մեկը, կարողացել է առավելագույն նպաստավոր պայմաններ ստեղծել իր արտաքին քաղաքական նպատակների իրագործման համար: Այդուհանդերձ, ԵՄ-ի և նրա առանձին երկրների հետ Թուրքիայի փոխհարաբերությունները գրեթե երբեք միօրինակ ու անփոփոխ չեն եղել: Ավելին, համաշխարհային կոնկրետ իրադրությամբ պայմանավորված, այդ հարաբերություններում նկատվել են մերք «ջերմացումներ», մերք «սառեցումներ»:

Ավելիառաջ է, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունն էսպես կփոխի ոչ միայն եվրոպական քաղաքական համայնապատկերը՝ իրենով պայմանավորելով ԵՄ-ի ներսում ուժային հավասարակշռության լուրջ տեղաշարժեր, այլ նաև ողջ Կասպյան-Սևծովյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական կառուցվածքը: Այդ իսկ պատճառով այս համատեքստում հատուկ ուշադրության է արժանի նաև ԵՄ-ին Թուրքիայի հնարավոր անդամակցության ազդեցությունը մասնավորապես հարավկովկասյան տարածաշրջանային զարգացումների վրա: Հիմնահարցն էլ՝ ավելի հրատապ է հատկապես Հայաստանի դիտանկյունից՝ հաշվի առնելով այդ երկու երկրների միջև բազմաթիվ չկարգավորված խնդիրների առկայությունը:

Հիմնախնդրի ուսումնասիրությունն անշուշտ ամբողջական և համակողմանի չէր լինի առանց միջգիտակարգային (միջդիսցիպլինար) մտտեցման՝ հիմնված քաղաքական, տնտեսական և իրավական բաղադրիչների վրա: Առաջ քաշված թեզերն ու դատողությունները դիտարկվում են նաև պատմական զարգացման և միջավայրային ընդգրկուն համատեքստում: Այդ իսկ պատճառով աշխատության մեջ ներկայացվել և խորքային վերլուծության են ենթարկվել այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնադրույթները, նրա քաղաքական, տնտեսական և իրավական համակարգերը, ինչպես նաև ԵՄ-ին անդամակցության գործընթացի շրջանակնե-

<i>3/2 ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բուն գործընթաց. անդամակցության չափանիշները և դրանց թավարարման ընթացքը</i>	87
<i>3/3 Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունները Եվրոպական միության հետ</i>	99
<i>3/4 Եվրոպական միությանն անդամակցելու ճանապարհին առկա քաղաքական և սոցիալտնտեսական խոչընդոտները</i>	108
<i>3/5 Առաջատար պետությունների դիրքորոշումը Թուրքիայի անդամակցության հարցում և հարաբերությունների զարգացման հեռանկարները</i>	110

Գլուխ 4

ՕԳՈՍՏՈՍԻ 8: ՆՈՐ ԱԵՆԱՐՀԱԿԱՐԳ,

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

<i>4/1 Հարավային Օսեթիայի ճգնաժամը և Թուրքիայի դիրքորոշումը այդ հիմնախնդրի վերաբերյալ. Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմ</i>	115
<i>4/2 Հայ-բուրբական հարաբերությունների զարգացման դինամիկան օգոստոսի 8-ից հետո</i>	119
<i>4/3 ՀՀ արտաքին առևտրի վերլուծությունը</i>	141
<i>4/4 ՀՀ արտաքին տնտեսական կապերը ԵՄ հետ</i>	144
<i>4/5 ՀՀ արտաքին տնտեսական կապերը Թուրքիայի հետ և դրա զարգացման հեռանկարները</i>	151
<i>4/6 «Նարուկո» գազատարի նախագիծը և դրա (հնարավոր) քաղաքական ազդեցությունը ԵՄ-Թուրքիա հարաբերությունների վրա</i>	161

Եզրակացություն

168

րուն եվրոպականացման ազդեցությունը դրանց վրա, Թուրքիայի քաղաքակրթական և աշխարհագրական առանձնահատկությունները: Որպես հանգուցային նշանակություն ունեցող հիմնահարց՝ ընտրվել է նաև ԵՄ-ի առաջատար անդամ-պետությունների պաշտոնական դիրքորոշումը և նրանց հասարակությունների վերաբերմունքը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում:

Թուրքիան յուրջ խնդիրներ ունի ԵՄ-ին անդամակցելու չափանիշների համապատասխանելու հարցում: Այնուհետ է, որ Թուրքիան եվրոպականացվում և ժողովրդավարացվում է ոչ թե ընդհանրապես, այլ այնքանով, որքանով դա բխում է ԵՄ-ի պահանջներից: Այդուհանդերձ, Թուրքիայի վերնախավն ու բնակչության մեծ մասը շարունակում են ակտիվորեն աջակցել ԵՄ-ին անդամակցության գործընթացին, սակայն աճում են նաև հակաեվրոպական տրամադրությունները: ԵՄ-ն իր հերթին նորմատիվ-իրավական բարեփոխումների հարցում արձանագրում է որոշակի առաջընթաց, սակայն դեռևս բաց են մնում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, քաղաքականությանն ուժային կառույցների մասնակցության բացառման, խոսքի և մամուլի ազատության սպառնվման, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և մի շարք այլ հարցեր:

Լուրջ խնդիրներ կան նաև արտաքին քաղաքականության ոլորտում՝ Կիպրոսի հակամարտությունը, Հյուսիսային Իրաքին վերաբերող տարածաշրջանային խնդիրը, Հայաստանի հետ սահմանի վերաբացումը: Հարկ է նշել, որ մասնավորապես վերջին հարցում 2008 թ. օգոստոսյան հայտնի իրադարձություններից անմիջապես հետո նկատվում են նշանակալի զարգացումներ, ընթացում են հետադրյալ գործընթացներ՝ պայմանավորված նաև Հարավային Կովկասում ստեղծված նոր իրավիճակում իր տեղն ու նշանակություն անույնացնելով՝ Թուրքիայի ձգտումներով: Դա նոր շեշտադրումներ է առաջացնում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության մտադրություններում և մասնավորապես պայմանավորված է «Նարուկո» գազատարի կառուցմանն աջակցելը ԵՄ-ին անդամակցելու խնդիրն կապակցելով:

Ուսումնասիրության առանձին ենթահարց են դարձել նաև տնտեսական ոլորտի բարեփոխումները, որոնք բավական ծավալուն են ու տպավորիչ: Այդուհանդերձ, այս հարցում ևս առկա են էական խոչընդոտներ, որոնք բոլր չեն տալիս խոսել մոտ ապագայում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության մասին: Այդպիսի խոչընդոտներ են առաջացնում մասնավորապես Թուրքիայի տարածքի խիստ անհամաչափ սոցիալ-տնտեսական զարգացմանը, տնտեսական օրենսդրության մի շարք անկատարություններ և այլն:

Անդամակցության աննպատակահարմարության հիմնավորումներից մեկն էլ պայմանավորված է Թուրքիայի մեծաթիվ և արագորեն աճող բնակչությամբ, որը անդամակցելուց հետո Թուրքիային իրավունք և հնարավորու-

յուն կտա ԵՄ-ի դեկավար մարմիններում ունենալ առավել շատ ձայներ: Մտախոհիչ է նաև մի այլ հեռանկար, որը հնարավոր է կանխատեսել ԵՄ-ին անդամակցելուց հետո: Խոսքը Թուրքիայից դեպի ԵՄ-ի առավել զարգացած երկրներ հսկայական միգրացիոն հոսքի մասին է:

Հանգուցային նշանակություն ունեն նաև ԵՄ-ի անդամ-պետությունների դիրքորոշումներն ու նրանց հասարակությունների վերաբերմունքը քննարկվող հարցի վերաբերյալ: Հատկանշական է, որ Թուրքիայի անդամակցության ակտիվ ջատագովները ԵՄ-ի այսպես կոչված «ամերիկյան ակումբի» անդամներն են՝ Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ, մինչդեռ «եվրոպեիստական» Զբոսնսփան և «եվրոատլանտիստ» Գերմանիան այնքան էլ ոգևորված չեն այդ հեռանկարով: ԵՄ-ի երկրների հասարակական կարծիքն առավել միանշանակ է այդ հարցում, և սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները հնարավոր է Թուրքիայի համար հուսադրող համարել:

Առկա է նաև փոխադարձ արձագանքը Թուրքիայի բնակիչների մեջ, որոնց շրջանում պրոեվրոպական հայացքները գնալով անկում են ապրում: Այդ միտումը կարելի է նկատել նաև ԵՄ-ի պահանջների կատարման ուղղությամբ բուրբական կառավարության նախաձեռնությունների տեմպի և հետևողականության մեջ: Փոխաբերելով մասնեղական աշխարհում, հատկապես Մերձավոր Արևելքում և թուրքալեզու պետությունների շրջանում աճում է Թուրքիայի դիրքերն ամրապնդելու կողմնակիցների թիվը:

Ահա խնդիրների այս ամբողջությունն էլ ընդհանուր առմամբ ենթարկվել է համակողմանի ուսումնասիրության, որի արդյունքները բոլր են տալիս եզրակացնելու, որ միշտ էլ կգտնվեն ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը կասեցնելու պատճառաբանություններ, անգամ ԵՄ-ի պաշտոնական պահանջների բավարարման պայմաններում: Սակայն մյուս կողմից ԵՄ-ը չի համաձայնի միանշանակ «վանել» Թուրքիային՝ այդ կերպ նպաստելով իր հարևանությամբ գտնվող աշխարհաքաղաքական հանգուցային նշանակություն ունեցող պետության ներսում իսլամիստական ուժերի ամրապնդմանը:

Նման հեռանկարը բնականաբար չի բխում նաև Թուրքիայի հարևան Հայաստանի շահերից, քանզի այդ դեպքում Հարավային Կովկասը կրկին կհայտնվի Թուրքիայի ակտիվ ազդեցության տակ, որն էլ ավելի կսրի տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների մրցակցությունը տարածաշրջանում առաջատար դիրքեր գրավելու համար:

Գլուխ 1

ԹՈՒՐԲԻԱՅԻ ԲԱՂԱԶԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

1/1 Թուրքիայի քաղաքական համակարգը

Թուրքիայի Հանրապետությունը ստեղծվել է Օսմանյան կայսրության փլուզումից հետո՝ 1923 թ, առաջին հանրապետության առաջնորդ Մուստաֆա Բենալ Աթաթուրքի (փաշայի) ջանքերով: Վերջինս անգլիացիների, ֆրանսիացիների և հույների զավթիչ զորքերի դեմ մղվող ազգային ազատագրական պատերազմում Օսմանյան կայսրության սպա էր: Աթաթուրքը Եվրոպայից փոխառեց օրենքներ, ընտրության իրավունք տվեց կանանց և հարկադրաբար աշխարհիկ վարչակարգ հաստատեց: 1938 թ-ին՝ Աթաթուրքի մահից հետո, նրա միակուսակցական վարչակարգը շարունակեց իր գոյությունը մինչև 1950 թ-ի առաջին բազմակուսակցական ընտրությունները: Դրանից հետո ժողովրդավարությունն սկսեց աստիճանաբար ընդլայնվել՝ չնայած 1960, 1971 և 1997 թթ. իշխանափոխության համար մղված զինված ապստամբություններին¹:

Թուրքիան աշխարհիկ հանրապետություն է, որտեղ պետական կրոնը իսլամն է, որի պահանջների չկատարման դեպքում հնարավոր է իշխանությունների միջամտություն: Թուրքիան տեսականորեն աշխարհիկ սահմանադրական հանրապետություն է, որն ունի բազմակուսակցական խորհրդարանական համակարգ և սահմանափակ լիազորություններով օժտված նախագահ, որն ընտրվել է 2007 թ հոկտեմբերի հանրաքվեին հաջորդած ուղղակի ընտրության միջոցով: Իշխանությունը բաժանված է 3 ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական: Այս բաժանումը հաստատված է սահմանադրությամբ, որն ընդունվել է 1982 թ համաժողովրդական հանրաքվեով: Այն նախատեսում է ազդեցիկ նախագահություն՝ միևնույն ժամանակ պահպանելով կառավարման խորհրդարանական ձևը: Սահմանադրությունը ճանաչում է իշխանության տարանջատումը և Խորհրդարանի գերիշխանությունը:

Օրենսդիր իշխանությունն իրականացնում է Թուրքիայի Գերագույն Ազգային ժողովը, որը տեղակայված է Անկարայում՝ Թուրքիայի մայրաքաղա-

քում: Ժողովը կազմված է 550 պատգամավորներից, որոնք հինգ տարի ժամկետով ընտրվում են համամասնական ներկայացուցչության կարգով և ընտրության՝ ընդհանուր չափահասության իրավունքով: Ընտրությունը կատարվում է համամասնական համակարգով, այսինքն՝ ընտրողներն ընտրում են քաղաքական կուսակցության թեկնածուների ցուցակից:

Թուրքիայի Գերագույն Ազգային ժողովը կատարում է բոլոր օրենսդիր գործառույթները և վերահսկում է Նախարարների խորհրդի աշխատանքը: Պատգամավորներն ունեն անձեռնմխելիության իրավունք, որից նրանց կալուղ է զրկել միայն Խորհրդարանը:

Գործադիր իշխանությունը համատեղ իրականացնում են Նախագահը և Կառավարությունը՝ Նախարարների խորհուրդը, որը գլխավորում է վարչապետը: Թուրքիայի Սահմանադրությունը, 2007-ի մայիսի 31-ի բարեփոխումներով հանդերձ, նախատեսում է, որ Նախագահն ընտրվում է Թուրքիայի Գերագույն Ազգային ժողովից հինգ տարի ժամկետով և առավելագույնը երկու անգամ ընտրվելու իրավունքով²: Նախագահը պետության, Ազգային անվտանգության խորհրդի գլուխն է և զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարը: Նախկին Սահմանադրության համաձայն՝ Նախագահն ընտրվում էր ժողովի նվազագույնը երկու երրորդի մեծամասնության կողմից՝ յոթ տարի ժամկետով:

Աբդուլլահ Գյուլը, լինելով Իսլամական կուսակցության նախկին անդամ, նախագահ է ընտրվել օգոստոսի 28-ին՝ Ազգային ժողովում քվեարկության երրորդ ցուցաբերումից հետո: Քվեարկության առաջին երկու ցուցաբերումներում նա չկարողացավ ձեռք բերել ձայների երկու երրորդ մեծամասնությունը, որը նրան ի վերջո հաջողվեց երրորդ ցուցաբերում: 1923 թ-ի աշխարհիկ թուրքական հանրապետության ստեղծումից սկսած՝ նա իսլամական հակում ունեցող առաջին քաղաքական գործիչն է, որը պետության գլուխ է դարձել³:

2002 թ-ից Թուրքիայի վարչապետն է Ռեսուլ Թայիփ Էրդողանը: Նախագահը Թուրքական Գերագույն Ազգային ժողովի անդամների կազմից նշանակում է Վարչապետին, որն իր հեղքին առաջադրում է նախարարներին, որոնց նշանակումը ենթակա է Ժողովի հավանությանը: Կառավարության ձևավորումից հետո այն Ազգային ժողովի հավանությանն է ներկայացնում իր ծրագիրը,

¹ Հակամարտության պատմություն: Թուրքիա, Միջազգային ճգնաժամային խմբի գեկույց. www.crisisgroup.org:

² Տե՛ս Թուրքիայի Սահմանադրությունը, Գլուխ 2, Գործադիր իշխանություն, Հոդված 101:

³ «Թուրքերն ընտրում են նախկին իսլամիստ նախագահ», BBC News, օգոստոսի 28, <http://news.bbc.co.uk/>

այնուհետև ստանձնում երկրի քաղաքական կյանքի համար պատասխանատվությունը⁴:

Չնայած այն հանգամանքին, որ Թուրքիան ինքն իրեն հռչակել է «ժողովրդավարական, աշխարհիկ և հասարակական պետություն, որտեղ գերիշխում է օրենքի գերակայությունը», այն գործող ժողովրդավարության լիարժեք երաշխիքներ չի ապահովում, և համաձայն Freedom House-ի գնահատման՝ Թուրքիան բնորոշվում է որպես մասամբ ժողովրդավարական պետություն⁵:

1/2 Քաղաքական կուսակցություններ

Ժամանակակից Թուրքիան վարում է բազմակուսակցական քաղաքականություն: Ներկայումս Թուրքիայում գոյություն ունեն 22 կուսակցություններ՝ Արդարության և բարգավաճման կուսակցությունը, Ժողովրդավարական կուսակցությունը, Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը, Ժողովրդահանրապետական կուսակցությունը, Ժողովրդավարական ձախերի կուսակցությունը, Բարեկեցության կուսակցությունը, Ազատության և համերաշխության կուսակցությունը, Գերագույն միության կուսակցությունը, Հայրենական կուսակցությունը, Անկախ Թուրքիայի կուսակցությունը, Լեյբորիստական կուսակցությունը, Լիբերալ ժողովրդավարական կուսակցությունը, Հայրենիքի կուսակցությունը, Ազգային կուսակցությունը, «Ազգայնական շարժում» կուսակցությունը, Ազգային վերելքի կուսակցությունը, Հանրապետական ժողովրդի կուսակցությունը, Մոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Մոցիալ-դեմոկրատական ժողովրդի կուսակցությունը, Կոմունիստ-ժողովրդավարական կուսակցությունը, Բանվորական կուսակցությունը, Երիտասարդական կուսակցությունը: Այս կուսակցություններից միայն երեքն են (Բարեկեցության, Անկախ Թուրքիայի և Գերագույն միության կուսակցությունները), որոնք բացահայտ իսլամական գաղափարներ են տարածում:

Իշխող կուսակցությունն է Արդարության և բարգավաճման կուսակցությունը, որը մեծ հեղինակություն է վայելում Խորհրդարանում: Այդ կուսակցությունների առաջնորդներ Արդուլա Գյուլն ու Էրդողանը, ինչպես նշվել է, համապատասխանաբար երկրի նախագահն ու վարչապետն են:

⁴ Օլիվեր Ռոյ, «Թուրքիան այսօր: Եվրոպական երկի յ», էջ 28:

⁵ Թուրքիայի Հանրապետություն, CSIS Files, No 6, սեպտեմբեր, 2007, էջ 6:

Ներկայիս Խորհրդարանում պատգամավորական տեղերի բովոլ գերակշռող հաջորդ կուսակցությունը Ժողովրդահանրապետական կուսակցությունն է: TNGA ձեռք բերած մյուս կուսակցություններից են՝ Ազգայնամուլ շարժման, Ժողովրդավարական հասարակության, Ժողովրդավարական ձախերի, Գերագույն միության և համերաշխության կուսակցությունները:

Կուսակցությունների դերն ու կշիռը հասկանալու համար պետք է ուսումնասիրել Թուրքիայի քաղաքական կուսակցությունների զարգացման պատմությունը: Թուրքիայի ժամանակակից քաղաքականությունը ձևավորվել է երեք պատմական քննադատական փորձերի հիման վրա, որոնք են Աթաթուրքի՝ աշխարհիկ հանրապետության զարգացման ծրագրի շարունակական ազդեցությունը, 1945 թ-ին ռազմական ժողովրդական վարչակարգի հաստատումը և այս վարչակարգի կործանումը ռազմական իշխանության երեք շրջանների արդյունքում 1960-1961, 1971-1973 և 1980-83 թթ⁶:

Բազմակուսակցական համակարգը հաստատվել է 1946 թ-ին Ժողովրդավարական կուսակցության ստեղծման հետևանքով, որը դարձավ Ժողովրդահանրապետական կուսակցության միակ ընդդիմադիրը: Վերջինս իշխող կուսակցություն էր Քեմալ Աթաթուրքի՝ 1923 թ-ի հանրապետության հռչակումից հետո և առաջ էր քաշել իր՝ որպես քեմալիզմի հայտնի գաղափարախոսության հիմնական սկզբունքները կամ այսպես կոչված «վեց նետեր»-ը՝ հանրապետական արժեքներ, համազգայնություն, պոպուլիզմ (համայնքավարություն), ստատիզմ (պետության կողմից վերահսկվող տնտեսական զարգացում), աշխարհիկություն և հեղաշրջում⁷: Երկրի անկախության հռչակումից ի վեր առաջին խորհրդարանական ընտրությունները Թուրքիայում անցկացվել են 1950 թ-ին, և դրանցում հաղթանակ տանելով՝ Ժողովրդավարական կուսակցությունը անցել է իշխանության գլուխ: ԻԿ անդամների՝ մամուլի ազատության և այլ քաղաքացիական ազատությունների սահմանափակումը, ի հակադրություն ժՀԿ-ի, որը նախապատվություն էր տալիս քաղաքացիական իրավունքների պաշտպանությանը, 1960 թ-ին հանգեցրեց ռազմական բախման և այդ կուսակցության կազմալուծմանը⁸:

Արդարության կուսակցությունը, որն ի հայտ եկավ 1961 թ-ին և հաղթեց ընտրություններում, համարվում էր ԺԿ-ի հետնորդ: Այն ինքն իրեն հռչակեց

⁶ «Ի՞նչ է կատարվում Թուրքիայում մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում» <http://www.org.wbdo/wbdoturkey.html>

⁷ Ընտրությունների վերաբերյալ ինտերնետային աղբյուրներ: Թուրքիայի Գերագույն Ազգային ժողովի ընտրությունները: <http://electronresources.org/tr/>

⁸ «Թուրքիայի Հանրապետություն», Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոն, CSIS Files, No 6, սեպտեմբեր, 2007, էջ 9

ԺՀԿ-ի հիմնական մրցակից: Հաջորդ տասնինը տարիների ընթացքում Արդարության կուսակցության և ԺՀԿ-ի միջև բշտամությունը շարունակեց մնալ բուրքական քաղաքականության կարևոր առանձնահատկություններից մեկը: Չնայած որ երկու կուսակցություններն էլ իրենց հավատարիմ էին հայտարարում Քեմալական գաղափարներին, այնուամենայնիվ Արդարության կուսակցությունը նախապատվություն էր տալիս տնտեսական քաղաքականությանը, որից օգտվում էին անհատ ձեռներեցներն ու արդյունաբերողները: Մինչդեռ ԺՀԿ-ն գերադասում էր ժողովրդավարական սոցիալիզմը, որը ներառում էր իշխանության միջամտություն, որի նպատակն էր մասնավոր բիզնեսի վերահսկումը և աշխատողների ու սպառողների պաշտպանությունը⁹: Բևեռացումը, որն էլ ավելի սրվեց 1972 թ-ից հետո, ինչպես նաև իշխանությունների՝ աճող տնտեսական և հասարակական խնդիրների դեմ պայքարելու անընդունակությունը խորացրին անապահովությունն ու ճգնաժամի ընդհանուր զգացումը և խթան եղան 1980 թ-ի հեղաշրջման համար:

Քաղաքական կուսակցությունների ազատության սահմանափակումը կարևորագույն խնդիրներից մեկն էր դարձել: Մինչ այդ սահմանափակումներն իրականացվում էին երկու եղանակով՝ ռազմական միջամտության միջոցով կազմալուծում և օրենսդրության հիման վրա լուծարում¹⁰: Պատմության ողջ ընթացքում բանակի դերը շատ մեծ էր, քանի որ այն համարվում էր աշխարհիկության հիմնական երաշխավորը: Օլիվեր Ռոյն իր «Թուրքիան այսօր: Եվրոպական երկի թ» գրքում պնդում է, որ «Թուրքական կառավարման համակարգը կարող է ճիշտ կերպով բնորոշվել որպես «անվտանգության վարչակարգ» հասկացություն, համաձայն որի՝ ազգային անվտանգությունն ու անվտանգության ինստիտուտները կարևորագույն դեր են խաղում վարչակարգի գործունեության մեջ¹¹»: Թուրքական բանակը միջամտել է քաղաքականությանը 1960, 1971, 1980 և 1997 թվականներին: Որոշ դեպքերում այն խոչընդոտել է քաղաքական առաջնորդների՝ իշխանական պաշտոններ ստանձնելուն և «ակնարկել, որ կարող է նույն բանն անել, եթե վտանգ է սպառնում աշխարհիկ ժողովրդավարությանը¹²»: Այնուամենայնիվ 2007 թ-ին, երբ պարզ դարձավ, որ

⁹ <http://www.country.data.com/cgi-bin/query.....>

¹⁰ «Մասնաճարակալ դատարանը և կուսակցությունների լուծարումը Թուրքիայում», Today's Zaman, մայիսի 13, 2008:

¹¹ Օլիվեր Ռոյ, «Թուրքիան այսօր: Եվրոպական երկի թ», էջ 27:

¹² Ալի Մևլիթ և Լեյլաք Նարվի, «Թուրքիա: Ժամանակակից և ապագա քաղաքական, տնտեսական և անվտանգության միտումներ», Կանադայի պաշտպանության և արտաքին գործերի ինստիտուտ, դեկտեմբեր, 2007, էջ 1:

Արդարության և բարգավաճման կուսակցությունը վայելում է Թուրքական ժողովրդի աջակցությունը, այդ իրավիճակը փոխվեց:

Մինչ այժմ քաղաքական կուսակցությունների լուծարման համար ամենագերակշիռ փաստարկը «Պետության տարածքի և բնակչության անբակտելի ամրոջականության» խախտումն է: Որոշ քաղաքական կուսակցություններ լուծարվել են ահաբեկչական կազմակերպություններին և քրդական տարածայնությանը օժանդակելու մեղադրանքով, դրանցից են Ազատության և ժողովրդավարության կուսակցությունը (ԱԺԿ, 1993), Լեյքոքիստական կուսակցությունը (ԼԿ, 1997), Կոմունիստական կուսակցությունը (ԿԿ, 1992), ինչպես նաև Ժողովրդավարական (ԺԿ, 1994), Ժողովրդավարություն և փոխակերպություն (ԺՓԿ, 1996), Կոմունիստական միության կուսակցությունները (ԿՄԿ, 1995): Այս առումով դրական զարգացում կարելի է համարել 2008 թ-ի սկզբում տարվող դատական գործը, երբ դատարանը մերժեց «Իրավունքներ և ազատություն» կուսակցության ծրագրի դեմ հարուցված բացահայտման գործի լսումը՝ նրանում առկա «Պետության և բնակչության անբակտելի ամրոջականության»-ը հակասող նախապայմանների պատճառով¹³:

Ներկայումս Թուրքիայի գլխավոր քաղաքական կուսակցությունները անցյալի հետ սերտ կապեր ունեն և նրանց նախկին քաղաքական ծրագրերին ակնհայտ նախապատվություն են տալիս¹⁴: Արդարության և բարգավաճման կուսակցության արմատների հարցը վիճարկելի է: Ամենատարծված և ընդունված կարծիքի համաձայն՝ Արդարության և բարգավաճման կուսակցության արմատները գնում են դեպի Ազգային փրկություն կուսակցության խորքը, որի նախկին առաջնորդ Էրբաքանը ձևավորեց իսլամական սկզբունքների վրա հիմնված մի նոր կուսակցություն՝ «Բարօրություն» կուսակցությունը՝ պահպանելով ոչ միայն արժեքները, այլ նաև իր օգնությունն առաջարկելով քրդական հարցին: Այդ իսկ պատճառով 1998 թվականին Ազգային անվտանգության խորհրդի կողմից այն կազմալուծվեց¹⁵: Ավելի ուշ իսլամիստական «Բարգավաճ» կուսակցության թևերից մեկը՝ Առաքինություն կուսակցությունը առանձնացավ և 2001 թվականին ձևավորվեց մեկ այլ կուսակցություն՝ Արդարության և զարգացման կուսակցությունը, որը ղեկավարում էր Ռեսուլ Թաիփ Էրդողանը: ԱԶԿ-ի առաջնորդները հաստատեցին, որ իրենք մեծամասնական կուսակցություն են և հավատարիմ են պահպանողական սկզբունքներին: Կուսակ-

¹³ «Մասնաճարակալ դատարանը և կուսակցությունների լուծարումը Թուրքիայում», Today's Zaman, 13 մայիսի, 2008թ.:

¹⁴ «Թուրքիայի Հանրապետություն», Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոն, CSIS Files No.6, 2007թ., էջ 10:

¹⁵ Նույն տեղում:

ցության գործունեությունից ի վեր կուսակցության առաջնորդները նշում էին, որ իրենք են 1950 թվականի Լիբերալ (պահպանողական) ժողովրդավարական կուսակցության և 1980-ականների «Հայրենիք» կուսակցության իրավահաջորդները, այլ ոչ թե իսլամիստական «Բարգավաճ» կուսակցությունը և նրա իրավահաջորդը՝ «Առաքինություն» կուսակցությունը¹⁶:

Չնայած արձատներին և իսլամի նկատմամբ իր հավատարմությանը՝ ԱԶԿ-ն ստեղծել է այնպիսի տպավորություն, որ աթեիզմի կողմնակից է, նպատակ ունի մտնելու ԵՄ և սատարում է Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցությանը: Գոյություն ունի այն տեսակետը, որ իսլամականները սովորել են քողարկել իրենց իրական ծրագրերը, քանի որ Թուրքական իրավական համակարգը խոչընդոտում է հակաաշխարհիկ քաղաքական կուսակցությունների մասնակցությանը ընտրական գործընթացներին¹⁷:

Փոքր կուսակցություններն ընտրություններում հաղթելու իրական շանսեր չունեն, քանի որ Թուրքիայում գործում է 10% շեմը հաղթահարելու չափանիշը: Եթե դրան գումարենք այն փաստը, որ փոքր կուսակցությունները իրենց ծրագրերը ընտրաընթացների ժամանակ ներկայացնելու համար բավարար ֆինանսական ռեսուրսներ չունեն, ապա միակ հնարավոր տարբերակը դաշինքներում ընդգրկվելը կամ էլ դաշինքներ կազմելն է¹⁸:

Քաղաքական կուսակցությունների հիմնական հատկանիշներից են կուսակցական պատկանելության փոփոխումները, որը մեկ անգամ ևս վկայում է գաղափարական թույլ հենքի առկայությունը: Այսօր էլ Արդարության և բարգավաճման կուսակցության շարքերում ընդգրկված են այլ կուսակցություններ լրամ զգալի թվով անդամներ¹⁹:

Այսպիսով՝ Թուրքիայի քաղաքական կուսակցությունների ամենահիմնական բերություններն են անկայունությունը, միավորված չլինելը, գաղափարական բևեռացումը և կուսակցական թույլ նույնացումը²⁰:

¹⁶ Ջ. Օզբան, «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը AKP կուսակցության կառավարման տարիներին. եթե միայն հաջողությունը մնա նրանց կողմը», TUSIAD, Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների ասոցիացիա:

¹⁷ Ալիյ Սելիք և Լեյլաք Նաբվի, «Թուրքիա: Ժամանակակից և ապագա քաղաքական, տնտեսական և անվտանգության միտումներ», Կանադայի պաշտպանության և արտաքին գործերի ինստիտուտ, դեկտեմբեր, 2007, էջ 1:

¹⁸ «Թուրքիայի Հանրապետություն», Ռազմավարական և միջազգային ուսումնասիրությունների կենտրոն, CSIS Files No.6, 2007թ., էջ. 11:

¹⁹ Օլիվեր Ռոյ, «Թուրքիան այսօր: Եվրոպական երկի ր», էջ 35:

²⁰ «Քաղաքական կուսակցություններ և ժողովրդավարություն», աշխատանքային փաստաթուղթ, նոյեմբեր, 18-19, 1996 թ. Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, www.ned.org/forum/reports/parties.html:

1/3 Քաղաքացիական հասարակությունը

1923թ. Թուրքիայի հանրապետության ստեղծումից ի վեր Թուրքիան զգալի առաջընթաց է արձանագրել ժողովրդավարության զարգացման հարցում, սակայն ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կատուցմանն ուղղված ջանքերը համոզիչում են մի շարք մարտահրավերների: Քաղաքացիական հասարակության սկզբունքային խնդիրներից մի քանիսը հիմնականում առնչվում են անկայուն ժողովրդավարացմանը, խիստ բյուրոկրատական կենտրոնացմանը, պետության կողմից քաղաքացիական իրավունքների և ազատությունների սահմանափակման ու պետական գաղափարախոսության հարատևության հարցերին²¹:

Թուրքիայում քաղաքացիական հասարակության կառուցման և մասնավորապես քաղաքացիական մասնակցության հարցերը մի շարք ներքին գործոնների ազդեցության հետևանք են: Դրանցից մեկը քաղաքական և քաղաքացիական հասարակությունները միջև առկա անջպետն է: Չնայած գործող հասարակական կազմակերպությունների, կամավորական տարրեր միավորումների և ասոցիացիաների մեծ թվին՝ պետության և քաղաքացիական հասարակության միջև շփումները սերտ չեն: ԱՄՆ Միջազգային հետազոտությունների ասոցիացիայի կատարած ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ Թուրքիային չի հաջողվել «կուտակել սոցիալական խոշոր կապիտալ, որը նրան թույլ կտար ստեղծել ակտիվորեն ներգրավված կազմակերպություններով և միավորումներով հարուստ քաղաքացիական հասարակությանն անհրաժեշտ այնպիսի պայմաններ, որոնք պարարտ հող կարող էին լինել շատերի համար քաղաքական գործընթացներին մասնակցելու հարցում²²»:

Թուրքիայի արդիականացման ծրագիրն իրականացվել է բռնապետական մեթոդներով՝ այդպիսով պետության և հասարակության միջև մեծ բաց առաջացնելով: Թեև Արդարության և բարգավաճման կուսակցությունը շարունակ կոչեր է անում այդ բացը լրացնելու, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ժողովրդավարական գործընթացներում ներգրավելու և Թուրքիան դեպի առավել մասնակցային ժողովրդավա-

²¹ Լ. Քարանան և Բ. Արաս, «Թուրքիայի քաղաքացիական հասարակության ճգնաժամը», Տնտեսական և սոցիալական հետազոտությունների ամսագիր, 2 (2), 2000 թ., էջ 58:

²² Է. Քալաչյոլու, «Պետությունը, քաղաքացիական հասարակությունը և քաղաքական մասնակցությունը Թուրքիայում», գեկույց ներկայացված Միջազգային հետազոտությունների ասոցիացիայի 48-րդ տարեկան համագումարում, ԱՄՆ, 2007 թ., փետրվարի 28:

րույնում մոելու մասին, սակայն կուսակցությանը դեռևս չի հաջողվել կատարել իր խտատումները²³:

Թուրքիայում քաղաքացիական հասարակության հասնելու ճանապարհին մեկ այլ խոշոր խոչընդոտ է հասարակական պատկանելության նկատվող պակասը: ԱՄՆ միջազգային հետազոտությունների ասոցիացիայի կատարած ուսումնասիրության մեջ նշվում է, որ կամավորական կազմակերպությունների ամենատարածված ձևերը մինչ այժմ կրոնական եղբայրությունները, համայնքները, ցանցերը կամ տարածքային համերաշխության միավորումներն են («հեմսֆերի»), որոնք հետագայում վերաճել են քաղաքական դաշինքների, իսկ դրանք էլ իրենց հերթին միավորվել են քաղաքական կազմակերպություններին, օրինակ՝ քաղաքական կուսակցություններին²⁴:

Այդուհանդերձ, ինչպես նշվում է նշյալ հետազոտության մեջ, Թուրքիայի ընտրողների թվի շատ փոքր մասն է անդամակցում որևէ կամավորական ասոցիացիայի, իսկ բնակչության մեծ մասը՝ 90%-ը, ուղղակի չի պատկանում որևէ կազմակերպության²⁵:

Ներքին գործերի նախարարության տվյալներով Թուրքիայում գրանցված են 780000 կազմակերպություններ: Այս թիվը, համեմատած երկրի ողջ բնակչության հետ, վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր 900 շնչին ընկնում է 1 ասոցիացիա: Ասոցիացիաներում ընդգրկված անդամների ընդհանուր թիվը, ներառյալ կրկնակի անդամակցությունը տարբեր կազմակերպությունների, կազմում է մոտավորապես 7.5 միլիոն: Սա նշանակում է, որ բնակչության միայն 10%-ն է կազմակերպությունների միջոցով ընդգրկված քաղաքացիական հասարակության հատվածում²⁶:

Հարկ է նշել, որ Թուրքիայում գործում են պատկանելի թվով պրոֆեսիոնալ խմբեր և միավորումներ, օրինակ՝ Առևտրի պալատների և ապրանքի փոխանակման թուրքական միությունը, Գյուղատնտեսական պալատների թուրքական միությունը, Թուրք առևտրականների և արհեստագործների կոնֆեդերացիան, Գործատուների միության թուրքական կոնֆեդերացիան, որոնք

²³ Ս. Հյուրթի, «Քաղաքացիական հասարակությունը և իսլամը Թուրքիայում», կոնֆերանսի գեկուցում, ԱՄՆ Կոլումբիայի համալսարան, 2006 թ., էջ 21:

²⁴ Է. Քալայչոյլու, «Պետությունը, քաղաքացիական հասարակությունը և քաղաքական մասնակցությունը Թուրքիայում», գեկույց ներկայացված Միջազգային հետազոտությունների ասոցիացիայի 48-րդ տարեկան համագումարում, ԱՄՆ, 2007 թ., փետրվարի 28:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Ուլվի Սարան, «Արդյո՞ք Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ճշգրիտ են արտահայտում հանրությունը», Today's Zaman օրաթերթ, 2008 թ., ապրիլի 10:

նույնպես ակտիվորեն մասնակցել են երկրի բարձրագույն ղեկավարության, ընդդիմադիր կուսակցությունների, արդարադատության հաստատությունների միջև կարևոր հարցերի լուծմանը և կարող են դիտվել որպես քաղաքացիական հասարակության կարևոր հատված: Սակայն, չնայած վերջիններիս բարձր ներկայացվածությանը (հասարակության 80%-ը), դրանք համարվում են կիսապաշտոնական կազմակերպություններ, որոնք քաղաքացիական հասարակություն չեն, քանի որ «ներանց հարաբերությունները իրենց շահառուների հետ և աշխատուժը, որ դրանք ներկայացնում են, սահմանափակվում են պրոֆեսիոնալ և նյութական բարիքների ու շահերի պաշտպանության մակարդակով» և չեն արտահայտում հասարակության բազմազանությունն ու չեն արձագանքում երկրի գլխավոր խնդիրներին:

Մեկ այլ կարևոր գործոն, որը խոչընդոտում է ժողովրդավարական գործընթացին, քաղաքացիական հասարակության և բանակի միջև եղած լարվածությունն է: Թուրքիայում գոյություն ունի հաստատուն կարծիք, որ բանակի իրականացրած գործողությունները քացասաբար են ազդել Թուրքիայի ժողովրդավարական կյանքի վրա²⁷:

Իսլամիստական շարժման աճը կանխելու նպատակով մի շարք միջոցների ձեռնարկումը և քաղաքական կուսակցությունների կասեցումը առավելություններ «տվեցին աշխարհիկ ռեժիմին ժողովրդավարական բազմակարծության նկատմամբ՝ անտեսելով իսլամիստական ինքնությունն ու նրա դերը սցիալ-տնտեսական կյանքում²⁸»: Այս փաստը միևնույն ժամանակ նպաստեց հասարակության բեռնացմանը՝ ստեղծելով հակադիր խմբեր՝ քեմալականներ, իսլամիստներ, քրդեր և այլք «որոնք հերքում են ընդհանուր մշակույթը և հրաժարվում են միմյանց հետ հարաբերվելուց²⁹»:

Նման իրավիճակի պատճառ է այն, որ կրոնական և ազգային բեմաներով զանկացած խոսակցությունները պետության կողմից ի սկզբանե ընկալվել են որպես ազգային անվտանգությանն ու աշխարհիկ կառավարությանը ուղղված վտանգ, և պետությունն այդպիսով ի վիճակի չի եղել զանազանել քրդերին և իսլամիստ ծայրահեղականներին այլ խմբերից, ինչպիսիք են, օրինակ, Քրդական աշխատավորական կուսակցությունը կամ Հեզրոլլախը: Իսկապես, թուրքական հասարակական կազմակերպությունների արդի պատկերը դասա-

²⁷ «Ի՞նչ է արվում Թուրքիայում մարդու իրավունքների և ժողովրդավարության ոլորտում» Ժողովրդավարության համաշխարհային շարժում կազմակերպության աշխատանքային փաստաթուղթ, www.wmd.org/wbdo/wbdostrkey.html:

²⁸ Ս. Հյուրթի, «Քաղաքացիական հասարակությունը և իսլամը Թուրքիայում», կոնֆերանսի գեկուցում, ԱՄՆ Կոլումբիայի համալսարան, 2006 թ., էջ 16:

²⁹ Նույն տեղում, էջ 16:

կարգվում է հետևյալ կերպ՝ քեմալիստներ, կրոնական, օր.՝ Մյունի, և ձախ ուժեր, որոնք հիմնականում պրո-քրդական հասարակական կազմակերպություններ են: Դրանից բացի՝ կան նաև փոքրամասնության մի շարք կազմակերպություններ, որոնք ներկայացնում են «Ալկի» կամ այլ կրոնական և ազգային փոքրամասնություններ³⁰:

Քաղաքացիական և ժողովրդավարական գերակայության հանդեպ հասարակության վստահության նվազման այլ գործոններից են նաև պետության «ըշնամիներին» ուղղված քաղաքական սպանությունների դեպքերը, որոնք բնակչության շրջանում անորոշության և վախի մթնոլորտ սերմանելու գործում շարունակում են մնալ նախընտրած մարտավարություն³¹: Սակայն հարկ է նշել նաև այն փաստը, որ Հրանտ Դիմրի³² սպանությանը հետևած արձագանքը դարձավ թուրքական քաղաքացիական հասարակության ակտիվության արտահայտումը, երբ հազարավոր մարդիկ, սատար կանգնելով հայերին, փորձում էին քանդել երկու ազգին «յուրայինի և ոչ յուրայինի տարանջատող պատը³³»:

ԵՄ ինտեգրումը զգալի դեր է խաղացել մի շարք բարեխոսությունների իրականացման գործում: ԵՄ ներկայացրած պահանջների ցանկն ընդգրկում է խոսքի, կրոնի, ազգային փոքրամասնությունների ազատությունների երաշխիքների ապահովումը: Այդ իմաստով ոչ կառավարական կազմակերպությունների և հատկապես մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների իրավիճակն ավելի հուսադրող է, և ԵՄ-ին ինտեգրվելու գործընթացը զգալիորեն նպաստել է դրան:

ԵՄ չափանիշներին համապատասխանելու ընդհանուր միտումը օգնել է միացնելու միմյանց հաճախ անհամատեղելի (ազատական, աշխարհիկ, քրդական, կրոնական, քեմալական) տարրերը թուրքական քաղաքացիական հասարակության մեջ: Այսպես օրինակ՝ մահմեդական մարդու իրավունքների խմբերն իրենց ծրագրերում ընդգրկել են ԵՄ բաղադրիչը: Հարկ է նշել, որ չնայած թուրքական հասարակական կազմակերպությունների մի մասը (օրինակ՝ սոցիալական օգնության ծրագրերով զբաղվող կազմակերպությունները) ցա-

խընտրում է հեռու մնալ քաղաքականությանը միջամտելուց, այնուհանդերձ մեծ դերակատարում ունի երկրի դրական կերպարի ձևավորման գործում: Թուրքիայի՝ 2007 թվականի արտաքին քաղաքականության վերլուծության գեկուլցում հեղինակը նշում է, որ Թուրքիայի նկարագրի փոփոխության և նրա միջազգային նոր տեսլականի ձևավորումը ոչ միայն պետական քաղաքականության, այլև քաղաքացիական հասարակության, բիզնես և մի շարք այլ կազմակերպությունների հետևանք է³⁴:

Միևնույն ժամանակ հասարակական կազմակերպությունների մյուս մասը քաղաքական և կրոնական հարցերի վերաբերյալ հստակ դիրքորոշում ունի: Օրինակ՝ մարդու իրավունքների հարցերով զբաղվող թուրքական ամենահայտնի հասարակական կազմակերպություններից են Մարդու իրավունքների ասոցիացիան (*Insan Haklari Dernegi*), Մարդու իրավունքների թուրքական հիմնադրամը (*Turk Insan Haklari Vakfi*) և վերջերս «Մեզում-Դեր» կազմակերպությունը, որը հաջողությամբ իր ծայնը բարձրացրեց թուրքական և միջազգային մարդու իրավունքներին նվիրված քննարկումներում³⁵:

Մարդու իրավունքների պաշտպանության իսլամիստական երեք խոշորագույն կազմակերպություններն են՝ «Այ-Դեր» (Կանայք ընդդեմ խտրականության), «Օզգյուր-Դեր» (Մտքի ազատության և կրթական իրավունքների ասոցիացիա) և «Մազում-Դեր» (Մարդու իրավունքների և ճնշվածների համերաշխության կազմակերպություն): Կանանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունները հատկապես ակտիվ են գլխաշոր կապելու հարցում:

Չնայած այս ամենին՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ընդհանուր առմամբ մնացել են համեմատաբար փոքր ու թույլ, և երկրի ազատության աստիճանի գնահատականները, որոնք հիմնված են քաղաքացիական հասարակության հատկանիշների՝ միավորման ազատության, խոսքի ազատության, կրթության իրավունքի, կրոնը դավանելու ազատության, հավաքների մակարդակի և բազմակարծության վրա բարձր չեն³⁶:

³⁰ Anne K. Dunker "Human Rights are What NGOs Make of It: The Diversity of Turkish Human Rights NGOs and the Influence of the European Process" Turkish Policy Quarterly, pg. 55

³¹ Գ. Ա. Թեգյորյու, «Թուրքիան Հրանտ Դիմրից հետո», http://www.opendemocracy.net/article/hrant_dink_a_life_unfinished:

³² Հրանտ Դիմրի՝ *հայ-քուրդական «Ազոս» բերրի խմբագիր, սպանվել է 2007 թ. հունվարի 19-ին իր խաղաղաստան դիմացի փողոցում:*

³³ Գ. Ա. Թեգյորյու, «Թուրքիան Հրանտ Դիմրից հետո», http://www.opendemocracy.net/article/hrant_dink_a_life_unfinished:

³⁴ Ա. Դավթոլյու, «Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսլականը, 2007 թվականի գնահատումը», էջ 84:

³⁵ Ա. Զ. Դանբեր, «Մարդու իրավունքները ՀԿ-ների արդյունք են. Թուրքիայի մարդու իրավունքների հարցերով զբաղվող ՀԿ-ների բազմազանությունը և եվրոպական գործընթացի ազդեցությունը», Turkish Policy Quarterly, էջ 55:

³⁶ Ուլվի Սարան, «Արդյո՞ք Թուրքիայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ճշգրիտ են արտահայտում հանրությունը», Today's Zaman օրաթերթ, 2008 թ., ապրիլի 10:

1/4 Քաղաքական Իսլամ

Վերջին տասնամյակների ընթացքում, ինչ պրոիսլամիստական քաղաքական ուժերը իշխանության եկան, քաղաքական իսլամը առավել մեծ դեր է կատարում մուսուլմանական աշխարհում: Թուրքիան իսլամական աշխարհի սրտում գտնվող մի երկիր է, որն ունի ժողովրդավարության և քաղաքական իսլամի համակցման յուրօրինակ փորձ: Վերջին խորհրդարանական և նախագահական ընտրությունների ժամանակ հաղթած իշխող «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը ևս հիմնված է իսլամի սկզբունքների վրա:

Թուրքիայում իսլամի առանձնակի դերը պատմականորեն տարբեր է եղել, որը բացատրվում է Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքով: Թուրքիան աշխարհի երկու մասերում և երկու քաղաքակրթությունների խաչմերուկում գտնվող երկրի դասական օրինակ է²: Թուրքիան աշխարհիկ պետություն է, որի բնակչության գերակշիռ մասը՝ 99,8%-ը, տոկոսը մահմեդականներ են: Մահմեդականների մեծամասնությունը Թուրքիայում սուննիներ են՝ մոտ 75%-ը, իսկ շիաները կազմում են մահմեդական բնակչության մոտ 25%-ը³⁷:

Չնայած իր աշխարհիկ բնույթին՝ Թուրքիան պատկանում է աշխարհի մահմեդական երկրների խմբին: Դարեր շարունակ այս երկիրը եղել է հսկայական իսլամական խալիֆայի կենտրոնը՝ Օսմանյան կայսրության գլխավոր քաղաքական-կրոնական նստավայրը, որտեղ իսլամը ապահովել է մուսուլմանական տարբեր տարրերի միջև միասնությունը՝ սահմանելով իր հետևորդների համար էթիկական նորմեր և իրավունքներ: Իսլամը ներթափանցել է բուրբակյան կյանքի բոլոր ոլորտները: Օսմանյան կայսրության մեջ մահմեդական գիտնականները կամ այսպես կոչված ուլեմաները ուսումնասիրել և տարածել են մուսուլմանական կրոնը, կրոնական դոկտրինաները և իրացրել են շարիաթը՝ Դուրանի դրույթների վրա հիմնված կրոնական, կենսական և իրավական նորմերը: Կայսրության փլուզման ընթացքում ուլեմաները ներքավեցին կոռուպցիայի մեջ և հայտնվեցին ինտելեկտուալ, մշակութային բարեփոխումներից մեկուսացված ու առաջընթացին բացարձակապես անպատրաստ վիճակում:

Մինչ Եվրոպան անցնում էր բերափոխումների միջով և զգալի առաջընթաց ուներ գիտության և արդյունաբերության մեջ, Օսմանյան կայսրությունը գտնվում էր սրբության և իսլամական միջնադարյան գաղափարախոսության ծուղակում: Այսպիսին էր վիճակը մինչև Թուրքական պետության հիմնադրումը:

1923 թ.-ից սկսած՝ նոր վարչարարները հանգեցին եվրոպական քարոզչության և արևելագետ-գիտնականների պնդած այն մտքին, որ իսլամը հակասում է նյութական առաջընթացի գաղափարներին և հատկապես եվրոպական քաղաքակրթությանը:

Թուրքիայի առաջին նախագահ Քեմալ Աթաթուրքի առաջնորդությամբ սկիզբ առած բարեփոխումները նպատակ ունեին Թուրքիան փոխակերպելու արևմտյան տիպի պետության: Ցանկացած բան, որն առջվում էր իսլամական տարրերին, այդ բնույթը հագուկապին ու զվխաշորին, համարվում էր ժամանակակից ոճին հակասող: Կրոնական միավորումներին վերապահված աշխարհիկ լիազորությունները նվազեցվեցին և ի վերջո վերացվեցին: Կրոնական հիմնադրամները ազգայնացվեցին, և կրոնական կրթությունը սահմանափակվեց:

1928 թ.-ին ուժը կորցրած ճանաչվեց Թուրքիայի Սահմանադրության 2-րդ հոդվածը, որն իսլամը հռչակում էր պետական կրոն, և 1937 թ.-ին կրոնի ու պետության տարանջատման սկզբունքը (լաիկիզմ) պաշտոնապես ներառվեց Սահմանադրության մեջ: Քեմալ Աթաթուրքը հռչակեց քեմալիզմի 6 սկզբունքները, որոնք դարձան թուրք ազգի քեմալիստական գաղափարախոսության հիմնադրույթները՝ քաղաքական միասնություն, լեզվական, տարածքային, սոսնակյան, պատմական և բարբերի ընդհանրություն: Երբ 1920-ականների սկզբի բարեփոխումների հեղինակները սատարեցին աշխարհիկ պետության գաղափարը, նրանք վերացրին կրոնը հանրային կառավարման բնագավառից և այն սահմանափակեցին բացառապես անհատական բարբերի, վարքագծի և դավանանքի ոլորտներով:

Թեև կրոնական արարողակարգերի հանրային իրականցումը շարունակվում էր, այդուհանդերձ կրոնը և կրոնական կազմակերպությունները բացառվեցին հասարակական կյանքից: Քեմալականները հավատացած էին, որ էթնիկ ու մշակութային տարբերությունները վերացնելով՝ կարող են կերտել միատարր պետություն:

Աշխարհիկ պետության կերտումը ուղղված էր իսլամի՝ որպես պետական կրոնի կարգավիճակի վերացմանը: Իսլամում աշխարհիկացումը կապվում էր շարիաթի կրոնական իրավունքի աստիճանական վերացմանը: Մակայն Թուրքիայում աշխարհիկացումը պետք է դիտարկել ավելի շատ որպես արևմտականացման, քան թե ժողովրդավարացման նախապայման:

Թվացյալ աշխարհականացումն ավելի խորացրեց պետություն-հասարակություն երկփեղկումը. պետությունը ժամանակակից էր դառնում, իսկ հասարակությունը հիմնականում մնում էր ավանդապահ:

² Хантингтон С., Столкновение цивилизаций, 2003, С. 94.

³⁷ Islam in Turkey (available at http://en.wikipedia.org/wiki/Islam_in_Turkey).

1950 թ. Աբաբորքի Հանրապետական կուսակցության պարտությունը առաջ բերեց իսլամական արժեքներին վերադառնալու կոչեր: 1950-80-ականները բնութագրվում են թուրք հասարկության մեջ ընդդիմադիր տրամադրությունների ակտիվացմամբ: Կոչ էին արվում վերադառնալ «մաքուր և սկզբնական իսլամին», այսինքն՝ վերականգնել մուսուլմանական կոմկրետ ինստիտուտներն ու նորմերը:

70-90-ականներին իսլամական շարժումը ոչ միայն սոսկ արձագանք էր քեմալիստների քաղաքական և մշակութային գերակայությանը, այլև հանգեցրեց նոր պոռիսլամիստական կուսակցությունների ստեղծմանը: Եթե առաջին փուլը (1945-1969) առաձևանում էր ընդգծված իսլամամետ կուսակցությունների բացակայությամբ, և կրոնը օգտագործվում էր որպես զանգվածների միջև կապերի հաստատման միջոց, ապա երկրորդ փուլը (1970-ականներից մինչ այսօր) աչքի ընկավ երկրի ներքին քաղաքական կյանքի վրա իսլամական ազդեցության ուժեղացմամբ: Իսլամը դարձավ քաղաքական քարոզչության կարևոր գործոն, մի հանգամանք, որն այլևս չպետք է անտեսվեր: Թուրքական պետությունում այսպես կոչված իսլամական վերածննդի սկզբնական փուլը լուրջ նախապայմաններ ստեղծեց թուրքական քաղաքականության մեջ քաղաքական իսլամի ֆեռմենտի զարգացման համար:

1970-ականներին ստեղծվեց առաջին պորիսլամիստական «Ազգային կարգ» կուսակցությունը, որն հետագայում հանդես էր գալիս տարբեր անվանումներով՝ «Ազգային փրկության կուսակցություն» (1972-1980), «Բարեկեցության կուսակցություն» (1983-1998): 1990-ականներին աշխարհիկ կուսակցություններն իսլամը լայնորեն օգտագործում էին քաղաքական նպատակների հասնելու համար: 1990-ականների սկզբներին իսլամը արդեն մի ուժ էր, որը չէր կարելի անտեսել: 1995 թ. ընտրություններում հաղթած «Բարեկեցություն» կուսակցությունը բացահայտ հայտարարեց իսլամական արժեքներին վերադառնալու անհրաժեշտության մասին: Այդուհանդերձ, իսլամը ընդհանուր առմամբ դեռ մնում էր հարաբերականորեն բույլ: Էրբակամի գլխավորած կառավարությունն ի վիճակի չէր իրագործելու իր նախընտրական խոստումները՝ զինված ուժերի ընդդիմության պատճառով, քանի որ վերջիններս աշխարհիկ վարչակարգի կարևորագույն երաշխավորներն էին: Վիճակը հանգեցրեց Էրբակամի վարչապետի պաշտոնից հեռացնելուն:

Երբ Ահմեդ Սեզերը իշխանության եկավ, նա ժողովրդավարական բարեփոխումների և հասարակության աշխարհիկ մոդելի կոչ արեց: Չմայած խիստ միջոցառումներին՝ իսլամացումը դեռ ընթացքի մեջ էր: Մյուս կողմից, ստահոգված լինելով Թուրքիայի ներքին քաղաքական զագացումների արդյունք-

ներով, Եվրոպան նրան տվեց ԵՄ անդամության բեկնածու երկրի կարգավիճակ³⁸:

«Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը, որը հաղթեց 2002-ի ընտրություններում, ունի իսլամիստական արմատներ, բայց այն համախմբում է եվրոպական կողմնորոշում ունեցող երիտասարդ քաղաքական գործիչների: Վերջիններս արագացրին օրենսդրական լայնածավալ բարեփոխումների գործընթացը³⁹: Այսօր նկատվում է մահմեդական արժեքները լիբերալիզմի և ժողովրդավարության գաղափարների հետ համադրելու միտում: «Արդարություն և բարգավաճում» կուսակցության կողմից իսլամը որպես քաղաքականության գործիք օգտագործելու հետևանքով տեղի է ունենում ավանդական միջավայրի քեմալիզմի և գաղափարականացում՝ հանգեցնելով Թուրքիայում իսլամի աստիճանական աշխարհիկացմանը: Այսպիսով՝ հույսեր կան, որ այս գործընթացը ակնհայտորեն կհեշտացնի եվրոպական ընտանիքին ինտեգրվելու մահմեդական պետության փորձերը:

1/5 Թուրքիայի տնտեսական համակարգի վերլուծությունը

Տնտեսաշխարհագրական բնութագիրը: Թուրքիայի տարածքային առանձնահատկությունն այն է, որ երկիրը տարածքներ է զբաղեցնում թե՛ Ասիայում և թե՛ Եվրոպայում: Թուրքիայի տարածքը 779 հազ կմ² է, իսկ բնակչությունը 2005 թ. տվյալներով կազմել է 69.6 մլն մարդ, տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ 39.2 մլն մարդ⁴⁰: Թուրքիայի եվրոպական մասը ասիականից բաժանվում է ատլանտիկ տնտեսական և ռազմավարական միջազգային նշանակություն ունեցող ուղիով՝ Դարդանեյի և Բոսֆորի նեղուցներով, Մարմարի ծովով:

Գտնվելով երկու աշխարհամասերի՝ Եվրոպայի և Ասիայի սահմանագծում, ինչպես նաև Աֆրիկայից ոչ մեծ հեռավորության վրա՝ Թուրքիան զբաղեցնում է բավական կարևոր և իրեն ձեռնտու տնտեսաշխարհագրական դիրք, քանի որ նրա տարածքով են անցնում ցամաքային, ջրային և օդային շատ կարևոր միջազգային ուղիներ: Օգտվելով իր աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքից և ստանալով Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի աջակցությունը՝ Թուրքիան հասավ նրան, որ իր անմիջական մասնակցությամբ սկսեցին

³⁸ Sb'u <http://www.delrus.ccc.eu.int/>.

³⁹ Turkey in Flux: Wrestling with Emotions, Identity and Values, Turkish Policy Quarterly, Winter.2006/2007, P.50.

⁴⁰ Բոլոր ցուցանիշների համար, եթե այլ աղբյուր չի նշվում, աղբյուր է Լեդի Հանաշխարհային բանկի World Development Indicator (WDI) վիճակագրական տվյալների բազան:

իրականացվել Թուրքիայի համար կարևոր երկու նախագծեր՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցման նախագծերը: Թուրքիան հույս ունի դրանց վերջնական շահագործման միջոցով ոչ միայն ստանալ հսկայական եկամուտներ, այլև ամրապնդել իր աշխարհաքաղաքական և տնտեսական դիրքերն ամբողջ տարածաշրջանում՝ նպատակ հետապնդելով հետագայում իր առավելություններն օգտագործել ԵՄ հետ հարաբերություններում:

Թուրքիայի բնակլիմայական պայմանները և ռեսուրսները բազմազան են, սակայն վերջինիս պաշարները համեմատաբար քիչ են: Թուրքիան աչքի է ընկնում բրոմի հանքավայրերով, որի պաշարներով աշխարհում զբաղում է առաջնային տեղերից մեկը (համաշխարհային պաշարների 8.0%): Հիմնականում տեղական նշանակություն ունեն քարածխի, նավթի, երկաթաքարի, պղնձի, վոլֆրամի, ուրանի, մոլիբդենի, մանգանի, բորսիտների և սնդիկի հանքավայրերը:

2006 և 2007 թթ. Թուրքիայի տնտեսության ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է համապատասխանաբար 6.8 և 4.4%: 2007 թ. տվյալներով Թուրքիայի ՀՆԱ կազմել է 657.0 մլրդ դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ 9.440 դոլար: Տնտեսության մեջ գործազրկության մակարդակը կազմել է 10.3%, իսկ ինֆլյացիայի մակարդակը 8.1%: 2006 թ. տվյալներով Թուրքիայի արտաքին պարտքը կազմել է 207.8 մլրդ դոլար: Թուրքիան աշխարհում ՀՆԱ-ի ծավալով զբաղում է 16-րդ տեղը, իսկ տեքստիլ արտադրանքի և ցեմենտի արտադրության ծավալներով՝ 6-րդ տեղը⁴¹:

Վերջին շրջանում օտարերկրյա ներդրումների հոսքի առումով Թուրքիայի վարկանիշը համաշխարհային տնտեսության մեջ զգալիորեն բարձրացել է: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ Թուրքիան առաջարկում է ինչպես տեղական, այնպես էլ արտասահման գանազան հնարավորություններ ընձեռող շուկաներ: Այս շուկաները ապահովում են ավելի քան մեկ միլիարդ պոտենցիալ սպառողներ, մասնավորապես⁴².

- վիթխարի և աճող տեղական շուկա (70 միլիոն սպառող).
- բարձր եկամուտների մակարդակ ունեցող եվրոպական շուկաներ (ավելի քան 700 միլիոն սպառող).
- Ռուսաստանի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի աճող շուկաներ (ավելի քան 250 միլիոն սպառող).

⁴¹ All About Turkey. Turkish Economy. Available at: <http://www.allaboutturkey.com/economy.htm>.

⁴² Arguden Y, (2007) "An Overview of the Turkish Economy: Outlook and Current Perspectives", The Middle East Institute.

- գանազան և աճող Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի շուկաներ (մոտավորապես 160 միլիոն սպառող):

2005 թ. հոկտեմբերի 3-ին սկսվեց Թուրքիայի ֆորմալ անդամակցության գործընթացը ԵՄ, սակայն այս գործընթացը հավանաբար երկար ժամանակ կկահանգի: Թուրքիան պետք է իրականացնի լուրջ տնտեսական քարտեզներ, որպեսզի բավարարի ԵՄ անդամակցության պահանջները:

1/6 Թուրքիայի տնտեսության սոցիալտնտեսական զարգացման առանձնահատկությունները

Հանրապետության հռչակումից հետո Թուրքիան կիրառել է սոցիալտնտեսական զարգացման մի շարք մոդելներ: 1920-ական թթ. իրականացվեց ազգային տնտեսության ազատականացման գործընթացը: Այնուհետև 1930-40-ական թթ. երկրի տնտեսական կյանքում մեծացավ կառավարության տնտեսական կարգավորման և վերահսկման դերը: Սոցիալ-տնտեսական զարգացման հաջորդ փուլը, որը տևեց մոտ քսան տարի (1960-70-ական թթ.), բնութագրվում է «խառը տնտեսության» առկայությամբ: Տնտեսական զարգացման մոդելների այս տարբերակները Թուրքիային հնարավորություն տվեցին սոցիալտնտեսական զարգացման գործընթացում ձեռք բերելու մեծ առաջընթաց:

1970-80-ական թթ. ինֆլյացիայի (տղաճի) մակարդակի և գործազրկության աճի հիմնական պատճառ եղան պետական ձեռնարկություններին տրվող ուղղակի և անուղղակի սուբսիդիաները: 70-ական թթ. այս գործընթացներն առաջ բերեցին սոցիալական դժգոհություններ: Կառավարությունն ի գործը չգտնվեց տնտեսության մեջ իրականացնելու կառուցվածքային քարտեզումներ և հարցահարելու քաղաքական անկայունությունը: Դրա հետևանքով 1980 թ. սեպտեմբերին բանակն իշխանությունը իր ձեռքը վերցրեց: Կարգ ու կանոն հաստատելուց և քարտեզումների համար պայմաններ ստեղծելուց հետո՝ 1983 թ., ընտրությունների շնորհիվ իշխանությունը վերադարձվեց քաղաքացիական կառավարությանը: Արդյունքում 1980-90-ական թթ. Թուրքիայի տնտեսության զարգացման մոդելը ձեռք բերեց նոր, մասնավորապես ազատական բնութագրեր:

Թուրքիայի տնտեսության զարգացման նոր մոդելի հիմքում ընկած էր բազմաթիվ ոլորտների պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման երկարաժամկետ ծրագիրը: Հետագայում այս գործընթացից դուրս մնացին միայն ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտները, որոնք առաջին

հերթին կապված էին ռազմարդյունաբերական համալիրին: Դրա հետևանքով տնտեսության մեջ զգալիորեն կրճատվեց անարդյունավետ աշխատող պետական ձեռնարկությունների թիվը, վերացվեցին նախկինում ոչ արդյունավետ գործող պետական ձեռնարկություններին աղվող սուբսիդիաները: Կառավարությունն իրականացնում էր այնպիսի քաղաքականություն, որն ուղղված էր արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերությունների խթանմանը և զարգացմանը: Վերջինս հնարավորություն տվեց թուրքիայի արտահանման ծավալները 2,9 մլրդ դոլարից (1980 թ.) ավելացնելու մինչև 38 մլրդ դոլար (1996 թ.)⁴³: Տնտեսական ազատական մոդելի իրագործման շնորհիվ թուրքիայի տնտեսությունը գրավիչ դարձավ օտարերկրյա ներդրողների համար: Այսպես, եթե մինչև 1980 թ. թուրքիայի տնտեսության մեջ օտարերկրյա ընդհանուր ներդրումները եղել են 229 մլն դոլար, ապա 1990թ.՝ 1,3 մլրդ դոլար, իսկ արդեն 1997 թ. օտարերկրյա ներդրումները կազմեցին 6,4 մլրդ դոլար⁴⁴:

Այսպիսով՝ թուրքիայի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում հնարավոր է առանձնացնել երկու տարբեր ժամանակաշրջաններ: Առաջին ժամանակաշրջանը համապատասխանում է 1920-70-ական թթ., որի ընթացքում տնտեսությունը բնութագրվել է որպես փակ տնտեսություն, և զարգացման բոլոր գործընթացներում գերակայել է պետական կարգավորումը: Երկրորդ ժամանակաշրջանը սկսվել է 1980-84 թթ. իրականացված բարեփոխումներից հետո և բնութագրվում է տնտեսական կյանքի ազատականացմամբ և արտահանման ուղղվածություն ունեցող ոլորտների խթանմամբ⁴⁵:

1/7 Թուրքիայի տնտեսության զարգացման ժամանակակից առանձնահատկությունները

Վերջին երկու տասնամյակի ընթացքում թուրքիայի տնտեսությունը արձատարվեց վերափոխվել է: Այս ժամանակահատվածում երկու տնտեսական ճգնաժամներ են տեղի ունեցել՝ լուրջ խնդիրներ առաջացնելով թուրքիայի տնտեսության մեջ: Առաջինը տեղի ունեցավ 1994 թ., որի ընթացքում ՀՆԱ-ն կրճատվեց -6,1%, իսկ երկրորդը՝ 2001 թ., որի ընթացքում ՀՆԱ-ն կրճատվեց -9,5%: Այդ ամենի հետևանքով զուտ պետական պարտքի հարաբերությունը

⁴³ Uygur, Ercan (1996) "Export Policies and Export Performance: The Case of Turkey" Ankara University, Faculty of Political Science.

⁴⁴ Ertugrul, Ahmet and Faruk Selek (2001) "A Brief History of the Turkish Economy, 1990-2000" Russian and East European Finance and Trade.

⁴⁵ Gazi Ercel (2006) "Globalization and The Turkish Economy", Vanderbilt University.

ՀՆԱ-ին կրկնապատկվեց, զգալիորեն աճեցին ինֆլյացիայի և գործազրկության մակարդակները:

Տնտեսությունը վերականգնելու համար թուրքիան որդեգրեց տնտեսական բարեփոխումների նոր ծրագիր, որը ներկայացվեց 2001 թ. ապրիլին: Բարեփոխումների այս ծրագիրը հիմնականում առնչվում էր բանկային և ֆինանսական ոլորտներին: Ծրագրի գլխավոր նպատակն էր վերակառուցել բանկային ոլորտը, կայունացնել դրամի ու արտարժույթի շուկաները և վերահաստատել մակրոտնտեսական հավասարակշռությունը՝ կայուն տնտեսական աճ ապահովելու համար: Ծրագրի իրականացումը պահանջում էր համապարփակ տնտեսական բարեփոխումներ և թուրքիայի տնտեսության վերակառուցում:

Բարեփոխումները նախ կիրառվեցին ֆինանսական ոլորտում, և արագացվեց սեփականաշնորհման գործընթացը: Այնուհետև բարեփոխումներ իրականացվեցին նաև գյուղատնտեսության, սոցիալական ապահովվածության, էներգետիկայի և հեռահաղորդակցության ոլորտներում: Բարեփոխումների ծրագրի արդյունավետ կիրառումն ապահովեց մակրոտնտեսական ցուցանիշների դրական զարգացում, մասնավորապես ինֆլյացիայի մակարդակի նվազում մինչև միամիշ թվի, և իրականացվեցին կառուցվածքային բարեփոխումներ:

Թեև թուրքիային հաջողվեց հաղթահարել տնտեսական ճգնաժամերի հետևանքով առաջացած հիմնախնդիրները, սակայն թուրքիայի կառավարությունը որոշեց շարունակել տնտեսական բարեփոխումների ծրագիրը, որպեսզի կանխարգելի այլ տնտեսական հիմնախնդիրների հետագա առաջացումը:

Այսպես՝ 1993-2002 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՆԱ-ի աճի միջին տեմպը կազմել է 2.8%: Ընդհանրապես տնտեսական բարեփոխումների ծրագրի դրական արդյունքների՝ արդեն 2003 թ. տնտեսական աճի տեմպը կազմեց 5.9%, իսկ 2004 թ.՝ 9.9%: Այստեղ հարկ է նշել, որ թուրքիայի տնտեսության նման աճը հիմնականում պայմանավորված էր մասնավոր հատվածով: Մասնավոր արդյունաբերության ոլորտում վերջին երեք տարում արտադրողականության աճի միջին տեմպը կազմել է 10.0%: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքիան ներկայումս փորձում է ապահովել համապատասխան միջոցներ ու հիմք՝ կայուն տնտեսական զարգացման և երկրի մրցունակությունը բարձրացնելու համար, արտադրողականության բարձրացման փաստը կարող է համարվել ծրագրի դրական արդյունք:

Թուրքիայի տնտեսությունը վերջին երեք տասնամյակում երկնիշ ինֆլյացիայի մակարդակի բացասական արդյունքներին առնչվող որոշակի բարդուր-

յուններ ուներ: Ինֆլյացիան նպատակային մակարդակի չափով նվազեցնելու համար Թուրքիայի կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը ծառայեցվեց նպատակային ինֆլյացիայի մակարդակ ապահովելուն: Դրա շնորհիվ արդեն վերջին մի քանի տարիներին Թուրքիայի տնտեսության մեջ գրանցվում է միանիշ ինֆլյացիայի մակարդակ: Այսպես՝ 2006 թ. ինֆլյացիայի մակարդակը կազմել է 9.3%, իսկ 2007 թ. 8.1%: Թուրքիայի կառավարության հիմնական նպատակն է հետագայում էլ ավելի իջեցնել ինֆլյացիայի մակարդակը, որպեսզի այն համապատասխանի եվրոպական երկրների ցուցանիշի միջին մակարդակին: Նշենք, որ 2005 թ. սկզբին Թուրքիան հրաժարվեց իր ազգային արժույթի վեց գրոներից և թողարկեց ցածր միավորներ ունեցող թրթրադրամներ և մետաղադրամներ:

Վերջին երեք տարում զգալիորեն բարելավվել է նաև Թուրքիայի կառավարության ֆիսկալ քաղաքականությունը: Այսպես, եթե Թուրքիայում 2001 թ. զուտ պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին կազմում էր 90.5%, ապա արդեն 2006 թ. զուտ պետական պարտքի հարաբերությունը ՀՆԱ-ին նվազեց մինչև 51.6%: 2001 թ. Թուրքիայի բյուջեի դեֆիցիտը կազմում էր ՀՆԱ-ի մոտ 17.0%, իսկ արդեն 2005 թ. բյուջեի դեֆիցիտը կազմում էր ՀՆԱ-ի 5.0%: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Հայաստանի բյուջեի դեֆիցիտը կազմում էր ՀՆԱ-ի համապատասխանաբար 4.3 և 1.9%:


Չնայած նրան, որ ընթացիկ հաշվի պակասուրդը աճում է շնորհիվ օտարերկրյա էժան արժույթի քաղաքականությանը պայմանավորված ներմուծման մեծացման, այնուամենայնիվ Թուրքիայի արտարժույթի պաշարները շարունակում են աճել: Արտարժույթի պաշարների ավելացումը հիմնականում պայմանավորված է օտարերկրյա ուղղակի և պորտֆելային ներդրումների շարունակական աճով: 2005 թ. տվյալներով Թուրքիայի կենտրոնական բանկի արտարժույթի պաշտոնական ռեզերվները կազմում էին 43 մլրդ դոլար: Արտարժույթի ռեզերվների նման մակարդակը վկայում է, որ Թուրքիայի տնտեսությունը կարող է դիմակայել տեղական և միջազգային շուկայի անբարենպաստ տատանումներին:

1/8 Թուրքիայի տնտեսության ներկայիս վիճակը

Թեև 2005 թ. Թուրքիային տրվել է գործող շուկայական տնտեսության կարգավիճակ, սակայն տնտեսության մեջ մակրոտնտեսական անկայունությունը դեռևս շարունակում է պահպանվել:

Թուրքիայի ՀՆԱ կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունի ծառայությունների ոլորտը (տես գծապատկեր 1), որը վերջին տարիներին հատկապես գրասաշրջության ոլորտի դինամիկ զարգացման շնորհիվ կայուն աճ է արձանագրել: Չնայած նրան, որ գյուղատնտեսությունը տնտեսության մեջ հիմնական աշխատատեղեր ստեղծող ոլորտն է և ապահովում է զգալի արտադրական ծավալներ⁴⁶, այդ ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների և ներդրումների բացակայության պատճառով այն կանգնած է լուրջ խնդիրների առաջ: Նմանատիպ խնդրի առաջ է կանգնած նաև արդյունաբերության ոլորտը, որն ապահովում է ցածր արդյունավետություն և զգալի բարեփոխումների կարիք ունի⁴⁷: Համեմատելով մախրող տարվա ցուցանիշների հետ՝ գյուղատնտեսության ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ-ում նվազել է 2.3%-ով, արդյունաբերությանը՝ 1.1%-ով, մինչդեռ ծառայությունների ոլորտի մասնաբաժինը աճել է 3.4%-ով⁴⁸:

Գծապատկեր 1. Թուրքիայի ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի



Աղբյուր՝ CIA World Factbook, 2007

⁴⁶ Թուրքիան դասվում է աշխարհի՝ գյուղատնտեսական ապրանքներ արտադրող և արտահանող առաջատար 10 երկրների շարքին:

⁴⁷ Turkey Report, CSIS Files No. 6, September 2007, p. 33. Available at: http://www.csis.ro/docs/CSIS.ro_Turkey.pdf.

⁴⁸ CIA World Factbook estimations 2006 and 2007.

Այս միտումն անհանգստության ալիք է բարձրացնում որոշ թուրք տնտեսագետների շրջանում: Ըստ վերջիններիս՝ արտադրական ոլորտի անտեսումը խորացնում է գործազրկության խնդիրը: Արտադրության և արտադրողականության նվազման հետ նվազում են նաև խնայողությունների ծավալները, որն իր հերթին հանգեցնում է ներդրումների նվազման: Ներդրումային հնարավորությունների սահմանափակումը բացասաբար է անդրադառնում նոր աշխատատեղերի ստեղծման վրա, որը հետագայում ավելի կնեմացնի գործազրկությունը⁴⁹:

2003 թ. հունիսի 5-ին Թուրքիայի կառավարությունն ընդունեց նոր՝ «Օտարերկրյա ներդրումների օրենք»:⁵⁰ Նոր օրենքի հիմնական առանձնահատկություններն էին.

- օտարերկրյա ներդրողների համար հավասար իրավունքների ապահովում,
- օտարերկրյա ներդրումների կապիտալի նվազագույն չափի վերացում,
- օտարերկրացիների կողմից Թուրքիայում անշարժ գույքի ձեռք բերման հնարավորություն⁵⁰:

Պետական ակտիվների մասնավորեցումը կնպաստի ինչպես տնտեսության մրցունակության բարձրացմանը, այնպես էլ պետական հատվածի բեռի նվազեցմանը: Տնտեսության մեջ մրցակցության խորացումն իր հերթին կապահովի տնտեսության դինամիկ զարգացում, քանի որ մրցակցության առկայությունը կարևորագույն պայման է տնտեսության զարգացման համար⁵¹:


Թուրքիայում ընկերություն հիմնելու համար ներկայումս պահանջվում է մեկ օր: 1993-2002 թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումների միջին մակարդակը կազմել է 1 մլրդ դոլար: Օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենքի ընդունումից հետո՝ 2005-2006 թթ. ընկած ժամանակահատվածում, զգալի աճել է ՕՌՆ-ի ներհոսքի ծավալը՝ համապատասխանաբար կազմելով 9.8 մլրդ և 20 մլրդ դոլար (տե՛ս գծապատկեր 2): Թուրքիայի տնտեսության մեջ օտարերկրյա ներդրումների մեծ մասը բաժին է ընկնում ԵՄ երկրներին: Այստեղ հարկ է նշել, որ ՕՌՆ-ի ներհոսքի մեծ մասը հիմնականում պայմանավորված է լայնամասշտաբ սեփականաշնորհման գործընթացով և ֆինանսական հատվածի զարգացմամբ:

⁴⁹ Mithat Melen, "Turkish Economy as a Hot Potato", Turkish Daily News, 04.05.2007. Available at: <http://www.turkishdailynews.com.tr/article.php?enewsid=72318>.

⁵⁰ Sb 'u Law No. 4875, Foreign Direct Investment Law, Date of Passage 5 June 2003.

⁵¹ Anne O. Krueger (2005) "Turkey's Economy: A Future Full of Promise", speech by First Deputy Managing Director, IMF Istanbul Forum.

Գծապատկեր 2: ՕՌՆ-երի ներհոսքը դեպի Թուրքիայի տնտեսություն (մլրդ դոլար)



Աղբյուր՝ WDI, World Bank

Թուրքիայի տնտեսության համար ՕՌՆ-երի ներհոսքի ծավալը ամեն դեպքում դեռ շարունակում է ցածր համարվել (հաշվի առնելով տնտեսության ներուժը), քանի որ տնտեսության մեջ ներդրումները ցանկալի մակարդակով չեն իրականացվում:


Թուրքիայի տնտեսության համար մյուս կարևոր հիմնախնդիրը ինֆլյացիան էր: Այսպես՝ 1999-2005 թթ. ընկած ժամանակաշրջանում Թուրքիայի տնտեսության մեջ ինֆլյացիայի մակարդակը 65%-ից զգալի նվազեց՝ 2005 թ. դառնալով միանիշ թիվ: 2007 թ. տվյալներով ինֆլյացիայի մակարդակը կազմել է 8.1%:

Վերջին տարիներին՝ մասնավորապես 2001 թ. տնտեսական ճգնաժամից հետո, Թուրքիայի տնտեսության մեջ զգալիորեն ավելացել է տնտեսական աճի տեմպը՝ 2007 թ. կազմելով 4.4% (տե՛ս գծապատկեր 3): Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ 2001 թ. տնտեսական ճգնաժամից հետո տնտեսության մեջ իրականացվեցին լուրջ բարեփոխումներ:

Նշանակալիորեն բարելավվել է Թուրքիայի բյուջեյի պակասուրդը: Այսպես, եթե 2001 թ. տվյալներով բյուջեյի պակասուրդը կազմում էր ՀՆԱ-ի 33.0%, ապա արդեն 2005 թ. տվյալներով այն կազմել է 0.8%: Սակայն Թուրքիայի տնտեսության ընթացիկ հաշվի պակասուրդը դեռևս շարունակում է աճել՝ 2006 թ. կազմելով 6.1%: Իսկ արտաքին պետական պարտքը 2006 թ. կազմել է ՀՆԱ-ի 60.7%: Այստեղ հարկ է նշել, որ 2000 թ. համեմատությամբ ընթացիկ հաշվի պակասուրդը աճել է ավելի քան վեց անգամ: Ամեն դեպքում առողջ տնտեսական աճի, նվազող ինֆլյացիայի և կոշտ ֆիսկալ քաղաքականության շնորհիվ

Թուրքիայի տնտեսությունը արտաքին ցնցումներին ավելի ճկուն է սկսել արձագանքել:

Գծապատկեր 3: Թուրքիայի տնտեսության տնտեսական աճի տեմպը 2000-2006 թթ. ընկած ժամանակահատվածում (%)




Աղբյուր՝ WDI, World Bank

Զնայած վերջին տարիներին գրանցված տնտեսական աճին՝ Թուրքիայի աշխատուժի շուկայում, մասնավորապես նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ: Այսպես՝ 2001 թ. տնտեսական ճգնաժամից անմիջապես հետո գործազրկության մակարդակը գրանցվել է 8.4%, իսկ մյուս տարիներին գործազրկության մակարդակը պահպանվել է գրեթե նույն չափով՝ 2005 թ. կազմելով 10.3% (տե՛ս գծապատկեր 4): Թուրքիայի աշխատուժի շուկայի մյուս կարևոր հիմնախնդիրը կանանց մասնակցության բավական ցածր բաժինն է, որը 2006 թ. տվյալներով կազմել է 26.5%: Նշենք, որ 2000-2005 թթ. ընկած ժամանակաշրջանում այս ցուցանիշը գրեթե չի փոփոխվել:

Վերջին տարիներին Թուրքիայի տնտեսության մեջ զգալիորեն նվազել է պետության միջամտության մակարդակը: Այսպես՝ նվազել են քաղաքական ճնշումները պետական բանկերի վրա, և ազատականացվել են այնպիսի կարևոր շուկաներ, ինչպիսիք են էներգետիկայի, հեռահաղորդակցման, շաքարի, ծխախոտի և վառելիքի շուկաները: Մյուս կողմից, շնայած այն հանգամանքին, որ Թուրքիան դեռևս գտնվում է գյուղատնտեսության վրա հիմնված տնտեսությունից դեպի ծառայությունների վրա հիմնված տնտեսություն անցման փուլում, գրավածների բաժինը գյուղատնտեսության մեջ 2005 թ. տվյալ-

ներով կազմել է 29.5%⁵², որը դեռևս բավական քարձր ցուցանիշ է: Համեմատության համար նշենք, որ 2000 թ. այս ցուցանիշը եղել է 36.0%:

Գծապատկեր 4: Թուրքիայի տնտեսության գործազրկության մակարդակը 2000-2005 թթ. ընկած ժամանակաշրջանում (%)



Աղբյուր՝ WDI, World Bank

Թուրքիայի տնտեսության մեկ այլ ակնբախ խնդիր է երկրի ներսում տնտեսական զարգացման անհամաչափությունը: Թուրքիայում տարածաշրջանային զարգացման անհավասարությունները ԵՄ անդամ երկրների համեմատ գգալիորեն մեծ են: Տարածաշրջանային անհավասարություններն անցնում են արևմուտք-արևելք առանցքով: Երկրի ընդհանուր զարգացման մակարդակից հետ մնացող տարածաշրջաններն են Արևելյան Անատոլիան, Հարավարևելյան Անատոլիան և Սևծովյան տարածաշրջանները: Այս տարածաշրջաններին բաժին է ընկնում երկրի ընդհանուր հողատարածքների 40%-ը և բնակչության 30%-ը: Սակայն միևնույն ժամանակ դրանց բաժին է ընկնում տնտեսության ընդհանուր եկամտների 20%-ը, իսկ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմում է ազգային միջին մակարդակի 60%-ը:

Թեև մշակվել են տարածաշրջանային զարգացման մի շարք ծրագրեր, տարածաշրջանների միջև գոյություն ունեցող տնտեսական և սոցիալական անհավասարությունները սահմանափակ ռեսուրսների և հնարավորությունների անբավարարության պատճառով չի հաջողվել վերացնել:

⁵² Աղբյուր՝ WDI, World Bank.

Երկրի տնտեսության առկա խնդիրների շարքում տարածաշրջանային զարգացման անհամաչափության խնդրի առաջնայնությունն արտահայտվում է նրանով, որ այն ընդգրկված է *Ինճերորդ զարգացման ծրագրով* սահմանված հինգ ռազմավարական ուղղությունների շարքում⁵³: Ջարգացման ծրագրերն ընդունում է Թուրքիայի պառլամենտը և դրանցով նախանշում երկրի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական ուղղությունները: Ինճերորդ զարգացման ծրագիրը (2007-2013 թթ.) ներառում է հինգ ռազմավարական ուղղություններ՝ երկրի մրցունակության բարձրացում, զբաղվածության մակարդակի բարձրացում, մարդկային զարգացման և սոցիալական միասնության ամրապնդում, տարածաշրջանային զարգացման և ապահովում, պետական ծառայության որակի և արդյունավետության բարձրացում:

1/9 Թուրքիայի իրավական համակարգի ընդհանուր ընտրագիրը

Թուրքիայի իրավական համակարգն իր ընդհանուր հատկանիշներով առավելապես հարուն է ռոմանագերմանական իրավական համակարգին: Ինչպես այդ իրավական համակարգի այլ երկրներում, այնպես էլ Թուրքիայում իրավունքի հիմնական աղբյուր են Սահմանադրությունը, օրենքները, ինչպես նաև դիրեկտիվներն ու կարգադրագրերը⁵⁴: Թուրքիայի գործող Սահմանադրությունը ընդունվել է 1982 թվականին և օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով: Այն սահմանում է Թուրքիայի Հանրապետության պետական իշխանության կազմակերպման կարգը, ամրագրում է ժողովրդաիշխանության և իշխանությունների տարանջատման սկզբունքները: Թուրքիայի իրավական համակարգում ճանաչվում է նաև Բարձրագույն վերաքննիչ դատարանի ակտերի նախադեպային նշանակությունը՝ նպատակ ունենալով երկրի տարածքում ապահովելու իրավունքի միատեսակ կիրառությունը⁵⁵:

⁵³ Regions and Regional Planning in EU and Turkey'. Available at: <http://www.gap.gov.tr/English/Dergi/ D9152001/bolge.html>.

⁵⁴ Թուրքիայում օրենքները կոչվում են *ստատուտներ*, որոնց իրավաբանական ուժով հավասարեցվում են օրենքի ուժ ունեցող դիրեկտիվները: *Դիրեկտիվները* ընդունվում են կառավարության կողմից՝ օրենսդիր իշխանության սահմանած նպատակներին ու սկզբունքներին համապատասխան:

⁵⁵ Political Structure Of Turkey: Development Of Constitutional Movements In Turkey (available at <http://www.byegm.gov.tr/REFERENCES/Structure.htm>, visited in October 2007).

Թուրքիայի Սահմանադրության 2-րդ հոդվածը ամրագրում է, որ Թուրքիան «ժողովրդավարական, աշխարհիկ և սոցիալական պետություն է, որը հիմնվում է օրենքի գերակայության վրա՝ հաշվի առնելով հանրության խաղաղության, ազգային միասնության և արդարության գաղափարները, հարգելով մարդու իրավունքները»: Միևնույն ժամանակ Թուրքական պետությունը հիմնված է Աթաթուրքի անբաժան, միասնական պետության գաղափարների վրա, որը բուրքական ազգայնականությունը որևէ այլ էթնիկ կամ կրոնական ինքնությունից վեր է դասում:

Որպես ժողովրդավարական պետություն՝ Թուրքիայում սահմանադրորեն ամրագրված է ազատ ընտրական իրավունքը: Սահմանադրության 67-րդ հոդվածի համաձայն՝ ընտրությունները և հանրաքվեն կազմակերպվում են ազատ, հավասար, գաղտնի, ուղղակի և համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա: Սակայն նույն հոդվածը արգելում է ռազմական անձնակազմի՝ ներառյալ ռազմական դպրոցների ուսանողների մասնակցությունը քվեարկությանը: Ընտրական իրավունքից զրկված են նաև դատապարտյալները՝ բացառությամբ անզգուշությամբ կատարված հանցագործությունների համար դատապարտվածների:

Թուրքիայի դատական համակարգը: Դատական իշխանությանը վերաբերող նորմերը գեներված են Թուրքիայի Սահմանադրության 138-160-րդ հոդվածներում: Չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրությամբ ամրագրված են դատարանների անկախության և անձեռնմխելիության սկզբունքները, խղճահանդերձ Թուրքիայի դատական համակարգը գերծ չէ գործադիր իշխանության և հատկապես Արդարադատության նախարարի զգալի մասնակցությունից և միջամտությունից: Դա մասնավորապես դրսևորվում է դատավորների նշանակման, նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատարանների վարչատնտեսական խնդիրների լուծման, ինչպես նաև Դատավորների և դատախազների գերագույն խորհրդի ղեկավարման հարցերում⁵⁶:

Դատավորների նշանակումները կատարվում են յոթ անդամից բաղկացած Դատավորների ու դատախազների գերագույն խորհրդի կողմից, որը գլխավորում է Արդարադատության նախարարը: Դատավորների ու դատախազների գերագույն խորհրդի կողմից են լուծվում նաև դատավորների պաշտոնակազմությանը, խրախուսմանը, տեղափոխմանը առնչվող հարցերը: Դատավորների ու դատախազների գերագույն խորհրդի որոշումների բողոքարկ-

⁵⁶ Տե՛ս Թուրքիայի Սահմանադրության 140, 144, 159 հոդվածները:

ման մեխանիզմի բացակայությունը գործնականում սրում է դատավորների անկախությանը կապված հիմնախնդիրները⁵⁷;

Ավելին, թեև Սահմանադրությամբ ամրագրվում է դատավորների անփոփոխելիության սկզբունքը և մինչև 65 տարին պաշտոնավարումը, այնուամենայնիվ դրանում բացակայում են դատավորների տեղափոխությունների և վերանշանակման մասին դրույթներ: Այս իրավիճակը պարարտ հող է ստեղծում իշխանությունների համար, որ առանց պատճառաբանության և դատավորների համաձայնության նրանց պակաս ցանկալի շրջաններ աշխատանքի տեղափոխեն:

Արդարադատության իրականացումը և դատական միտերը, որպես կանոն, իրավարարական են, սակայն կարող են սահմանափակվել հասարակական բարոյականության և հասարակական անվտանգության շահերից ելնելով⁵⁸: Թուրքիայում ներդրված չէ երդվյալ ատենակալների ինստիտուտը:

Թուրքիան աչքի է ընկնում դատական մարմինների բազմազանությամբ: Գործերի ըստ էության բնությունը առաջին անգամ իրականացվում է արդարադատության, վարչական, զինվորական դատարաններում, որոնք ունեն երկաստիճան կառուցվածք՝ բաժանվելով վերին և ստորին դատարանների: Առաջին ատյանի դատարանների ակտերը վերջնական վերանայման են ենթարկվում բարձրագույն դատարանների կողմից, որոնք են Բարձրագույն վերաքննիչ դատարանը, Բարձրագույն զինվորական վերաքննիչ տրիբունալը, Բարձրագույն զինվորական վարչական դատարանը, Պետական խորհրդի դատարանը, Դատազորության (յուրիսդիկցիոն) վեճերի դատարանը, ինչպես նաև Սահմանադրական դատարանը⁵⁹:

Արդարադատության դատարանները քաղաքացիական գործեր բնուող դատարաններն են, որոնք բաժանվում են երկու տեսակի՝ 1) *քաղաքացիական խաղաղարար դատարաններ* և 2) *առաջին ատյանի քաղաքացիական դատարաններ*: Յուրաքանչյուր շրջանում և քաղաքում գործում է մեկ մեծ դատարան, որտեղ գործերը բնվում են միանձնյա կարգով:

Քրեական դատարանները իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝ 1) *քրեական խաղաղարար դատարաններ*, որոնք բնուում են նվազ վտանգավոր

ություններ կայացնող հանցագործությունների վերաբերյալ գործերը, և 2) *առաջին ատյանի քրեական դատարաններ*, որոնք գործում են մի դատավորի կազմով և իրականացնում են առավել ծանր քրեական գործերի հիմնական մասի բնությունը՝ բացի խաղաղարար դատարաններին և կենտրոնական քրեական դատարանին վերապահված գործերից: Նշված դատարանների հետ յուրաքանչյուր քաղաքում գործում է նաև մեկ *կենտրոնական կամ ծանր գործերով քրեական դատարան*⁶⁰, որը կոլեգիալ կազմով բնուում է հինգ տարուց ավելի ազատագրվում և ցմահ ազատագրվում նախատեսող հանցագործությունների վերաբերյալ գործերը: Այս դատարանը քաղկացած է նախագահող դատավորից և երկու այլ անդամ-դատավորներից, ինչպես նաև հանրային մեղադրողից⁶¹:

Թուրքիայի դատական համակարգի ժողովրդավարացման առումով էական քայլ էր 2004 թվականի սահմանադրական բարեփոխումների միջոցով Պետական անվտանգության դատարաններին վերացումը, որոնք ստեղծվել էին դեռևս 1982 թվականին՝ զինվորական կառավարության կողմից ընդունված Սահմանադրությամբ⁶²: 2005 թ. քրեական դատավարության նոր օրենսգրքով պետական անվտանգության դատարանների իրավասությանը վերապահված ահաբեկչության, կազմակերպված հանցավորության և պետական անվտանգության վերաբերյալ գործերի բնությունը համաձայն *Ծանր քրեական գործերով դատարաններին*:

Քրեական ու քաղաքացիական գործերով դատական ակտերը կարող են բողոքարկվել Բարձրագույն վերաքննիչ դատարան: Վերջինս հաճախ անվանվում է նաև Վճարելի դատարան, քանի որ այս դատարանի կողմից կա-

⁵⁷ Տարբեր աղբյուրներում նշված երկու անվանումներն էլ հանդիպում են:

⁵⁸ Տե՛ս վերը, հոլմ 59:

⁵⁹ Պետական անվտանգության դատարանները կոչված էին բնակելու ու լուծելու պետական անվտանգության դեմ ուղղված և հանցավոր կազմավորումների կողմից կատարվող հանցագործությունների վերաբերյալ գործերը: Այդ դատարաններից յուրաքանչյուրը բաղկացած էր երեք դատավորներից, որոնցից մեկը զինվորական դատավոր էր և սոցիալական ու նյութական ապահովվածությամբ կախվածության մեջ էր զինվորական իշխանությունից՝ միաժամանակ նեթարկվելով զինվորական կարգ ու կանոնի: Ձինվորական դատավորների առկայությունը միջազգային կազմակերպությունների և Մարդու իրավունքների նվթարական դատարանի կողմից տարբեր գործերում բնադատության նեթարկվեց, որն էլ նպաստեց դրանց վերցանանք (տե՛ս Turkey: Justice Delayed and Denied, Amnesty International report of September 2006, available at <http://www.amnesty.org/en/library/asset/EUR44/013/2006/en/dom-EUR440132006en.html>, visited in October 2008), http://en.wikipedia.org/wiki/Legal_System_in_the_Republic_of_Turkey#State_Security_Courts (visited in November 2008).

⁵⁷ Joseph R. Crowley, Justice On Trial: State Security Courts, Police Impunity, And The Intimidation Of Human Rights Defenders In Turkey, Special Report of the Program/Lawyers Committee for Human Rights: Joint Mission to Turkey 1998, 22 Fordham Int'l L.J. 2129, June, 1999, p. 2147- 2148:

⁵⁸ Թուրքիայի Սահմանադրության 138-141 հոդվածներ:

⁵⁹ Judicial system of Turkey (available at <http://www.interpol.int/public/Region/Europe/pjsystems/turkey.asp#31>, visited in November 2008).

յացված որոշումները վերջնական են, բողոքարկման ենթակա չեն և ստորադաս դատարանների համար ունեն նախադեպային մշակակութուն:

Թուրքիայում վարչական արդարադատությունը իրականացվում է վարչական դատարանների կողմից, որոնք բաժանվում են տեղական ու տարածաշրջանային վարչական դատարանների: Վարչական դատարանների կողմից կայացված ակտերի դեմ բերված բողոքները բնմուռ է Պետական խորհրդի դատարանը⁶³:

Թուրքիայում զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով արդարադատությունը առանձնացված է ընդհանուր արդարադատությունից և վերապահված է զինվորական դատարանների: Չինվորական արդարադատության համակարգը կազմված է առաջին ատյանի զինվորական դատարաններից, Բարձրագույն զինվորական վերաքննիչ դատարանից և Բարձրագույն զինվորական վարչական դատարանից⁶⁴:

Սահմանադրական արդարադատությունը Թուրքիայում իրականացվում է Սահմանադրական դատարանի կողմից, որի հիմնական առաքելությունը իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանելու ստուգումն է⁶⁵: Թուրքիայի դատական համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Դատազորության (յուրիսդիկցիոն) վեճերի դատարանը, որը կոչված է լուծելու քաղաքացիական, վարչական ու զինվորական դատարանների միջև առաջացած իրավասությունների վերաբերյալ վեճերը: Դատարանը ղեկավարում է Սահմանադրական դատարանի կողմից ընտրված Սահմանադրական դատարանի անդամ դատավորներից մեկը⁶⁶:

1/10 Մարդու իրավունքների երաշխիքները Թուրքիայում

Մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման ու պաշտպանության վիճակը երկրի ժողովրդավարության մասին դատելու առանցքային չափանիշներից է: Հետևելով քաղաքակիրթ երկրների կողմից ճանաչված մարդու հիմնարար իրավունքներին՝ Թուրքիայի Սահմանադրությանը ամրագրված են այնպիսի իրավունքներ ու ազատություններ, ինչպիսիք են անձնական ազատության ու անվտանգության իրավունքը (հոդված 19), հաղոր-

դակցման ազատության իրավունքը (հոդված 22), մտքի և կարծիքի ազատության իրավունքը (հոդված 25), զանգվածային լրատվամիջոցների ազատության իրավունքը (հոդված 28), միավորվելու ազատության իրավունքը (հոդված 33), հանրահավաքներ և ժողովներ անցկացնելու իրավունքը (հոդված 34) սեփականության իրավունքը (հոդված 35) և այլն: Թուրքիան միացել է նաև մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում մի շարք առանցքային միջազգային փաստաթղթերի, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին (1949 թ.-ին), Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիային (1954 թ.-ին), Պատժի, անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիային (1988 թ.-ին), Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին (2000 թ.-ին) և մահապատժի վերացմանը վերաբերող դրա 2-րդ արձանագրությանը (2006 թ.-ին), Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրին (2000 թ.-ին), ինչպես նաև ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ պայքարի մասին կոնվենցիային և խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխման մասին եվրոպական կոնվենցիային⁶⁷, Կոռուպցիայի դեմ պայքարի մասին ՄԱԿ-ի կոնվենցիային (2006 թ.-ին):

2006 թ.-ին վավերացնելով Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 13-րդ արձանագրությունը՝ Թուրքիայում ընդհանրապես արգելվեց մահապատիժը բոլոր իրավիճակներում⁶⁸, այդ թվում նաև պատերազմական գործողությունների ժամանակ: 2006 թ.-ի սեպտեմբերի 27-ին Թուրքիան վավերացրել է նաև Եվրոպական սոցիալական խարտիան, թեև որոշակի վերապահումներով⁶⁹:

Չնայած մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների բնագավառում առկա իրավական քավարար դաշտին՝ գործնականում այդ իրավունքների իրականացումը և իրական երաշխիքները Թուրքիայում շարունակում են

⁶³ Joseph R. Crowley, supra note

⁶⁴ Ավելի շատ տեղեկությունների համար տե՛ս <http://www.legislationline.org/?id=144&jid=51&less=false>, (visited in October 2008).

⁶⁵ Խարտիայի վերապահումները վերաբերում են մասնավորապես կազմակերպման իրավունքին (հոդված 5), գործատուների և աշխատողների միջև կոլեկտիվ բանակցությունների (հոդված 6), հոդված 2-ի 3-րդ կետին (նվազագույն արձակուրդը), վարձատրությանը և պաշտան աշխատանքային պայմաններին (հոդված 4, կետ 1): Միևնույն ժամանակ Թուրքիան հրաժարվել է երկխոսության և երիտասարդների պաշտպանությանը և հաշմանդամների իրավունքների վերաբերող Խարտիայի դրույթներից նախկինում արված վերապահումներից:

⁶³ Տե՛ս Թուրքիայի Սահմանադրության 155 հոդվածը, ինչպես նաև Պետական խորհրդի դատարանի ինտեռնետային կայքը (<http://www.danistay.gov.tr/eng/index.html>):

⁶⁴ Տե՛ս <http://countrystudies.us/turkey/74.htm> (visited in October 2008).

⁶⁵ Տե՛ս Թուրքիայի Սահմանադրության 149 հոդված:

⁶⁶ Տե՛ս Թուրքիայի Սահմանադրության 158 հոդվածը:

ատավեպապեա հռչակագրային բնույթ ունեւալ⁷⁰: Միայն 2007 թ. ընթացքում Թուրքիայի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացվել 2830 գանգատ, որոնցից 331-ի կապակցությամբ որոշումներ են կայացվել՝ արձանագրելով 319 խախտում⁷¹: 2008 թվականի օգոստոս ամսվա դրությամբ Թուրքիան Եվրոպական դատարանում հարուցված մարդու իրավունքների խախտման վերաբերյալ գործերով երկրորդն է Ռուսաստանից հետո (դրանց թիվը հասնում է շուրջ 9000-ի)⁷²:

Խոսելով Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին՝ հետաքրքրություն է ներկայացնում *խոսքի ազատության իրավունքի* հարցը: Վերջինիս երաշխավորումը առանձնահատուկ կարևորություն ունի Թուրքիայի համար՝ միջազգային հանրության կողմից գնահատվելով որպես ժողովրդավարական հասարակության կայացման նախապայմաններից մեկը: Ավելին՝ խոսքի ազատության իրական երաշխիքների առկայությունը կուպեն-հագենյան քաղաքական շափանիչների առանցքային կետերից է, որին պետք է ձգտի հասնել Թուրքիան՝ Եվրոպական ընտանիքին ինտեգրվելու համար: Պատահական չէ, որ թուրք քաղաքական գործիչ Ատիլլա Յայլան Մեծ Բրիտանիայում տված հարցազրույցի ժամանակ ասել է, որ «Առանց խոսքի ազատության Թուրքիան չի կարող ամվանել իրեն քաղաքակիրթ երկիր, և եթե թուրքերը ցանկանում են, որ իրենց երկիրը զարգանա, ապա նրանք պետք է պաշտպանեն ազատ արտահայտվելու իրավունքը»⁷³:

Թուրքիայում խոսքի ազատության սահմանադրական ամրագրումը (հոդված 26) կաշկանդված է այնպիսի ձևակերպումներով, որոնք ինքնին ի չիք են դարձնում այս իրավունքի իրականացման իրական հնարավորությունները: Մասնավորապես, Սահմանադրության նախաբանի համաձայն՝ «Մտքերը և կարծիքները, որոնք հակասության մեջ են մտնում Թուրքիայի ազգային շահե-

րի, Թուրքական պետության ու տարածքի ամբողջականության գոյության սկզբունքի, Թուրքական պատմական ու բարոյական արժեքների կամ ազգայնամոլության, Աբաբուրքի սկզբունքների, բարեփոխումների և հայացքների հետ, պաշտպանության ենթակա չեն...»:

Խոսքի ազատությունը սահմանափակող բազմաթիվ հոդվածներ են առկա նաև Թուրքիայի «Քրեական օրենսգրքում», 1991 թվականին ընդունված «Ահարեկության դեմ պայքարի» մասին, ինչպես նաև «Աբաբուրքի դեմ ուղղված հանցագործությունների» մասին օրենքներում: Օրինակ՝ Քրեական օրենսգրքի՝ յայն բննադատության տեղիք տված 301-րդ հոդվածը վեց ամսից մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում է նախատեսում թուրքական ազգին⁷⁴, Թուրքիայի Հանրապետությանը կամ Պաշտպանությանը վիրավորանք հասցնելու համար, որը ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում խիստ բննադատելի մտայնում է⁷⁵:

Ավելին՝ *Human Right's Watch* միջազգային կազմակերպության տվյալների համաձայն՝ Թուրքական օրենքները պարունակում են ավելի քան 300 հոդվածներ, որոնք սահմանափակում են խոսքի, դավանանքի և միավորման ազատության իրավունքները⁷⁶:

Թուրքիայի կողմից խոսքի ազատության իրավունքի խախտման բազմաթիվ դեպքեր է արձանագրել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, *Incal v. Turkey-ի* գործում թուրքական իշխանությունները անարեկչության մեղադրանք էին առաջադրել Աշխատավոր մարդկանց կուսակցության Իզմիրի մասնաճյուղի անդամներին, որոնք կազմել էին ապօրինի մանրածախ առևտրի ու քաղաքի շուրջ առողջ ճանապարհների դեմ ձեռնարկված միջոցները բննադատող թոռցիկ և այն ներկայացրել էին իշխանություններին՝ տարածման հավանություն ստանալու համար: Այս գործը բննեղիս Եվրոպական դատարանը գտել է, որ թոռցիկը սուկ բննադատում է իշխանությունների կողմից ձեռնարկված վարչական ու տեղական միջոցները, և դրա համար կուսակցության անդամներին մեղադրանք առաջադրելը հարիր

⁷⁰ Sli'u Country Reports on Human Rights Practices - 2001 Released by the Bureau of Democracy, Human Rights, and Labor, March 4, 2002 (available at <http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2001/eur/8358.htm>, visited in October 2008).

⁷¹ Sli'u Turkey and the Council of Europe, (at http://www.coe.int/T/E/Com/About_Coe/Member_states/e_tu.asp#TopOfPage, visited in November 2008).

⁷² Նշված գործերի շարքում գերակշռող տևող են զբաղեցնում արդարացի դատաբանության իրավունքի, սեփականության իրավունքի, կյանքի իրավունքի և կտանալների արգելման հետ կապված բողոքները (սևս, Turkey 2006 Progress Report, Commission Of The European Communities, Brussels, 8.11.2006, SEC(2006) 1390).

⁷³ Sli'u Duvakli, Melik Jitem's Illegal Actions Cost Turkey A Fortune, Today's Zaman, 27 August 2008 (<http://www.todayzaman.com/tz-web/detaylar.do?load=detay&link=151355>, visited in October 2008).

⁷⁴ Turkey: Freedom of speech again an issue (at <http://eng.gazeta.kz/art.asp?aid=104655>, visited in November 2008).

⁷⁴ Մինչև 2008 թ. ապրիլի 30-ի փոխությունները «Թուրքական ազգ» եզրույթի փոխարեն քրեական օրենսգրքում կիրառվում էր «Թուրքականություն» եզրույթը, որն ավելի ընդգրկում էր:

⁷⁵ Այս մտայնումը տևող է գտել Ես Նախարարների կոմիտեի «Մասնավոր քաղաքական բանավեճի ազատության մասին» 2004 թ. հոկտեմբերում, Ես Խորհրդարանական վերաժողովի 1577 (2007) և մի շարք այլ բանասերում, ԵԱՀԿ Խորհրդարանական վերահսկողովի վարչական հոկտեմբերում (1997), Բուխարեստի հոկտեմբերում (2000), Փարիզի հոկտեմբերում (2001) և ՄԱԿ-ի գեներալներում, ինչպես նաև Եվրոպական դատարանի նախադեպերում:

⁷⁶ Questions and Answers: Freedom of Expression and Language Rights in Turkey (<http://www.hrw.org/press/2002/08/turkeyqa041902.htm>).

չէ ժողովրդավարական հասարակությանը, և խոսքի ազատության սահմանափակումը այս դեպքում չի բխում Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետով⁷⁷ սահմանված նպատակներից⁷⁸:

Թուրքիայում մարդու իրավունքներին վերաբերող մյուս կարևոր խնդիրները կանանց իրավունքների սահմանափակումներն են և լայն տարածում ունեցող խոշտանգումները: Չնայած այն հանգամանքին, որ Թուրքիան 1985 թվականին վավերացրել է Կանանց նկատմամբ բոլոր տեսակների խտրականությունների վերացման մասին կոնվենցիան⁷⁹, այնուամենայնիվ տղամարդկանց համեմատությամբ կանանց անհավասարությունը Թուրքիայում ունի պատմական խորը արմատներ⁸⁰: Գործնականում կանանց նկատմամբ դրսևորվում են բռնության այնպիսի տեսակներ, ինչպիսին են հարկադիր ամուսնությունը, ընտանեկան ծեծը, բազմամուսնությունը⁸¹:

Պետք է նշել, որ կանանց իրավունքների իրականացման պատշաճ նախադրյալներ ստեղծելու և դրանք պաշտպանությունը ավելի բարձր հիմքերի վրա դնելու ուղղությամբ Թուրքիայում զգալի քայլեր են ձեռնարկվել: Մասնավորապես, Թուրքիայի Սահմանադրությունը հռչակում է, որ կանայք և տղա-

մարդիկ օգտվում են հավասար իրավունքներից⁸²: Սահմանադրության մեջ 2001 թվականին կատարված փոփոխությամբ ամրագրվեց, որ ընտանիքը բուրքական հասարակության հիմքն է և հիմնված է ամուսինների հավասարության վրա (հոդված 41): Գեներալիզիոն հավասարությունը բարձրացնելու ուղղությամբ յուրեք բարեփոխումներ կատարվեցին նաև Թուրքիայի Քաղաքացիական օրենսգրքում: Մասնավորապես սահմանվեց, որ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը ամուսնալուծության դեպքում պետք է ամուսինների միջև բաժանվի հավասար⁸³:

Մարդկանց իրավունքներն ու ազատությունները Թուրքիայում մեծապես տուժում են խոշտանգումներից, որոնք հատկապես լայն տարածում ունեն 1980 թվականի ռազմական հեղափոխությանը հաջորդող երկու տասնամյակների ընթացքում: Դրանց հետևանքով միայն կալանավայրերում սպանվել են հարյուրավոր մարդիկ, այդ թվում, օրինակ, 1994 թվականին արձանագրվել է 45 այդպիսի դեպք⁸⁴: Խոշտանգումները դրսևորվում են ծեծի, սեռական ոտնձգությունների, բնից, ոտելիքից և խմիչքից գրկելու, ձեռքերից կախելու ձևերով:

Խոշտանգումները նվազագույնի հասցնելու ուղղությամբ կատարվել են որոշակի բարեփոխումներ՝ ուղղված իրավական օգնության դիմելու իրավունքի ճանաչմանը, նախադատական կալանավորման ժամկետների կրճատմանը, բժշկական ստուգումների բարելավմանը: Կալանավայրերում խոշտանգումների դեմ արդյունավետ պայքարի համար առաջարկներ են արվում նաև կալանավորման պայմանների նկատմամբ հսկողությունը ուժեղացնելու, մեկուսի խցերում պահելը բացառելու, անձանց կալանքի տակ վերցնելու դեպքերը նվազագույնի հասցնելու, կալանավորին արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու հնարավորություն տալու վերաբերյալ⁸⁵:

⁷⁷ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետը թույլ է տալիս խոսքի ազատության սահմանափակում ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության և հասարակական անվտանգության ապահովման, հասարակական կարգը սրահպանելու ու հանցագործությունը կանխելու, առողջությունը ու քաղաքականությունը, այլոց իրավունքները և բարի համբավը պաշտպանելու, վստահությամբ տրամադրված տնդեկատվության բազաիայտումը կանխելու կամ իշխանության և դատական համակարգի անկախությունը ապահովելու անհրաժեշտություններից նյնելով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

⁷⁸ Article 10 of the European Convention for the Protection of Human Rights (at <http://www.hrw.org/reports/1999/turkey/turkey993-03.htm>, visited in October, 2008), ECHR Case *Incal v. Turkey* (9 June 1998), App. no. 22678/93 (available at <http://www.legislationline.org/legislation.php?tid=112&lid=4884>, visited in November, 2008):

⁷⁹ Stü Women Information Network in Turkey (http://www.die.gov.tr/tkba/English_TKBA/kadin_haklari.htm).

⁸⁰ Տղամարդիկ ավանդաբար համարվել են օջայի գլուխը և պատասխանատու են նրի բոլոր հիմնական որոշումների կայացման համար՝ ներառյալ որոշելով, թե արդյո՞ք կլինը պետք է աշխատի օջայից դուրս, թե՛ ոչ (Vince Burskey, "Times Of Change - Can Turkey Make The Necessary Changes In Its Human Rights Policies To Be Admitted To The European Union?", 29 North Carolina Journal of International Law and Commercial Regulation 713, 2004, p. 725-726):

⁸¹ Stü Report on women's role in social, economic and political life in Turkey, European Parliament's Committee on Women's Rights and Gender Equality, (2006/2214(INI)) 2007, p. 7:

⁸² Թուրքիայի Սահմանադրության 66 հոդված և 10-րդ հոդվածի 2-րդ կետ:

⁸³ Stü Report on Violence against Women in Turkey, submitted by Turkey to United Nations Committee against Torture, 2003, p. 345:

⁸⁴ Stü Human Rights Watch Briefing Paper, Eradicating Torture in Turkey's Police Stations: Analysis and Recommendations, September 2004 (available at http://www.hrw.org/background/eca/turkey/2004/torture/eradicate_torture.pdf, visited in November 2008):

⁸⁵ Stü Kurdish Human Rights Project, Torture in Turkey: The Current Status of Torture and Ill-treatment, August 2006, updated version, p. 7-8 (available at <http://www.khrp.org/publish/p2006/TORTURE%20IN%20TURKEY%20The%20Current%20Status.pdf>, visited in October 2008):

Թուրքիայում

Թուրքիան առանձնանում է իր էթնիկ բազմազանությամբ, որում մեծ թիվ են կազմում հատկապես հայերը, հույները, աղբբեջանցիները, սիրիացիները, քրդերը: Այդուհանդերձ, ազգային փոքրամասնությունների հարցում Թուրքիան վարում է առավելապես մերժողական քաղաքականություն՝ չճանաչելով տարբեր էթնիկ խմբերի ազգային փոքրամասնության կարգավիճակը և ձգտելով նվազագույնի հասցնել նման կարգավիճակ ձեռք բերելու ցանկությունները: Թուրքիայի Սահմանադրությունը բավարարվում է միայն վկայակոչումով, որ բոլորն առանց խտրականության հավասար են օրենքի առջև՝ անկախ լեզվից, ազգությունից, սեռից, մաշկի գույնից, քաղաքական հայացքներից, փիլիսոփայական հավատից, կրոնից ու աղանդից, ինչպես նաև համանման հանգամանքներից⁸⁶: Պատահական չէ նաև, որ Թուրքիան որդեգրել է այն մոտեցումը, թե բոլոր էթնիկ խմբերն իրենց անբողոքության մեջ կազմում են թուրքական ազգը և առաջին կարգի քաղաքացիներ են՝ օգտվելով հավասար իրավունքներից⁸⁷: Ավելին՝ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ թուրքական պետությանը քաղաքացիության միջոցով կապված յուրաքանչյուր որ համարվում է թուրք⁸⁸:

Ազգային փոքրամասնությունների ճանաչման ու պաշտպանության հարցում Թուրքիան առաջնորդվում է հիմնականում 1923 թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի պայմանագրով: Այդ պայմանագրով պաշտոնապես ճանաչվում է միայն հայկական, հունական և հրեական էթնիկ խմբերի՝ ազգային փոքրամասնություն հանդիսանալու հանգամանքը⁸⁹: Ազգային փոքրամասնությունների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերի առումով թերևս միակ փաստաթուղթը Թուրքիայի ու Բելգիայի միջև 1925 թ. կնքված երկկողմ

⁸⁶ Թուրքիայի Սահմանադրության 10-րդ հոդված:
⁸⁷ Harun Arikian, Turkey and the EU: An Awkward Candidate for EU Membership, Great Britain, 2006, second edition, p. 123, (Հղում է կատարվում 2001 թվականին դեկտեմբերի 27-ին Անկարայում կրոսներ թուրք դիվանագետ Սևնի կարամանի տված հարցազրույցին):
⁸⁸ Թուրքիայի Սահմանադրության 66-րդ հոդված:
⁸⁹ Sևն International Helsinki Federation for Human Rights: Turkey: A Minority Policy of Systematic Negation, October 2006, p. 1. (available at http://www.ihf-hr.org/documents/doc_summary.php?sec_id=3&d_id=4318, visited in October 2008).

համաձայնագիրն է, որով նախատեսվում է Լոզանի պայմանագրի դրույթները կիրառել նաև Թուրքիայում բնակվող էթնիկ բեզլիացիների նկատմամբ:

Ազգային փոքրամասնությունների իրավական վիճակին կապված խնդիրները պայմանավորված են հատկապես նրանց առանձին իրավունքների և ազատությունների իրականացման հարցում առկա սահմանափակումներով: Այսպես, օրինակ, կրթության կազմակերպման բնագավառում մուսուլման ազգային փոքրամասնությունները ոչ միայն զրկված են դպրոցներում դասավանդումը իրենց մայրենի լեզվով իրականացնելու, այլև մայրենի լեզուն որպես ընտրովի առարկա դասավանդելու իրավունքից: Այս առումով թերևս ավելի բարենպաստ վիճակում են ոչ մուսուլման ազգային փոքրամասնությունները, որոնց վերաբերյալ պայմանագրի 40-րդ հոդվածը իրավունք է վերապահել սեփական միջոցներով հիմնադրել կրթական հաստատություններ և դրանցում դասավանդումը կազմակերպել մայրենի լեզվով: Այդուհանդերձ, այս իրավունքի իրականացումը ևս գործնականում հանդիպում է բազմաթիվ խոչընդոտների:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների սահմանափակումները դրսևորվում են նաև քաղաքական գործունեության ոլորտում: Մասնավորապես «Քաղաքական կուսակցությունների մասին» Թուրքիայի օրենքի 81-րդ հոդվածը կուսակցություններին արգելում է հանդես գալ ազգային, կրոնական, ռասայական կամ լեզվական տարբերությունների հիման վրա ազգային փոքրամասնությունների գոյության պահանջներով⁹⁰, և դրա հիման վրա դադարեցվել է բազմաթիվ կուսակցությունների գործունեությունը: Նշված օրենքով արգելված է նաև ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործումը քաղաքականության մեջ: Մասնավորապես արգելվում է թուրքերենից բացի այլ լեզուների օգտագործումը կուսակցության կանոնադրության մեջ և ծրագրերում, համաժողովների, հանդիպումների, քարոզարշավի ժամանակ, նկարներում, պատատներում, ձայնային և վիզուալ երիզներում, հայտարարություններում: (Օրենքի 81 (բ) հոդված): Ավելին՝ «Ընտրությունների ու ընտրողների գրանցման հիմնարար դրույթների մասին» օրենքի համաձայն՝ արգելվում է թուրքերենից բացի այլ լեզուների օգտագործումը հեռուստատեսությամբ կամ ռադիոյով տարածվող քարոզարշավի ժամանակ⁹¹:

Որոշակի սահմանափակումներ են առկա նաև այնպիսի հիմնարար իրավունքի իրականացման հարցում, ինչպիսին *միավորման իրավունքն* է: «Միավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ միավորում չի կարող

⁹⁰ Law no. 2820, adopted on 26 April 1982.
⁹¹ Law no. 298, adopted on 26 April 1961, Art. 58:

ստեղծվել ազգային անվտանգության, հասարակական կարգի, ընդհանուր անվտանգության, հասարակական բարեկեցության, ընդհանուր բարոյակամության, ընդհանուր առողջության պահպանման դեմ գործունեություն իրականացնելու կամ պետության ազգային և տարածաշրջանային անխախտ ինտեգրացումը տապալելու համար: Այդուհանդերձ պետք է նշել, որ միավորման իրավունքի սահմանափակումների վերացման հարցում տեղի է ունեցել նաև որոշակի առաջընթաց: 2003 թվականի հունվարին վերացվեց այն դրույթը, որն արգելում էր այնպիսի միավորման ստեղծումը, որը հետապնդում էր բացի թուրքական լեզվից ու մշակույթից այլ լեզուներ ու մշակույթներ պաշտպանելու, զարգացնելու և տարածելու նպատակ կամ ուղղված էր միավորման անդամներին իրենց ռասայական, կրոնական, լեզվական, աղանդավորական, մշակութային տարբերությունների ուժով ազգային փոքրամասնություն ճանաչելուն⁹²:

Գործանակում շարունակում են արձանագրվել նաև ազգային փոքրամասնությունների սեփականության ու ազատ տեղաշարժի իրավունքների խախտումներ: Մասնավորապես 1964 թ. մեծ թվով հույներ, որոնք ունեին Հունաստանի քաղաքացիություն, վտարվեցին Թուրքիայից՝ պետության ներքին ու արտաքին անվտանգության համար սպառնալիք ներկայացնելու պատրվակով, իսկ մինչև 1989 թվականը հույները գրկված էին Թուրքիայում գտնվող իրենց սեփականությունը վաճառելու և բանկային հաշիվներից գումար հանելու իրավունքից⁹³:

Հույները լրիվ ծավալով չեն օգտվում նաև խոսքի ազատության իրավունքից, որը տարիներ շարունակ հետևողականորեն մերժվել է: Օրինակ՝ Ստամբուլում թույլատրվում է հունարենով միայն երկու թերթի հրատարակում, այն էլ 500-ից մինչև 600 օրինակով և սահմանափակ էջերի քանակությամբ: Արգելվում է նաև այդ թերթերում քննադատել կառավարությանը, թարգմանել կամ հրատարակել կառավարությանն ուղղված այլ թուրքական թերթերի քննադատական նյութեր, երկիր ներմուծել Հունաստանում հրատարակված թերթեր ու ամսագրեր, գրախանութներում չկան հունարեն գրքեր: Խոսքի ազատության այսպիսի մերժումը նույնպես հակասում է Լոզանի պայմանագրին, որը թույլ-

⁹²Nurca Kya and Clive Baldwin, *Minorities in Turkey: Submission to the European Union and the Government of Turkey, Minorities Rights Group International, 2004 July*, p. 34 (available at www.minorityrights.org/download.php?id=183, visited in November 2008); (available at <http://www.minorityrights.org/admin/down>, visited in November 2007)

⁹³Steven Stavros Skenderis, *The Ethnic Greeks Of Turkey: The Present Situation Of The Greek Minority And Turkey's Human Rights Obligations Under International Law*, 16 *Saint Thomas Law Review* 551, Spring 2004, p. 566.

լատում է լեզվի ազատ օգտագործումը մասնում, ինչպես նաև Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ ՄԱԿ-ի հռչակագրին, որն ազդարարում է ազգային փոքրամասնությունների իրավունքը համագործակցելու այլ պետությունների քաղաքացիների հետ, որոնց հետ նրանք ունեն ընդհանուր ինքնություն⁹⁴:

Թուրքիայում ազգային փոքրամասնության բավական մեծ խումբ են *քրդերը*, որոնք կազմում են Թուրքիայի՝ 63 միլիոնի հասնող ազգաբնակչության մեկ հինգերորդը: Չրկված լինելով քաղաքական ու սոցիալական իրավունքներից՝ քրդերը 1980 թվականի ռազմական հեղաշրջումից հետո եղել են թուրքական պետության բռնությունների հիմնական օբյեկտը: Քրդերի նկատմամբ այսպիսի մերժողական վերաբերմունքը հանգեցրել է նրան, որ քրդական ազգային փոքրամասնությունների որոշ խմբեր ստեղծել են զինված արմատական կազմակերպություններ՝ հարձակումներ գործելով իշխանության մարմինների նկատմամբ⁹⁵: Մասնավորապես կարելի է վկայալուծել Քրդական աշխատավորական կուսակցությունը, որը 1984 թվականից սկսել է հարձակումներ իրականացնել իշխանությունների նկատմամբ: Այդ հարձակումների արդյունքում ճնշումներ սկսվեցին քրդերի նկատմամբ, որոնք ուղեկցվում էին զանգվածային ձերբակալություններով, խոշտանգումներով ու անհիմն դատավարությունների կազմակերպմամբ: Փաստորեն տեղի էին ունենում անձնական անձնոճնխելիության և գործի արդար քննության իրավունքների խախտումներ: Երբեմն ղզվար էր լինում ստույգ պարզել, թե ով է Քրդական աշխատավորական կուսակցության ակտիվիստ, այդ իսկ պատճառով երբեմն իշխանությունների հարձակումների գոհ էր դառնում ամբողջ գյուղի բնակչությունը: Այդ հարձակումների ժամանակ շատերը ենթարկվում էին հալածանքների, խոշտանգումների և նույնիսկ անհայտանում էին:

Թուրքական իշխանությունները քրդերին զրկել են քաղաքականապես կազմակերպվելու հնարավորությունից: 1971 թվականից սկսած՝ ցանկացած կուսակցություն, որը հանդես էր գալիս քրդերի՝ որպես ազգային փոքրամասնության խնդիրները լուծելու պահանջներով, որակվում էր որպես անջատողական և փակվում⁹⁶:

Քրդերի իրավունքները շարունակում են խախտվել նաև ներկայումս: Մասնավորապես կրթության իրավունքի տեսանկյունից, ինչպես հանրային,

⁹⁴Տե՛ս Steven Stavros Skenderis, *supra* note 93, p. 570:

⁹⁵Human Rights Watch, *Ocalan Trial Monitor: Backgrounder on Repression of the Kurds in Turkey* (more information available at www.hrw.org/campaigns/turkey/kurd.htm).

⁹⁶Միայն 1990 - ական թվականների այս հիմքով դադարեցվել է 8 կուսակցության գործունեություն:

այնպես էլ մասնավոր դպրոցներում չկա քրդերեն ուսուցանելու հնարավորություն: 2004 թվականին փակվեցին բոլոր այն ծրագրերը, որոնք նախատեսում էին քրդերենի ուսուցում⁹⁷:

Քրդերի իրավունքների ճանաչման առումով թերևս առաջընթաց էր Դիարբեքիում քրդերենով հեռարձակումներ կազմակերպելու իրավունքի տրամադրումը երկու հեռուստատիվների, ինչպես նաև Սանհուրֆա քաղաքի մեկ ուղիովայանի: Այդուհանդերձ գործում են հեռարձակման ժամանակային սահմանափակումներ՝ բացառությամբ երաժշտական ծրագրերի ու ֆիլմերի⁹⁸:

Թուրքիայում բնակվող ազգային փոքրամասնությունների իրավունքների պատշաճ պաշտպանության խնդիրը դառնում է օրակարգի հարց՝ հատկապես Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության գործընթացի համատեքստում: Թուրքիայի Անդամակցության-համագործակցության փաստաթղթի (Accession Partnership document) պահանջներից մեկն է Թուրքիայի քաղաքացիների կողմից իրենց մայրենի լեզվի օգտագործմանը հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումների հեռարձակման արգելքների իսպառ վերացումը, Հարավ-արևելքում պետական անվտանգության վիճակի բարելավումը, ինչպես նաև բոլոր քաղաքացիների մշակութային իրավունքների երաշխավորումը՝ անկախ նրանց էթնիկ ծագումից⁹⁹:

Այսպիսով՝ եվրոպական արժեքային համակարգին և ընտանիքին անդամակցելու Թուրքիայի նկրտումները վերջինիս առջև դրել են լուրջ մարտահրավերներ, որոնց շարքում առանցքային է մարդու իրավունքների ու ազատությունների գործում երաշխիքների ապահովումը: Չնայած այս ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկելու հարցում Թուրքական իշխանությունների առեղծույթ պատրաստակամությանը՝ վիճակը շարունակում է անմխիբար մնալ:

⁹⁷ Commission of the European Communities, Turkey Progress Report, 08 November 2006, p. 21 (available at http://ec.europa.eu/enlargement/pdf/key_documents/2006/Nov/tr_sec_1390_en.pdf):

⁹⁸ SİU նույն տեղում, Turkey Progress Report, 08 November 2006, էջ 21:

⁹⁹ SİU Harun Arıkan, supra note. p. 123.

Գլուխ 2

ԹՈՒՐԿԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՁՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

2/1 Թուրքիայի արտաքին քաղաքականությունը

Թուրքիան գտնվում է Բալկանյան երկրների, Կովկասի և Մերձավոր Արևելքի միջև և կարևոր էներգետիկ տարանցման ուղի է Կենտրոնական Ասիայի, Կովկասի և Եվրոպայի միջև: Ելնելով իր աշխարհագրական դիրքից՝ Թուրքիայի համար կարևորում է հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը:

1923 թ.-ին հաջորդող որոշակի ժամանակահատվածում Թուրքիան ջանում էր դրացիական հարաբերություններ պահպանել ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան երկրների, մասնավորապես Իրաքի, Սիրիայի և Իրանի հետ: Հետոլզանյան ժամանակահատվածում¹⁰⁰ Թուրքիան որոշում է կենտրոնանալ առավելապես իր ազգային զարգացման վրա և հակամարտությունների լուծման հարցում վարում է առավել հակազդեղական, քան պասիվ քաղաքականություն¹⁰¹:

Թուրքիայի արտաքին քաղաքականության առաջնային նպատակն է ապահովել խաղաղ, կայուն և բարգավաճ տարածաշրջանային և միջազգային միջավայր, որը կապահովի մարդկային զարգացում ինչպես երկրի ներսում, այնպես էլ հարևան երկրներում և դրանց սահմաններից դուրս¹⁰²:

1930-ական թթ. կեսերին Թուրքիան առաջնային դեր էր խաղում Բալկանյան Անտանտի (Թուրքիա, Հունաստան, Ռումինիա և Հարավսլավիա) ստեղծման (1934 թ.) և Ստադաբադի դաշինքի (Թուրքիա, Իրան, Իրաք, Աֆղանստան) կնքման (1937 թ.) գործում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիան հակա-նացիստական կոալիցիայի շմբարձնող կողմ էր մինչև հակամարտության վերջին ամիսները, երբ միացավ պատերազմին՝ միմիայն նոր աշխարհակարգում իր տեղն ունենալու նպատակով: Երկրորդ աշ-

¹⁰⁰ Լոզանի խաղաղության համաձայնագիրը ստորագրվել է 1923 թ.-ին և ժամանակակից Թուրքական հանրապետության հիմնադիր փաստաթղթերից մեկն է:

¹⁰¹ Today's Zaman, "Turkey's foreign policy profile has been growing", 10/30/2008.

¹⁰² Internet source www.byegm.gov.tr/REFERENCES/foreignpolicy2003.

խարհամարտի ավարտից հետո Թուրքիան դարձավ ՄԱԿ-ի (1945 թ.) և Եվրոպայի խորհրդի (1949 թ.) հիմնադիր անդամ:

Թուրքիան անդամակցեց Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությանը (NATO) 1952 թ.-ին, և մոտ 10 տարի անց՝ 1963 թ.-ին, դարձավ նաև Եվրոպական տնտեսական համայնքի մշտապես համագործակցող անդամ: Թուրքիան նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD), Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության (OSCE), Առևտրի համաշխարհային կազմակերպության (WTO), Իսլամական կոնֆերանսի կազմակերպության (OIC), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (BSCE), Տնտեսական համագործակցության կազմակերպության (ECO), Ջարգացող ութնյակ (D-8) կազմակերպությունների ակտիվ անդամ է: Թուրքիան դիմել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում 2009-2010 թթ. ոչ մշտական տեղ ունենալու համար:

Մեծածավալ փոփոխությունները, որոնք կատարվեցին Խորհրդային Միության փլուզման հետևանքով, նորանկախ պետությունների ի հայտ գալը, Գերմանիայի վերամիավորումը տարածաշրջանային անկայունության և հակամարտությունների պատճառ եղան: Թուրքիան բախվեց անվտանգության խնդրին, քանի որ հարևան երկրներից շատերը բնութագրվում էին անկայունությամբ: Սառը պատերազմին հաջորդող դժվարին ժամանակաշրջանում, զգալով իր ավելացող աշխարհաքաղաքական կարևորությունը, Թուրքիան գլխավորեց Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունը (BSEC), որը կարող է համարվել առաջին հաջողված փորձը շահույթ քաղելու հետևանքավորության միջավայրից¹⁰³:

Այս ժամանակաշրջանը կարևորվում է նաև Թուրքիայի պասիվ քաղաքականության փոփոխմամբ: 1990 թ.-ին Թուրքիան ԱՄՆ-ին բույլ տվեց օգտագործել իր օդային տարածքը և «Incirlik»-ի բազան՝ Իրաքի վրա հարձակում իրականացնելու համար, որը հնարավորություն ստեղծեց ամրապնդելու կապերը ԱՄՆ-ի և NATO-ի գործընկերների հետ¹⁰⁴:

2001 թ.-ից ի վեր երկրի տնտեսական զարգացման, ինչպես նաև AKP կուսակցության քաղաքական դաշտում հայտնվելու հետևանքով Թուրքիան ձեռնամուխ է եղել իր արտաքին քաղաքականության օրակարգի վերափոխմանը:

Ինչպես նշել է դեսպան, Թուրքիայի վարչապետի արտաքին քաղաքականության գլխավոր խորհրդական Ահմեդ Դավուտօղլուն, որը համարվում է Թուրքիայի կառավարության նոր արտաքին քաղաքականության հիմնա-

կան ճարտարապետը. «Անհրաժեշտ է վերանկնարանել Թուրքիայի աշխարհագրական և պատմական իրադրությունը¹⁰⁵»: Դավուտօղլուի հիմնական փաստարկը հիմնված է նրա վրա, որ Թուրքիան ունի աշխարհագրական հսկայական առավելություններ, ինչպես նաև մեծ դիվանագիտական առավելություն արևմտյան ուղղվածության շնորհիվ և «տարատեսակ տարածաշրջանային կազմությունը հնարավորություն է ընձեռում մի քանի տարածաշրջաններում միաժամանակ մանևրելու: Այս տեսանկյունից այն վերահսկում է իր անմիջական շրջապատի ազդեցության ոլորտները¹⁰⁶»: Թուրքիան կարծում է, որ 2003-2007 թթ. դիվանագիտական ակտիվ քաղաքականության շնորհիվ իրեն հաջողվել է վերափոխել իր իմիջը և ներկայումս մտադրված է մասնակցել գլոբալ խնդիրների լուծմանը՝ օգտվելով միջազգային հարթակներից, որը նշանակում է Թուրքիայի վերափոխումը կենտրոնական երկրից համաշխարհային մեծության¹⁰⁷:

Հիրավի, AKP կուսակցության ծրագրում արտաքին քաղաքականության ձևակերպման մեջ նախանշվում է, որ Թուրքիան նպատակ ունի մեծացնելու իր տարածաշրջանային դերը և ամրապնդելու հարաբերություններն իսլամական երկրների հետ, ինչպես նաև ձեռք առնելու միջոցառումներ հարակից շրջաններում հակամարտությունների կարգավորման համար¹⁰⁸: Թուրքիան փորձեց միջոցորդության հանդես գալ իսրայելափրիական հակամարտության լուծման գործընթացում և Ստամբուլում նախաձեռնեց ամուղղակի բանակցությունների յոթ փուլ: Բացի դրանից՝ Թուրքիան սերտ կապեր հաստատեց Իրանի և Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև բարիդրացիական հարաբերություններ հաստատեց Պաղեստինյան երկու խմբակցությունների՝ Համասի և Ֆաթահի հետ: Ըստ Համաշխարհային անվտանգության ինստիտուտի՝ «Թուրքիան վերաբացահայտում է իր անցյալը՝ վերահաստատելով սերտ կապեր այն երկրների հետ, որոնք ժամանակին Օսմանյան կայսրության մաս են կազմել»: Թուրքիայի հաշտեցման փորձերը ներառում են նաև Իրաքի քաղաքական գործընթացում սուհիների ներառումը և Իրաքի շիա և սուննի խմբավորումների միջև կապի ստեղծումը¹⁰⁹: Թուրքիան ջանում էր իր ազդեցությունը հաստատել Մերձավոր Արևելքում և չնայած PKK կողմից կիրառվող որոշ սահմանափակումների՝ «Թուրքիան այնուամենայնիվ իր ազդեցությունն ունի Մեր-

¹⁰³ Internet source www.byegm.gov.tr/REFERENCES/foreignpolicy2003, pg.4.

¹⁰⁴ CSIS Files No.6. pg.22.

¹⁰⁵ Canadian Research, pg.2.

¹⁰⁶ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.78.

¹⁰⁷ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.83.

¹⁰⁸ Canadian Research, pg.2.

¹⁰⁹ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.90.

ճակոր Արևելքում ոչ միայն պետական, այլ նաև հասարակական մակարդակով¹¹⁰»:

Վերջին 4-5 տարիների ընթացքում Թուրքիան նախաձեռնել է բազմակողմանի արտաքին քաղաքականություն, որը Թուրքիայի և համաշխարհային այլ դերակատարների հարաբերությունները դիտարկում է որպես փոխլրացնող, այլ ոչ թե մրցակցային: Թուրքիան փորձում էր նաև իր ազդեցությունը տարածել դեպի արևելք և վերամիավորվել իր ավանդական հարևանների՝ Ուկրաինայի, Վրաստանի, Հունաստանի հետ: Ռուսաստանի հետ, որը թուրքական ապրանքների երկրորդ խոշորագույն ներմուծողն է, Թուրքիան առավել կառուցվածքային հարաբերություններ ունի¹¹¹:

Թուրքիայի արտաքին քաղաքականության մեկ այլ կարևոր ուղղություն է Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության գործընթացը: Որպեսզի Թուրքիան հնարավորություն ունենա ԵՄ անդամակցելու, պետք է բավարարի որոշ չափանիշների, որոնց թվում է հարևան երկրների հետ տարածքային հակամարտությունների բացակայությունը¹¹²: Թուրքիային առնչվող ամենահակասական հակամարտությունների շարքին են պատկանում Կիպրոսի հակամարտությունը, Հյուսիսային Իրաքին վերաբերող տարածաշրջանային խնդիրը, քամի որ այն ահաբեկչական գործունեության կենտրոն էր համարվում, և Հայաստանի հետ սահմանի վերաբացումը: Վերջին ամիսներին Թուրքիան քայլեր է ձեռնարկում Հայաստանի հետ հարաբերությունների բարելավման համար, որի հետ դիվանագիտական հարաբերությունները չունի՝ սկսած 1991 թվականին Հայաստանի անկախացումից:

Եվրոպական երկրների հետ հարաբերություններում Թուրքիայի քաղաքականությունը բաղկացած է երեք տարրերից՝ «երկկողմ հարաբերություններ, ԵՄ մակարդակով հարաբերություններ և ռեգիոնալ/գլոբալ հարաբերություններ: Դրանցից ոչ մեկը չի կարող փոխզիջման ենթարկվել ի վնաս այլոց¹¹³»:

Հարավօսական ճգնաժամի հետևանքով Թուրքիայի դերը միջազգային քաղաքականության և ստեղծման ևս փոխվեց: Ի տարբերություն NATO-ի այլ դաշնակիցների՝ Թուրքիան ձեռնպահ մնաց Ռուսաստանի նկատմամբ սուր քննադատությունից և նախաձեռնեց Կովկասյան անվտանգության և համագործակցության պլատֆորմի ստեղծումը: Նա Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման հարցում Հայաստանի և Ադրբեյջանի միջև միջնորդի դեր ստանձնելու իր պատրաստակամությունը հայտնեց:

¹¹⁰ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.81.

¹¹¹ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.82.

¹¹² CSIS Files, No.6, pg. 20.

¹¹³ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.95.

Ըստ որոշ վերլուծաբանների՝ վերջին զարգացումները որոշակի կասկածներ են հարուցում Թուրքիայի՝ ԵՄ անդամակցության պատրաստակամության վերաբերյալ: Թուրքիան գիտակցում է իր կարևորությունը տարածաշրջանում, և Թուրքիայի ներկայիս դիրքորոշումը հետևյալն է. եթե Արևմուտքը մերժում է Թուրքիային՝ նկատի ունենալով մասնավորապես Եվրամիությանը, ապա Թուրքիան գործի կդնի այլ խաղաքարտեր¹¹⁴:

2/2 Թուրքիան և իր հարևանները

Իրաքը և քրդական հարցը: Քրդական հարցը առանձնահատուկ ուշադրության է արժանացել և ներգրավել է Թուրքիային Շոցի առաջին պատերազմից հետո: Սադան Հուսեյնի կառավարության կողմից Իրաքի քրդական բնակչության պարտության հետևանքով գրեթե 400000 քրդեր մուտք գործեցին Թուրքիա՝ մոտ 500000 գաղթականների թողնելով ճամբարներում: Անկարան փակեց երկրի սահմանները: Դրա հետևանքով Հյուսիսային Իրաքում ստեղծվեց պահպանական գոտի, որտեղ իրաքյան զինվորական գործունեությունն արգելվում էր: Երբ Իրաքի կառավարությունը շրջափակեց երկրի հյուսիսային մասը, քրդերը տնտեսական կախվածության մեջ ընկան Իրանից և Թուրքիայից: Դրա պատճառով քրդական խնդիրը Թուրքիայի, Իրանի և Սիրիայի միջև լարվածություն առաջացրեց:

Թուրքիայի մտահոգությունն այն է, որ Իրաքի քրդերը կարող են առանձնանալ Իրաքից, որը կարող է ենթադրել ուղղակի ռազմական միջամտություն Թուրքիայի և Իրանի կողմից: Բացի այդ՝ անկախ Քրդստանի գաղափարը կարող է ընթրստության այլք բարձրացնել այս երկրների ներսում՝ մեծ ակնկալիքներ պարզելով PKK-ին: Թուրքիան գիտակցում է, որ Քրդստանում ցանկացած ռազմական քայլ, որն ուղղված կլինի PKK-ին, կողջունվի իրանցիների, սիրիացիների և սունիների կողմից, որոնք կարծում են, թե քրդերը չեն կարող պիտություն ստեղծել¹¹⁵: Թուրքիայի սպառնալիքները PKK-ի վրա հարձակվելու վերաբերյալ մեկնաբանվում են որպես սպառնալիքներ ամբողջ Իրաքի քրդերին¹¹⁶:

Թուրքիան կողմնակից է Իրաքի տարածքային ամբողջականությանը, ինչպես նաև նավթով հարուստ Kirkuk-ի կարգավիճակի վերաբերյալ փոխիսա-

¹¹⁴ Jonathan Marcus, "Which Direction for Turkey Now" BBC News , 24 July 2008.

¹¹⁵ World Security Institute, pg. 7.

¹¹⁶ World Security Institute, pg. 7.

մածայնեցված լուծմանը, որպեսզի այն շրտան Քրդական պետության ֆինանսական հիմքը, և պաշտպանվեն Իրաքի բուրքմենների՝ բուրքերի էքսիկ ազգակիցների իրավունքները¹¹⁷։ Թուրքիայի մեկ այլ մտահոգությունը այն է, որ Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումը կարող է քաղաքացիական պատերազմի պատճառ դառնալ։ Նման զարգացումներից խուսափելու նպատակով Թուրքիան ամրապնդում է կապերը Սիրիայի հետ, քանի որ վերջինս ևս գալիս քրդական բնակչություն ունի¹¹⁸։

Թուրքիան հայտարարել է, որ Թուրքիայի նկատմամբ Իրաքից եկող ահարեկական սպառնալիքները անհապաղ ուշադրություն են պահանջում։ Թուրքիան ակնկալում է, որ Իրաքը իր տարածքում գործող և հարևան երկրների համար սպառնալիք ներկայացնող ահարեկական կազմակերպությունը անօրինակա՞ն¹¹⁹ կհայտարարի։

2007 թ.-ին իրաքյան խնդիրը մտավախություն առաջացրեց, քե ճգնաժամը կարող է բացասական ազդեցություն ունենալ Թուրքիայի՝ մնացյալ հարևանների հետ ունեցած հարաբերությունների վրա։ Թուրքիայի արտաքին քաղաքականության վերլուծությունների համաձայն՝ Թուրքիայի «զավ համաձայնեցված քաղաքականության» շրջանակներում Իրաքի կառավարության հետ ճգնաժամ կանխատեսված չէր, և «արդյունքը ցույց տվեց, քե ինչպես երկու հարևան երկրներ կարող են համագործակցել ընդհանուր խնդրի հարթահարման համար»։¹²⁰

Այսօր Թուրքիան տնտեսական արդյունավետ համագործակցություն է ծավալում Իրաքի հետ։ Օրական մոտ 350000 բարել նավթ է մղվում Իրաքից Թուրքիա Kirkuk-Yumartalik նավթամուղի միջոցով։ Բացի այդ՝ Թուրքիան շահագրգռված է իրաքյան բնական գազի ուղղմանը Նարուկո գազամուղ, որը նախատեսված է գազը Կենտրոնական Ասիայից և Կովկասից տեղափոխելու համար¹²¹։

Կիպրոս։ Կիպրոսյան հարցը 1974 թ.-ից ի վեր Թուրքիայի արտաքին քաղաքականության ամենահակասական կետերից է, որը մի շարք խոչընդոտներ է ստեղծել Թուրքիայի՝ ղեպի ԵՄ ճանապարհին և որոշ չափով վնասել է նրա քաղաքական համբավին։

Երկարատև խնդրի վերջնական լուծմանը հասնելու նպատակով կողմերի միջև կղզու վերաբերյալ բանակցություններ սկսելու Թուրքիայի առաջարկը

¹¹⁷ CRS, pg. 5.

¹¹⁸ CSIS Files, No. 6, pg., 20.

¹¹⁹ <http://www.byegm.gov.tr/REFERENCES/foreignpolicy2003.htm>.

¹²⁰ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.81.

¹²¹ CRS, pg. 6.

միջազգային օրակարգ մտավ 2004 թ.-ին։ ՄԱԿ-ի գլխավոր բարտուղար Քոֆի Անանը կղզու երկու մասերին հանրաքվեի ներկայացրեց «Անան պլանը», և հանրաքվեի արդյունքներով պայմանավորված՝ միացյալ Կիպրոսը ԵՄ անդամակցելու հնարավորություն կստանար¹²²։ Կիպրոսից բուրքերը 65% մեծամասնությամբ քվեարկեցին «Անան պլանի» օգտին, որը թույլ կտար խնդրի լուծման միջոցով ամբողջական կղզու ԵՄ անդամակցություն։ Մինչդեռ կիպրոսի հույների 76%-ը այս պլանին դեմ քվեարկեց։ Հանրաքվեի արդյունքները նոր իրավիճակ ստեղծեցին։ Արդյունքները բնականաբար ոչ մի ազդեցություն չունեցան Հունաստանի՝ ԵՄ անդամակցության վրա։

Հակամարտության լուծման հետագա ջանքերը, մասնավորապես Թուրքիայի կողմը կղզու ներսում վերացնելու մարդկանց, ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժի սահմանափակումները կամ 2006 թ.-ի «Գործությունների ծրագիրը», որը նպատակ ուներ տնտեսական զարգացման անցումային գործընթացներն առավել դյուրին դարձնելու, ինչպես նաև Հյուսիսային Կիպրոսի բուրքական հանրապետության ղեկավար Մեհմեդ Ալի Թալաբի առաջարկը բարձրացնելու այնպիսի խնդիրներ, որոնք առնչվում են բուրք և հույն կիպրոսցիների առօրեական կյանքին կամ հայտնվում էին փակուղում, կամ զգալի արդյունքներ չէին ապահովում¹²³։

Կիպրոսի հարցի լուծման հեռանկարները առաջին անգամ բարելավվեցին կիպրոսցի հույն նախագահ Գիմիտրիս Քրիստոֆիասի և կիպրոսցի բուրք առաջնորդ Մեհմեդ Ալի Թալաբի հանդիպումից հետո, որի ժամանակ որոշվեց ստեղծել աշխատանքային խմբեր և տեխնիկական կոմիտեներ, որոնք կնախապատրաստեն նոր բանակցություններ, և խնդրի կարգավորման միջոցով 1974 թ.-ից ի վեր բաժանված կղզին կվերամիավորվի։ Սակայն երկու կողմերը վիճարկում են խնդրի կարգավորման մոտեցումները։ Հույն կիպրոսցիները կող են անում կղզուց դուրս բերել մոտ 30000 բուրք զինվորներին և հակադրվում են 1960 թ.-ի պայմանագրերի նորացմանը, որոնք Թուրքիային Կիպրոսում միջամտության որոշակի իրավունքներ են տալիս¹²⁴։

Այդուհանդերձ, Թուրքիայի միջամտությունը Կիպրոսում, որը դրսևորվում է միայն բուրքիայի կողմից ճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությանը աջակցելու մեջ, վատ նախանշաններ է այն հարցի համար, քե երբևէ այդ խնդիրը կլուծվի։ Սա լուրջ խոչընդոտ է Թուրքիայի ճանապարհին՝ հատկապես ԵՄ անդամակցության հարցում։ Նախ՝ Թուրքիան

¹²² Հանրաքվեն անց է կացվել հյուսիսային և հարավային Կիպրոսում 2004 թ. ապրիլի 24-ին։

¹²³ www.byegm.gov.tr/REFERENCES.foreignpolicy2003.htm.

¹²⁴ CRS-pg.12.

պետք է բավարարի ԵՄ պահանջը և կարգավորի բոլոր տարածքային վեճերը, և երկրորդ՝ Հունաստանը և Կիպրոսը, որոնք ԵՄ անդամ երկրներ են, ցանկացած պահի կարող են օգտագործել իրենց վետոյի իրավունքը: Ներկայիս իրավիճակում խնդրի կարգավորումը բժույ է հեռահար հնարավորություն:

2/3 Թուրքիան և Արևմուտքը

Թուրքիա-ԱՄՆ: Թուրքիան համարվում է ԱՄՆ-ի աշխարհառաջնավարական գործընկերը: ԱՄՆ-ի հետ առանձնահատուկ կապերի արմատները գալիս են Սառը պատերազմի ժամանակաշրջանից, երբ հարաբերությունների անվտանգությունը առավել կարևորվում էր, հատկապես Թյուրման դոկտրինի և Թուրքիայի՝ ՆԱՏՕ անդամակցության հետևանքով¹²⁵:

Ինչպես նշում է Գավուրօղլին Թուրքիայի արտաքին քաղաքականության իր վերլուծության մեջ, աշխարհաքաղաքական տեսանկյունից այս երկու երկրների միջև հարաբերություններն ունեն գերտերության և Աֆրո-Եվրասիայում ամենաօպտիմալ աշխարհաքաղաքական դիրքն ունեցող կենտրոնական երկրի միջև հարաբերությունների բոլոր բնորոշ գծերը¹²⁶:

Թուրքիա-ԱՄՆ գործընկերությունը խորիրդանշվում է Թուրքիայի բույլտվությամբ՝ օգտագործելու Incirlik-ի օդային բազան ՆԱՏՕ և ԱՄՆ քաղաքականությունների իրագործման համար Իրաքում, Աֆղանստանում և Մերձավոր Արևելքի այլ երկրամասերում: Այդ նպատակով ԱՄՆ-ը Թուրքիային տրամադրել է զգալի արտասահմանյան օգնություն, ենթադրաբար Թուրքիայի կողմից առաջարկվող օգնության փոխարեն, որը վերջին տարիներին նվազել է Թուրքիայի տնտեսական աճի հետևանքով¹²⁷: Բացի դրանից՝ Թուրքիան պատրաստակամություն է հայտնել տեղադրելու ԱՄՆ ատոմային զենքերը Incirlik-ի օդային բազայում: 2005 թ.-ի CRC զեկույցը նշում է, որ «90 ԱՄՆ ատոմային զենքեր պահուստված են այնտեղ, թեև ըստ մեկ այլ խմբի գնահատականների՝ 2008 թ-ին զենքերի թիվը կազմել է 50-90՝ ամենամեծը Եվրոպայի այլ բազաներում պահուստված զենքերի քանակության համեմատությամբ»¹²⁸:

Հետաառըպատերազմյան ժամանակահատվածում ստեղծվեց այնպիսի իրականություն, որն ազդեց երկու երկրների հարաբերությունների վրա: Անկախալի և Վաշինգտոնի միջև հարաբերություններում ճգնաժամն առաջ եկավ

¹²⁵ Congressional Research Service, pg.3.

¹²⁶ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.88.

¹²⁷ Congressional Research Service, pg. 3.

¹²⁸ Congressional Research Service, pg.16.

2003 թ.-ին, երբ թուրքական պառլամենտը հավանության չարժանացրեց Թուրքիայի կողմից ԱՄՆ զորքերի Իրաք ներխուժումը՝ դա բացատրելով այն մտավախությամբ, որ Քրդական աշխատավորական կուսակցությունը (PKK), օգտվելով Իրաքում ստեղծված քառային վիճակից, կարող է ապահով ապաստան գտնել Հյուսիսային Իրաքում¹²⁹:

Այս նախադեպից հետո շատ վերլուծաբաններ փորձեցին իրենց բացատրությունները տալ: Առաջին պատճառներից մեկը կարող է լինել այն, որ Թուրքիան մտաբերել է ԱՄՆ անկարողությունը՝ իրականացնելու 1990 թ. Շոցի առաջին պատերազմի ժամանակ խոստացված փոխհատուցումը: Ավելին՝ Թուրքիան կարծում էր, որ Շոցի առաջին պատերազմը ընդհանուր առմամբ բացասական ազդեցություն ունեցավ Թուրքիայի և նրա տնտեսության համար: «1990-ականների վերջերին թուրքերն իրենց կորուստները գնահատում էին 35 – 150 միլիարդ դոլար»¹³⁰:

ԱՄՆ կողմից այն հանգամանքի ճանաչումը, որ PKK վտանգ է ներկայացնում ԱՄՆ-ի և Թուրքիայի համար, ինչպես նաև ԱՄՆ աջակցությունը Թուրքիայի՝ Հյուսիսային Իրաքում կատարած ռազմական միջամտությանը որոշակիորեն բարելավեցին հարաբերությունները:

Ուստի Թուրքիան հույս ուներ, որ ԱՄՆ-ը առավել զգալի քայլեր կձեռնարկի Թուրքիային սպառնացող ահաբեկչական վտանգի դեմ պայքարի համար: Ներկայիս չլուծված իրավիճակը վնասում է ինչպես ԱՄՆ-ին, այնպես էլ Թուրքիային, և Անկարայի ու Բաղդադի հարաբերություններում Հյուսիսային Իրաքին առնչվող հարցերում որոշակի լարվածություն է ստեղծվում, ինչպես նաև PKK-ին «հույս է տալիս սեպվել Անկարայի և Վաշինգտոնի միջև»¹³¹: Փիրսոնը նաև նշում է, որ Վաշինգտոնը Թուրքիայի հետ չի կարող վերահաստատել սերտ հարաբերություններ, քանի PKK հարցը դեռ լուծման ճանապարհին է: Այդուհանդերձ, այն հարցը, թե ԱՄՆ-ը ինչու է հանդուրժում մնալ վնասակար սցենար, մնում է անպատասխան¹³²:

ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև հետագա անհամաձայնություններն առաջ եկան այն պատճառով, որ Թուրքիան սկսեց առավել սերտ կապեր հաստատել Մերձավոր Արևելքի երկրների, մասնավորապես Իրանի հետ: Այդուհանդերձ,

¹²⁹ Jonathan Marcus, "Which Direction for Turkey Now" BBC News , 24 July 2008.

¹³⁰ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 66.

¹³¹ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 73.

¹³² W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 73.

պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Իրանի հետ ընկերական հարաբերություններ հաստատելով՝ Թուրքիան այլ նկատառումների շարքում հատկապես առաջնորդվում է տնտեսական նկատառումներով, մասնավորապես Էներգետիկայի ոլորտում համաձայնագրերով: Հիրավի, 2007 թ.-ի Թուրքիայի արտաքին քաղաքականության վերլուծության մեջ Դավաթողուն նշում է, որ «որպես զարգացող տնտեսություն և Էներգիային աղբյուրներով շրջապատված երկիր՝ Թուրքիան իրանական էլեկտրաէներգիայի կարիքն ունի՝ որպես իր ազգային շահերի ապահովման ուղղություն Թուրքիայի՝ Իրանի հետ Էլեկտրաէներգիայի ոլորտում ձեռք բերված համաձայնագրերը չեն կարող պայմանավորված լինել այլ երկրների հետ հարաբերություններով¹³³»:

Թուրքիայի՝ Մերձավոր Արևելքի երկրների հետ կապերի սերտացման առնչությամբ Թուրքիայի տպավորությունն այն էր, որ իր նախաձեռնությունները Վաշինգտոնում լիովին չեն ընկալվում և չեն ընդունվում, և որ «Բուշի վարչակարգը անտարբեր է տարածաշրջանում Թուրքիայի նախաձեռնությունների նկատմամբ...¹³⁴»: Ավելին՝ Վաշինգտոնը քննադատել է Թուրքիային ոչ միայն Իրանի նախագահ Ահմադինեջադին չքննադատելու համար, այլև Միշ-՝ալին, քանի որ Համասը ճանաչվել է ահաբեկչական կազմակերպություն, և Բաշիրին՝ Դարձուրում Սուդանի կողմից իրագործվող ցեղասպանության պատճառով: Մյուս կողմից Թուրքիան չէր աջակցում ԱՄՆ արտաքին քաղաքականությանը Իրանի, Սիրիայի, Համասի և Սուդանի մեկուսացման առնչությամբ, քանի որ թուրք պաշտոնյաները գտնում էին, որ իրենց արտաքին քաղաքականությունը «նպատակ ունի ընդլայնելու հարաբերությունները Արևմուտքի ու Մերձավոր Արևելքի հետ և լրացուցիչ արժեք է հաղորդում ԱՄՆ և եվրոպական քաղաքականություններին՝ մոտեցումների նոր ասպարեզներ ներկայացնելով¹³⁵»:

Երկու երկրների միջև հարաբերությունների վատթարացման պատճառ եղավ նաև 2007 թ.-ին ԱՄՆ կոնգրեսի կողմից ընդունված քանաձեռն, որի համաձայն՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությունը ցեղասպանություն է իրագործել հայերի նկատմամբ: ԱՄՆ-ը խուսափեց քանաձեռնի հաստատումից՝ վախենալով, որ կոնգրեսի կողմից քանաձեռն ընդունումը խիստ բացասաբար կարող է ազդել երկու երկրների հարաբերությունների վրա և «կարող է խիստ վնասաբեր ազդեցություն ունենալ Իրաքում ԱՄՆ գոր-

րծի տեղակայման հանգամանքի վրա, որոնք կախված են Թուրքիայի տարածքով իրականացվող բեռնափոխադրումներից¹³⁶»:

ԱՄՆ նկատմամբ Թուրքիայի քննադատությունն առնչվում է Թուրքիայի անվտանգության խնդիրների նկատմամբ երկիմաստ քաղաքականությանը: Որպես օրինակ կարող է ծառայել ԱՄՆ աջակցությունը Քրդստանում ազատ կյանքի կուսակցությանը (PJAK), որը PKK-ի թուրք կազմակերպություն է և ճանաչվել է ահաբեկչական կազմակերպություն¹³⁷:

Երկու երկրների համագործակցության մակարդակն ու արդյունավետությունը հանգեցնում են այն ենթադրությանը, որ այդ հարաբերություններում նկատվում է փոխկապակցված և կառուցվածքային մոտեցման կամ ռազմավարության պակաս: Ըստ որոշ վերլուծաբանների՝ Թուրքիայի նկատմամբ Վաշինգտոնի վարած քաղաքականությունը միշտ ածանցված է եղել այլ քաղաքականություններից, մասնավորապես Իրաքի, Աֆղանստանի և ներկայումս Վրաստանի նկատմամբ վարվող քաղաքականություններից¹³⁸: Այս տեսակետի համախոհն է նաև Ջոն Նյուհաուսը՝ Համաշխարհային անվտանգության ինստիտուտից, որը պնդում է, թե Վաշինգտոնում մեծապահպանողականները նախընտրում են «ամրապնդված ռազմավարական հարաբերություններ Թուրքիայի հետ՝ որպես Իրանից պաշտպանվելու միջոց¹³⁹»:

Ամենը Դավաթողին 2003 թ.-ի մարտի 1-ից 2007 թ.-ի նոյեմբերի 5-ը ընկած ժամանակահատվածը բնութագրում է ոչ թե որպես «հանկարծակի բռնիք», այլ որպես գործընթաց: Նա ենթադրում է, որ այս գործընթացի շրջանակներում երկու կողմերը հանգել են որոշակի եզրակացությունների: Նա հատկապես նշում է այն փաստը, որ հարկավոր է միացյալ մոտեցում ցուցաբերել Թուրքիայի և Իրաքի կայունությանը սպառնացող PKK-ի նկատմամբ, ինչպես նաև հարևան երկրների պարբերաբար հանդիպումների ու Իրաքում տիրող իրավիճակի և տարածաշրջանում ուժային բալանսի միջև փոխկապակցվածության ապահովման միջոցով հաշտեցման գործընթացում մեծացնել Թուրքիայի դերը և Իրաքում տարածաշրջանային միջամտության կարևորությունը¹⁴⁰: Ըստ Դավաթողու՝ «փոխհամաձայնեցված տեսլականը և կառուցվածքային երկխոսությունը, որոնք ուղղված են թուրք-ամերիկյան գործընկե-

¹³³ Congressional Research Service, pg. 15.

¹³⁷ John Newhouse, "Iraq, Iran and Turkey", Policy Brief, World Security Institute, December 2007, pg. 7.

¹³⁸ Jonathan Marcus, "Which Direction for Turkey Now" BBC News, 24 July 2008.

¹³⁹ John Newhouse, "Iraq, Iran and Turkey", Policy Brief, World Security Institute, December 2007.

¹⁴⁰ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg. 89.

¹³³ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg. 91.

¹³⁴ Jonathan Marcus, "Which Direction for Turkey Now" BBC News, 24 July 2008.

¹³⁵ Congressional Research Service, pg. 3.

րության հաստատմանը» արտացոլում են այս եզրահանգումները և երկու կողմերի առաջնությունները՝ որպես երկկողմ հարաբերությունների կարգավորման վորձ: Անհրաժեշտ է նշել, որ ԱՄՆ վարչակազմը աջակցում է Թուրքիայի՝ 2009-2010 թթ. ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում ոչ մշտական տեղ ունենալու նկրտումներին:

Այժմ, երբ Թուրքիան, տարածաշրջանում իր կարևորությունը գիտակցելով, զգալի փոփոխություններ է իրականացնում իր արտաքին քաղաքականության ռազմավարության մեջ, ԱՄՆ-ի համար պարզ դարձավ, որ Թուրքիան պատրաստ է համագործակցել ոչ որպես ենթակա ուժ¹⁴¹: Դավաթողուն նշում է, որ «Թուրքիան այլևս միայնակ դաշինքային երկիր չէ, որն իր աջակցության դիմաց ոչինչ չի պահանջում, այլ կարևոր երկիր է՝ տարածաշրջանային և գլոբալ ազդեցությամբ, որի ուժեղ տեսլականը և կարևոր ներդրումներ կատարելու կարողությունը պետք է հաշվի առնել առողջ երկխոսություն ծավալելու միջոցով»:

Կանխատեսումներ կատարելով Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների զարգացման հեռանկարների վերաբերյալ՝ CDFAI ենթադրում է, որ ԱՄՆ և Թուրքիայի միջև բարդացիական հարաբերությունները կարող են շարունակվել, քանի դեռ ԱՄՆ վարած քաղաքականությունը բացասական ազդեցություն չի ունենա Թուրքիայի անվտանգության համար, և շատ քան պայմանավորված կլինի նրանով, «քե ԱՄՆ-ը ինչպես կվերաբերվի Թուրքիային, որը ձգտում է ընդլայնել իր ազդեցությունը, և հարաբերությունների վերահաստատումը պայմանավորված կլինի ԱՄՆ նոր վարչակարգով¹⁴²»: Ջեկոյցը նաև նշում է, որ ԱՄՆ-ը զգում է Թուրքիայի աջակցության կարիքը՝ Իրաքում ԱՄՆ միջամտության, Իրանի հետ լարված հարաբերությունների և Սերժանովը Արևելքում երկարատև խաղաղություն հաստատելու ձգտումների պատճառով:

Թուրքիայի և ԱՄՆ միջև հարաբերությունների ամբողջական պատկերն ունենալու համար պետք է հաշվի առնել նաև ՆԱՏՕ-ի հանգամանքը:

Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է և միակ մասնեղական երկիրն է, որ անդամակցում է այս կազմակերպությանը: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ միակ երկիրն է, որ ինստիտուցիոնալ կապեր ունի Մոցի և արաբական կազմակերպությունների հետ¹⁴³:

ՆԱՏՕ անդամակցությամբ Թուրքիայի կարևորագույն ձեռքբերումներից է Եվրոպայի և ԱՄՆ-ի հետ երկխոսության հաստատումը և որոշակի լեզիտիմության պահպանումը՝ հատկապես հաշվի առնելով Թուրքիայում ռազմական հեղաշրջման դեպքերը 1960, 1971 և 1980 թթ.¹⁴⁴:

ՆԱՏՕ-ն ապահովում է Թուրքիայի լեգիտիմությունը իր սահմաններից դուրս գործեր տեղակայելու և Եվրասիայի տարածքում ռազմական և անվտանգության կառույցներին մասնակցելու համար: Օրինակները ներառում են Թուրքիայի կողմից Միջազգային անվտանգության աջակցման ուժում՝ ՆԱՏՕ-ում հանդես գալը, ինչպես նաև Թուրքիայի մասնակցությունը Աֆղանստանի՝ Քաբուլում իրականացվող տարածաշրջանային առաքելությանը և 2007 թ.-ի մայիսին Կոստոյի հարավային շրջանում տեղակայված Բազմազգային հանձնարարական ուժի հրամանատարության ստանձնումը¹⁴⁵:

Թուրքիայի և ՆԱՏՕ-ի միջև համագործակցությունը և հարաբերությունները, որոնք երկար տարիների պատմություն ունեն, ժամանակ առ ժամանակ բախվել են որոշակի խնդիրների, ինչպես օրինակ 1974 թ.-ին Կիպրոսում ռազմական միջամտությունը, Թուրքիայում կակաչների աճեցման խնդրի շուրջ վեճը և այլն¹⁴⁶: Կիպրական հարցի առնչությամբ Թուրքիային թվում էր, որ ՆԱՏՕ գործընկերները դավաճանել են Թուրքիային՝ չմիջամտելով կզու թուրք քնակչությանը սպառնացող վտանգի կանխմանը: ՆԱՏՕ գործընկերների հետ վատթարացած հարաբերությունները կրկին բարելավվեցին 1983-93 թթ.՝ նախագահ Օզալի ղեկավարության օրոք¹⁴⁷: Բացի այդ՝ Թուրքիան գտն չէր ՆԱՏՕ-ի պահվածքից ՔԿԿ ահաբեկչության կանխման հարցում, որը վնասեց Թուրքիայում ՆԱՏՕ-ի վարկանիշին: Իրաքյան պատերազմի հետևանքով «Թուրքիայում ՆԱՏՕ-ի հասարակական աջակցությունը նվազեց, և ակնկա-

¹⁴³ Today's Zaman, 18,09,2008.

¹⁴⁴ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.64.

¹⁴⁵ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 62.

¹⁴⁶ O.Faruk Logoglu, The State of the US -Turkey Relations: a Turkish Perspective, pg. 29.

¹⁴⁷ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 64.

¹⁴¹ Canadian Research, pg. 3.

¹⁴² Canadian research, pg. 4.

լիրները, որ այն կվերադառնա Սառը պատերազմի ժամանակահատվածի մակարդակին, անիրատեսական են¹⁴⁸»:

Սառը պատերազմի ժամանակաշրջանում հարաբերությունները կողմերի միջև դրական էին և երկկողմանի շահավետ: Թուրքիային շահավետ էր միջազգային մարմնին անդամակցությունը: ՆԱՏՕ անդամակցությունից ի վեր Թուրքիան ստանձնել է ՆԱՏՕ-ի պարտավորությունները: Հետստորպատերազմյան ժամանակաշրջանում իրավիճակը փոխվել է: Անվտանգության ակտիվման խնդիրները թույլ տվեցին ԱՄՆ-ին ընտրել հատուկ կոալիցիաներ, որոնց աջակցում էին ՄԱԿ-ը և ՆԱՏՕ-ն, և այլևս չհիմնվել ավանդական լեգիտիմության վրա, ինչպես Սառը պատերազմի ժամանակաշրջանում: Մինչդեռ Թուրքիան դեռևս նախընտրում էր միջազգային լեգիտիմությունը: Օրինակ կարող է լինել Թուրքիայի կողմից ԱՄՆ-ին ցուցաբերված աջակցությունը Շոնցի առաջին պատերազմի ժամանակ: Փիրսոնը նշում է, քե չնայած այն հանգամանքին, որ Թուրքիայի և ԱՄՆ-ի նպատակները տարբերվում էին, և Թուրքիան գոհ էր Սադամ Հուսեյնի վարչակազմից, այնուամենայնիվ իր աջակցությունը ցուցաբերեց ԱՄՆ-ին: Նույն կերպ Սեպտեմբերի 11-ից հետո Թուրքիան պաշտոնապես իր համաձայնությունը տվեց ԱՄՆ պահանջին՝ օգտագործելու իր օդային տարածքը և բազաները Աֆղանստանում գործողությունների իրականացման համար:

Այն ենթադրությունը, որ Թուրքիան ցանկանում էր հավատարիմ մնալ միջազգային մարմնի շրջանակներում ստանձնած պարտավորություններին, չի կարող ճիշտ լինել 2001 թ.-ին Իրաքում իրականացված հարձակման պարագայում: Սա հանգեցնում է մեկ այլ ենթադրության, ըստ որի՝ Թուրքիան, ՆԱՏՕ շրջանակներում իր պարտավորություններն իրականացնելով, առաջնորդվում է իր սեփական շահերով ևս: Աֆղանստանում թուրքական զորքերի տեղակայումը կարող է բացատրվել նրանով, որ Թուրքիան ատում էր թախիբաններին: Նույն կերպ, երբ 2006 թ.-ին, ՄԱԿ-ի ընդունած բանաձևի համաձայն, Թուրքիան զորք ուղարկեց Լիբանան, պարզ դարձավ, որ Թուրքիան պատրաստ է տարածաշրջանում հակամարտության լուծման հարցում յուրջ դեր ստանձնել՝ ներառյալ ռազմական ուժերում մասնակցությունը¹⁴⁹:

Փիրսոնը՝ Թուրքիայում ԱՄՆ նախկին դեսպանը և «Թուրքիա և ՆԱՏՕ. նոր իմիջ ու հին հարցեր» գրքի հեղինակը, նշում է, որ 2001 թ.-ին Թուրքիայում անհրաժեշտ իշխանությունների պակաս չէր զգացվում ԱՄՆ-ին Իրաքում ա-

ջակցություն ցուցաբերելու հարցում: «Դրա փոխարեն Աֆղանստանի վերաբերյալ ՆԱՏՕ-ի որոշումը մի քանի որոշում կայացնողներ կարող էին մեկնաբանել որպես երկրի համար միակ ճիշտ ճանապարհ, երբ խոսքը երկրի սահմաններից դուրս գործի տեղակայման կամ հարևան երկրի վրա հարձակվելու համար մեկ այլ երկրի աջակցություն ցուցաբերելու մասին էր», - եզրակացնում է Փիրսոնը¹⁵⁰:

Որոշակի հանգամանքներ վերափոխեցին և վերաճավորեցին ՆԱՏՕ-Թուրքիա հարաբերությունների հիմնական ուղղությունը: Ըստ Փիրսոնի՝ կարևոր հանգամանք է Խորհրդային Միության փլուզումը: Եթե նախքան Խորհրդային Միության փլուզումը Թուրքիան ՆԱՏՕ-ի նախապատվելի գործընկերն էր, ապա Սառը պատերազմից հետո ՆԱՏՕ-ի արևելքում գտնվող շատ նոր պետություններ ցանկություն հայտնեցին անդամակցել կազմակերպությանը:

Այլ կարևոր հանգամանք է Թուրքիայի և Սիրիայի, Համասի և Իրանի միջև հարաբերությունների բարելավումը¹⁵¹: Ըստ Փիրսոնի՝ ելնելով այն հանգամանքից, որ Թուրքիայում ԱՄՆ-ի վարկանիշը ներկայումս այնքան էլ բարձր չէ՝ ուլտրա-ազգայնամուլներ կոչերը Իրանի, Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի հետ սերտ հարաբերություններ հաստատելու վերաբերյալ կարող են շարժիչ ուժ դառնել: Այս կոչերը կարծես իրականություն են դառնում, քանի որ Թուրքիան ջանում է լավ հարաբերություններ ստեղծել Սիրիայի, Իրանի և Ռուսաստանի հետ: Հարավ-օսկական վերջին իրադարձությունների ժամանակ, երբ ՆԱՏՕ-ն զբաղված էր վրացական ճգնաժամով, Թուրքիան առանձնացավ ՆԱՏՕ-ի իր գործընկերներից՝ աշխատանքային այցով հյուրընկալելով Իրանի և Մուղանի նախագահներ Մահմուդ Ահմադինեջադին և Օմար Ալ-Բաշիրին¹⁵²:

Հարավային Օսիայում ստեղծված իրավիճակը ստիպեց այլ տեսանկյունից դիտարկել Թուրքիային: Հետաքրքական է, որ 2008 թ.-ի օգոստոսին Թուրքիան իր վաղեմի դաշնակցին թույլ չտվեց հսկայական նավեր ուղարկել Սև ծով: ԱՄՆ-ը, որը ցանկանում էր, որ ՆԱՏՕ-ի ռազմաճակատը ազատ մուտք ունենան դեպի Սև ծով, ստիպված եղավ վերանայել Մոնթրյոյի կոնվենցիան, որը օրինական կերպով սահմանափակում է Թուրքիայի տարածքով ԱՄՆ նավերի տեղաշարժը: Չնայած այն հանգամանքին, որ ՆԱՏՕ-ի անդամ է, Թուրքիան

¹⁴⁸ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 71.

¹⁴⁹ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 69.

¹⁵⁰ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 70.

¹⁵¹ W. Robert Pearson, Chapter 5 *Turkey and NATO: New Images and Old Questions*, The Evolution of US-Turkish Relations in a Transatlantic Context, pg. 64.

¹⁵² Zeyno Baran "Will Turkey Abandon NATO", Wallstreet Journal, August 29, 2008.

դիմադրեց ԱՄՆ-ի ճնշմանը այդ կոնվենցիայի վերանայման վերաբերյալ և մերժեց ոտնահարել դրա պայմանները՝ ՆԱՏՕ-ի մուտքը դեպի Սև ծով ապահովելու համար¹⁵³:

Հետագայում իրավիճակն էլ ավելի վատթարացավ մաս այն պատճառով, որ ի հակադրություն ՆԱՏՕ-ի այլ դաշնակիցների՝ Թուրքիան ձեռնպահ մնաց Ռուսաստանի գործողությունները դատապարտելուց: Արևմուտքում Թուրքիայի պահվածքը մեկնաբանվեց որպես աջակցություն Ռուսաստանին: «Մինչ Արևմուտքն ակնկալում էր, որ Թուրքիան իր կողմը կբռնի՝ քննադատելով Ռուսաստանին, Թուրքիան շղատապարտեց Ռուսաստանի գործողությունները՝ Վրաստանում, այլ բավարարվեց իրադարձությունների վերաբերյալ իր մտահոգությունն արտահայտելով¹⁵⁴»: Այի Յուրթագյուլը՝ Եվրոպական պառլամենտի կանաչների քաղաքական խորհրդատու, նշում է, որ «ՆԱՏՕ-ի ներկայիս տնտեսական և առևտրային շահերը ներառող հետևողական քաղաքականություն փոխադրելով Թուրքիան Ռուսաստանի նկատմամբ գգոշավոր քաղաքականություն է վարում՝ դրանով իսկ բաժանումներ ստեղծելով ՆԱՏՕ-ի ներսում, ինչպես նաև փորձում է անկողմնակալ և չեզոք դիրք գրավել երկու կողմերի՝ Ռուսաստանի և Արևմուտքի միջև, կարծես ինքը ՆԱՏՕ-ի անդամ չէ¹⁵⁵»: Նա նշում է նաև, որ եթե Թուրքիան կամենում է լրջորեն ընկալվել, ապա պետք է գործի որպես ՆԱՏՕ-ի անդամ՝ դադարեցնելով իր չեզոք քաղաքականությունը¹⁵⁶:

Ջեյնո Բարանը՝ Հուդզոնի ինստիտուտից, նշում է, որ Թուրքիայի համար հասել է այն պահը, երբ պետք է ընտրություն կատարի ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև: Նա նշում է, որ 1952 թ. ՆԱՏՕ անդամակցությունից ի վեր Թուրքիան հույս ուներ, թե երբեք ստիպված չի լինի ընտրություն կատարել դաշինքի և հյուսիսի իր ռուսական հարևանի միջև, և «եթե Թուրքիան թույլ չտվեց նավերի մուտքը իր տարածք, նշանակում է, որ նա կբռնի Ռուսաստանի կողմը»: Նա նշում է նաև, որ թեև Թուրքիան հայտարարել է, թե ամերիկյան նավերի մուտքը դեպի Սև ծով խոչընդոտելով՝ կօգտագործի տարբեր կողմերի հետ հաստատված վստահությանը ձևավորված հարաբերությունները՝ հանդես գալով որպես միջնորդ տարածաշրջանի տարբեր կողմերի միջև՝ ներառյալ ԱՄՆ-ը և Իրանը, Իսրայելը և Սիրիան, Պակիստանը և Աֆղանստանը և այլն, սակայն ընտրության ժամանակը արդեն եկել է¹⁵⁷:

Հարց է առաջանում, թե արդյո՞ք Թուրքիայի աճող գործունեությունը և մասնավորապես Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմի ստեղծման նախաձեռնությունը չեն հակասում ՆԱՏՕ-ի շրջանակներում Թուրքիայի ստանձնած պարտավորություններին: Երբ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Այի Բաբաջանին հարց ուղղվեց, թե իր ռուս գործընկերոջ՝ Լավրովի հետ քննարկումներում Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմի վերաբերյալ Թուրքիան հանդես էր գալիս որպես ՆԱՏՕ անդամ երկի՞ր, թե՞ որպես հիմնական առևտրատնտեսական գործընկեր, պատասխանը եղավ այն, որ «Թուրքիան երբևէ չի փորձել օգտագործել ՆԱՏՕ անդամակցության հանգամանքը ի վնաս այն սկզբունքների, որոնց վրա հիմնված է Թուրքիայի և Ռուսաստանի միջև երկխոսությունը: Բացի այդ՝ մենք բնականաբար ենթադրում ենք, որ Թուրքիան իրականացնում է իր պարտավորությունները և պարտականությունները որպես Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ»¹⁵⁸:

Թուրքիայի մեծ ղեկավարումն արդարացվում է բազմաչափ արտաքին քաղաքականություն իրականացնելու ձգտումով, որը Դավաթօլլու խոսքերով «դիտարկում է Թուրքիայի ռազմավարական հարաբերությունները ԱՄՆ-ի հետ՝ երկու երկրների միջև երկկողմ կապերի և ՆԱՏՕ-ի միջոցով, ինչպես նաև հաշվի է առնում իր՝ ԵՄ անդամակցության գործընթացը, Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության քաղաքականությունը և Եվրասիայում համահունչ քաղաքականությունը՝ որպես հետևողական քաղաքականության բաղկացուցիչ մաս, որը նպատակ ունի փոխլրացնելու միմյանց¹⁵⁹»:

Գալիք տարիներին Թուրքիայի քաղաքականության հիմնական մարտահրավերները վերաբերում են նրա տարածաշրջանային առաջնորդությանը ՆԱՏՕ-ի դոկտրինի փոփոխության տեսանկյունից, Սևծովյան տարածաշրջանի ապագային՝ ներառյալ ՆԱՏՕ-ի նոր անդամ երկրները (Ռումինիա, Բուլղարիա), ՆԱՏՕ-ի հիմնական գործընկեր երկրները (Ուկրաինա, Վրաստան), վերածնվող Ռուսաստանը և հակամարտության մեջ գտնվող մոտակա հարևանները (Հայաստան, Ադրբեջան)¹⁶⁰:

¹⁵³ David Morrison, Turkey restricts US access to the Black Sea, 18 October 2008.

¹⁵⁴ David Morrison, Turkey restricts US access to the Black Sea, 18 October 2008.

¹⁵⁵ Ali Yurttagybl, "Georgia, NATO, the EU and Turkey", Today's Zaman, 10.09.2008.

¹⁵⁶ Ali Yurttagybl, "Georgia, NATO, the EU and Turkey", Today's Zaman, 10.09.2008.

¹⁵⁷ Zeyno Baran "Will Turkey Abandon NATO", August 29, 2008.

¹⁵⁸ David Morrison, Turkey restricts US access to the Black Sea, 18 October 2008.

¹⁵⁹ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.82.

¹⁶⁰ Ahmet Davutoglu, "Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007", pg.83.

2/5 Թուրքիա-Ռուսաստան հարաբերությունները

Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունների պատմությունը գրանցել է վերերկրներ և անկումներ դեռևս առաջին համաշխարհային պատերազմից ի վեր և հետո՝ 1952 թ., երբ Թուրքիան մասամբ ԽՍՀՄ-ի դաշինքից պաշտպանվելու երաշխիքով դարձավ ՆԱՏՕ-ի անդամ պետություն:

Հարյուրամյակներ ի վեր Թուրքիան և Ռուսաստանը մրցակցության մեջ էին տարածաշրջանային գերակայության համար: Սակայն վերջերս երկու երկրները սկսել են գիտակցել, որ բարիդրացիական հարաբերությունները բխում են միմյանց շահերից: Հետևաբար, երկու երկրների հարաբերություններում նկատվում է համագործակցության, այլ ոչ թե մրցակցության նախապատվություն: ԵՄ-ն, դիտարկելով այս երկու երկրները որպես եվրոպական հորիզոնում խոշորագույն անկախատեսելի սուբյեկտներ, ողջունում է դեպքերի նման զարգացումը:

Չնայած լարվածության ու շահերի բախման երկար տարիների պատմությանը՝ Թուրքիայի և Ռուսաստանի տնտեսական և քաղաքական փոխգործակցությունը զգալիորեն խորացել է:

Նախկին տասնամյակում, երկու երկրները ստեղծել են ուժեղ տնտեսական կապերով բարեկամական հարաբերություններ և հետաքրքրություն են ցուցաբերում տնտեսական, տարածաշրջանային և համաշխարհային խնդիրների լուծման հարցերում:

Այսօր Ռուսաստանը Թուրքիայի ամենախոշոր արտահանող շուկան է Գերմանիայից հետո: Երկու երկրներն էլ ձգտում են հասնել «բազմակողմ համագործակցությանը» հատկապես էներգետիկ, տրանսպորտային և ռազմական բնագավառներում: Ըստ այդմ՝ Ռուսաստանը նպատակ ունի մերդրումներ կատարելու Թուրքիայի նավթի և էլեկտրաէներգիայի արդյունաբերության մեջ և մասնակցելու Թուրքիայի բանակի արդիականացմանն ուղղված ծրագրերի մրցույթներում: Ստրատեգիական էներգետիկ հատվածում երկու երկրների միջև գործում է լայնածավալ ծրագրերի իրականացման վերաբերյալ համաձայնագիր¹⁶¹:

Ռուսաստանը ավանդաբար եղել է Թուրքիայի խոշորագույն գազի մատակարարողը: 842 կմ երկարությամբ Ռուսաստան-Թուրքիա գազամուղը Ռելաիհայի, Ռումինիայի և Բուլղարիայի տարածքով գազը Ռուսաստանից տե-

ղափոխում է Թուրքիա: Ելնելով տեղական օգտագործման աճող տեմպերից՝ Թուրքիան ավելացրել է ծավալները: Այսպիսով՝ 3.3 միլիարդ արժուրեյամբ «Կապույտ հոսք» գազատարը կառուցվել է Ռուսաստանի «Գազպրոմ» և Իտալիայի «ENI» ընկերությունների կողմից, որտեղ յուրաքանչյուրն ունի 50 տոկոս բաժնեմաս: «Կապույտ հոսք» գազատարը մասամբ անցնում է Սև ծովի հատակով և հետագայում՝ 2009 թ. սկսած, փոխադրումը հասցնելու է տարեկան 565 խմ-ի: Ռուսաստանը նավթամուղով նույնպես վառելիք է մատակարարում Թուրքիային¹⁶²:

Ինչ վերաբերում է էներգետիկ հատվածին, երկու երկրները հետապնդում են մի քաղաքականություն, որը հաճախ բախում է առաջացնում երկու կողմերի միջև: Երբ Թուրքիան ուղիներ էր փնտրում Արևելքի և Արևմուտքի միջև «էներգետիկ կամուրջ» դառնալու համար՝ միացնելով Միջին Արևելքի և Կասպյան տարածաշրջանի գազը դեպի Եվրոպա, Ռուսական «Գազպրոմը» ամեն կերպ պահպանում էր իր իշխող դիրքը որպես Եվրոպայի մատակարարող: Երբ Թուրքիան, նպատելով նոր մատակարարող միջանցքի ստեղծմանը, փորձեց դեպի Եվրոպա բացել դռները ոչ ռուսական գազ մատակարարողների համար, «Գազպրոմը» ըստ էության այդ դռները փորձում էր փակ պահել կամ առնվազն հաստատել իր վերահսկողությունը դրանց բացման նկատմամբ:

2007 թ. մայիսին Ռուսաստանը հայտարարեց Թուրքմենստանի և Ղազախստանի հետ նոր «Կասպյան ավի» գազատարը կառուցելու և գործող Կենտրոնական Ասիա-Կենտրոն (CAC) գազամուղը վերանորոգելու իր ծրագրի մասին՝ այդպիսով փորձելով խափանել Թուրքմենական գազը առաջարկվող «Տրանսկասպյան» գազատարի միջոցով Ադրբեջան հասցնելու ուղղությամբ արևմտյան ջանքերը: «Գազպրոմն» իր հերթին հայտարարեց իր այսպես կոչված «Թուրքական շրջանցք» նախագծի մասին, ըստ որի՝ նույն Կենտրոնական Ասիայի գազը Սև ծովի վրայով իր «Հյուսիսային հոսք» գազատարի հետ հասնելու էր հյուսիսարևելյան Եվրոպա: Թուրքիան, որն իրեն հռչակել էր դեպի Եվրոպա մատակարարվող գազի նպատակով նոր միջանցքի ստեղծման գործի կարևոր դերակատար, արձագանքեց Իրանի և Թուրքմենստանի հետ իր գործարքի մասին հայտարարությամբ՝ նպատակ ունենալով գազամատակարարողներ մերգրավել այդ երկրներից և երաշխավորել լրացուցիչ մատակարարումներ «Նարուկո» գազային ծրագրի համար, որը Թուրքիան միացնում է կենտրոնական Եվրոպային:

¹⁶¹ (<http://www.turkishpolitics.com/russia.htm>).

¹⁶² (http://globalization.icaap.org/content/v3.1/03_stern.html).

Թուրքմենստանի և Իրանի գազի ծավալները շատ ավելի մեծ կլինեն, քան գործող և Ադրբեջանից սպասվող մատակարարումները, որոնք սկսել են գազ մատակարարել Թուրքիային՝ սկսած 2007 թվականից՝ Բաքու-Թրիլիա-Էրզրում գազամուղի շահագործումից ի վեր:

Այս երկու մրցակցող տեխնոլոգիաները, որոնք առնչվում են հյուսիսարևելյան Եվրոպայի համար նախատեսվող Կասպյան և Կենտրոնական Ասիայի նոր գազատարային ճանապարհի կառուցմանը, Թուրքիային սաստիկ տրամադրում են Ռուսաստանի դեմ, թեև հյուսիսարևելյան Եվրոպայի պետությունների զգալի մասը բավարարվել է՝ հայտնելով իր աջակցությունը թե՛ «Նարուկո» և թե՛ «Հյուսիսային հոսք» ծրագրերին:

Իսկապես, ԵՄ-ն փորձել է լեցնել նշյալ ծրագրերի մասին խոսակցությունները՝ պատճառաբանելով, թե դրանք մրցակից են, սակայն Թուրքիայի և Ռուսաստանի համար դա այնպիսի խաղ է, երբ մեկի հաղթանակը նշանակում է մյուսի պարտությունը¹⁶³:

Համապատասխան քաղաքական գերկառուցվածի ստեղծումը շարունակում է դանդաղ գործընթաց մնալ: Մոսկվան և Անկարան հազիվ թե կարողանան ձեռքբերումների առումով գոհունակություն հայտնել: Որոշ ակնհայտ տարածայնությունների պատճառը հիմնականում պատմական պատճառներ ունի: Կիպրոսը եղել ու մնում է Թուրքիայի և Ռուսաստանի տարակարծությունների և քաղաքական նկրտումների թիրախը: Ռուսաստանի ռազմական և քաղաքական բարձրաստիճան պաշտոնյաները գտնում են, որ Անկարան չպետք է տեղեկացված լինի Մոսկվայի և Նիկոսիայի միջև ռազմա-տեխնիկական համագործակցության մասին, սակայն երկու երկրները եկել են այն համոզմանը, որ քաղաքականության մեղ տեսակետները չպետք է ջղաճգության տեղիք տան:

Ռուսաստանն ու Թուրքիան միշտ ունեցել են այնպիսի տարածաշրջաններ, որտեղ նրանց շահերն ու պահանջները բխվել են, օրինակ՝ Կովկասը, Սև ծովի ափերը և Բալկանները: Ժամանակը փոխում է մրցակցության ոճն ու մեթոդները, սակայն, դժբախտաբար, ոչ էությունը: Շատ լավ կլիներ ասել, որ մոտ ապագայում ոչ մի հեղափոխություն տեղի չի ունենա, սակայն բարենպաստ էվոլյուցիան շատ հնարավոր է:

Իրականում մեծ էվոլյուցիայի նշաններն արդեն նկատելի են: Դեռևս 20 տարի առաջ Անկարայի կտրուկ ակտիվացում գործունեությունը Բալկաններում անմիջապես Մոսկվայի քննադատության առարկան կդառնար՝ որակվե-

¹⁶³ (www.globalinsight.com/SDA/SDADetail13577.htm).

լով որպես «էկսպանսիոնիստական քայլ»: Այն ժամանակ, երբ ոստիկանության՝ քրդերի դեմ ուղղված գործողությունները կդադարավեին որպես «արյունալի ոճիր», Անկարան նույն խոսքերը կօգտագործեր Մոսկվայի՝ Կովկասում կատարած գործողությունները որակելու համար: Այսօր երկու կողմերն էլ ավելի զգույշ են ընտրում իրենց բառակապակցությունները և միմյանց նկատմամբ բնօրինակային ցուցաբերում են ավելի հարգալից վերաբերմունք: Նրանք անցյալից դասեր են քաղել և այժմ, առավել քան երբևէ, հասկանում են, որ ունեն համամասն հիմնահարցեր: Ավելի լավ է աշխատել դրանց լուծման ուղղությամբ, քան յուր ավելացնել կրակին: Ազգային անվտանգությանը սպառնող արտաքին վտանգների զգացումը բնորոշ է թե՛ Թուրքիային, թե՛ Ռուսաստանին:

Սև ծովը միակը չէ, որը հասանելի չէ ԱՄՆ-ին: ԱՄՆ-ի մուտքը դեպի Սև ծով կանխվել է Թուրքիայի և Ռուսաստանի համատեղ ջանքերի շնորհիվ: Այդ է պատճառը, որ Ռուսաստանը քաջ գիտակցում է Սև ծովի և Թուրքիայի կարևորությունը այս տարածաշրջանում: Սևծովյան երկրներից Վրաստանը և Ուկրաինան որդեգրել են հակառուսական կեցվածք: Բուլղարիան և Ռումինիան համարվում են հակամերիկյան, թեև նրանք բացահայտ հակառուսական չեն: Ռուսաստանի միակ չեզոք հարևան պետությունը Թուրքիան է: Ծովեզերքը վերահսկում է Թուրքիան, որն ունի Սև ծովի ամենաերկար ափը և Սև ծովում տեղակայում է ռազմական ամենամեծ ուժերը, ուստի նրա հարևանները՝ Եվրոպան և Կովկասը, նրան տալիս են ռազմավարական և աշխարհաքաղաքական մեծ նշանակություն: Հետևաբար նույնիսկ Թուրքիայի չեզոքությունը Ռուսաստանի համար մեծ առավելություն է: Եթե Թուրքիան վարի արևմտամետ քաղաքականություն, ապա դա կարող է Սև ծովը մի ակնթարթում վերածել ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի արևմտյան ծովի, որն ամենաբիչ ցանկալի բանն է Ռուսաստանի համար: Այս պատճառով Ռուսաստանը Թուրքիային առնչվող իր քայլերում պարտավոր է չափազանց զգույշ լինել և կարծես լավ է գիտակցում այս իրողությունը¹⁶⁴:

Թուրքիան նշանակալի ձեռքբերումներ է գրանցել երկրի զարգացման առումով և փորձում է հաստատվել որպես տարածաշրջանային հզոր պետություն: Ռուսաստանը, որը Խորհրդային խոշոր կայսրության իրավահաջորդն է, կենտրոնացել է տեղական և տարածաշրջանային խնդիրների լուծման վրա:

¹⁶⁴ (<http://www.turksam.org/en/a219.html>).

Այսպիսով՝ ուրվագծվում է երկու երկրների միջև ընդհանուր գործողություններին իրականացման համար հստակ դաշտը¹⁶⁵:

Ռուսաստանը իր գորակցությունն է հայտնել Թուրքիայի առաջարկված Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմի գաղափարին: Թուրքիան առաջարկել է ստեղծել Կովկասյան դաշինք՝ տարածաշրջանային հակամարտություններին խաղաղ ճանապարհով աջակցելու նպատակով: Դաշինքը նախատեսում է Ռուսաստանի, Թուրքիայի, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի մասնակցությունը, սակայն խնդիրը բարդ լուծելի է թվում՝ հաշվի առնելով այդ երկրների միջև եղած հարաբերությունները:

2/6 Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերությունները

Թուրքիայի ներկայիս առևտրային քաղաքականությունը համեմատաբար ավելի ազատական է, քան միջին կամ միջինից բարձր եկամտուներ ունեցող Եվրոպայի կամ Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներինը: Ավելին՝ Թուրքիայի ներկայիս արտաքին առևտրային քաղաքականությունն էլ ավելի ազատական է, քան 2000-ական թթ. սկզբին կիրառվող առևտրային քաղաքականությունը: Այստեղ հարկ է նշել, որ ըստ մաքսատուրքերի սահմանափակման ինդեքսի՝ Թուրքիան 125 երկրների շարքում զբաղեցնում է չորրորդ տեղը¹⁶⁶: Հաստատելով մաքսային միություն ԵՄ-ի հետ՝ Թուրքիան երրորդ երկրներից ներմուծման նկատմամբ կիրառում է ԵՄ ընդհանուր մաքսատուրքերի քաղաքականություն և բացառել է մաքսատուրքերի և քվոտաների կիրառումը ԵՄ ծագմամբ արդյունաբերական ապրանքների նկատմամբ: Հակադեմպինգային միջոցառումները ևս քվոտային հաճախ են կիրառվում. մասնավորապես 2002-04 թթ. Թուրքիայում կիրառված հակադեմպինգային նախաձեռնությունների քանակը հավասար է ԵՄ կողմից իրականացված հակադեմպինգային միջոցառումների քանակին¹⁶⁷:

Ըստ Համաշխարհային բանկի «Doing Business» 2007 թ. զեկույցի՝ քիզնես վարելու համար ստեղծված պայմանների բարենպաստության տեսանկյունից

¹⁶⁵ (<http://www.sam.gov.tr/perceptions/Volume2/March-May1997/RUSSIA.pdf>).

¹⁶⁶ Trade Tariff Restrictiveness Index (TTRI) 2006

¹⁶⁷ World Bank, «Turkey: Trade Brief». Available at: <http://info.worldbank.org/etools/wti2008/docs/brief194.pdf>

Թուրքիան զբաղեցնում է 57-րդ տեղը, մինչդեռ Հայաստանը՝ 39-րդ տեղը¹⁶⁸: 2006-07 թթ. Թուրքիայի արտաքին ապրանքաշրջանառության աճը կազմել է 23.17%: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Հայաստանում արտաքին ապրանքաշրջանառության աճը կազմել է 39.1%¹⁶⁹:

Աղյուսակ 1: Թուրքիայի արտաքին առևտրի հիմնական ցուցանիշները

	2003	2004	2005	2006	2007
Արտահանում (մլն դոլար)	47253	63167	73476	85535	107213
Փոփոխություն (%)	31.0	33.7	16.3	16.4	25.3
Ներմուծում (մլն դոլար)	69340	97540	116774	139576	170057
Փոփոխություն (%)	34.5	40.7	19.7	19.5	21.8
Առևտրային հաշվեկշիռ (մլն դոլար)	-22087	-34373	-43298	-54041	-62844
Արտաքին ապրանքաշրջ. (մլն դոլար)	116593	160707	190251	225111	277270

Աղբյուր՝ TurkStat, Turkey's Statistical Yearbook, 2007, p. 243.

Ինչպես վկայում են աղյուսակ 1-ում ներկայացված տվյալները, նշված ժամանակաշրջանում թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ծավալները զգալիորեն աճել են, սակայն դա չի հանգեցրել առևտրային հաշվեկշիռի բարելավման: Այսպես՝ 2003-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում առևտրային հաշվեկշիռի պակասորդը զրեթե եռապատկվել է:

¹⁶⁸ World Bank Group, World Trade Indicators 2008, Country Comparison. Available at: <http://info.worldbank.org/etools/wti2008/3b.asp?pillarID=1&indList=66&indList=118&indList=152&indList=161&indList=190&cList=194&cList=9®ionID=r2&periodID=14>

¹⁶⁹ National Statistical Service of the Republic of Armenia. Available at: <http://www.armstat.am>

Աղյուսակ 2: Թուրքիայի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը (մլն դոլար)

	2003	2004	2005	2006	2007
<i>Արտահանում</i>	47253	63167	73476	85535	107213
Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	2121	2542	3329	3481	3725
Չկնորսություն	81	103	140	131	158
Հանքարդյունաբերություն	469	649	810	1146	1661
Արդյունաբերություն	44378	59579	68813	80246	101023
Այլ	204	294	384	531	646
<i>Ներմուծում</i>	69340	97540	116774	139576	170057
Գյուղատնտեսություն և անտառտնտեսություն	2535	2757	2801	2902	4641
Չկնորսություն	2	8	24	33	31
Հանքարդյունաբերություն	9021	10981	16321	22034	25314
Արդյունաբերություն	55690	80447	94208	110379	133933
Այլ	2092	3346	3419	4229	6139

Աղբյուր՝ TurkStat, Turkey's Statistical Yearbook, 2007, p. 243.

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, Թուրքիայի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը տարբերակված է (չնայած և՛ արտահանման, և՛ ներմուծման կտրվածքով հիմնական ապրանքախումբ են համարվում արդյունաբերական ապրանքները), իսկ նշված ժամանակաշրջանում արտաքին առևտուրը (բոլոր ապրանքախմբերով) թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կտրվածքով առնվազն կրկնապատկվել է: Այսպես՝ Թուրքիայի արտահանման ապրանքային կառուցվածքի ավելի քան 90%, իսկ ներմուծման 79% բաժին է ընկնում արդյունաբերական ապրանքներին: Թուրքիան ազատականացման քաղաքականություն է իրականացրել տնտեսության այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են զրոսաշրջությունը, բանկային ոլորտը, հեռահաղորդակցման ոլորտը, հանքարդյունաբերությունը և էներգետիկան: Թուրքիայի տնտեսության մեջ զգալիորեն բարելավվել է մաս ներդրումային միջավայրը: Ներկայումս որոշակի

սահմանափակումներ գոյություն ունեն միայն գյուղատնտեսական ապրանքների առևտրում, որը սահմանափակում է ոլորտի մրցունակությունը¹⁷⁰:

Աղյուսակ 3. Թուրքիայի արտաքին առևտուրը հիմնական գործընկեր երկրների հետ

Ներմուծում			Արտահանում		
	մլն դոլար	%		մլն դոլար	%
Ընդամենը	170057	100.0	Ընդամենը	107213	100.0
Ռուսաստան	23508	13.8	Գերմանիա	11993	11.2
Գերմանիա	17540	10.3	Մեծ Բրիտանիա	8626	8.0
Չինաստան	13234	7.8	Իտալիա	7480	7.0
Իտալիա	9968	5.9	Ֆրանսիա	5974	5.6
ԱՄՆ	8164	4.8	Ռուսաստանի	4727	4.4
Ֆրանսիա	7850	4.6	Իսպանիա	4580	4.3
Իրան	6614	3.9	ԱՄՆ	4168	3.9
Մեծ Բրիտանիա	5477	3.2	Ռումինիա	3644	3.4
Շվեյցարիա	5269	3.1	Սիանցյալ Արարական էմիրություններ	3241	3.0
Այլ	72434	42.6	Այլ	52780	49.2

Աղբյուր՝ TurkStat, Turkey's Statistical Yearbook, 2007, p. 252.

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3-ից, Թուրքիայի հիմնական առևտրային գործընկերներ երկրները, ԵՄ անդամ երկրներից բացի, համդիսանում են Ռուսաստանը, ԱՄՆ, Չինաստանը, Իրանը, Շվեյցարիան և ԱՄԷ: Այսպես՝ ոչ ԵՄ անդամ երկրներից և ներմուծման (13.8%), և՛ արտահանման (4.4%) մեջ գլխավոր գործընկեր երկիրը Ռուսաստանն է:

Ռուսաստան–Թուրքիա երկկողմ առևտրային հարաբերությունները: Ինչպես նշվեց, ոչ ԵՄ անդամ երկրներից Թուրքիայի գլխավոր առևտրային գործընկեր երկիրը Ռուսաստանն է: Այսպես, եթե Ռուսաստանը Թուրքիայի հիմնական առևտրային գործընկերների շարքում գրադեցնում է առաջնային տեղ, ապա Թուրքիան Ռուսաստանի հիմնական առևտրային գործընկերների շարքում

¹⁷⁰ Turkish Daily News, 'World Trade Body Confident in Turkey', Anatolia News Agency, 04.01.2008. Available at: <http://www.turkishdailynews.com.tr/article.php?enewsid=92776>.

քում զբաղեցնում է ընդամենը տասնչորսերորդ տեղը: Ռուսաստանից Թուրքիա արտահանվող հիմնական ապրանքախմբերն են վառելանյութը և էներգառեսուրսները (ընդհանուր արտահանման 72%), մետաղները (16%) և քիմիական ապրանքները (4%): Թուրքիան իր հերթին Ռուսաստան է արտահանում հիմնականում տեքստիլ ապրանքներ (30%), մեքենաներ և սարքավորումներ (23%), քիմիական ապրանքներ (15%) և սննդամթերք (15%): Այս երկու երկրների ռազմավարական նպատակն է «բազմաչափ համագործակցության» հաստատումը հատկապես էլեկտրաէներգիայի, տրանսպորտի և ռազմական ոլորտներում¹⁷¹:

Ռազմավարական համագործակցության շեշտը դրվում է հատկապես էներգետիկայի ոլորտի վրա, որտեղ Թուրքիան և Ռուսաստանը նախատեսում են տարածաշրջանային կարևոր նշանակություն ունեցող նախագծերի իրականացում: Բացի այդ՝ Ռուսաստանը նպատակ ունի ավելացնելու Թուրքիա գազի մատակարարման ծավալները, ինչպես նաև ներգրավելու ռուսական կազմակերպություններին Թուրքիայի տարածքում գազի բաշխման գործընթացին¹⁷²:

Ռուսաստանը ողջունում է նաև Թուրքիայի հետաքրքրությունը առևտրային կապեր հաստատելու Շանհայի համագործակցության կազմակերպության հետ (Shanghai Cooperation Organization (SCO))¹⁷³: Պետք է նշել, որ Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրներն են Ռուսաստանը, Չինաստանը, Ղազախստանը, Վրդգստանը, Տաջիկստանը և Ռազբեկստանը:

Այդուհանդերձ, ըստ որոշ բուրք վերլուծաբանների, Հարավսական հակամարտությունը Թուրքիայի և Ռուսաստանի առևտրային հարաբերությունների վրա բացասական է անդրադարձել՝ այդ խնդրի վերաբերյալ տարբեր դիրքորոշումներ ցուցաբերելու հետևանքով: Մասնավորապես, Ռուսաստանը մաքսային խիստ հետազոտությունների է ենթարկում Թուրքիայից ժամանած բեռնատարները, որը, ըստ թուրքական գնահատականների, լուրջ խոչընդոտներ է առաջացնում արտահանողների համար¹⁷⁴:

¹⁷¹ EurActive.com, 'Turkey-Russia Relations', 12.01.2005. Available at: <http://www.euractiv.com/en/enlargement/turkey-russia-relations/article-134083>.

¹⁷² EurActive.com, 'Turkey-Russia Relations', 12.01.2005. Available at: <http://www.euractiv.com/en/enlargement/turkey-russia-relations/article-134083>.

¹⁷³ Mevlut Katik, 'Turkey, Russia Celebrate Trade Ties while Probing an Expansion of Geopolitical Contacts', 12.01.2005. Available at:

<http://www.eurasianet.org/departments/business/articles/eav011205.shtml>.

¹⁷⁴ Mustafa Kutlay, 'How the Conflict in Georgia Affects Turkey-Russia Trade Relations?', Turkish Weekly. Available at: <http://www.turkishweekly.net/comments.php?id=2975>.

Ի պատասխան Ռուսաստանի կողմից կիրառվող «պատժիչ միջոցներին»՝ Թուրքիան սպառնում է սահմանափակել Ռուսաստանից ներմուծվող ապրանքների ծավալները: Սակայն հաշվի առնելով իր տնտեսական կախվածությունը Ռուսաստանից և մասնավորապես այն հանգամանքը, որ իր բնական գազի 2/3 մատակարարում է Ռուսաստանը՝ Թուրքիան ձգտում է հնարավորինս արագ հարթել տարածայնությունները Ռուսաստանի հետ՝ առևտրային հարաբերությունները նախկին մակարդակին վերադարձնելու նպատակով¹⁷⁵:

ԱՄՆ-Թուրքիա երկկողմ առևտրային հարաբերությունները: Թուրքիայի և ԱՄՆ-ի տնտեսական կապերի ամրապնդումը նրանց ռազմավարական գործընկերություն ամրապնդելու կարևոր միջոցներից է: Այս նպատակի իրականացման համար հատուկ տեղծվել է Տնտեսական համագործակցության հանձնաժողով, որը, պարբերաբար հանդիպելով, քննարկում է տնտեսական համագործակցության ռազմավարական ուղղությունները: Թուրք-ամերիկյան տնտեսական հարաբերություններում արդի ռազմավարական ուղղություններն են առևտրի, ներդրումների և նորարարական հասարակության կայացման խթանումը, տարածաշրջանային առաջնորդությունը և համագործակցությունը, էներգետիկայի ոլորտում համագործակցությունը, ինչպես նաև թուրքական և ամերիկյան գործարար ոլորտների միջև կապերի հաստատումն ու սերտացումը¹⁷⁶:

Չինաստան-Թուրքիա երկկողմ առևտրային հարաբերությունները: 1981 թ.-ին Չինաստանի և Թուրքիայի միջև կնքվել է առևտրային համաձայնագիր: Նույն թվականին ստորագրվել է նաև տնտեսական, արդյունաբերական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ պայմանագիր¹⁷⁷: Թուրքիայի և Չինաստանի միջև առևտրային ծավալները 2006 թ.-ի դրությամբ կազմել են 8,1 մլրդ դոլար: Սակայն Չինաստանի հետ առևտրում Թուրքիայի առևտրային հաշվեկշիռն զգալի պակասորդ ունի, որը վերացնելու նպատակով Թուրքիան ջանում է ընդլայնել դեպի Չինաստան արտահանվող ապրանքների ցանկը և ծավալները¹⁷⁸: Հետևաբար Թուրքիայի և Չինաստանի միջև գոյություն ունեցող առևտրային հարաբերություններում եղած խնդիրն

¹⁷⁵ Alex Barker, 'Turkey threatens Russian trade curbs', Financial Times, 29.08.2008. Available at: <http://www.ft.com/cms/s/0/c0a80360-761a-11dd-99cc-0000779fd18c.html>.

¹⁷⁶ U.S. Department of State, 'Turkey-United States Economic Partnership Commission Action Plan', 25.05.2007. Available at: http://turkey.usembassy.gov/news_052507.html.

¹⁷⁷ Ministry of Foreign Affairs, the People's Republic of China, 'Bilateral Relations', 08.25.2003. Available at: <http://www.fmprc.gov.cn/eng/wjwb/zjzjg/xybfs/gjhh/2898/>.

¹⁷⁸ Turkish Daily News, 'Turkey, China sign trade deal', June 19, 2007. Available at: <http://www.turkishdailynews.com.tr/article.php?enewsid=76175>.

այն է, որ Թուրքիան հիմնականում չինական ապրանքների ներմուծող է, մինչդեռ բուրքական արտահանման ծավալները դեպի չինական շուկա մեծ չեն: Այդ պատճառով էլ Չինաստանը բուրքական շուկա արտահանման ծավալով երրորդ տեղում է, մինչդեռ Թուրքիան Չինաստան արտահանման ծավալներով նշանակալից տեղ չի զբաղեցնում: Թուրքիան Չինաստան է արտահանում հիմնականում երկաթ, մարմար և գրանիտ, որը կազմում է Թուրքիայի կողմից

Չինաստան արտահանումների 50%-ը¹⁷⁹: Այս տեսանկյունից Թուրքիան աշխատում է տարբերակել իր ապրանքային արտահանման տեսականին դեպի Չինաստան, քանի որ մեկ կամ երկու ոլորտներից կախվածությունը բարձրացնում է Չինաստանի հետ առևտրի ռիսկայնությունը և նվազեցնում արդյունավետությունը: Չինական տնտեսության բարգավաճումը, ինչպես նաև սպառողների գնողունակության բարձրացումը հնարավորություն են ընձեռում Թուրքիային արտահանում իրականացնել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ծառայությունների, հեռահաղորդակցության և ոսկերչական ոլորտները:

Ըստ Առևտրի համաշխարհային կազմակերպության զեկույցի՝ Թուրքիայի առևտրային արդյունքները կշարունակեն մնալ բարձր մակարդակի վրա: Արտաքին առևտրի ոլորտում կատարվածքային բարեփոխումների արդյունավետ իրականացումը կնպաստի Թուրքիայի տնտեսական աճին: Թուրքիայի տնտեսության կառուցվածքը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների ավելացող դերը տնտեսության մեջ անհերքելիորեն կնպաստեն արտաքին առևտրի ծավալների ավելացմանը¹⁸⁰:

¹⁷⁹ Suna Lee, "Turkey and China – Strengthening Economic Ties", ASAM, 2007. Available at: <http://www.asam.org.tr/tr/yazigoster.asp?ID=1844&kat1=58&kat2=>.

¹⁸⁰ Turkish Daily News, "World Trade Body Confident in Turkey", Anatolia News Agency, 04.01.2008. Available at: <http://www.turkishdailynews.com.tr/article.php?enewsid=92776>.

Գլուխ 3

ԹՈՒՐԻՔԻԱ - ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1920-ական թվականներից սկսած՝ բուրքական քաղաքական էլիտան որդեգրել է Թուրքիան եվրոպականացնելու ճանապարհը, որը շատերի կողմից ընկալվում է որպես «Թուրքիայի անդամակցություն քաղաքակիրթ աշխարհին»: Թուրքիայի և ԵՄ-ի միջև պաշտոնական հարաբերություններն ունեն շուրջ կեսդարյա պատմություն: Դրանք սկիզբ են առել դեռևս 1959 թ. հուլիսին, երբ Թուրքիան ասոցացված անդամ դառնալու խնդրանքով անդամագրվեց Եվրոպական տնտեսական կոմիտեին (ԵՏԿ): 1963 թ.-ին ստորագրվեց Անկարայի պայմանագիրը, որով սկսեցին կանոնակարգվել ասոցացված անդամ դառնալու ուղղությամբ մշակվող երկկողմ առևտրատնտեսական կապերը: Այդուհանդերձ, Թուրքիայի եվրոպական քաղաքականության առաջնային նպատակը ԵՄ-ին անդամակցելն է: Առաջին անգամ նա անդամակցության հայտ է ներկայացրել 1983 թ.: 1990 թ. Եվրոպական խորհուրդը հաստատեց բուրքական հավակնությունների հիմնավորվածությունը, սակայն բուն գործընթացն այդ ուղղությամբ հետաձգվեց: Սակայն որոշ քաղաքական իրադարձություններ, ինչպես նաև Եվրոպական այդ կառույցին անդամ դառնալու համար Թուրքիայի պատրաստ չլինելը դանդաղեցնում էին անդամակցության գործընթացը: Մտող պատերազմի ավարտից հետո այս հարցն ավելի քարդացավ: Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում առաջ եկան մի շարք նոր պետություններ, որոնք մինչ այդ կոմունիստական վարչակարգ ունեին, և եվրոպական ընկերակցությանը նրանց ինտեգրվելու հարցը քաղաքական առումով ավելի հրատապ և առաջնահերթ դարձավ: Սա փաստորեն խոչընդոտ դարձավ Թուրքիայի անդամակցության համար, և Թուրքիան հայտնվեց թեկնածու երկրների շարքի վերջին տեղում:

Միայն 1999 թ.-ին շրջադարձային փոփոխություն տեղի ունեցավ ԵՄ-Թուրքիա հարաբերություններում, երբ Հելսինկիի Եվրոպական խորհուրդը հաստատեց Թուրքիայի թեկնածությունը: Համաձայն որոշումներ ընդունվեցին նաև 2001 թ. մարտին, 2003 թ. մայիսին, և դրանց հաջորդեց 2005 թ. հոկտեմբերին պաշտոնական բանակցությունների մեկնարկը անդամակցության հարցի վերաբերյալ: Այդ որոշումներով Թուրքիայից պահանջվում է իրականացնել

նացնել բավական ընդգրկուն բարեփոխումներ՝ ուղղված խոսքի ազատության ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը և այլն: Այդ հանձնառությունների իրագործման նպատակով Թուրքիան մշակել է իրավունքների ընդունման ազգային ծրագիր՝ ուղղված ազգային օրենսդրությունը ԵՄ-ի չափորոշիչներին համապատասխանեցնելուն: Այս հարցում, սակայն, գերիշխում է այն կարծիքը, որ Թուրքիայի եվրոպականացվում և ժողովրդավարացվում է ոչ թե ընդհանրապես, այլ այնքանով, որքանով դա բխում է ԵՄ-ի պահանջներից: ԵՄ-ին Թուրքիայի փիրավ անդամակցության հետանկարը դեռևս մնում է բավական անորոշ: Այսօր դեռ շարունակվում են բանակցությունները, չնայած ակնհայտ է, որ դրանք կորցրել են իրենց նախկին տեմպը, և շատ մասնագետների պնդմամբ՝ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ արդեն քիչ հավանական է թվում: Այնուամենայնիվ, ԵՄ-Թուրքիա հարաբերությունները չեն կորցրել իրենց հրատապությունը և շատ քաղաքական վերլուծաբանները շարունակում են հետազոտություններ իրականացնել այս հարցի վերաբերյալ և քաղաքական կանխատեսումներ անել հարաբերությունների հետագա զարգացման հետանկարի մասին: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում ԵՄ-ին անդամակցության հարցում բուրբական հասարակության աջակցությունը: Այսօր արդեն ակնհայտ է, որ Թուրքիայի ներկայիս վերնախավը և բնակչության մեծ մասը շարունակում են ակտիվորեն աջակցել ԵՄ-ին անդամակցության գործընթացին, սակայն աճում են նաև հակաեվրոպական տրամադրությունները: Մյուս կողմից՝ ԵՄ-ի փորձագետները հաստատում են Թուրքիայի առաջընթացը նորմատիվ-իրավական բարեփոխումների հարցում, սակայն դեռ բաց են մնում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, քաղաքականությանն ուժային կառույցների մասնակցության բացառման, խոսքի և մամուլի ազատության ապահովման, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և մի շարք այլ հարցեր: Այդ իսկ պատճառով ԵՄ-ն առայժմ Թուրքիային տալիս է միջին գնահատական, այն է՝ Թուրքիան դեռևս բավարար մակարդակով բարեփոխումներ չի կատարել ԵՄ-ին նրա անդամակցելու հարցին դրական լուծում տալու համար:

Թուրքիայի ամբողջական ինտեգրումը ԵՄ-ին կլինեի Թուրքիան եվրոպականացնելու գործընթացի եզրափակիչ ակտը, որը Թուրքիային կտրվի միայն քաղաքական և տնտեսական հսկայական փոփոխությունների գնով:

3/1 Թուրքիայի և ԵՄ միջև հարաբերությունների իրավական նախապայմանները մինչև անդամակցության գործընթացը. ընկերակցությունների և Թուրքիայի միջև փոխկապակցման համաձայնագիրը

Փոխկապակցման համաձայնագիրը և դրա կարգավորման առարկան: Լինելով ԵՄ քաղաքականության ազդեցիկ գործիքներից մեկը՝ Միության ընդլայնման օրակարգը ներկայումս սևեռված է Արևմտյան Բալկանների երկրների¹⁸¹ և Թուրքիայի վրա, եթե վերջիններս բավարարեն անդամակցության համար անհրաժեշտ նախապայմանները: ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը այսօր դարձել է այդ երկրի համար առաջնահերթ հիմնախնդիր:

Թուրքիայի ինտեգրումը Եվրոպական միությանը պատմական խոր արձանագրություն է: Այն սկսվում է դեռևս 1930-ական թթ.-ից, երբ ժամանակակից Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը սկսեց քաղաքական ծրագիր՝ Թուրքիայի հասարակությունը աշխարհիկ և ժամանակակից հասարակության վերափոխելու համար, իսկ Թուրքիան, սկսած 1950 թ.-ից, փորձում էր բարելավել և ամրապնդել իր ժողովրդավարությունը՝ հիմք ընդունելով եվրոպական նորմերը, ինչպես նաև աստիճանաբար միանալ եվրոպական ինտեգրացիոն գործընթացին՝ արդյունքում անդամակցելով Եվրոպական Միությանը¹⁸²: 1959 թ.-ին Թուրքիայի կառավարությունը նախաձեռնեց ԸՆկերակցությունների հետ փոխկապակցման համաձայնագիր կնքելու վերաբերյալ բանակցությունների գործընթաց: Սակայն նախքան այս ինտեգրացիոն գործընթացներին մասնակից դառնալը Թուրքիան արդեն իսկ դարձել էր ԵԱՀԿ-ի անդամ (1948 թ.-ին), Եվրոպայի խորհրդի անդամ (1949 թ.-ին) և Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ (1952 թ.-ին):

Գրեթե չորս տարի տևած բանակցություններից հետո՝ 1963 թ. սեպտեմբերի 12-ին, Թուրքիայի և Եվրոպական տնտեսական ընկերակցության միջև Անկարայում կնքված Փոխկապակցման պայմանագիրը¹⁸³ եղավ Թուրքիայի և

¹⁸¹ Մասնավորապես՝ կոսովո, Ռոբվաթիա, Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետություն, Ալբանիա, Մոնտենեգրո, Սերբիա, Բոսնիա և Հերցեգովինա:

¹⁸² Տե՛ս article by Kemal Kiriski " 12-13 December 2002- Copenhagen summit of the European Council and Turkey", էջ 3 (<http://www.tusiad.us/Content/uploaded/KIRISCICOPENHAGENTUSIADWDC.PDF>):

¹⁸³ Տե՛ս EEC-Turkey Association Agreement 1963 OJ 1973 C 113/2 (M). Համաձայնագիրն ուժի մեջ մտավ 1964թ. դեկտեմբերի 1-ին:

ԵՄ միջև հարաբերությունների զարգացման համար անլյունաքարային փաստաթուղթ: Ընդ որում, Համաձայնագրի կնքման նախադրյալները առավելապես քաղաքական էին (մասնավորապես՝ անվտանգությանը վերաբերող), քան տնտեսական:

«Անկարայի համաձայնագրի» սկզբնական նպատակն էր «խթանել կողմերի միջև տնտեսական և առևտրային հարաբերությունների շարունակական և հավասարակշռված ամրապնդումը՝ հաշվի առնելով Թուրքիայի տնտեսության զարգացման անհրաժեշտությունը և քույր ժողովրդի աշխատանքի պայմանների ու կենսամակարդակի բարձրացումը», որը պետք է իրականացվեր Թուրքիայի և Ընկերակցությունների միջև մաքսային միություն ստեղծելու միջոցով (Հոդված 2, մաս 1): Մինևույն ժամանակ Համաձայնագրի նախաբանում և 28-րդ հոդվածում շարադրված էր մեկ այլ նպատակ ևս, այն է՝ նպաստել Թուրքիայի «նետագա» անդամակցությանը Ընկերակցություններին:

Համաձայնագրի 2-րդ հոդվածով փոխկապակցման գործընթացը բաժանվեց 3 փուլի՝ յուրաքանչյուր փուլի համար սահմանելով կոնկրետ ժամանակահատված:

1. *Նախապատրաստական փուլ*, որի ընթացքում Ընկերակցությունները պետք է Թուրքիային օգնեին ամրապնդել անտեսությունը՝ ֆինանսական օգնության և բուրբակյան ծագման առանձին գյուղատնտեսական ապրանքների արտահանումը կարգավորելու միջոցով:

2. *անցումային փուլ*, որի ընթացքում ստղծվելու էր մաքսային միություն 12-22 տարով՝ պայմանավորված ապրանքատեսակներով:

3. *եզրափակիչ փուլ*, որը ապահովելու էր Թուրքիայի անդամակցությունը Եվրոպական միությանը:

Նախապատրաստական փուլը սահմանվեց հինգ տարի, որին հաջորդեցին անցումային փուլի բանակցությունները, որոնք տևեցին 1968-1970 թթ և ավարտվեցին 1970 թ. լրացուցիչ համաձայնագրի ընդունմամբ¹⁸⁴:

«Անկարայի համաձայնագրով» Թուրքիայի և Ընկերակցությունների միջև համագործակցությունը ընդգրկեց 4 հիմնական ուղղություններ:

1. ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ:

2. մրցակցություն

3. օրենսդրության մոտարկում

¹⁸⁴ Additional Protocol and Financial Protocol, of 23 November 1970, annexed to the Agreement establishing an Association between the EEC and Turkey and on measures taken for their entry into force, OJ 1972 L 293/68: Արձանագրությունն ուժի մեջ մտավ 1973 թ. հունվարի 1-ին:

4. ֆինանսական աջակցություն:

Լինելով եվրոպական ընտանիքին ինտեգրվելու առումով Թուրքիայի համար մեկնարկային կարևոր փաստաթուղթ՝ գործնականում ծագել է Համաձայնագրի իրավական ուժի հարցը, որի մեկնաբանությունը տրվել է Եվրոպական դատարանի կողմից՝ *Meryem Demirel v Stadt Schwäbisch* գործով¹⁸⁵: Գերմանիայի դատարանի հարցմանը ի պատասխան՝ Եվրոպական դատարանը տվել է այն մեկնաբանությունը, որ Ընկերակցության կողմից ոչ անդամ երկրների հետ կնքած համաձայնագրերի նորմերը կիրառվում են անմիջականորեն միայն այն դեպքում, եթե տվյալ նորմը պարունակում է հստակ ձևակերպված պարտականություն, որի իրացումը չի պահանջում հետագա լրացուցիչ գործողություններ: Մինչդեռ, ելնելով Փոխկապակցման համաձայնագրի կառուցվածքից և էությունից, կարելի է ասել, որ այն սահմանում է միավորման ընդհանուր նպատակները և ամրագրում այդ նպատակներին հասնելու անհրաժեշտությունը, սակայն համաձայնագիրը չի պարունակում նպատակներին հասնելու կոնկրետ նորմեր, կանոններ (բացառությամբ լրացուցիչ արձանագրության մեջ ամրագրված որոշ դրույթների): Հետևաբար միավորման համաձայնագրի դրույթները անդամ երկրների ներքին իրավական համակարգում անմիջականորեն կիրառվող ընկերակցությունների իրավունքի մաս չեն:

Համաձայնագրով նախատեսված մարմինները: «Անկարայի համաձայնագրով» նախատեսված էր հիմնադրել Փոխկապակցման խորհուրդ, որի հիմնական խնդիրը լինելու էր իմպլեմենտացիան և փոխկապակցման հարաբերությունների պրոգրեսիվ զարգացման ապահովումը: Փոխկապակցման խորհուրդը կազմված է Ընկերակցության անդամ պետությունների կառավարությունների, Ընկերակցության խորհրդի և Հանձնաժողովի անդամներից մի կողմից և Թուրքիայի կառավարության անդամներից մյուս կողմից (Հոդված 23):

Խորհուրդը առաջարկություններ է անում, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված դեպքերում ընդունում է որոշումներ: Խորհրդի որոշումներն ընդունվում են միաձայնությամբ: Խորհրդի նախագահությունը փոխարինաբար իրականացվում է ԵՄ-ի և Թուրքիայի ներկայացուցիչների կողմից:

¹⁸⁵ ECJ Case 12/86 *Meryem Demirel v Stadt Schwäbisch*, Judgment of the Court of 30 September 1987. Մերյեմ Դեմիրելը Թուրքիայի քաղաքացու կին էր, որին Գերմանիայի իշխանությունները թույլ չէին տվել հաստատվել Գերմանիայում և միավորվել այնտեղ գտնվող իր ամուսնու հետ: Գերմանիայի դատարանը հարցում էր կատարել Եվրոպական Դատարանին՝ պարզելու համար, թե արդյո՞ք Փոխկապակցման համաձայնագրի «ազատ տեղաշարժ» արտահայտությունը պետք է հասկանալ որպես անդամ երկրում օրինական հիմքերով բնակվող քույր քաղաքացիների իրավունք իրենց հետ բնակեցնել նաև նրանց ամուսիններին և երեխաներին:

Անկարայի համաձայնագրով նախատեսվում էր հիմնադրել միայն Փոխկապակցման խորհուրդ: Չնայած այդ հանգամանքին՝ ժամանակի ընթացքում ստեղծվեցին մի շարք մարմիններ, որոնք իր առջև դրված խնդիրներն իրականացնելիս պետք է աջակցեին Փոխկապակցման խորհրդին: Փոխկապակցման խորհրդի թիվ 3/64 որոշմամբ հիմնադրվեց Փոխկապակցման կոմիտե:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայնագրով Փոխկապակցման խորհրդի վրա ըստ էության դրվել է Եվրոպական խորհրդարանի և Թուրքիայի խորհրդարանի միջև համագործակցության խթանման պարտավորություն, ի կատարումն վերջինիս, Փոխկապակցման խորհուրդը իր ընդունած թիվ 1/65 որոշմամբ հիմնադրեց խորհրդարանական կոմիտե: Այն բաղկացած էր Եվրոպական խորհրդարանի ու Թուրքիայի խորհրդարանի 25-ական թվով անդամներից և Փոխկապակցման խորհրդի առջև կարող էր հանդես գալ համապատասխան առաջարկություններով: Այն օրենսդիր իշխանությամբ օժտված չէր:

Միևնույն ժամանակ Փոխկապակցման խորհրդում ստեղծվել են 8 ենթահանձնաժողովներ, որոնց նպատակն է Թուրքիան նախապատրաստել Ընկերակցությունների իրավունքի (Aquis communautaire) ընդունման գործընթացին:

Փոխկապակցման խորհրդի աշխատանքները սպասարկելու համար վերջինիս թիվ 2/69 և թիվ 1/95 որոշումներով ստեղծվել են նաև Մաքսային համագործակցության կոմիտեն և Մաքսային միության միասնական կոմիտե:

Մաքսային համագործակցության կոմիտեն և Մաքսային միության միասնական կոմիտեն ապահովում են մաքսային հարցերով փորձի և տեղեկատվության փոխանակումը: Ընդ որում, Թուրքիան պետք է տեղեկացնի Ընկերակցությունների իրավունքի ցանկացած ոլորտում ընդունված այն իրավական ակտերի մասին, որոնք առնչություն ունեն մաքսային միությանը:

Նշենք նաև, որ բացի Համաձայնագրով նախատեսված ինստիտուցիոնալ համագործակցությունից՝ Թուրքիան մասնակցում է նաև Եվրոպական բնապահպանական գործակալության գործունեությանը և տեսականորեն կարող է մասնակցել ընկերակցությունների մնացած բոլոր ծրագրերին:

Ապրանքների ազատ տեղաշարժը ըստ Համաձայնագրի: Ինչպես վերը նշվեց, ԵՄ և Թուրքիայի միջև Փոխկապակցման պայմանագրով ընդգրկված ոլորտներից մեկը առևտրի և տնտեսության ոլորտներում կապերի ակտիվացումն էր և ապրանքային շրջանառության աճին նպաստելը: Փոխկապակցման պայմանագիրը այս առումով միայն ուղղություններ էր տալիս, որոնք հետագա իրագործումը պետք է իրականացվեր մաքսային միության շրջանակներում: «Անկարայի համաձայնագրի» 10-րդ հոդվածում պարզապես նշվում է

մաքսատուրքերի և քանակական սահմանափակումների արգելման մասին: Հարցի հետագա կարգավորումն իրականացվեց թիվ 1/95 Լրացուցիչ արձանագրությամբ¹⁸⁶, որով նախատեսվեց ներմուծման և արտահանման մաքսատուրքերի վերացում, արգելվեց նոր մաքսատուրքերի սահմանումը, ինչպես նաև քանակական սահմանափակումների և համարժեք ազդեցություն ունեցող միջոցների կիրառումը¹⁸⁷:

Աշխատուժի ազատ տեղաշարժը: Թե՛ն բանավեճերի առիթ դարձած աշխատողների ազատ տեղաշարժի հիմնահարցի աղոտ մեկնաբանությանը կարելի է հանդիպել Անկարայի համաձայնագրի 12-րդ հոդվածում: Այն ճանաչում է Եվրոպական տնտեսական ընկերակցության պայմանագրի 48, 49 և 50-րդ հոդվածները՝ որպես փոխկապակցման ուղեցույց, և հետագայում զարգացվում է Լրացուցիչ արձանագրության և Փոխկապակցման խորհրդի թիվ 2/76, 1/80 և 3/80 որոշումների մեջ: Ըստ Լրացուցիչ արձանագրության՝ աշխատողների ազատ տեղաշարժը երաշխավորվելու էր մինչև 1986թ.-ի դեկտեմբերի 1-ը:

Համայնքում քաղաքական խնդիրների և թուրք աշխատավորների շարժմանը դեմ լինելու հանգամանքը հանգեցրին այն բանին, որ Փոխկապակցման խորհուրդը կարողացավ այս հարցում միայն չնչին բարելավումների հասնել: Թիվ 2/76 որոշումը թույլ էր տալիս աշխատավորներին 10 տարվա ընթացքում իրականացնել ազատ տեղաշարժ (1976 թ.-ի դեկտեմբերի 1-ից մինչև 1986 թ.-ի դեկտեմբերի 1-ը՝ համաձայն Լրացուցիչ արձանագրության 36-րդ հոդվածի): Թիվ 1/80 որոշումը հաստատեց այս զարգացումը, իսկ թիվ 3/80 որոշումը Եվրոպական միությունում ներդրեց սոցիալական անվտանգության միջոցներ թուրք աշխատավորների համար: Փոխկապակցման խորհուրդը աշխատողների ազատ տեղաշարժմանն առնչվող ոչ մի ձեռնարկում այլևս չիրականացրեց, քանի որ համագործակցությունը ընդհատվեց 1980 թվականին տեղի ունեցած ռազմական հեղափոխության հետևանքով:

Թուրք աշխատավորների ազատ տեղաշարժման ազատությունը զարգացվեց Եվրոպական ընկերակցությունների դատարանի կողմից: Վերը արդեն իսկ քննարկված Demirel-ի գործի քննության ժամանակ դատարանը գտավ, որ Անկարայի համաձայնագրի 12-րդ հոդվածը և Լրացուցիչ արձանագրության 36-րդ հոդվածը պատշաճ չափով հստակ չէին, որ անհատների

¹⁸⁶ Decision No. 1/95 of the EC-Turkey Association Council of 22 December 1995 on implementing the final phase of the Customs Union, OJ 1996 L 35/1.

¹⁸⁷ Մաքսային գոտու շրջանակներում ապրանքների ազատ տեղաշարժի հարցերը առավել մանրամասն քննարկվում են «Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերություններին» վերաբերող բաժնում:

համար իրավունքներ ստեղծելին Լրացուցիչ արձանագրության սահմանած ժամանակի, այն է՝ 1986 թ.-ի դեկտեմբերի 1-ի ավարտից հետո: Այնուամենայնիվ, բախվելով այն խնդրին, թե արդյո՞ք թիվ 2/76 և 1/80 որոշումները, հատկապես դրանց համապատասխան 2 և 7, 6 և 13 հոդվածները ուղղակի գործող են, Գառարանը *Sevince-ի* գործում սահմանեց, որ անհատները կարող էին հենվել այս որոշումների վրա՝ չնայած այն հանգամանքին, որ դրանք չեն կրապարակվել և պահանջում էին այդ որոշումների իմպլեմենտացիա՝ դրանց ուղղակի գործողությունը ապահովելու համար¹⁸⁸:

Հիմնադրվելու և ծառայություններ մատուցելու ազատությունը: Փոխկապակցման համաձայնագրի 12-14 հոդվածները ամրագրում են հիմնադրման ազատությունը և ծառայություններ մատուցելու ազատությունը՝ որպես փոխկապակցման ուղեցույցներ: Լրացուցիչ արձանագրությունը չի կենտրոնանում այդ ազատությունների վրա, այլ պարունակում է դրանց կապված կասեցնող դրույթ և ժամանակացույցը սահմանելու ու այդ ազատությունները ձևավորելու լիազորությունը դնում է Փոխկապակցման խորհրդի վրա¹⁸⁹: Չնայած Թուրքիան և Եվրոպական միությունը շարունակաբար բանակցում են այս հարցի վերաբերյալ, Փոխկապակցման խորհուրդը դեռևս այս հարցի կապակցությամբ որևէ գործնական քայլ չի ձեռնարկել: Ներկայումս ո՛չ ազգությամբ բուրբերը, ո՛չ Միության քաղաքացիները չեն կարող հիմք ընդունել Փոխկապակցման համաձայնագիրը, երբ նրանք ցանկանում են ծառայություններ արձանագրել կամ հիմնադրվել Եվրոպական միությունում կամ Թուրքիայում:

Մրցակցային միջավայրը: Թեև Անկարայի համաձայնագիրը իր մեջ որոշակի ակնարկ էր պարունակում մրցակցության մասին, սակայն այս առումով հետագա պարզություն մտցվեց Լրացուցիչ արձանագրության 43-րդ հոդվածով, որի համաձայն՝ Փոխկապակցման խորհուրդը պատասխանատվություն է կրում Եվրոպական ընկերակցության պայմանագրի՝ մրցակցությանը վերաբերող 81-րդ, 82-րդ, 86-րդ և 87-րդ հոդվածների իրագործմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու համար: Այս պարտականությունը իմպլեմենտացվեց թիվ 1/95 որոշման 32-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածներով, որոնք ըստ էության նույնական են Եվրոպական ընկերակցության պայմանագրի 81-րդ, 82-րդ, և 87-րդ հոդվածներին: Ընդ որում, համաձայն այդ որոշման 35-րդ հոդվածի, մրցակցությանը հակասող գործողությունների գնահատականները պետք է տրվեն՝ հիմք ընդունելով Ընկերակցության իրավունքով հաստատված չափանիշները:

¹⁸⁸ Case C-192/92, S. Z. Sevince v Staatssecretaris van Justitie point 24. (http://eur-lex.europa.eu/smartapi/cgi/sga_doc?smartapi!celexplus!prod!CELEXnumdoc&lg=en&numdoc=61989J0192).

¹⁸⁹ Article 41 of the Additional Protocol.

Օրենսդրության մոտարկումը: Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության համար առանցքային նշանակություն ունի Թուրքիայի օրենսդրության առավելագույն նույնացումը ԵՄ նորմերին ու ստանդարտներին: Լիիրավ անդամակցության համար Թուրքիայից պահանջվում է ոչ միայն վերանայել իր օրենսդրության այն նորմերը, որոնք կարգավորում են Թուրքիայի և ԵՄ համաձայնագրերով «առաջնային» համարվող ոլորտները, այլ նաև մոտարկել, ընդունել իրավական սկզբունքների, դոկտրինների մի ամբողջ համակարգ, որոնք կազմում են *acquis communautaire-ի* միջուկը:

Acquis communautaire-ը սերտորեն կապված է ԵՏԸ ընդլայնման գործընթացին: ԵՏԸ անդամ երկրների գլոխների 1961 թ. հուլիսի 18-ին Բադ-Գոդեսբուրգի հանդիպման ժամանակ հայտարարվեց, որ ելնելով ԵՏԸ անդամ երկրների միջև քաղաքական միավորման հարցում առաջընթաց ապահովելու նպատակից՝ անհրաժեշտ է, որ անդամակցությանը հավակնող երկրները մինչև ԵՏԸ լիիրավ անդամ դառնալը անվերապահորեն ստանձնեն բոլոր այն պարտականությունները, որոնք ունեն ԵՏԸ գործող անդամ երկրները, և միաժամանակ ԵՏԸ ընդհանուր քաղաքական ուղղություններին: ԵՄ անդամակցության թեկնածու երկրների հարցում *acquis communautaire-ը* ներկայումս դարձել է ԵՄ արտաքին քաղաքականության անկյունաքարային հասկացություն: ԵՄ անդամակցության համար պարտադիր պայման է թեկնածու երկրի կողմից *acquis communautaire-ի* հաջող մոտարկումը և կիրառումը մինչև անդամակցության բանակցությունների բարեհաջող ավարտը:

Acquis communautaire-ի «արտահանումը» իրականացվում է այսպես կոչված ԵՄ արտաքին համաձայնագրերի «մոտարկման դրույթների» միջոցով¹⁹⁰: Դրա արդյունքում երրորդ պետությունները, որոնք ցանկանում են խորացնել իրենց համագործակցությունը ԵՄ-ի հետ, կամավոր նախաձեռնում են ազգային օրենսդրության համապատասխանեցման գործընթաց¹⁹¹:

«Անկարայի համաձայնագրով» նույնպես նախատեսված են «մոտարկման դրույթներ»: Մասնավորապես, Անկարայի համաձայնագրի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Թուրքիա-ԵՏԸ մաքսային միությունը պետք է ներառի Թուրքիայի կողմից երրորդ պետությունների հետ առևտուր իրականացնելիս Ընկերակցության ընդհանուր մաքսերի սահմանումը և Ընկերակցության արտաքին առևտրին վերաբերող մյուս կանոնների մոտարկումը: Անկարայի համաձայնագրի «մոտարկման դրույթներից» է 16-րդ հոդվածը, ո-

¹⁹⁰ Roman Petrov, “The External Dimension of the Acquis Communautaire”, MWP Working Paper 2007/02, European University Institute, Florence P. էջեր 18-21.

¹⁹¹ Այս մասին առավել մանրամասն խոսվում է հաջորդ մասում, որը վերաբերում է ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բուն գործընթացին:

րի համաձայն՝ Թուրքիան և ԵՏՀ ճանաչում են Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 1-ին գլխի 3-րդ ենթագլխի՝ մրցակցային, հարկային և մոտարկման իրավունքին վերաբերող կետերի հիմքում ընկած սկզբունքների կիրառման պարտադիր լինելը Թուրքիա-ԵՄ/ԵՏՀ փոխկապակցման հարաբերություններում¹⁹²։

Քանի որ «Անկարայի համաձայնագրի» գլխավոր նպատակներից մեկը Թուրքիայի և ԵՄ/ԵՏՀ միջև մաքսային միության հիմնումն էր, այն ինքնին ենթադրում է Թուրքիայի կողմից առևտրային acquis-ի ավելի լայն ներմուծում իր իրավական համակարգ։ Այս առումով կարևոր նշանակություն ունեցան Փոխկապակցման խորհրդի թիվ 1/95 և թիվ 2/97 որոշումները¹⁹³ և ԵՄ-Թուրքիա Մաքսային համագործակցության կոմիտեի (Customs Cooperation Committee) կողմից ընդունված թիվ 1/96 որոշումը¹⁹⁴։ Վերջիններս լրացրին այն բացը, որն առկա էր Անկարայի համաձայնագրի և դրա լրացուցիչ արձանագրությունների կողմից acquis communautaire-ի իմպլեմենտացման աստիճանի սահմանման հարցում։

Մասնավորապես թիվ 1/95 որոշման 4-րդ գլխում առանձին բաժիններով ամրագրված են այն ոլորտները, որոնցում Թուրքիան պետք է իրականացնի իր օրենսդրության մոտարկումը։ Դյանք հետևյալներն են։

- Առաջին բաժինը կարգավորում է մտավոր, արդյունաբերական և առևտրային օրենսդրության պաշտպանությունը։ 31-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ կողմերը ճանաչում են այն փաստը, որ Մաքսային միությունը կարող է պատշաճ գործել միայն այն դեպքում, երբ մտավոր սեփականության իրավունքի արդյունավետ պաշտպանությունը Մաքսային միության կողմերը իրականացնեն համարժեք մակարդակներում։

- Երկրորդ բաժինը վերաբերում մաքսային միությունում մրցակցության կանոններին, որոնք արգելում են Մաքսային միության տարածքում մենաշնորհային դիրքի ձեռքբերումը և սահմանում են այս ոլորտում Թուրքիայի կողմից ԵՏՀ/ԵՄ օրենսդրության մոտարկման պարտականությունը, դրա աստիճանն ու իրականացման ժամկետներին։

- Երրորդ բաժինը նվիրված է առևտրի պաշտպանության մեխանիզմներին, որոնցով Փոխկապակցման խորհրդի վրա է դրվում երրորդ պետություն-

¹⁹² EEC-Turkey Association Agreement 1963 OJ 1973 C 113/2 (M) 16.

¹⁹³ Decision No. 1/95 of the EC-Turkey Association Council of 22 December 1995 on Implementing The Final Phase Of The Customs Union, OJ 1996 L 35/1.

¹⁹⁴ Decision No. 1/96 of the EC-Turkey Customs Cooperation Committee Laying Down Detailed Rules For The Application Of The Decision 1/95 (OJ 1996 L 200/14).

նրի հետ առևտրային հարաբերություններում մրցակցային իրավունքի նորմերի պահպանման պարտականության վերահսկումը։

- Չորրորդ բաժինը նվիրված է փոխադարձ բաց շուկաներ իրականացվող մատակարարումներին, որոնց վերաբերյալ բանակցություններ սկսելու և ամենամյա առաջընթացի հաշվետվություն ներակայացնելու պարտականությունը դրվել է Փոխկապակցման խորհրդի վրա։

- Հինգերորդ բաժինը նվիրված է ուղղակի և անուղղակի հարկերին։

Թիվ 1/95 որոշմամբ ամրագրված են նաև Թուրքիայի պարտականությունը մոտարկելու ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության չափաբաժինները, որպեսզի ապահովվի գյուղատնտեսական արտադրանքի ազատ տեղաշարժը¹⁹⁵։ Թուրքիան օրենսդրության մոտարկման պարտականություն է վերցրել նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ստանդարտացումը, չափաբանությունը, աստիճանավորումը, որակը, աստիճանակարգումը, քեստավորումը և հավաստագրումը¹⁹⁶։ Ավելին՝ Թուրքիան պարտավորվել է մեկնաբանել թիվ 1/95 որոշման՝ ԵՆ պայմանագրին նույնական դրույթները Եվրոպական ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա¹⁹⁷։ Մինևույն ժամանակ Թուրքիան պետք է ապահովի նաև ԵՆ առաջնային և երկրորդական օրենսդրությունում ամրագրված սկզբունքների կենսագործունը՝ Եվրոպական ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան¹⁹⁸։

3/2 ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բուն գործընթաց. անդամակցության չափանիշները և դրանց բավարարման ընթացքը

1980-ական թվականների սկզբներին ԵՄ-Թուրքիա հարաբերությունները ժամանակավորապես կասեցվեցին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղափոխության հետևանքով։ Մական մի քանի տարի անց այդ հարաբերությունները վերականգնվեցին, և 1987 թ. ապրիլի 14-ին Թուրքիան անդամակցության մասին դիմում ներկայացրեց ԵՄ-ին։ Եվրոպական հանձնաժողովը, 1989 թվականին քննարկելով դիմումը, հաստատեց Թուրքիայի անդամակ-

¹⁹⁵ Decision 1/95, Article 25.

¹⁹⁶ Decision 1/95, Article 8(4).

¹⁹⁷ Decision 1/95, Article 66.

¹⁹⁸ Decision 1/95, Article 42.

ցության հնարավորությունը, սակայն ելնելով Թուրքիայի քաղաքական ու տնտեսական իրավիճակից՝ մերժեց վերջինիս խնդրանքը՝ թողնելով այն ավելի ուշ ժամանակի¹⁹⁹:

Թուրքիա-ԵՄ հարաբերություններում նոր փուլ դարձավ Դանիայի Կուպենհագեն քաղաքում 1993 թ-ի հունիսի 21-22-ը տեղի ունեցած զագաթաժողովը, որի ընթացքում էլ սահմանվեցին ԵՄ-ին անդամակցության պարտադիր չափանիշները՝ դրանով իսկ կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների համար բացելով ԵՄ-ին անդամակցելու ճանապարհը: Այդուհանդերձ, կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների, ինչպես նաև Կիպրոսի հետ սկսելով հնարավոր անադամակցության բանակցությունները՝ ԵՄ Թուրքիային մասնակից չդարձրեց այդ գործընթացին, այլ միայն սահմանափակվեց 1995 թ.-ին Թուրքիայի հետ Մաքսային միություն հիմնադրելու մասին համաձայնագրի կնքմամբ: 1997 թ-ի դեկտեմբերին Լյուքսեմբուրգյան զագաթաժողովը որոշում ընդունեց շրջագրել Թուրքիան այն 10 թեկնածու պետությունների շարքում, որոնք միացան ԵՄ-ին 2004 թ. մայիսին: Սա սատեցում մտցրեց ԵՄ-Թուրքիա հարաբերություններում: Անկարան փաստացի սատեցրեց իր հարաբերությունները Բրյուսելի հետ: Սակայն դրա փոխարեն Թուրքիային առաջարկվեց հատուկ «Եվրոպական ռազմավարություն Թուրքիայի համար», որի նպատակն էր մոտեցնել Թուրքիան ԵՄ-ին, որը պետք է հանգեցնեք նրա անդամակցությանը: Ամեն դեպքում եվրոպական երկրները չէին ցանկանում Թուրքիային լիովին անտեսել և դուրս մղել ինտեգրման գործընթացից: Լյուքսեմբուրգյան զագաթաժողովը նաև առաջին պաշտոնական ֆորումն էր, որտեղ թեև ոչ ուղղակիորեն նշվեց, որ Էգեյան ծովի հետ կապված հարցերի և Կիպրոսի հիմնախնդրի լուծումով է նաև պայմանավորված ԵՄ Թուրքիայի անդամակցությունը²⁰⁰: Հարկ է նշել, որ սրանք լրացուցիչ նախապայմաններ էին, որոնք դրվեցին Թուրքիայի առջև անդամակցության պաշտոնական նախապայմանների (Կուպենհագենյան չափանիշների) հետ մեկտեղ:

ԵՄ-Թուրքիա հարաբերությունները ավելի բարձր հարթության վրա դրվեցին միայն 1999 թ դեկտեմբերի 10-11-ը Հելսինկիի Եվրոպական խորհրդակցության ժամանակ, որտեղ Թուրքիան պաշտոնապես ճանաչվեց որպես թեկնածու երկիր՝ մնացած թեկնածու երկրների հետ հավասար կարգավիճակով²⁰¹:

Թուրքիային անդամակցության ճանապարհին ուղղորդելու համար Եվրոպական հանձնաժողովն սկսեց նախապատրաստել Թուրքիայի համար Անդամակցության համագործակցության փաստաթուղթ (Accession Partnership Document), որը հրապարակվեց 2001 թ մարտի 8-ին: Հաշվի առնելով այն իրատեսական խնդիրները, որոնց լուծմանը Թուրքիան կարող է հասնել՝ փաստաթուղթը սահմանում է կարճաժամկետ և միջնաժամկետ առաջնայություններ, որոնցից առաջիններին Թուրքիան պետք է հասնեք 1-2 տարվա ընթացքում, իսկ միջնաժամկետներին՝ 3-4 տարվա ընթացքում: Ընդ որում, այդ փաստաթուղթը երեք անգամ ենթարկվել է փոփոխության՝ 2003, 2006 և 2007 թվականներին՝ համապատասխանաբար Թուրքիային առաջադրելով նոր պահանջներ: Ի կատարումն Անդամակցության համագործակցության փաստաթղթի՝ Թուրքիան 2001 թ. մարտի 19-ին հրապարակեց Ազգային ծրագիր, որը Եվրոպական հանձնաժողովին ներկայացվեց մարտի 26-ին²⁰²: Այն ստեղծվել էր կարճաժամկետ և միջնաժամկետ առաջնայությունների նուրբ գնահատմամբ:

Թուրքիային շնորհելով անդամակցող պետության կարգավիճակ՝ այնուամենայնիվ նրա հետ բանակցությունները ամփոփապես չսկսվեցին: Առաջին անգամ Թուրքիայի անդամակցության համար բանակցությունների բացման մասին բարձր մակարդակով խոսվեց Լաեկենում Եվրոպական խորհրդի ժամանակ՝ 2001 թ-ի դեկտեմբերի 14-15՝ ի պատասխան Կուպենհագենյան չափանիշներին համապատասխանելու ուղղությամբ Թուրքիայի ձեռնարկած որոշ քայլերի: Լաեկենում ընդունված կարևոր որոշումներից էր այն, որ մյուս թեկնածուների հետ Թուրքիան ևս հավասար լիազորություններով հրավիրվեց մասնակցելու Եվրոպայի ապագայի մասին Կոմվենցիային: Սա նուրբ դիվանագիտական քայլ էր, որը նպատակ ուներ ցույց տալու թուրք հասարակությանը և իշխանություններին, որ ԵՄ անդամակցելու ուղղությամբ նրանց կողմից կատարվող քայլերը գնահատվում են իրենց եվրոպական գործընկերների կողմից²⁰³:

2002 թվականին դեկտեմբերին Կուպենհագենում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ որոշվեց, որ ԵՄ-ն Թուրքիայի հետ բանակցությունները անհապաղ կսկսի, եթե մինչև 2004 թվականի դեկտեմբերը Թուրքիան բավարարի Կուպենհագենի քաղաքական չափանիշը²⁰⁴: Ընդ որում, այս ժամկետի վերաբերյալ համաձայնությունը ձեռք բերվեց մեծ դժվարությամբ, քանի որ

¹⁹⁹ Stü Embassy of the Republic of Turkey in London: About Turkey and EU (http://www.turkishembassyLondon.org/canon/aboutturkey_cu.htm).

²⁰⁰ <http://www.pism.pl>, Turkey and European Union: Main political Problems on the Way of EU Membership; Ionka Ozer.

²⁰¹ 'The European Union in Detail', European Integration Library, Volume VIII, Yerevan 2006, p.91.

²⁰² Stü <http://www.ikv.org/tr/EU-Turkey/History>, (visited in 04.11.2008).

²⁰³ Stü <http://www.byegm.gov.tr>, The European Union: Towards Accession.

²⁰⁴ Stü <http://www.pism.pl>, Turkey and European Union: Main political Problems on the Way of EU Membership (visited in 04.11.2008).

առկա էին բազմաթիվ իրարամերժ դիրքորոշումներ: Մասնավորապես, դեռևս 2002 թ. նոյեմբերին Ֆրանսիայի նախկին նախագահ Վալերի Ժիսկար Դ'Էստենը պնդում էր, որ Թուրքիան եվրոպական երկիր չէ, և Թուրքիայի քնդումունը ԵՄ Միության վերջը կլինի: Ֆրանսիայի նախկին նախագահ Ժակ Շիրակը և Գերմանիայի նախկին կանցլեր Գերհարդ Շրոդերը Կոպենհագենի գագաթաժողովից մի քանի օր առաջ հանդես եկան Թուրքիայի հետ բանակցությունները 2005 թվականի հուլիսին սկսելու առաջարկությամբ: Հակադրվելով նրանց՝ Միացյալ Նահանգների կառավարությունը՝ ի դեմս Ջորջ Բուշի, հանդես էր գալիս Թուրքիայի կարևոր ձեռքբերումների ճանաչման պաշտպանությամբ, մասնավորապես մուսուլմանական հասարակության ժողովրդավարության հետ համակերպման առումով և ճնշում էր գործադրում ԵՄ անդամ պետությունների նկատմամբ՝ Թուրքիայի հետ բանակցությունների սկսման վաղ ժամկետ սահմանելու համար²⁰⁵:

Հարկ է նկատի ունենալ, որ կոպենհագենյան որոշումը ձեռք բերվեց այնպիսի արտակարգ ժամանակահատվածում, երբ միաժամանակ մի շարք կարևոր քաղաքական զարգացումներ տեղի ունեցան: Նախ՝ կոպենհագենյան գագաթաժողովում որոշում կայացվեց Արևելյան երկրների հետ միասին ԵՄ ընդունել մաս Կիպրոսի Հանրապետությանը: Երկրորդ՝ որոշումը կայացվեց այն ժամանակ, երբ Միացյալ Նահանգները պատրաստվում էր պատերազմի մեջ մտնել Իրաքի հետ: Այդուհանդերձ, կոպենհագենյան գագաթաժողովը պատմական իրադարձություն էր երկու կարևոր առումներով: 1999 թ-ի Հելսինկիի գագաթաժողովից հետո Կոպենհագենի գագաթաժողովը ԵՄ-Թուրքիա հարաբերություններում անշուշտ մեծ նշանակություն ունեցավ՝ սահմանելով անդամակցության բանակցությունները սկսելու համար հստակ ամսաթիվ: Եթե Հելսինկիում հաստատվեց Թուրքիայի կարողությունը վերափոխելու իր պետությունը և ժողովրդավարական ինստիտուտները՝ դրանք եվրոպական չափանիշներին համահունչ դարձնելով, ապա Կոպենհագենում քննարկվեց դեպի Եվրոպա Թուրքիայի ապագա առաջընթացի պլանավորումը: Միևնույն ժամանակ, չստանալով Կոպենհագենում անդամակցության բանակցությունները սկսելու կոնկրետ ամսաթիվ, Թուրքիայի կառավարությունը «շատ կարևոր դաս սովորեց», այն է, որ տնտեսական և քաղաքական ճգնաժամի մեջ գտնվող Թուրքիան միշտ լուրջ խնդիրներ կունենա ԵՄ հետ իր հարաբերություններում և, հակառակը, իր քաղաքական և տնտեսական խնդիրները լուծած

Թուրքիան լավագույն վայրը կլինի անդամակցության բանակցությունների համար:

Մյուս կողմից՝ Կոպենհագենի գագաթաժողովը Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին Եվրոպայի համար դարձրեց առավել քան իրատեսական՝ ստիպելով լրջորեն խորհել այն հարցի մասին, թե ինչպես է Եվրոպան պատկերացնում իրեն ապագայում՝ Թուրքիայի անդամակցությունից հետո:

Ինչպես վերը նշվեց, 1993 թ. Կոպենհագենի գագաթաժողովում սահմանվեցին ԵՄ-ին անդամակցելուն հավակնող բոլոր երկրների համար համապարտադիր չափանիշներ, որոնք հանգում էին հետևյալին.

1. *քաղաքական*, որը ենթադրում է ժողովրդավարությունը երաշխավորող ինստիտուտների կայունություն, իրավունքի գերակայություն, մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների հարգում և պաշտպանություն.

2. *տնտեսական*, որը հանգում է գործող շուկայական տնտեսության առկայության՝ ընդունակ հաղթահարելու և դիմակայելու Միության ներսում մրցակցության ճնշմանը ու շուկայական ուժերին.

3. *իրավական*, որը պահանջում է Անդամակցությունից բխող պարտավորությունները կրելու՝ ներառյալ քաղաքական, տնտեսական և դրամական միության նպատակներին ամբողջությամբ հետևելու կարողություն²⁰⁶:

Այսպիսով՝ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության ճանապարհին ընկած առաջնային չափանիշը քաղաքական էր, որի բավարարումը անդամակցության բանակցությունները սկսելու նախապայման է, և որի իրականացումը պահանջում էր Թուրքիայում մի շարք օրենսդրական բարեփոխումների իրագործում: Հելսինկիի գագաթաժողովից հետո այս ուղղությամբ առաջին զգալի քայլերը 2001 թվականի հոկտեմբերի սահմանադրական բարեփոխումներն էին, որոնց միջոցով Թուրքիայի Սահմանադրության 34 հոդվածներ ենթարկվեցին փոփոխության: Դրանք վերաբերում էին մտքի և խոսքի ազատությանը, միավորման ազատությանը, զենդեռային հավասարությանը, արդար դատաքննությանը և այլն: Էրդողանի կառավարության կատարած բարեփոխումների շարքում հիշատակության արժանի են հատկապես Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի վեց արձանագրությունների ստորագրումը, ինչպես նաև տասներեքերորդ արձանագրության ստորագրումը, որով Թուրքիայում վերանում էր մահապատժի կիրառումը բոլոր հանցանքների համար: Մյուս կարևոր քայլն այն էր, որ որոշ չափով վերացվեց քրեդեռեմի դասավանդման վրա դրված արգելքը, կանանց իրավունքներին վերաբերող օրենքները

²⁰⁵ Kemal Kiriski, '12-13 December 2002- Copenhagen summit of the European Council and Turkey', p. 1-2 (available at <http://www.tusiad.us/Content/uploaded/KIRISCICOPENHAGENTUSIADWDC.PDF>, visited in November, 2008):

²⁰⁶ Sh'u <http://www.auswaertiges-amt.de/diplo/en/Europa/Erweiterung/Kopenhagener-Kriterien.html> (visited in November 2008).

համապատասխանեցվեցին ԵՄ չափանիշներին, ուժեղացավ բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը: 2001 թվականին ընդունվեց նոր Քաղաքացիական օրենսգիրք, որը պարունակում է մտքի և արտահայտվելու ազատության, խոշտանգման դեմ պայքարի, ժողովրդավարության, հաղորդակցության, ազատ տեղաշարժի և քննության, սեռական հավասարության, միավորման ազատության վերաբերյալ և այլ դրույթներ²⁰⁷: Փոփոխություններ կատարվեցին նաև Քրեական օրենսգրքում, «Ահաբեկչության դեմ պայքարի մասին», «Կուսակցությունների մասին», «Չանգվածային լրատվամիջոցների մասին», «Քաղաքական միավորման մասին» օրենքներում²⁰⁸: Սակայն ընդունված օրենսդրական բարեփոխումների մեծ մասը հիմնականում մնում է բոլի վրա և նպատակ ունի ուղղակի բավարարել ԵՄ պահանջները²⁰⁹: 2004 թ դեկտեմբերին Բյուրսելում Եվրոպական խորհրդի գագաթաժողովում ԵՄ-ը դրական գնահատականներ տվեց Թուրքիայի կառավարության կողմից իրականացված մի շարք բարեփոխումներին, սակայն ընդգծեց նաև, որ բարեփոխումների գործընթացը դեռևս չի ավարտվել և պետք է շարունակվի:

Չնայած այն համաձայնեցման, որ Թուրքիան ամբողջությամբ չէր հասել Կոպենհագենյան քաղաքական չափանիշի բավարարմանը, այնուամենայնիվ ԵՄ-ն 2005 թվականի հոկտեմբերի 3-ին որոշեց սկսել Թուրքիայի հետ անդամակցության բանակցությունները՝ պայմանով, որ Թուրքիայի ջանքերը Կոպենհագենյան քաղաքական չափանիշին վերջնականապես հասնելու համար պետք է շարունակեն ընթացք ստանալ²¹⁰:

2006 թ. հունիսի 12-ին ԵՄ-ում սկսվեցին երկար սպասված բանակցությունները: Բանակցությունների ձևաչափը ընդգրկում էր 35 տարբեր ոլորտների քննարկում: Յուրաքանչյուր բաժնի վերաբերյալ բանակցություններ բացումը և փակումը կատարվում էր Խորհրդի կողմից:

Թուրքիայի՝ Կոպենհագենյան չափանիշների բավարարմանն ուղղված քայլերի գնահատումն իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակվող Առաջընթացի ամենամյա զեկույցներում: 2006 թ. սեպտեմբերի Եվրոպական պառլամենտի զեկույցում նշվում էր, որ Թուրքիայում գրանցվել է ոչ բավարար առաջընթաց խոսքի ազատության, ազգային փոքրամասնու-

յունների իրավունքների, կոռուպցիայի և կանանց դեմ բռնության հարցերում²¹¹: Դրան հետևեց նաև Հանձնաժողովի քննադատական զեկույցը Թուրքիայի անդամակցության գործընթացի վերաբերյալ, և խորհուրդ տրվեց մասամբ հետաձգել անդամակցության բանակցությունները Թուրքիայի հետ: ԵՄ արտաքին գործերի նախարարները որոշում կայացրին հետևել Հանձնաժողովի խորհրդին և 35 բանակցային ոլորտներից 8-ի վերաբերյալ հետաձգել բանակցությունները մինչև 2006 ղեկտեմբերի 11-ը: 2007 թ. Հանձնաժողովը Թուրքիայում տեղի ունեցող առաջընթացի տարեկան զեկույցում խորհուրդ էր տալիս չսկսել բանակցություններ արդարադատության և հիմնական իրավունքների հարցերի վերաբերյալ, քանի դեռ Թուրքիայի քրեական իրավունքի համակարգը բարեփոխման չի ենթարկվել²¹²:

Թուրքիայի 2008 թվականի Առաջընթացի մասին զեկույցում արձանագրվում է, որ ի կատարում քաղաքական չափանիշի՝ Թուրքիայի՝ արտասահմանում գտնվող քաղաքացիներին ընձեռնվել է Խորհրդարանի ընտրություններին մասնակցելու իրավունք, ընդունվել է օրենք՝ տեղական ինքնակառավարման մարմինների մասին, Նախագահին հաջողվել է բարիորացիական հարաբերություններ հաստատել երկրի Կառավարության հետ, ակտիվացել են շփումները արտաքին հարաբերությունների ոլորտում և այլն: Եվրոպական Հանձնաժողովը միաժամանակ նշում է, որ Թուրքիային մասնավորապես չի հաջողվել մշակել բազմակողմանի հակակոռուպցիոն ռազմավարություն, նվազեցնել կոռուպցիայի չափերը, ներդնել մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, հատակեցնել Խորհրդարանի անդամների անձեռնմխելիությունը սահմանափակող հիմքերը, ձևավորել ընտրական քարոզարշավները ֆինանսավորելու մասին օրենսդրություն և այլն²¹³:

Ինչ վերաբերում է Կոպենհագենյան տնտեսական չափանիշին, վերը նշված զեկույցի համաձայն՝ Թուրքիան լայնորեն կատարել է Հանձնաժողովի հետ համաձայնեցրած տնտեսական քաղաքականությունը, իշխանությունները բարելավել են ներդրումային միջավայրը՝ նվազեցնելով առկա վարչական արգելքները ընկերությունների հաստատման և գործունեության համար, նվազեցրել և պարզեցրել են հարկային համակարգը, բարելավվել է հարկային վարչարարությունը, աճել է ԵՄ-ի հետ առևտրի թափանցիկությունը, առաջընթաց է տեղի ունեցել գների ազատականացման ոլորտում և այլն: Սակայն զեկույցում միաժամանակ մտահոգություն է արտահայտվում Թուրքիայում

²⁰⁷ St'u The amendments to the Turkish civil code, (<http://www.byegm.gov.tr/on-sayfa/new-civil-code.htm>).

²⁰⁸ Ersin Kalaycıoğlu, The Political Criteria: Fair or Strict Conditionality?, available at www.sant.ox.ac.uk/esc/esc-lectures/Ersin.doc (visited in 24.12.2008), p. 9-10.

²⁰⁹ St'u <http://www.pism.pl>, Turkey and European Union: Main political Problems on the Way of EU Membership.

²¹⁰ Nuria Front, 'Why the European Union Gave Turkey the Green Light', Journal of Contemporary Studies, vol. 14, no. 2, 197-212, August 2006, p. 199.

²¹¹ <http://www.euractiv.com>, EU-Turkey Relations.

²¹² Նույն տեղում:

²¹³ Commission staff working document, Turkey 2008 Progress Report, SEC (2008) 2699, 05.11.2008, Brussels, p. 6-29.

գրադավանության մակարդակի, 2007 թվականի համար սահմանված հարկային բիրտվանքին հասնելու, նոր առևտրային օրենսգրքը ընդունելու և այլ խնդիրների վերաբերյալ²¹⁴:

Միության *acquis*-ի ընդունումը Թուրքիայի կողմից: Եվրոպական միությանը անդամակցել ցանկացող յուրաքանչյուր պետության համար պարտադիր պահանջ է նաև ազգային իրավական համակարգը Միության իրավական համակարգին մտարկելը, այլ կերպ ասած՝ Միության *acquis*-ի ընդունումը²¹⁵: 1999 թ. Հելսինկիի Եվրոպական զագաբաժնողվից հետո այս պահանջը օրակարգի հարց դարձավ նաև Թուրքիայի համար: Ընդ որում, Թուրքիան *acquis*-ի ինպլեմենտացման առումով թեկնածու մյուս երկրներից առանձնանում էր մի շարք տարբերություններով, մասնավորապես հետևյալով:

1. Թուրքիան ոչ միայն ջանքեր գործադրեց *acquis*-ն ընդունելու ուղղությամբ, այլև դեռևս լիարժեք անդամության կարգավիճակ չունենալով՝ հնարավորություն ունեցավ որոշակի աջակցություն ստանալ այդ հարցում: Նշենք, որ 1963 թ.-ի «Անկարայի համաձայնագիրը» ևս իր նպաստը բերեց *acquis*-ի ինպլեմենտացմանը, որի դրույթների իրագործման և առաջացած վեճերը լուծելու համար հիմնադրվեց Փոխկապակցման խորհուրդը՝ պարտադիր ուժ ունեցող որոշումներ ընդունելու իրավասությամբ:

2. Ի տարբերություն Միությանը անդամակցած և անդամակցող մյուս պետությունների՝ Թուրքիան ընդունել էր *acquis*-ի գզալի մասը դեռևս մինչև թեկնածու երկիր դառնալը: Մինչև 1981 թ. Փոխկապակցման խորհուրդը այն հիմնական մարմինն էր, որի միջոցով *acquis*-ը տրանսֆորմացվում էր Թուրքիայի իրավական համակարգ: 1982 թ. ընդունված համապատասխան որոշմամբ Եվ-

²¹⁴ Sb'u Commission staff working document-Turkey 2008 Progress Report, SEC (2008) 2699, 05.11.2008, Brussels էջեր 29-36:

²¹⁵ Եվրոպական իրավունքում *acquis* -ը լայն հասկացություն է և իր մեջ ընդգրկում է. 1) ԵՄ հիմնադիր պայմանագրերի բովանդակությունը, սկզբունքներն ու քաղաքական ուղղությունները, 2) Ընկերակցության պայմանագրերին համապատասխան ընդունված օրենսդրությունը, որոշումները, ինչպես նաև Եվրոպական ընկերակցությունների դատարանի նախադեպային իրավունքը, 3) Միության շրջանակներում ընդունված պարտադիր կամ ոչ պարտադիր բնույթի այլ ակտեր, ինչպիսիք են միջինատիտոցոնալ համաձայնագրերը, բանաձևերը, հայտարարությունները, համձայնարարությունները, ուղեհիշները, 4) ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության ոլորտում ընդունված համատեղ գործողությունները, ընդհանուր դիրքորոշումները, ստորագրված կոմունիցիաները, բանաձևերը, կարգադրագրերը և այլ ակտերը, 6) Ընկերակցության, Ընկերակցության և անդամ երկրների ու Միության գործունեությանը վերաբերող անդամ պետությունների՝ միմյանց միջև կնքված միջազգային համաձայնագրերը:

րոպական ընկերակցության հետ հարաբերությունների համակարգման պարտականությունը դրվեց Պետական պլանավորման գործակալության վրա: Վերջինս էլ իրականացրեց *acquis*-ի հիմնական դրույթների բանաբարում և բարգձմանություն: Ի կատարում *acquis*-ի հիմնադրույթների՝ 1994 թ.-ի ընթացքում Թուրքիայի օրենսդիր մարմինն ընդունեց «Մյուսակցության մասին» և «Ապատողների պաշտպանության մասին» օրենքները, փոփոխություն կատարվեց «Մտալու և գեղարվեստական աշխատանքների» մասին օրենքում: 1998-1999 թթ. Թուրքիան հիմնադրեց Բանկային վերահսկողության և կարգավորման մարմին, Հանրային մատակարարման մարմին, էներգիայի և հեռահաղորդակցության ոլորտները համակարգող մարմիններ, ինչպես նաև կրթության ոլորտում՝ Ազգային գործակալություն:

3. Առանց Ընկերակցությանը լիարժեք անդամակցելու մտաք գործելով Մարսային միություն՝ Թուրքիան իր վրա վերցրեց *acquis*-ի որոշ մասի ընդունման պարտավորություն, որի ստեղծմանը նրան չէր բյուջատրվում մասնակցել, բայց որը միևնույն ժամանակ կարևոր ու որոշիչ ազդեցություն ուներ Թուրքիայի անտեսության վրա²¹⁶:

4. *Acquis*-ի ընդունման գործընթացի որոշ փուլեր իրականացվեցին այն ժամանակահատվածում, երբ Թուրքիան գրկվել էր ԵՄ-ից ստացվող օգնության որոշ մեխանիզմներից, որոնցից անդամակցության հավակնող այլ երկրներ արդեն օգտվում էին, մասնավորապես՝ TAJEX-ի (Technical Assistance Information Exchange Office) գրասենյակներ մուտք գործելը, *acquis*-ի ինպլեմենտացման վերաբերյալ Թուրքիայում դիտարկումներ իրականացնելը և այլն:

Նշենք, որ անդամակցության հավակնող պետության կողմից *acquis*-ի ինպլեմենտացումը բարդ գործընթաց է, որը ենթադրում է համապատասխան դիտարկումների, ապա բանակցությունների անցկացում՝ գործընթացը ըստ հավուր պատշաճի կազմակերպելու համար: Ընդ որում, ինչպես նշվեց, Թուրքիան սկզբնական շրջանում գրկված էր ԵՄ-ի կողմից տրամադրվող դիտարկումների մեխանիզմի օգնությունից: Մակայն 2000 թ. ապրիլի 11-ին Փոխկապակցման խորհրդի հերթական հանդիպման ժամանակ հիմնադրվեցին 8 ենթակոմիտեներ՝ *acquis*-ի ուսումնասիրման ընթացքի նկատմամբ դիտարկումներ իրականացնելու առաքելությամբ: Ենթակոմիտեները անցկացրին մի շարք հանդիպումներ, որոնց 2-րդ շրջանն ավարտվեց 2001 թ. հուլիսին: Դրանց ժամանակ նշանակալի առաջխաղացում տեղի ունեցավ, որի հետևանքով *acquis*-ն ավելի առարկայական դարձավ թուրքական բյուրոկրատիայի

²¹⁶ Անկարայի համաձայնագրի 5 հոդվածի համաձայն՝ Թուրքիայի և Ընկերակցության միջև մարսային միության ստեղծումը փոխկապակցման հարաբերությունների վերջնական փուլն էր:

համար՝ առավել ակնհայտ դարձնելով *acquis*-ի մանրամասն գնահատման անհրաժեշտությունը: 2001 թ. Թուրքիայի Առաջընթացի զեկույցում Հանձնաժողովն առաջարկեց նախաանդամակցման քաղաքականության մեջ նոր փուլ սկսել՝ դրա մեջ ներառելով Թուրքիայի օրենսդրության մանրակրկիտ ուսումնասիրումը և *acquis*-ի մտարկման ու ներդաշնակեցման ժամանակացույցը²¹⁷:

Հետաքրքրություն է ներկայացնում ԵՄ-ի գնահատականը Թուրքիայի կողմից *acquis*-ի կատարման ընթացքի վերաբերյալ: Ըստ 2008 թվականին Թուրքիայի Առաջընթացի մասին Եվրոպական հանձնաժողովի հրապարակած զեկույցի՝ զգալի ձեռքբերումներ են արձանագրվել ապրանքների ազատ տեղաշարժի ընդհանուր սկզբունքներին Թուրքիայի օրենսդրությունը համապատասխանեցնելու, աշխատողների ազատ տեղաշարժի երաշխավորման, ֆինանսական ծառայությունների, մտավոր սեփականության իրավունքի ուղղտներում: Որոշակի առաջընթաց տեղի է ունեցել նաև հիմնադրման ազատության, ծառայություններ մատուցելու ազատության, կապիտալի ազատ տեղաշարժի, էլեկտրոնային հազորակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Չեկույցում նշվում է նաև, որ թեև չնչին, սակայն առաջընթաց է տեղի ունեցել ձկնորսության *acquis*-ին, հարկային *acquis*-ին, տնտեսական և դրամական քաղաքականության *acquis*-ին, ընկերությունների իրավունքի *acquis*-ին, գյուղատնտեսության *acquis*-ին Թուրքիայի օրենսդրությունը մտարկելու ոլորտներում²¹⁸:

Այսպիսով՝ Թուրքիան, թեև զգալի ջանքեր է գործադրել կոպենհագենյան չափանիշներին բավարարելու համար, այնուամենայնիվ իրավիճակը դեռևս մնում է բավարարից հեռու՝ հատկապես քաղաքական չափանիշին և *acquis*-ի բազմաթիվ բաժիններին բավարարելու տեսանկյունից:

Թուրքիան ԵՄ-ի հետ իր հարաբերությունները խորացնելու համար պետք է հարթահարթի մի շարք մարտահրավերներ: Այդ մարտահրավերները կարճաժամկետ և միջմաժամկետ առաջնայությունների տեսքով ներկայացված են Անդամակցության Համագործակցության փաստաթղթի՝ 2007 թվականի վերանայված տարբերակում: Դրանք վերաբերում են դատական համակարգին (նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունում), հակակոռուպցիոն քաղաքականությանը (հակակոռուպցիոն բազմակողմանի մարտավարության մշակում), ժողովրդավարությանը և իրավունքի գերակայությանը (մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ներդրում), արդարադատության մատչելիությանը (ջանքեր գործադրել պատշաճ իրավական օգնու-

²¹⁷ St'u Armagan Emre Cakir, Turkey's adoption of the *acquis communautaire*: an undervalued acquaintance, էջ 329-342 (<http://cide.univ.szczecin.pl/mec3/chap14.pdf>):

²¹⁸ St'u Turkey 2008 Progress Report, SEC (2008) 2699, supra note 214.

յան և որակյալ մեկնարաման ծառայությունների մատուցման ապահովման համար), խոսքի ազատությանը (վերանայել խոսքի ազատությանը վերաբերող օրենսդրությունը և ճշգրտել իր մեջ բռնություն կոչելը չպարունակող խոսքի ազատության հողի վրա մեղադրվող կամ դատապարտված անձանց կարգավիճակը), միավորման ազատությանը (շարունակել միավորման ազատությանը վերաբերող օրենսդրության մտարկումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերին համապատասխան), կրոնի ազատությանը (միջոցներ ձեռնարկել հանդուրժողականության միջավայր ձևավորելու համար՝ ամբողջության հասցնելով կրոնի ազատության գործնական իրականացումը), կանանց իրավունքներին (միջոցներ ձեռնարկել կանանց իրավունքներին վերաբերող ընթացիկ օրենսդրության իրագործման համար, նպաստել հասարակությունում կանանց դերի բարձրացմանը, բարձրացնել իրազեկության մակարդակը գենդերային հավասարության վերաբերյալ), երեխաների իրավունքներին (միջոցներ ձեռնարկել երեխաների աղքատության, շահագործման պրոբլեմը հաղթահարելու և փողոցային երեխաների հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ), Կիպրոսի հիմնախնդիր (կոնկրետ միջոցներ ձեռնարկել բոլոր անդամ պետությունների, այդ թվում նաև Կիպրոսի հետ հարաբերությունների բարելավման համար) և այլն²¹⁹:

Թեև մտարկման գործընթացի շնորհիվ Թուրքիայի օրենսդրությունը առանձին բնագավառներում աննշան բարելավվել է, սակայն Թուրքիային դեռևս չի հաջողվել լիարժեք համապատասխանեցման հասնել: Հետագա մտարկումն անհրաժեշտ է Թուրքիայի՝ դեպի Եվրոպական միություն մուտքը ապահովելու համար:

Խոսելով ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության պաշտոնական պահանջների մասին՝ հարկ է նշել, որ այս հարցի լուծման համար Թուրքիայում դեռ պետք է լուրջ փոփոխություններ կատարվեն տնտեսության, ինստիտուցիոնալ, մարդու և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության ուղղտներում: Չմայած Թուրքիան համարվում է աշխարհիկ իսլամական պետություն, որն առավել ժողովրդավարական, արևմտամետ և արդյունաբերականացված է, քան իր հարևանները, և տարածաշրջանում տարբերվում է իր համեմատաբար ազատական կառավարմամբ, նա դեռ հեռու է ժողովրդավարական լինելուց, իսկ վերջին տասնամյակում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում հիմնականում Թուրքիայի քրոպական համայնքի կողմից է բռնի գտման, խղճազանգման, սպանության, խտրական վերաբերմունքի դեպքերով բազմաթիվ հայցեր են ներկայացվել Թուրքիայի դեմ:

²¹⁹ St'u Turkey 2007 Accession Partnership, OJ L051, 26/02/2008 P. 0004-0018:

Բացի նշյալներից՝ Թուրքիայի իշխանությունները պարբերաբար քննադատության են ենթարկվում երկրի կառավարման մեջ զինված ուժերի և ռազմական ղեկավարության ունեցած հսկայական ազդեցության պատճառով, որի հետևանքով Թուրքիայում լիարժեք ապահովված չեն խոսքի և մամուլի ազատությունը, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողությունը, դատական համակարգի անկաշառությունը և այլն:

Եվրոպական հանձնաժողովի հանձնակատար և ընդլայնման քաղաքականության համար պատասխանատու Դոկտոր Օլիվ Ռեյնը թուրքական «Միլլիեթ» ամսագրին տված իր հարցազրույցում նշել է, որ «Թուրքիան ԵՄ հիմնական դաշնակիցն է: Մենք բարձր ենք գնահատում նրա կարևոր և դրական դիվանագիտական դերը Միջին Արևելքում: Մենք նաև ունենք տնտեսական և ռազմավարական շատ հետաքրքրություններ: Բայց ռազմավարական նկատառումները չեն կարող միակը լինել կամ մուլթիսկ գլխավոր հիմքը Թուրքիայի հետ մեր հարաբերություններում: ԵՄ գոյությունը հիմնված է ժողովրդավարության և իրավունքի գերակայության արժեքների վրա: Մրանք այն «ամուսնական պայմանագրի» հիմքն են, որի հիման վրա մենք՝ եվրոպացիներս, մեր Միության կառուցման համար ներգրավել ենք միմյանց: Դիշտ է՝ Թուրքիան մի շարք ոլորտներում առաջընթաց է ապրել, բայց դեռևս շատ աշխատանք կա անելու»²²⁰:

Թուրքիայի վերջնական անդամակցությունը այժմ ԵՄ անդամ երկրների օրենսդրական գործընթացներում հավանության արժանանալու գործընթացում է: Եվրոպական հանձնաժողովի խորհրդատվական զեկույցներից մեկում նշվում է, որ ԵՄ-Թուրքիա անդամակցության բանակցությունները կարող են ավարտվել 2014 թ. 2014 թ. նշումը պայմանավորված է նրանով, որ Թուրքիայի հետ անդամակցության բանակցությունների շրջանակը հիմնվում է մի քանի սկզբունքների վրա, որոնցից մեկն էլ հետևյալն է. անդամակցության բանակցությունները այն թեկնածու երկրների հետ, որոնց միացումը կարող է էական ֆինանսական հետևանքներ ունենալ (ինչպիսին, օրինակ, Թուրքիան է) կարող են ավարտվել միայն 2014 թ. հետո, երբ նախատեսվում է հաստատել ԵՄ նոր ֆինանսական նախագիծը²²¹»: Մինչդեռ շատ ԵՄ քաղաքական գործիչներ նշում են 2019 թ.²²² որպես պոտենցիալ վերջնաժամկետ Թուրքիայի անդամակցության համար²²² :

²²⁰ Olli Rehn ' Time to revitalize Turkey's EU progress', Article for Turkish Newspaper Milliyet, 25.8.2008, էջ 3.4:

²²¹ St*u <http://www.euractiv.com>, EU-Turkey Relations.

²²² St*u The European Union in Detail, European Integration Library, P.93.

3/3 Թուրքիայի արտաքին տնտեսական

հարաբերությունները

Եվրոպական միության հետ

Կես դարից ավելի է, ինչ Թուրքիան մասնակցում է եվրոպական ինտեգրման գործընթացին: 1950-ական թթ. ի վեր ԵՄ և OECD երկրները գերակշռող դեր են խաղում Թուրքիայի արտաքին տնտեսական հարաբերություններում: Այս երկու վիթխարի շուկաները Թուրքիայի համար համարվում են ավանդական շուկաներ, և վերջին 50 տարիների ընթացքում դրանց կարևորությունը չի նվազել²²³ :

Թուրքիան առաջին անգամ ցանկություն հայտնեց անդամակցելու Եվրոպական տնտեսական համայնքին (European Economic Community, EEC) 1959 թ. հուլիսին: Որպես առաջին դիմումի պատասխան՝ EEC-ն որոշում կայացրեց Թուրքիայի հետ համագործակցություն հաստատելու վերաբերյալ: Արդյունքում 1963 թ. ստորագրվեց Անկարայի համագործակցության համաձայնագիրը: Այս համաձայնագիրը նախատեսում էր հաստատել մաքսային միություն²²⁴ , որը տնտեսական և առևտրային հարցերում էլ ավելի կմերձեցներ երկու կողմերին: 1970 թ. Անկարայի համագործակցությանը կցվեց լրացուցիչ արձանագրություն, որը սահմանեց Թուրքիայի և EEC միջև շրջանառվող ապրանքների մաքսադրույքների և քվոտաների նվազեցման ժամանակացույց:

Այսպիսով՝ 1963 թ. Թուրքիան ԵՄ հետ ստորագրեց Համագործակցության համաձայնագիր՝ առևտուրը և տնտեսական հարաբերությունները խթանելու համար: Համագործակցության խորհրդի որոշմամբ (1995 թ. մարտի 6) 1995 թ. դեկտեմբերի 31-ին Մաքսային միությունը ստավ ուժի մեջ: Մաքսային միությունը ներառում էր բոլոր արդյունաբերական ապրանքները և ծառայությունները (բացի վերանշակված գյուղատնտեսական ապրանքներից): 1996 թ. Թուր-

²²³ Bahri Yilmaz (2003) " Turkey's Competitiveness in the European Union: a Comparison with Five Candidate Countries - Bulgaria, The Czech Republic, Hungary, Poland, Romania - and the EU15.

²²⁴ Մաքսային միությունը տնտեսական ինտեգրման ձևերից մեկն է, որի ժամանակ միության անդամ երկրների միջև նվազեցվում կամ վերացվում են ապրանքների և ծառայությունների առևտրային սահմանափակումները, իսկ միությունից դուրս երկրների հետ արտաքին առևտրում յուրաքանչյուր անդամ երկիր կիրառում է մեկ ընդհանուր արտաքին առևտրային քաղաքականություն:

225

րիայի և ԵՄ միջև ստեղծվեց Ազատ առևտրի գոտի՝ այն ապրանքների համար, որոնք «ծածկվում էին» Եվրոպական ածխի և պողպատի համայնքի կողմից: Համագործակցության 1/98 որոշումը ծածկում է գյուղատնտեսական ապրանքների առևտուրը: Ի հավելում ԵՄ հետ Մաքսային միության՝ Թուրքիան ստորագրել է ազատ առևտրի համաձայնագրեր Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի անդամ երկրների (European Free Trade Association, EFTA), Իսրայելի, Խորվաթիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Թունիսի, Մարոկկոյի, Սիբիայի, Եգիպտոսի և Ալբանիայի հետ: Ներկայումս ազատ առևտրի գոտու ստեղծման վերաբերյալ բանակցային գործընթացներ են ընթանում Հորդանանի և Լիբանանի հետ²²⁶: Վերջապես, Թուրքիան Եվրամիջերկրական համագործակցության մասնակից է և որպես այդպիսին՝ մինչև 2010 թ. բոլոր միջերկրական գործընկերների հետ պետք է ազատ առևտրի հաստատման համաձայնագրեր կնքի՝ Եվրամիջերկրական ազատ առևտրի գոտու ստեղծման նպատակով:

1999 թ. Էլսիմկիի համաժողովում Թուրքիային տրվեց թեկնածու երկրի կարգավիճակ²²⁷: 2004 թ. դեկտեմբերին Բյուսելում Եվրոպական խորհուրդը եզրակացրեց, որ Թուրքիան բավականաչափ բավարարել է Կոպենհագենի քաղաքական չափանիշները՝ անդամակցության բանակցություններն սկսելու համար: Բանակցություններն սկսվեցին 2005 թ. հոկտեմբերի 3-ին, երբ Խորհուրդը հաստատեց բանակցային գործընթացի կառուցվածքը:

Մաքսային միություն: Անդրադառնալով մաքսային միության համաձայնագրին՝ հարկ է նշել, որ այն ներառում էր երեք հիմնական քաղաքատարրեր, որոնք հետևյալներն են:

1. *Ապրանքների ազատ տեղաշարժման տեխնիկական խնդիրներ:* Մարտի 6-ին Համագործակցության խորհուրդն (Association Council) ընդունեց 1/95 որոշումը Թուրքիայի և Եվրամիության միջև մաքսային

²²⁵ Ազատ առևտրի գոտին տնտեսական ինտեգրման պարզագույն ձևն է, որի ժամանակ անդամ երկրների միջև նվազեցվում կամ վերացվում են ապրանքների և ծառայությունների առևտրային սահմանափակումները, իսկ ոչ անդամ երկրների հետ արտաքին առևտրում յուրաքանչյուր անդամ երկիր կիրառում է իր սեփական արտաքին առևտրային քաղաքականությունը:

²²⁶ World Bank, "Turkey: Trade Brief". Available at: <http://info.worldbank.org/etools/wti2008/docs/brief194.pdf>.

²²⁷ Հարկ է նշել, որ ներկայումս կա երեք թեկնածու երկիր՝ Խորվաթիա, Թուրքիա և Մակեդոնիա: Անդամակցության բանակցություններն առաջին երկուսի հետ սկսվել են 2005 թ. հոկտեմբերի 3-ին, իսկ Մակեդոնիան ստացել է թեկնածու երկրի կարգավիճակ 2005 թ. դեկտեմբերին, սակայն անդամակցության բանակցությունները դեռևս չեն սկսվել:

միության ստեղծման վերաբերյալ՝ ներառելով արդյունաբերական և վերամշակված գյուղատնտեսական ապրանքները: Մաքսային միության գործարկմամբ Թուրքիան վերացրեց բոլոր առևտրային սահմանափակումները Եվրամիությունից ներմուծվող արդյունաբերական ապրանքների նկատմամբ: Բացի դրանից, ելնելով ԵՄ-ի ընդհանուր արտաքին առևտրային քաղաքականությունից, Թուրքիան սկսեց համաձայնեցնել և համապատասխանեցնել իր մաքսատուրքերը և համարժեք վճարումները երրորդ երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ:

2. *Թուրքիայի և Եվրամիության միջև համագործակցության ամրապնդում:* Բացի մաքսային միության ստեղծման և գործունեության հետ կապված տեխնիկական պայմաններից՝ Համագործակցության խորհուրդը որոշում ընդունեց նաև Թուրքիայի և Եվրամիության միջև համագործակցության ամրապնդման վերաբերյալ: Համագործակցությունը տարածվում էր արդյունաբերության, էներգետիկայի, տրանսպորտի, հեռահաղորդակցության, գյուղատնտեսության, շրջակա միջավայրի պահպանության, գիտության և վիճակագրությանն առնչվող ոլորտների վրա, ինչպես նաև ներառում էր արդարադատության և ներքին գործերին, սպառողների իրավունքների պաշտպանությանը, մշակութային համագործակցությանը և այլնից վերաբերող հիմնահարցեր, որոնք դուրս են մնում մաքսային միության գործունեության շրջանակներից: Վերջինիս նպատակն է մաքսային միության ստեղծման միջոցով Թուրքիայի և Եվրամիության ինտեգրման առավել բարձր մակարդակ ապահովել, որը չի սահմանափակվի միայն առևտրային հիմնախնդիրների լուծմամբ, այլ կխթանի Թուրքիայի՝ Եվրամիությանը լիիրավ հիմունքներով անդամակցության գործընթացը:

3. *Ֆինանսական համագործակցություն:* Մաքսային միության համաձայնագրի փաթեթի երրորդ բաղկացուցիչն առնչվում է ֆինանսական համագործակցությանը, որի հիմնական նպատակը եվրոպական մրցակցության խորացման հետևանքով դժվար կացության մեջ հայտնված տեղական արտադրողներին օժանդակելն է: Մակայն այս ծրագրի շրջանակներում նախատեսված ֆինանսական աջակցությունը չի իրագործվել՝ Հունաստանի կողմից շարունակաբար ներկայացվող վետոյի պատճառով: Չնայած հիմնական գյուղատնտեսական ապրանքները Մաքսային միության սկզբնական փաթեթի մեջ չեն ներառվել, սակայն այս ապրանքների համար նախապատվության սկզբունքով առևտրի ռեժիմ ընդունվել է 1998 թ-ի հունվարի 1-ին: Բացի այդ՝ Թուրքիան որդեգրել է ԵՄ Ընդհանուր գյուղատնտեսական քաղաքականության (CAP) շատ տեսակետներ: Մաքսային միու-

յան վերաբերյալ որոշման համաձայն՝ ԵՄ պետք է հնարավորինս հաշվի առնի Թուրքիայի շահերը իր գյուղատնտեսական քաղաքականության մշակման ժամանակ²²⁸:

Այսպիսով՝ Եվրամիության և Թուրքիայի միջև մաքսային միությունն ուժի մեջ մտավ 1995 թ դեկտեմբերի 31-ին՝ դրանով հաստատելով ամենասերտ տնտեսական հարաբերությունները ԵՄ-ի և ԵՄ ոչ անդամ երկրի միջև: Ըստ էության, մաքսային միությունը բազմաթիվ հնարավորություններ է ընձեռում քե՛ Թուրքիային, քե՛ ԵՄ-ին:

Թուրքիային ընձեռված տնտեսական հիմնական հնարավորություններն են հետևյալները²²⁹:

- Թուրք արտադրողներին հնարավորություն է ընձեռվում մուտք գործել ԵՄ շուկա, որը համարվում է աշխարհի ամենագնողունակ շուկաներից մեկը:

- Հսկայական առևտրային ներուժ ունեցող և ամենակայուն շուկաների շարքին դասվող շուկա մուտք գործելու հնարավորություն:

- Մաքսային միությունը կխթանի Թուրքիայի՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման գործընթացը: Այն կօգնի կատարելագործել և արդիականացնել Թուրքիայի տնտեսության կառուցվածքը: Խորացող մրցակցությունը կնպաստի թուրքական ձեռնարկությունների արդյունավետության բարձրացմանը:

- Ուժգնացող մրցակցությունը հնարավորություն կտա նաև թուրք սպառողներին ձեռք բերելու բարձրորակ և համեմատաբար էժան ապրանքներ:

- Ֆինանսական համագործակցությունը կնպաստի թուրքական տնտեսության վերակառուցմանը և ենթակառուցվածքների բարելավմանը: Դա նաև թուրքական և եվրոպական ձեռնարկություններին առավել սերտ համագործակցելու հնարավորություն կընձեռնի:

- Մաքսային միությունը կխթանի նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների աճը, որն իր հերթին կնպաստի արտադրական մեքենասարքավորումների արդիականացմանը և համաշխարհային գիտական մտեցումների (know-how) ներգրավմանը:

- Այս ամենի շնորհիվ միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածում Թուրքիայում կավելանա գրադվածության մակարդակը, որը կնվազեցնի սոցիալական ճնշումները և կրարելավի երկրի սոցիալատնտեսական վիճակը:

Մյուս կողմից Եվրամիությանն ընձեռված տնտեսական հնարավորություններն են հետևյալները:

- Թուրքիան դասվում է այն երկրների շարքին, որտեղ ԵՄ-ն ունի ամենաբարձր առևտրային հաշվեկշիռի ավելցուկ: Մաքսային միությունը ԵՄ արտադրողների համար էլ ավելի հասանելի կդարձնի և կամրապնդի թուրքական շուկան: ԵՄ արտահանողները հնարավորություն կստանան մուտք գործելու երիտասարդ և ընդհանուր առմամբ դեռևս չհագեցած շուկա՝ ավելի քան 70 մլն սպառողներով:

- Մաքսային միության հաստատմամբ՝ Թուրքիան իր տնտեսական օրենսդրությունը համապատասխանեցնում է ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Դրա շնորհիվ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները կնմանվեն ԵՄ-ում առկա և գործող պայմաններին: Հետևաբար Թուրքիայում գործող ԵՄ ձեռնարկություններն իրենց գործունեությունը կիրականացնեն իրենց արդեն ծանոթ տնտեսական և իրավական միջավայրում:

- ԵՄ ձեռնարկությունները կօգտվեն Թուրքիայի կողմից առաջարկվող ներդրումային և արտադրական հնարավորություններից: Ինչպես նաև հնարավորություն կընձեռվի օգտագործելու Թուրքիան որպես հենակետ դեպի Միջին Արևելք, Սևծովյան տարածաշրջան և Կենտրոնական Ասիա արտահանում իրականացնելու համար: Բացի դրանից՝ թուրքական ընկերությունների հետ համագործակցությունը հնարավորություն կտա եվրոպական ձեռնարկություններին մուտք գործելու և գործունեություն ծավալել այդ շուկաներում:

- Մաքսային միությունն առավել կսերտացնի կապը Թուրքիայի և Արևմուտքի՝ մասնավորապես ԵՄ-ի հետ:

- Մաքսային միությունը Թուրքիայի՝ որպես տնտեսական խնդիրներով և քաղաքական անկայունությամբ բնութագրվող տարածաշրջանի համար արտաքին առևտրային քաղաքականությունը առավել գրավիչ կդարձնի:


- ԵՄ հնարավորություն կստանա սերտ համագործակցություն հաստատելու իսլամական աշխարհի և կենտրոնական Ասիայի երկրների հետ՝ ի հավելում Բալկանյան երկրների:

²²⁸ EU-Turkey Communication Platform “History of Relations between Turkey and the European Union”. Available at: http://www.turkishembassy.com/1/0/Turkey_EU.htm.

²²⁹ Kamil Sertoglu, İlham Ozturk, “Turkey and European Union Relations: Concept of Customs Union”, Pakistan Horizon, vol.56, No.3, July 2003. Available at: http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=1128363.

Թուրքիայի արտաքին առևտուրը ԵՄ հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՄ զգալի նվազեցրել էր ներմուծման մաքսատուրքերը նախքան մաքսային միության ստեղծումը, և Թուրքիայի հետ արտաքին առևտրում միակ խոչընդոտը տեքստիլ արտադրանքի նկատմամբ կիրառվող թվտաններն են, ապա մաքսային միության հաստատումը սկզբնական շրջանում զգալիորեն չավելացրեց արտահանման ծավալները դեպի ԵՄ շուկաներ: Մաքսային միության հաստատումից հետո՝ 1996 թ-ին, 1995 թ-ի համեմատությամբ ԵՄ-ից Թուրքիա ներմուծման ծավալները աճեցին 34,7%-ով՝ կազմելով 22,7 մլրդ դոլար, իսկ արտահանման ծավալը ավելացավ 3,6%-ով՝ հասնելով 11,477 մլրդ դոլարի²³⁰: Այսպիսով, ինչպես նկատում ենք, կարճաժամկետ հատվածում Մաքսային միության կիրառումը բացասական ազդեցություն է ունեցել Թուրքիայի առևտրային հաշվեկշիի վրա, քանի որ Մաքսային միության հաստատումից անմիջապես հետո զգալիորեն աճել են ներմուծման ծավալները, իսկ արտահանումը դեպի ԵՄ մնացել է գրեթե անփոփոխ: Սակայն երկարաժամկետ հատվածում Մաքսային միությունն ապահովում է նախատեսված արդյունքները, քանի որ երկարաժամկետ հատվածում պատկերը զգալի փոխվում է (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1




Աղբյուր՝ EUROSTAT

²³⁰ EU-Turkey Communication Platform "History of Relations between Turkey and the European Union". Available at: http://www.turkishembassy.com/II/O/Turkey_EU.htm.

Ինչպես պարզ է դառնում գծապատկեր 1-ից, չնայած այն հանգամանքին, որ 2003-2007 թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ հետ արտաքին առևտրում Թուրքիայի առևտրային հաշվեկշիից դեռևս բացասական է, այնուամենայնիվ նկատվել է զգալի դրական տեղաշարժ: Այսպես՝ նշված ժամանակաշրջանում զգալիորեն աճել են և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները: Արդյունքում, եթե 1996 թ. ներմուծումը գրեթե երկու անգամ գերազանցում էր արտահանմանը (ներմուծում/արտահանում=1.99), ապա արդեն 2007 թ. ներմուծումը գերազանցում էր արտահանմանը ընդամենը 12.1%-ով (ներմուծում/արտահանում=1.12): Հակառակ դրան՝ նույն ժամանակահատվածում ավելի քան 2.5 անգամ ավելացել է Թուրքիայի ընդհանուր առևտրային հաշվեկշիի պակասուրդը (տես գծապատկեր 2):


Գծապատկեր 2



Աղբյուր՝ EUROSTAT

2007 թ. տվյալներով Թուրքիային բաժին էր ընկնում համաշխարհային ներմուծման մոտ 1,6%-ը և արտահանման 1%-ը: Ընդ որում, Թուրքիայի մասնաբաժինը համաշխարհային առևտրում աճի միտում ունի: Այսպես՝ 2003-2007 թթ. ընկած ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին առևտրի ծավալը գրեթե կրկնապատկվել է (տես գծապատկեր 2): Նման միտում ակա է մաս Թուրքիայի և Եվրամիության հետ արտաքին առևտրում: Այստեղ նույնպես 2003-2007 թթ. ընկած ժամանակահատվածում արտաքին առևտրի ծավալը աճել է գրեթե երկու անգամ (տես գծապատկեր 1):


Գծապատկեր 3



Աղբյուր՝ EUROSTAT

Ինչպես պարզ է դառնում գծապատկեր 3-ից, ԵՄ հետ Թուրքիայի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում հիմնականում գերակշռող ապրանքախմբերն են մեքենաներն ու սարքավորումները, տրանսպորտային սարքավորումները, քիմիական ապրանքները և տեքստիլ ապրանքները: Հարկ է նշել, որ վերը նշված ապրանքնախմբերով կատարվող առևտրում Թուրքիան միայն տրանսպորտային սարքավորումներ և տեքստիլ ապրանքներ ապրանքախմբերով ապահովում է դրական առևտրային հաշվեկշիռ: Բացի այդ՝ Թուրքիան ԵՄ հետ արտաքին առևտրում ապահովում է դրական առևտրային հաշվեկշիռ նաև գյուղատնտեսական ապրանքների ապրանքախմբով: Գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալները համեմատաբար փոքր են, բանի որ ԵՄ կիրառում է սեփական միասնական գյուղատնտեսական քաղաքականություն: Մյուս կողմից ԵՄ շատ բարձր ստանդարտներ է կիրառում երրորդ երկրներից գյուղատնտեսական ապրանքների ներմուծման համար: Ավելին՝ րոյոր գարգացած երկրներում գյուղատնտեսական ապրանքների արտաքին առևտրում դեռևս առկա են զգալի հովանավորչության տարրեր:

Գծապատկեր 4.



Աղբյուր՝ EUROSTAT

Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, ԵՄ հետ Թուրքիայի արտաքին առևտրային հաշվեկշիռը ծառայությունների ոլորտում կայուն դրական է: Այսպես, եթե նշված ժամանակաշրջանում ԵՄ հետ արտաքին առևտրում միաժամանակ մեծ տեմպերով աճել են և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալները, այս ծառայությունների ոլորտում արտաքին առևտրի աճի տեմպերը համեմատաբար փոքր են: 2006 թ-ին Թուրքիայի մասնաբաժինը ԵՄ 25 ծառայությունների առևտրում (ներմուծում + արտահանում) կազմել է 2,7%: Եվրամիության հիմնական առևտրային գործընկեր երկրները ծառայությունների առևտրում համարվում են ԱՄՆ-ը, Շվեյցարիան և Վապոնիան՝ համապատասխանաբար 34,8%, 12,6% և 4,7% մասնաբաժիններով²³¹:

²³¹ European Commission, External trade, Trade Statistics. Available at: http://trade.ec.europa.eu/doclib/docs/2006/september/tradoc_113456.pdf.

3/4 Եվրոպական միությանն անդամակցելու ճանապարհին առկա քաղաքական և սոցիալատնտեսական խոչընդոտները

Թուրքիան բակում է ԵՄ դռները արդեն գրեթե հինգ տասնամյակ: Այն, որ երկիրն ունի եվրոպական ապագա, դեռևս կես դար առաջ ասում էին դը Գոլն ու Ադենաուերը: Սակայն այն բանից հետո, երբ ԵՄ արտգործնախարարների խորհուրդը 2006 թ. որոշում կայացրեց հետաձգել Թուրքիայի հետ բանակցությունները 35 կետերից 8-ի վերաբերյալ, անդամակցության գործընթացն ավելի դանդաղեց, իսկ Թուրքիան էլ, կարծես հուսախաբ լինելով, գրեթե դադարեցրեց անդամակցության համար կատարվող օրենսդրական բարեփոխումները: Ինչպես է, ի վերջո, ավարտվելու Թուրքիայի եվրոպական քաղաքականությունը, արդյո՞ք Թուրքիան մի օր դառնալու է եվրոպական ընտանիքի անդամ: Եվ եթե այո, ապա ե՞րբ: Եվրոպայում այս հարցը լայն քննարկումների առարկա է, Թուրքիայի անդամակցության դեմ հանդես եկողները բերում են մի շարք փաստարկներ՝ սկսած երկրի աշխարհագրական դիրքից մինչև նրա տնտեսական զարգացածության մակարդակը: Բայց դրանք բոլորը համզում են այն բանին, որ Թուրքիան եվրոպական պետություն չէ, երբեք էլ չի եղել և չի էլ լինի²³²:

Կարելի է ասել, որ Թուրքիայի անդամակցությունը խոչընդոտող և այդ գործընթացը դանդաղեցնող հիմնական գործոնները առկա քաղաքական խնդիրներն են: Քաղաքական այդ հարցերի շարքում հատկապես կարող ենք առանձնացնել Կիպրոսի հիմնախնդիրը և Թուրքիայում ժողովրդավարացմանն ու մարդու իրավունքներին առնչվող հարցերը: Այս երկու հարցերը տարիներ շարունակ եղել են ԵՄ-Թուրքիա հարաբերություններում քննարկվող թեման և դեռ երկար ժամանակ կմնան օրակարգի հարց:

Կիպրոսի հարցը սրվեց 1990 թ հետո, երբ կղզու հարավային՝ հունական մասի ղեկավարությունը՝ Կիպրոսի Հանրապետությունը, անդամակցության խնդրանքով դիմեց ԵՄ: Անկարան և Կիպրոսի թուրքական կառավարությունը բողոք ներկայացրին այս որոշման դեմ՝ ասելով, որ հունական մասի կառավարությունը իրավունք չունի հանդես գալ որպես ինքնուրույն միջազգային սուբյեկտ, քանի որ կղզու իրավական կարգավիճակը դեռևս որոշված չէ²³³:

Անդամակցության ճանապարհին եղած քաղաքական մյուս կարևոր խնդիրը Թուրքիայում ժողովրդավարության ցածր մակարդակն է և մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի առկայությունը: Դեռևս Հելսինկյան գա-

զաբաժնողի ժամանակ նշվել էր, որ ԵՄ դիրքորոշումը հստակ է. անդամակցության բանակցություններ սկսելու համար Թուրքիայի՝ Կոպենհագենյան քաղաքական չափանիշներին համապատասխան լինելը պարտադիր մասնապայման է:

Եվրոպական կառույցներին մտահոգող շատ հարցեր է առաջացնում նաև թուրքական բանակը: Բոլյուսը կարծում է, որ երկրի քաղաքական կյանքում Թուրքիայի զինված ուժերի այդքան մեծ դեր խաղալը անթույլատրելի է: Թուրքական բանակը անընդհատ միջամտում է քաղաքականությանը, այն Թուրքիայի աշխարհիկության երաշխավորն է: Բանակի առանձնահատուկ քաղաքական դերը երկրի կյանքում նույնիսկ ամրագրված է Թուրքիայի սահմանադրության մեջ: Թուրքիայում սահմանադրության երաշխավորը ոչ թե երկրի նախագահը կամ այլ պաշտոնական անձ է, ինչպես շատ ժողովրդավարական երկրներում, այլ հենց բանակն է²³⁴:

Լայն քննարկումների առարկա է նաև այն հարցը, որ Թուրքիան աշխարհագրորեն Եվրոպական երկիր չէ: Թուրքիայի տարածքի 97%-ը և բնակչության 90%-ը գտնվում են Ասիա մայրցամաքում: Մի կողմից հնարավոր է ԵՄ համար դրական գնահատել այս հանգամանքը, քանի որ Թուրքիայի անդամ դառնալուց հետո ԵՄ մեծ ազդեցություն ձեռք կբերի այս տարածաշրջանում, և նրա դիրքերն էլ ավելի կամրապնդվեն: Այն ամփոփականորեն հարևան կղառնա այնպիսի երկրների, ինչպիսիք են Սիրիան, Իրանը, Իրաքը, Անդրկովկասյան հանրապետությունները: Եվրոպական Միությունը հնարավորություն կունենա դառնալու նաև «Միջինարևելյան գերտերություն», մինչդեռ ԵՄ-ը մշտապես խուսափել է հակամարտություններով հարուստ տարածաշրջանների հետ ուղղակի հարևանությունից՝ դրանով իսկ ԵՄ համար առաջ կգան նոր խնդիրներ և մարտահրավերներ:

Թուրքիայի անդամակցության ճանապարհին խնդիրներից մեկը նրա բազմաբանակ բնակչությունն է: Այն գրեթե հավասար է Գերմանիայի բնակչությանը: 2015 թ. Թուրքիայի բնակչությունը կգերազանցի Գերմանիայի բնակչության քանակը և կկազմի ԵՄ բնակչության շուրջ 15%-ը (այդ ժամանակ կլինի շուրջ 600 միլիոն)²³⁵: Վտանգ կա, որ Թուրքիայի՝ ԵՄ անդամակցելուց հետո բաց սահմանների և խոչընդոտների բացակայության դեպքում թուրք բնակչության մեծ ներգաղթ կսկսվի դեպի եվրոպական երկրներ: Նույն վախը կար Իսպանիայի անդամակցության ժամանակ, բայց մնան անցանկալի շար-

²³² <http://gazeta.aif.ru>, Турция в ЕС: пускать или не пускать?, Дмитрий Глуховский.

²³³ <http://www.dw-world.de>, Справка: "кипрский вопрос", Виктор Кирхмайер.

²³⁴ Տե՛ս <http://gazeta.aif.ru>, Дмитрий Глуховский.

²³⁵ Turkish Daily News, 28 April 2004, Turkey's membership of the European Union: A rose or a thorn? Forty years knocking at the EU's door, William Chislett.

ժեր տեղի չունեցան: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ բուրքական բնակչության գրեթե 98%-ը դավանում է իսլամ, ապա դա կրգազմապատկի դեմոգրաֆիական առումով ԵՄ սպառնացող վտանգները: Որպես ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության անցանկալիության առավել խորքային պատճառներ կարելի է նշել նաև Թուրքիայի բնակչության մեծաթիվ լինելու հանգամանքը, որը անդամակցելուց հետո Թուրքիային իրավունքն է հնարավորություն կտա ԵՄ-ի ղեկավար մարմիններում ունենալ առավել շատ ձայներ, ինչպես նաև այն մտավախությունը, որ ԵՄ-ին անդամակցելուց հետո Թուրքիայից դեպի ԵՄ-ի առավել զարգացած երկրներ տեղի կունենա հսկայական միգրացիոն հոսք:

Սակայն կան նաև Թուրքիայի անդամակցության կողմնակիցներ, որոնք դա արդարացնում են այն հանգամանքով, որ Թուրքիայի միացումը եվրոպական ակումբին կօգնի հետագայում կանխել բախումները մահմեդական և քրիստոնեական քաղաքակրթությունների միջև:

Չի կարելի անտեսել այն փաստը, որ Թուրքիայի անդամակցությունը նաև կբերի շատ տնտեսական օգուտներ Միությանը: Նախ Անկարան զգալիորեն կընդլայնի ԵՄ շուկան և աշխատանքային ուժ կտրամադրի եվրոպական ընկերություններին, որոնք ունեն բնակչության ձեռացման խնդիր: Իսկ եթե մերժվի Թուրքիայի անդամակցությունը, այն կարող է անկամխատեսելի հետևանքներ ունենալ և Թուրքիայի, և՛ ԵՄ համար:

3/5 Առաջատար պետությունների դիրքորոշումը Թուրքիայի անդամակցության հարցում և հարաբերությունների զարգացման հեռանկարները

«Թուրքիայի մուտքը ԵՄ կնշանակի Եվրոպայի վերջը»,- այսպես է արտահայտվել Թուրքիայի անդամակցության մասին Ֆրանսիայի նախկին նախագահ ժիսկար դ'Էստենը իր հարցազրույցներից մեկի ժամանակ: Իսկ Թուրքիայի անդամակցության կողմնակիցներին նա անվանել է Եվրամիության բռնամիներ²³⁶: Ճիշտ է, այս հայտարարությունը բնադատաբար պաշտոնական Բրյուսելի կողմից, սակայն միայն այն հանգամանքը, որ մնամանադ կարծիքներ են ասվում, այն էլ դ'Էստենի նման հեղինակավոր անձանց կողմից, ցույց է տալիս, թե որքան բազմակարծիք է Եվրոպան Թուրքիայի անդամակ-

²³⁶ <http://news.bbc.co.uk>, D'Esten: Turkey in EU? It's a Catastrophe; November 8, 2002.

ցության հարցում, և դեռ որքան խոչընդոտներ ստիպված կլինի հարթահարել բուրքական դիվանագիտությունը:

ԵՄ պետությունների շարքում հակաթուրքական տրամադրվածությամբ հատկապես հանդես են գալիս Ֆրանսիան, Գերմանիան և Ավստրիան: Սոցիոլոգիական հարցումների միջոցով պարզվել է, որ Գերմանիայի բնակչության 66%-ը և Ֆրանսիայի բնակչության 68%-ը դեմ են արտահայտվում ԵՄ Թուրքիայի անդամակցությանը²³⁷: Իսկ Ավստրիան վերջերս՝ 2008թ. օգոստոսին, հայտարարեց, որ եթե Միությունը հավանություն տա ԵՄ անդամակցելու Թուրքիայի դիմումին, ապա նա այդ հարցը կդնի հանրային քվեարկության, իսկ սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ Ավստրիայի բնակչության մոտ 80%-ը դեմ կարտահայտվի Թուրքիայի անդամակցությանը²³⁸: Նման քննադատական հայտարարություններ Թուրքիայի անդամակցության հասցեին հնչում են նաև Ֆրանսիայի նախագահ Նիկոլայ Սարկոզիի կողմից, որը բազմիցս նշել է, որ ինքը Թուրքիային չի համարում Եվրոպայի մաս: Նրան համակարծիք է նաև Գերմանիայի կանցլեր, Քրիստոֆյան-դեմոկրատների կուսակցության առաջնորդ Անգելա Մերկերը, որը Սարկոզիի հետ անդամակցության փոխարեն Թուրքիային առաջարկում է «արտոնյալ համագործակցություն»:

Սարկոզին հայտարարել էր, որ «Եվրոպայի անընդմեջ ընդլայնումը կհանգեցնի քաղաքական Եվրոպայի ոչնչացմանը²³⁹»: Այս երկու պետությունների առաջնորդները փորձում են Թուրքիայի անդամակցության անհնարիմությունը քացատրել ոչ թե քաղաքական կամ տնտեսական պատճառներով, այլ ելնելով այն հանգամանքից, որ Թուրքիան ուղղակի աշխարհագրորեն չի գտնվում Եվրոպայում: Սակայն այս առաջարկը անընդունելի է Թուրքիայի համար, որը «չի հանդուրժի ոչ մի հարաբերություն ԵՄ հետ՝ բացի լրիվ անդամակցությունից²⁴⁰»:

Ֆրանսիայի նման դիրքորոշումը պայմանավորված է նրանով, որ Ֆրանսիան միշտ էլ հանդես է եկել ԵՄ ընդլայնման դեմ՝ համարելով, որ դա թուլացնում է ԵՄ դիրքերը և լրացուցիչ խնդիրներ է առաջացնում: Փոխարենը ֆրանսիական կառավարությունը պաշտպանում է ԵՄ շրջանակներում համագոր-

²³⁷ <http://www.dw-world.de>, С вступлением Турции ЕС потерпит крах, интервью с немецким историком Ханс Ульрих Велером, Штеффен Лайдель.

²³⁸ <http://www.euractiv.com>, Austria Signals Referendum on Turkey's EU Accession, 25 August 2008.

²³⁹ <http://www.vz.ru>, Турцию не возьмут в Евросоюз, Дмитрий Бавырин, 2008.

²⁴⁰ ANKARA: Erdogan Lashes Out at EU, Says it Applies Double Standards, 10 December 2002.

ծակցության խորացումը, իսկ ԵՄ ընդլայնումը ավելի դժվար է դարձնում խորացված ինտեգրումը: Գերմանիայում և Ավստրիայում կառավարության հակաթուրքական դիրքորոշումը ավելի շատ քաղաքական շահերվման նպատակ է հետապնդում: Ավստրիայում հակաթուրքական շարժումը հատկապես ուժեղանում է մախրեմտական քարոզարշավների ժամանակ, երբ թեկնածու կուսակցությունները դրանով ցանկանում են շահել ընտրողների համակրանքը, իսկ Ավստրիայի բնակչության մեջ Թուրքիայի և թուրքերի նկատմամբ պատմական բշնամանք գոյություն ունի: Գերմանիայում Թուրքիայի հարցում քաղաքական կուսակցությունների շրջանում չկա միակարծություն: Ինչպես արդեն նշվել է, իշխող Զրիստոնյա-դեմոկրատական կուսակցությունը դեմ է Թուրքիայի լրիվ անդամակցությանը, իսկ ընդդիմադիր Սոցիալ-դեմոկրատները հանդես են գալիս Թուրքիայի անդամակցության ակտիվ պաշտպանությանը՝ նշելով, որ Միությունը միայն կշահի դրանից: Գերմանիայում հակաթուրքականության պատճառներից մեկն էլ երկրում մեծաքանակ թուրք բնակչության առկայությունն է:

Թուրքիայի անդամակցության կողմնակից պետությունների շարքում է մախ և առաջ Մեծ Բրիտանիան: Բրիտանիայի արտգործնախարար Դավիթ Մոլիբրանը 2007 թ. սեպտեմբերին հայտարարություն էր արել, որ «ԵՄ իր առջև որպես հստակ նպատակ պետք է դնի Թուրքիային որպես լրիվ անդամ ընդունելը իր շարքերում²⁴¹»: Սա մախ պայմանավորված է թուրք-բրիտանական սերտ համագործակցությամբ, հետո էլ բրիտանական կառավարությունը միշտ էլ Եվրամիության ընդլայնման կողմնակից է եղել:

Կարող է տարօրինակ հնչել, սակայն անդամակցության կողմնակիցների շարքում է մախ Թուրքիայի պատմական բշնամի Հունաստանը: Պաշտոնական Աթենքի կարծիքով ավելի լավ է Թուրքիան լինի եվրոպական ակումբում, քան դրանից դուրս: «Մենք ուղղակի հավատում ենք, որ երբ Թուրքիան միանա Եվրամիությանը, ստիպված կլինի պահպանել եվրոպական օրենքներն ու արժեքները: Սա արդեն կլուծի մի շարք խնդիրներ», - հայտարարել էր Հունաստանի պաշտպանության մախկին մախարար Յաննոս Պապատոնիոս²⁴²: Հարկ է նշել, որ այս դիրքորոշումը ամբողջովին արդարացված է, և մեզ համար էլ, որպես Թուրքիայի անմիջական հարևանի, ավելի շահեկան կլինի գործ ունենալ Եվրոպական ընտանիքի անդամ և նրան արժեքների կրող, կանխատեսելի Թուրքիայի հետ:

²⁴¹ Stu' <http://www.euractiv.com>, EU-Turkey Relations.

²⁴² Stu' <http://www.euractiv.com>, EU-Turkey Relations.

Լեհաստանը սկզբնական շրջանում անհանգստանում էր, որ Թուրքիան, ԵՄ մտնելով, իր կողմը կտանի սուբսիդիաների մեծ մասը և լինելով իր տարածքով մեծ պետություն ու ունենալով բազմաթիվ սոցիալալտեսական խնդիրներ՝ դժվար մարտելի կլինի ԵՄ համար: Այնուամենայնիվ, Վարչական և քազմիցս հայտարարել է, որ ինքը Թուրքիայի լրիվ անդամակցության կողմնակից է: Սա պայմանավորված է մախ այն հանգամանքով, որ Լեհաստանը, լինելով ԱՄՆ քաղաքական դաշնակիցը, չի կարող դեմ գնալ իր «մեծ եղբոր» որդեգրած քաղաքական գծին, իսկ ԱՄՆ-ը, հայտնի է, իր դաշնակից Թուրքիայի ԵՄ անդամակցության կողմնակից է: ԱՄՆ-ը շարունակում է մեծ ազդեցություն ունենալ Թուրքիայի արտաքին քաղաքական որոշումների ընդունման վրա, իսկ Թուրքիան Մերձավոր Արևելքում իրականացնում է ընդգծված պրոամերիկյան, պրոիսրայելական քաղաքականություն, որն էականորեն տարբերվում է ԵՄ-ի քաղաքականությունից և աչքի է ընկնում իր պրոարաբական կողմնորոշմամբ (Ֆրանսիա, Իսպանիա, Իտալիա): ԵՄ-ի վերջին ընդլայնումներից հետո նրա կազմում արդեն իսկ ձևավորվել է այսպես կոչված «ամերիկյան ակումբ»: Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի, մասամբ Չեխիայի մասնակցությամբ, և ԵՄ-ի առաջատար որոշ երկրների համար (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա և այլն) բոլորովին էլ ոգևորիչ չէ այդ երկրների թվի ավելացումը:

Ըստ ԱՄՆ-ի՝ Թուրքիայի անդամակցությունը կայուն մոդել կլինի ողջ իսլամական աշխարհի համար: Բացի այդ՝ Թուրքիայի մուտքով ԵՄ կավելանա ԱՄՆ քաղաքական դաշնակիցների թիվը:

Ինչ վերաբերում է Թուրքիայի անդամակցության մասին Եվրոպայի հասարակության դիրքորոշմանը, ապա անցկացված սոցիալական հարցման արդյունքները հուսադրող չեն. Եվրոպայի բնակչության 74%-ը Թուրքիան ուղղակի չի համարում «եվրոպական պետություն»²⁴³: Թուրքերի նկատմամբ մեծ վերաբերմունքի պատճառն այն է, որ եվրոպացիները վախենում են, որ թուրքերը պարզապես մեծ հոսանքով կցվեն ԵՄ: Արդեն իսկ թուրքական մեծ համայնքներ կան Ավստրիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում (այստեղ նրանց թիվը հասնում է շուրջ 600 հազարի): Վերջին շրջանում անդամակցության գործընթացի լուրջ առաջխաղացման քաջակալության պայմաններում ԵՄ նկատմամբ վստահության անկում է նկատվում մախ թուրք հասարակության շրջանում: Սոցիալալտեսները ցույց են տալիս, որ թուրքական հասարակության շրջանում աճում է կասկածատությունը ԵՄ նկատմամբ: Համաձայն 2007 թ. գերմանական Մարշալի Ֆոնդի կողմից իրականացված «Տրանսատլանտյան տեղեկեցիա» հարցումների, որի միջոցով փորձ էր արվում պարզել, թե ինչպա-

²⁴³ <http://www.tourdaily.ru>, Турция войдет в ЕС не раньше 2015 года, 8 февраля 2008.

նով է հավանական թուրքիայի՝ ԵՄ մուտքը, եվրոպացիների 56%-ը դա է հավանական համարել, մինչդեռ թուրքերի ընդամենը 26%-ն է նման պատասխան տվել: Թուրքական կառավարությունն էլ իր հերթին այլևս այն ոգևորվածությամբ չի ձեռնամուխ լինում քաղաքական բարեփոխումների իրականացմանը, ինչպիսին նկատվում էր 2002-2004 թվականների ընթացքում: Ծիշտ է՝ անդամակցության քանակությունները կարող են եզրափակվել միայն 2014 թ. հետո, սակայն առաջընթացի նման տեմպերը թույլ չեն տալիս լավատես մնալ: Իսկ Գերմանիայի և Ֆրանսիայի առաջ քաշած «արտոնյալ համագործակցության» նախագիծը ի չիք է դարձնում լրիվ անդամակցության հեռանկարը: Այնուամենայնիվ, դեռևս շարունակվում են անդամակցության բանակցությունները Թուրքիայի հետ: Հարկ է նշել, որ Սարկոզիին և Մերկելին նախորդող Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն ու Գերմանիայի կանցլեր Հերիարդ Շրոդերը, ի տարբերություն իրենց հաջորդ ղեկավարների, հանդես էին գալիս Թուրքիայի անդամակցության պաշտպանությամբ: Այնպես որ գուցե որոշ ժամանակ անց այս երկրներում նորից քաղաքական դիրքորոշման փոփոխություն նկատվի՝ պայմանավորված քաղաքական հանգամանքների փոփոխություններով: Սակայն Թուրքիան ևս մշտապես ունեցել է իրագործել է «պահուստային» տարբերակներ: Ներկայումս եվրաստրատեգիայի համակարգում իր նշանակությունն ու կարգավիճակը բարձրացնելու նպատակով Թուրքիան ամրապնդում է իր դիրքերը մահմեդական աշխարհում, հատկապես Մերձավոր Արևելքում և թուրքալեզու պետությունների շրջանում: Աճում է նաև Թուրքիայի նշանակությունը եվրոպական էներգետիկ, հեռահաղորդակցության և տարանցման միջտարածաշրջանային նախագծերի իրականացման և անվտանգության ապահովման հարցերում: Թուրքիային արդեն հաջողվել է բավական արդյունավետորեն օգտագործել ժամանակին խոշոր տերությունների միջև եղած երկարատև հակամարտությունների հետևանքով իրեն՝ որպես ամենաթույլ պետության, «վստահված» ծովային նեղուցների գործոնը:

Այնհայտ է մի բան, ԵՄ միշտ էլ պատճառներ կգտնի Թուրքիայի անդամակցությունը կասեցնելու համար, քանի դեռ Թուրքիան լիովին չի համապատասխանել անդամակցության համար անհրաժեշտ չափանիշներին: Սակայն, կարծում ենք, ոչ մի դեպքում պետք չէ վերջնականապես մերժել Թուրքիային և տեղիք տալ այդ երկրում իսլամիստների դիրքերի ամրապնդմանը: Անհրաժեշտ է շարունակել անդամակցության քաղաքական գործընթացը, ընդ որում, երկու կողմերն էլ պետք է որոշակի քայլեր ձեռնարկեն գործընթացին նպաստելու համար:

Գլուխ 4

ՕԳՈՍՏՈՍԻ 8: ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ,

ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

4/1 Հարավային Օսեթիայի ճգնաժամը և Թուրքիայի դիրքորոշումը այդ հիմնախնդրի վերաբերյալ Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմ

2008 թ. օգոստոսի 7-ին Վրաստանի Հարավային Օսեթիայի անջատողական տարածաշրջանը մեղադրեց Վրաստանին իրենց մայրաքաղաք Ցխենվալի վրա ծանր հրետանային հարձակում սկսելու համար: Մյուս կողմից Վրաստանը հայտարարեց, որ Հարավային Օսեթիայի զինված ուժերը ռմբակոծել են Վրաստանի որոշ գյուղեր: Ըստ Վրաստանի՝ Հարավային Օսեթիայի զինված ուժերը ոչ միայն չպատասխանեցին կրակը դադարեցնելու խնդրանքին, այլև ուժգնացրին ռմբակոծությունը՝ ստիպելով Վրաստանին գորքեր ուղարկել, որոնք, ինչպես հայտնում են, շուտով վերահսկողության տակ վերցրին Ցխենվալին և մյուս տարածքները²⁴⁴:

Ենթադրվում էր, որ Թուրքիան, լինելով ՆԱՏՕ-ի անդամակիցը, կանցնի արևմտյան երկրների մեծամասնության շարքը, որոնք Ռուսաստանին մեղադրում էին Հարավային Օսեթիայում իրականացվող գործողությունների համար: Թուրքիան անսպասելիորեն առաջարկեց հաստատել Կովկասյան դաշինք կամ այսպես կոչված Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմ: Որոշ աղբյուրներ վկայում են, որ Թուրքիայի կարուկ միջամտությունը Կովկասյան տարածաշրջան մանրակրկիտ ծրագրված էր, և Թուրքիան օգտագործեց Հարավային Օսեթիայի վիճակի վատթարացումը՝ սկսելու համար տարածաշրջան ներթափանցելու իր վաղեմի ծրագրի իրականացումը, որը երկար ժամանակ Թուրքիայի վերնախավի համար եղել է խնդրահարույց հարց²⁴⁵:

²⁴⁴ Jim Nichol, CRS Report for Congress, August 13, 2008, pg.1.

²⁴⁵ Andrey Areshchev, an expert of the Russian Strategic Culture Foundation told ArmInfo, November 11, 2008.

Պատժորժի գաղափարը նպատակաուղղված է Հարավային Կովկասի երեք պետությունները՝ Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը, մեկտեղ հավաքելու Թուրքիայի և Ռուսաստանի հետ ու վերջիններիս միջնորդությամբ հնարավորություն ստեղծել լուծելու իրենց միջև գոյացած հակամարտությունները²⁴⁶։ Ռեջնի Թայիփ Էրդողանի խոսքերով Կովկասյան դաշինքի նպատակն ու բովանդակությունը հետևյալն է.

«Դրա հիմնական նպատակը տարածաշրջանում տևական խաղաղության և անվտանգության հաստատումն է՝ բոլոր տարածաշրջանային պետությունները մեկտեղ հավաքելով մեկ կազմում: Դրանով իսկ քննարկվում է մի կառուցվածք, որտեղ ակնկալվում է, որ տարածաշրջանային պետությունները միասին մեկ անգամ ևս կվերահաստատեն միմյանց հանդեպ պետական իշխանության հարգանքը, ուժի սպառնալիքի և կիրառման սահմանափակումը, պետական սահմանների անխախտությունը և ոչ կորուստային տնտեսական և էներգետիկ անվտանգությունը իրենց կովկասյան տարածաշրջանում պահպանելու համար: Կազմավորման ընթացքում այնպիսի սկզբունքները, ինչպիսիք են պետական իշխանությունը, սահմանների անխախտ մնալը և այլն, իրենց վկայակոչումները կունենան ԵԱՀԿ կանոնադրության մեջ, որի անդամներն են Ռուսաստանը, Թուրքիան և կովկասյան այլ պետություններ»²⁴⁷:

Էրդողանը համոզված է, որ այստեղ հիմնական նպատակը տևական խաղաղությունը և անվտանգությունն է, որին կարելի է հասնել տարածաշրջանային պետությունների միջև տնտեսական համագործակցությունը բարձրացնելու միջոցով: Այս գաղափարը լավագույն կերպով ներկայացնելու համար նա բերեց Բաքու-Թրիլիա-Տեյխան, Բաքու-Թրիլիա-Էրզրում, Բաքու-Թրիլիա-Կարս նախագծերի օրինակը՝ որպես տնտեսական ձեռնարկում, որը զգալիորեն նպաստել է տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը: Նա մասնանշեց այսպիսի նախագծերի զարգացման անհրաժեշտությունը և դրանց ընդլայնումը այնպես, որ այն միավորեր կովկասյան ժողովուրդներին:

Անկարայում հիմնված Միջազգային ռազմավարական հետազոտական կազմակերպության ներկայացուցիչ Գուներ Օզկանը դաշինքների վերաբերյալ իր վերլուծություններում այն համարում է մի այնպիսի դաշինք, որն անվ-

տանգոբյան խնդիրների լուծման վերաբերյալ ունի ազատական հայացքների տրամաբանական հիմք, որը մշակվել է առաջին հերթին ի պատասխան միջպետական հարաբերություններում պետականամետ իրական հեռանկարների²⁴⁸: Դաշինք ստեղծելու գաղափարը հիմնված է «բարդ փոխկապակցվածություն» գաղափարի վրա, որը ենթադրում է, որ բարեփոխված առևտրային հարաբերությունները և միացյալ տնտեսական նախագծերը մի առանձին տարածաշրջանում վերջապես կնվազեցնեն զինված ուժերի միջամտությունը: Նա հետագայում ներկայացրեց այդ հիմնահարցի իրական հեռանկարները՝ հաստատելով, որ բարդ փոխկապակցվածությունը կարող է կիրառվել միայն այնքան ժամանակ, որքան ժամանակ որ կողմերին այն կբավարարի: Բացի այդ շատ հաճախ դրա իրականացումը անհնար է լինում այնպիսի իրավիճակներում, երբ առկա է իշխանության սրգակցություն և դեֆիցիտ հանաժողովների օգտագործման իրավունքի խնդիր: Ուստի նա եզրակացնում է, որ միջկառավարական կազմակերպությունները իրականում ավելի շատ չեն, քան պետությունների ձեռքում եղած գործիքները, որպեսզի նպաստեն ճրանց ազգային և անվտանգության շահերին:

Որոշ վերլուծաբաններ կարծում են, որ այս առաջարկը կարճ ժամկետներում հաջողություն ունենալու փոքր հավանականություն ունի մի շարք պատճառներով: Մասնավորապես Վրաստանը չի ցանկանա գործ ունենալ Ռուսաստանի հետ վերջինիս՝ Հարավային Օսեթիայի և Աբխազիայի անկախությունը ճանաչելու պատճառով: Հայաստանի և Թուրքիայի միջև ցեղասպանության պատճառով տասնամյակներ շարունակ դիվանագիտական հարաբերություններ չեն եղել, թեև Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար Արդուլա Գյուլի վերջերս կատարած այցը հարաբերությունների կարգավորման սկիզբ կարող է դառնալ: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը, որը կհանգեցնեք Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը, դեռևս մնում է հեռու ապագայում իրականացման հնարավորություն ունեցող հարց²⁴⁹:

Իսկապես, առաջարկված Կովկասյան պլատֆորմը նախ և առաջ պահանջում է Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև որևէ կերպ երկխոսության վերականգնում: Թուրքիան դա հասկանում է, և դա է պատճառներից մեկը, որ Թուրքիայի պաշտոնյաները հուսով են, թե

²⁴⁶ Michael Reynolds, "Turkey's troubles in the Caucasus", http://blogs.law.harvard.edu/mesh/2008/08/turekys_troubles_in_the_caucasus/.

²⁴⁷ Guner Ozkan, Turkey's "Caucasus Alliance" proposal: How likely is its success? Today's Zaman, 19.08.2008.

²⁴⁸ Guner Ozkan, Turkey's "Caucasus Alliance" proposal: How likely is its success? Today's Zaman, 19.08.2008.

²⁴⁹ David Morrison, "Turkey restricts US access to the Black Sea", www.david-morrison.co.uk, 18.10.2008.

Հայաստանը կդառնա առաջարկված Պլատֆորմի կողմնակից և մասնակից ու Երևանի հետ ձևական երկխոսությունը կորոշվի Մոսկվայի հետ հետագա երկխոսություններից հետո՝ այսպիսով մեծացնելով ակնկալիքները, որ Մոսկվան կնպաստի և/կամ միջնորդ կդառնա այդ երկխոսությանը²⁵⁰։ Ավելին՝ թուրքական կողմը մասնավորապես լավատես է, որ Կովկասյան դաշինքը մոտ ապագայում կլուծի մյուս ամենակարևոր տարածաշրջանային անվտանգության հիմնահարցը՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը Բաքվի և Երևանի միջև²⁵¹։

Հայաստանի հետ կապերի կարգավորումը այսպիսով պայմանավորված է նրանով, որ Հայաստանը հրաժարվի ցեղասպանության ճանաչման քաղաքականությունից, Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ միակողմանի գիջման չզնայուց և Կարսի պայմանագրի վերահաստատմամբ Թուրքիայի տարածքային ամբողջականությունը ճանաչելուց, որին Հայաստանը պատրաստ չէ²⁵²։

Աշխարհաքաղաքական տեսանկյունից շատ ավելի կարևոր է, որ Ռուսաստանը օժանդակում է Թուրքիայի դրույթներին։ Իրականում այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ Թուրքիան պատրաստ է թույլ չտալ, որ ԱՄՆ-ը լինի Պլատֆորմի մասնակից։ Ռուսաստանը ողջունել է այս Պլատֆորմը, որը փաստարկ է այն բանի, որ ի տարբերություն ՆԱՏՕ-ի և ԵՄ-ի, Թուրքիան Կովկասին մեծ կարևորություն է տալիս։ Ըստ Ռ. Սաֆրաստյանի՝ այնուամենայնիվ Ռուսաստանի դրական մոտեցումը SCP-ին (Անվտանգության համագործակցության ծրագիր) միայն մարտավարական բնույթ ունի, քանի որ դժվար է պատկերացնել այդ երկրների աշխարհաքաղաքական հեռանկարները, եթե Հարավային Կովկասում իրենցից բացի ներգրավվեն այլ մասնակիցներ։ Այս հանգամանքները հիմքեր են տալիս SCP-ն բնութագրելու որպես դժվար իրագործելի²⁵³։

4/2 Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման դինամիկան օգոստոսի 8-ից հետո

Որպես կանոն, հայ-թուրքական հարաբերությունների զարգացումը վերջին շրջանում ուղղակիորեն կապվում է 2008թ. օգոստոսին ռուս-վրացական հակամարտության և հարավկովկասյան աշխարհաքաղաքական տարածության մեջ դրա հանգեցրած փոփոխությունների հետ։ Հինմահարցը համակողմանի դիտարկելու համար անհրաժեշտ է ներկայացնել դրա հետ կապված հիմնական փաստական հիմքերը, պաշտոնական դիրքորոշումները և վերլուծական ու հասարակական-քաղաքական շրջանակների արձագանքները։ Իհարկե, երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան մեծամասամբ բաժին է ընկնում 2008թ. երկրորդ և 2009թ. առաջին կեսերին, սակայն հարկ է նկատել, որ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ Հայաստանի պաշտոնական դիրքորոշման հիմնադրությունները տեղ են գտել դեռևս 2007թ. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ։ Դրանց մասին խոսվում էր նաև ՀՀ ներկայիս նախագահ Ս. Սարգսյանի 2008թ. փետրվարին ներկայացված նախընտրական ծրագրում։ Այսպես, Ռազմավարության մեջ ամրագրված է, որ «Հայաստանը հանդես է գալիս Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատման օգտին և շարունակելու է ձեռնարկել համապատասխան քայլեր խոչընդոտների հաղթահարման, երկկողմ հարաբերությունների բարելավման ուղղությամբ»²⁵⁴։

Միաժամանակ, Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը դիտարկվում է պատմական արդարության վերականգնման և տարածաշրջանում փոխվստահության մթնոլորտի բարելավման, ապագայում նման ոճիքների կանխարգելման համատեքստում։

Թուրք-հայկական սահմանի փակ լինելը, իր հերթին, որակվում է որպես սպառնալիք ՀՀ ազգային անվտանգությանը, իսկ հարաբերությունների չկարգավորված բնույթը՝ որպես տարածաշրջանային կայունության միաջակայքի վրա անմիջական բացասական ազդեցություն ունեցող հանգամանք։ Ըստ ուրում, ենթադրվում է, որ փոխհարաբերությունների կարգավորումը բարեն-

²⁵⁰ Today's Zaman, Reluctant Baku says Armenia visit decision up to Turkey", 30.08.2008.

²⁵¹ Guner Ozkan, Turkey's "Caucasus Alliance" proposal: How likely is its success? Today's Zaman, 19.08.2008

²⁵² Armen Khazarian Interview on Armenian-Turkish Relations, Zhamanak Daily, July 26, 2008 <http://www.zhamanak.com/article/9903>.

²⁵³ Ruben Safrastyan, South Caucasus: Stability Platforms and Conflicts, 5/10/2008 .

²⁵⁴ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն, (Հավանության է արժանացել ՀՀ Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007թ. հունվարի 26-ի նիստում)

պատժման արժեքը կատարելի դարձրա՞յն հակամարտության վերջնական կարգավորման համար:

Հատկանշական է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը Ռազմավարության մեջ ուղղակիորեն կապակցվում է ԵՄ-ին **Թուրքիայի անդամակցության** գործընթացի հետ, նշելով, որ անդամակցության կարևոր պայման պետք է լինի Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման վերացումը:

Թերևս բավական հրատապ ու արդիական կարող են հնչել նաև Ս. Սարգսյանի նախընտրական ծրագրում նշված այն դրույթները, որոնց համաձայն, հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների հիմքում չեն կարող ընկած լինել ո՛չ Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունից հրաժարվելու, ո՛չ ԼՂ հակամարտության հետ կապված և ոչ էլ այլ նախապայմաններ²⁵⁵:

Այս առումով, հատկանշական է այն հանգամանքը, որ վերը նշված հիմնասկզբունքները և Հայաստանի պաշտոնական դիրքորոշումը, դատելով Հայաստանի ղեկավար շրջանակների հայտարարություններից, ոչ մի փոփոխության չի ենթարկվել. Հայաստանը շարունակում է պնդել առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, դիտարկել Հայոց ցեղասպանության ճանաչման և ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից անկախ, թեկուզև որոշակիորեն կապակցված համատեքստում:

2008թ.-ից սկիզբ առած հայ-թուրքական հարաբերությունների զարգացման նոր շրջանում կարելի է առանձնացնել 3 առանցքային իրադարձություններ՝ իր թուրք գործընկերոջը Հայաստան հրավիրելու մասին Ս. Սարգսյանի հայտարարությունը²⁵⁶, Ա. Գյուլի այցով մեկնարկած «Ֆուտուրային դիվանագիտությունը» և երկկողմ հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզի» մասին համատեղ հայտարարությունը: Բավական խորհրդանշական պետք է համարել այն հանգամանքը, որ Ա. Գյուլին երկու երկրների ֆուտուրի ազգային հավաքականների հանդիպումը միասին դիտելու նպատակով Հայաստան հրավիրելու իր մտադրության մասին Ս. Սարգսյանը հայտարարեց 2008թ. հունիսին ՌԴ կատարած պաշտոնական այցի ընթացքում տեղի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ: Նա ևս մեկ անգամ անդ-

²⁵⁵ ՀՀ Նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի նախընտրական ծրագիր, 2008թ.

²⁵⁶ Հարկ է նկատել նաև, որ մինչ այդ իրենց պաշտոնակալման կապակցությամբ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը, արտգործնախարար Է. Նալբանդյանը և վարչապետ Տ. Սարգսյանն արդեն ստացել էին իրենց թուրք գործընկերների շնորհավորական ուղերձները:

րադարձավ սահմանի խնդրին, նշելով, որ «ժարևան պետությունների միջև 21-րդ դարում չպետք է լինեն փակ սահմաններ»: Մեծ արժագանք ստացան, հատկապես, նրա խոսքերը պատմական փաստերն ուսումնասիրելու նպատակով **հայ-թուրքական հանձնաժողովի** ձևավորման մասին, «բայց այն ժամանակ, երբ կրացվի սահմանը մեր պետությունների միջև: Այլապես, այն կարող է դառնալ հարցը տարիներով երկարածվելու և շահարկելու միջոց»:²⁵⁷ Ի պատասխան մի շարք ընդդիմադիր քաղաքական գործիչների մեղադրանքներին, թե այդպիսի Հայաստանը կասկածի տակ է դնում Հայոց ցեղասպանության փաստը, պաշտոնական Երևանը հստակեցրեց, որ հանձնաժողովը պետք է ուսումնասիրի երկու երկրների հարաբերություններին առնչվող պատմական փաստերը, ինչը բոլորովին կասկածի տակ չի դնում Մեծ եղեռնի փաստը: 2008թ. նոյեմբերին Frankfurter Allgemeine Zeitung-ին և EuroNews հեռուստասլիբին տված հարցազրույցում Հայաստանի նախագահն անպետք համարեց 1915թ. Հայոց ցեղասպանությունն ուսումնասիրելու նպատակով պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը: Նրա համոզմամբ, նախ անհրաժեշտ է քացել սահմանը, ապա կառավարական մակարդակում կարելի կլինի քննարկել բոլոր առկա խնդիրները: Իսկ ներկա պահին այդպիսի հանձնաժողովի ստեղծումն ուղղակի միջոց կլինի՝ շեղելու միջազգային հանրության ուշադրությունը:²⁵⁸

Արդեն 2008թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ արտգործնախարար Է. Նալբանդյանն ընդունեց Ա. Գյուլի Երևան այցի նախապատրաստման նպատակով ժամանած հատուկ բանագնաց, դեսպան Ռ. Չևիքոզին: Թուրք դեսպանին ընդունեց նաև նախագահ Ս. Սարգսյանը: Ինչպես բանագնացի միջոցով փոխանցել էր Թուրքիայի նախագահը, «խաղը չափազանց կարևոր հնարավորություններ է ընձեռում քաղաքական տեսակետից: Այդ հնարավորությունը պետք է օգտագործվի, հատկապես այժմ, երբ Կովկասում հասարակությանն այդքան հուզող իրադարձություններ են կատարվում»:²⁵⁹ Երկու նախագահների հանդիպումը կայացավ սեպտեմբերի 6-ին, որին հաջորդեց նաև արտգործնախարարների հանդիպումը: Դրանց ընթացքում հայկական կողմը վերահաստատեց երկկողմ հարաբերություններն առանց նախապայմանների կարգավորելու վերաբերյալ իր դիրքորոշումը՝ այդ համատեքստում քարձր գնահատելով

²⁵⁷ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ - <http://www.president.am/events/statements/arm/?year=2008&pn=3&id=11>

²⁵⁸ President Serzh Sargsyan's exclusive interview to EuroNews, 10.11.2008 - <http://www.president.am/events/press/eng/?id=17>

²⁵⁹ Gul accepts Sargsyan's invitation, 04.09.2008, Panarmenian.net

նաև բուրբակաճ բարձրամակարդակ պատվիրակության այցը Հայաստան: Ինչպես հետագայում հայտարարեց Ա. Գյուլը, այդ այցը «կտրեց հոգեբանական արգելքը Կովկասում: Հրավիրելով ինձ խաղին՝ Մարգայանը կարևոր քայլ կատարեց: Եթե ես չընդունեի հրավերը, ողջ աշխարհը կասեր, թե ես համարձակություն չունեցա դա անելու»:²⁶⁰ Մի քանի օր անց Ա. Գյուլը պաշտոնապես հրավիրեց իր հայ գործընկերոջը Թուրքիա՝ դիտելու ֆուտբոլային թիմերի պատասխան հանդիպումը:

Հայկական կողմը ևս պատմական գնահատեց այդ այցը, որը կարող է լուրջ խթան լինել երկկողմ հարաբերությունների կարգավորման համար, ինչն իր հերթին կնպաստի տարածաշրջանում վստահության, կայունության, անվտանգության և համագործակցության հաստատմանը: Է. Նալբանդյանի խոսքերով, Հայաստանի և Թուրքիայի նախագահների ու արտգործնախարարների հանդիպումներից հետո հայկական կողմի մոտ տպավորություն է ստեղծվել, որ մույն ցանկությունն ունեն նաև Թուրքիայի ղեկավարները:²⁶¹

Հայ-բուրբակաճ հանդիպումների օրակարգային հարցերից մեկն էլ ռուս-վրացական հակամարտությունից անմիջապես հետո Թուրքիայի նախաձեռնած «Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմն» էր: Ինչպես հայտնի է, Հայաստանը մշտապես դրական է արձագանքել տարածաշրջանում վստահության մթնոլորտի վերականգնմանն ու համագործակցության զարգացմանն ուղղված տարատեսակ նախաձեռնություններին: Պաշտոնական երևանն իր այս դիրքորոշումը վերահաստատեց նաև բուրբ բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ Թուրքիայի արտգործնախարարի ու նախագահի՝ Երևան կատարած այցի ժամանակ, միաժամանակ, կարևորելով այդ նախաձեռնության ձևաչափի և սկզբունքների հստակեցման անհրաժեշտությունը: Տարածաշրջանային համագործակցության՝ որպես արդի մարտահրավերներին արդյունավետ դիմակայելու հիմնական ձևի անհրաժեշտության մասին Ս. Մարգայանը համոզեց եկավ նաև ՄԱԿ-ի Գլխավոր վերահսկողի 63-րդ նստաշրջանում, նշելով, որ դրա համար անհրաժեշտ են բաց սահմաններ, խաչաձևվող հաղորդակցման ուղիներ, փոխկապակցված տնտեսական համակարգեր:²⁶² Այս համատեքստում նա կրկին կարևորեց հայ-բուր-

բակաճ երկխոսությունը՝ որպես երկկողմ հարաբերություններում առկա խնդիրների կարգավորման միջոց:

Մյուս կարևոր բաղադրիչը, ինչպես նշվեց վերևում, սահմանների բացման խնդիրն է, որի հարցում, սակայն, կողմերի մոտեցումները տարբերվում են: Ինչպես հայտնի է, մինչ վերջերս հարաբերությունների նորմալացման համար Թուրքիան առաջ էր քաշում մի շարք նախապայմաններ՝ ԼՂ հիմնահարցի կարգավորումն աղբրեջանմապատ դիտանկյունից, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի դադարեցումը և Հայաստանի կողմից 1921թ. Կարսի պայմանագրի միակողմանի ճանաչումը: Կոնկրետ սահմանների բացման հարցում այսօր էլ բուրբակաճ բարձրաստիճան պաշտոնյաները պնդում են ԼՂ հիմնախնդրի կարգավորման հետ դրա կապը. սահմանը կարող է բացվել միայն ԼՂ հիմնախնդրի կարգավորման դեպքում: Թեև այս հարցում ևս նկատելի է որոշակի տեղաշարժ, սակայն, դա դեռևս վաղ է առաջընթաց համարել: Հայաստանը մշտապես պնդում է, որ ԼՂ հիմնախնդիրը և հայ-բուրբակաճ երկխոսությունը չի կարելի փոխկապակցել: Բայց այստեղ առաջնային խնդիրներից մեկը կապված է բուրբ-աղբրեջանական ռազմավարական դաշինքի պահպանման և «մեկ ժողովուրդ - երկու պետություն» սկզբունքի պաշտպանության հետ: Հայտնի է, որ հայ-բուրբակաճ երկխոսության մեկնարկը խիստ բացասական արձագանք գտավ Աղբրեջանում, որին «հանգստացնելու» համար բուրբ մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ սկսեցին հանդես գալ աղբրեջանմապատ հայտարարություններով: Ա. Գյուլի երևան այցից հետո մամուլում տեղեկություններ տարածվեցին, իբր Հայաստանի նախագահն իր համաձայնությունն է տվել այդ հիմնախնդրի կարգավորման հարցում Թուրքիայի միջնորդությանը: Ավելին, Հայաստանը խոստացել է անգամ ազատել Աղբրեջանի «բռնագավաթում» տարածքները:²⁶³ Ինչպես հայտարարեց Ս. Մարգայանը, նա իսկապես ուրախությամբ ընդունեց Ա. Գյուլի առաջարկն անհրաժեշտության դեպքում հայ-աղբրեջանական հարաբերությունների կարգավորմանն աջակցելու հարցում: «Ցանկացած քայլ, որը կարող է օգնել ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին հարցի կարգավորման գործում, պետք է միայն դրական գնահատվի»:²⁶⁴ Սակայն նա ընդգծեց, որ ԼՂ հիմնախնդրի կարգավորման միակ միջնորդներ հանդիսանում են ԵԱՀԿ ՄԽ համանախագահները, և Թուրքիայի դեպքում կարող է խոսք գնալ ոչ թե միջ-

²⁶⁰ Gul: my visit broke psychological barriers in Caucasus, 08.09.2008, Panarmenian.net

²⁶¹ Gul's visit prompted Turkey wants normalization with Armenia, 09.09.2008, Panarmenian.net

²⁶² ՀՀ նախագահ. Գյուլի հետ հանդիպմանը մենք համաձայնեցինք առկա խնդիրները չբողնել գալիք սերունդներին, 26.09.2008, Panarmenian.net

²⁶³ Արդուլյահ Գյուլը մտադիր է միջնորդ դառնալ Հայաստանի և Աղբրեջանի նախագահների միջև, 08.09.2008, Panarmenian.net

²⁶⁴ Армения позитивно воспринимает готовность Турции содействовать урегулированию отношений между Баку и Ереваном - <http://www.regnum.ru/news/1054508.html>

նորություն, այ դրան աջակցելու մասին՝ Հայաստանի հետ սահմանը բացելու և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու միջոցով.²⁶⁵ Այս հարցում պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ Թուրքիան կարող է օգտագործել իր ազդեցությունն Ադրբեջանի վրա՝ նրա դիրքորոշումը ԼՂ հարցում առավել ճկուն դարձնելու նպատակով:

Չնայած այս ամենին, թուրքական կողմը շարունակում է պնդել, որ ԼՂ հիմնահարցը սերտորեն կապված է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հետ: Այս առումով հատկապես նշանակալի է Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի հայտարարությունն այն մասին, որ Թուրքիան պայքարելու է «ադրբեջանական հողի վրա խաղաղության հասնելու, բոլոր փախստականներին իրենց հողերը վերադարձնելու համար»:²⁶⁶ Նրա պնդմամբ, ընթացող հայ-թուրքական բանակցություններում Թուրքիան առաջին հերթին մտածում է հենց այդ մասին և Ղարաբաղի հարցը կարևորագույնն է նրա համար: Ի հավելում, Թուրքիայի նախագահը հայտարարեց, որ այն բանից հետո, երբ Հայաստանը խորհուրդ է տվել Թուրքիային չմիջամտել ԼՂ հիմնահարցին, բանակցային գործընթացն արգելակվել է:

Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը ևս հանդիսանում է երկկողմ հարաբերությունների կարևորագույն խնդիրը: Չնայած պաշտոնական Անկարան շարունակում է հերքել այդ փաստը և պարբերաբար հայտարարում, որ այդ հարցում իր դիրքորոշումը չի փոխվի, որոշակի տեղաշարժ նկատելի է նաև այս հարցում, մասնավորապես, հասարակական և վերլուծական շրջանակներում: Այս հարցը մեծ արձագանք ստացավ հատկապես հայ-թուրքական «ճանապարհային քարտեզի» մասին հայտարարությունից հետո, երբ ապրիլի 24-ին ԱՄՆ նորընտիր նախագահ Բ. Օբաման իր ամենամյա ելույթում օգտագործեց Հայոց Ցեղասպանությանը հայերենում համարժեք «Մեծ Եղեռն» բառերը: Հայաստանում այս ձևակերպումը համարվեց ոչ այնքան գոհացուցիչ, հատկապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ նախագահը, ինչպես և պետք էր ակնկալել, հղում կատարեց 2 օր առաջ արված հայ-թուրք-չվեյցարական համատեղ հայտարարությանը: Այդուհանդերձ, Թուրքիայում անգամ այս ձևակերպումը դժգոհության ալիք բարձրացրեց: ԱԳ նախարար Ա. Բարաջանի խոսքերով, ԱՄՆ նախագահի ուղերձը ներքաղաքական խնդիրների արդյունք էր, և նրա որոշ արտահայտություններ 1915թ. իրադարձությունների մասին անընդունելի են Թուրքիայի համար: Նա, իբր, իր հայտարարության

²⁶⁵ Exclusive interview of President Serzh Sargsyan to the Public HI TV channel, 25.10.2008 - <http://www.president.am/events/press/eng/?year=2008&id=16>

²⁶⁶ Erdogan: Ankara will achieve peace in the region, 13.05.2009, Panarmenian.net

մեջ անտեսել է այն փաստը, որ 1915թ. իրադարձությունների ժամանակ նաև թուրքեր են զոհվել: Ավելին, «եթե ԱՄՆ-ի նախագահը ցանկանում էր կասկածի տակ դնել Հայաստանի և Թուրքիայի միջև պատմությունն ուսումնասիրող հանձնաժողովի ստեղծման հարցը, ապա Թուրքիայի ԱԳ-ն արդեն հայտարարել է, որ անընդունելի է համարում դա»:²⁶⁷

Հայ-թուրքական հարաբերությունների զարգացման մեջ նոր էջ բացեց 2009թ. ապրիլի 22-ին հրապարակված հայ-թուրք-չվեյցարական համատեղ հայտարարությունը հարաբերությունների կարգավորման «ճանապարհային քարտեզի» մասին: Բնականաբար այս համաձայնությունը դեռևս պայմանագիր չէ և իրավական-պարտադրող ուժ չունի: Այն ընդամենը մտադրությունների մասին հայտարարություն է, երկկողմ հարաբերությունների կարգավորմանն ուղղված հետագա գործողությունների կողմնորոշիչ, ուղեցույց, որը պետք է բովանդակի նաև կոնկրետ գործողությունների ժամանակացույց:²⁶⁸ Քիչ անց թուրքական մամուլում տեղեկություն հայտնվեց նաև համաձայնության րովանդակության մասին, ըստ որի, համաձայնագիրը բաղկացած է հինգ կետից: Համաձայն թուրքական SABAH թերթի հրապարակման, առաջին պայմանը հանդիսանում է 1921թ. Կարսի պայմանագրի ճանաչումը Հայաստանի կողմից: Այնուհետև դրան հաջորդում է սահմանի բացումը և պայմանագրի կնքումը, ապա՝ դեպատմությունների բացում, սկզբում՝ Վրաստանում, ապա՝ Երևանում և Անկարայում, երկու երկրների խորհրդարանների կողմից «ճանապարհային քարտեզին» հավանություն տալը և պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը:²⁶⁹ Պաշտոնական Երևանն անմիջապես հերքեց այս տեղեկությունը: Ներքաղաքական դաշտում շահարկումների տեղիք տված մտահատիպ տրեքի վերաբերյալ համոզես եկավ նաև նախագահ Ս. Մարգարյանը: Նա փաստահեցրեց, որ առաջիկայում հանրությունը կիրազեկվի փաստաթղթի բովանդակության մասին: Միաժամանակ նա ընդգծեց, որ հայ-թուրքական երկխոսության շրջանակներում Ադրբեջանի կամ ԼՂ-ի թեման երբեք չի շոշափվել: «Հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը կարող է, և շատ հնարավոր է՝ դրական ազդեցություն ունենա դարաբաղյան խնդրի կարգավորման վրա, բայց պայման լինել չի կարող»:²⁷⁰ Ավելին, ՌԴ փոխվարչապետ Ս. Իվանովի

²⁶⁷ Turkey doesn't give up idea of commission of historians, 30.04.2009, Panarmenian.net

²⁶⁸ Հարկ է նկատել, «ճանապարհային քարտեզներ» ընդունվել են աշխարհի տարբեր հատվածներում հակաադրբեջանական կարգավորման համար, սակայն դրանցից ոչ ոքում են իրականություն դարձել կամ հասել իրենց նպատակին:

²⁶⁹ Turkish-Armenian agreement made public?, 24.04.2009, Panarmenian.net

²⁷⁰ RA President: Karabakh was never mentioned in talks with Turkey, 27.04.2009, Panarmenian.net

հետ հանդիպման ժամանակ նա հայտարարեց, որ Թուրքիայի կողմից ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացին որևէ միջամտության փորձ կարող է միայն բացասաբար անդրադառնալ արցախյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի վրա: Նրա խոսքերով, համատեղ հայտարարության հրապարակումը Ցեղասպանության գոհերի հիշատակի օրվա նախաշեմին բոլոր տվեց, որպեսզի այդ թեման դառնա առավել ինտենսիվ լուսաբանման առարկա, քան նախկինում: «Այն, որ հայտարարությունն արվեց ապրիլի 24-ի նախաշեմին, վկայեց, որ Թուրքիան էլ ընդունում է այդ օրվա խորհուրդն ու նշանակությունը»:²⁷¹

Ինչպես հայտնի է, այս հայտարարությունը միանշանակ արձագանք չստացավ Թուրքիայում և Ադրբեջանում, իսկ Հայաստանում անգամ առիթ հանդիսացավ ներքաղաքական վերադասավորումների համար: Հայաստանի դեպքում խնդիրը կապված էր ոչ միայն այդ համաձայնության հնարավոր բովանդակության, այլև այն հանգամանքի հետ, որ համատեղ հայտարարությունն արվեց Հայոց Ցեղասպանության գոհերի հիշատակման նախօրեին:

Թուրքիայում, հաշվի առնելով Ադրբեջանի «գուսպ» բացասական վերաբերմունքն ընդհանրապես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, սկսեցին կարծիքներ շրջանառվել, որ իրականում «ճանապարհային քարտեզը» ոչ մի կերպ չբարելավեց հայ-թուրքական հարաբերությունները, փոխարենը հարվածեց ադրբեջանա-թուրքական հարաբերությունների:²⁷² Ի պատասխան նմանատիպ մեղադրանքների, Թուրքիայի նախագահը հայտարարեց, որ թեև յուրաքանչյուր երկիր անկախ է կառուցում իր քաղաքականությունը, սովորաբար Թուրքիայի դիվանագիտությունը Հայաստանի հարցում և՛ Թուրքիայի համար է, և՛ Ադրբեջանի, ու կգա ժամանակը, երբ բոլորը հավանություն կտան այս քաղաքականությանը:²⁷³ Իսկ Թուրքիայի նորանշանակ արտգործնախարար Ա. Գավուլօղլուն հունիսին հայտարարեց, որ Հայաստանի հետ բանակցությունները շարունակվում են առանց արգելակման:

Ինչպես հայտնի է, Ադրբեջանի դժգոհությունն արտահայտվեց նաև ադրբեջանա-թուրքական էներգետիկ համագործակցության ոլորտում, թեև Թուրքիայի էներգետիկայի նախարար Թ. Յըլլըզը հայտարարում էր, որ հայ-թուր-

²⁷¹ In Armenian-Turkish reconciliation preconditions are ruled out, 16.05.2009, Panarmenian.net

²⁷² Այդպիսի կարծիք, մասնավորապես, հայտնել է Թուրքիայի ընդդիմադիր Ազգային-հանրասպետական կուսակցության առաջնորդ Գ. Բայբալը: Turkish opposition accuses Prime Minister of treacherous attitude to Azerbaijan, 29.04.2009, Panarmenian.net

²⁷³ Turkey informs Azerbaijan of its policy in Caucasus, 29.04.2009, Panarmenian.net

քական հարաբերությունների ջերմացումն արգելք չի դառնա Ադրբեջանի հետ էներգետիկ նախագծերի համար, այդ թվում՝ Nabucco գազատարի հարցում: Ավելին, էներգետիկան կատալիզատորի դեր է խաղալու Ադրբեջանի, Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման գործում:²⁷⁴ Փոխարենն Ադրբեջանի ԱԳՆ մամուլ խոսնակ է. «Պոլոխովի կարծիքով, թեև «ճանապարհային քարտեզը» Թուրքիայի և Հայաստանի գործն է, նրանց միջև հարաբերությունների հաստատման գործընթացը պետք է ընթանա Ադրբեջանի տարածքից հայկական զինված ուժերի դուրսբերման հարցին զուգահեռ»:²⁷⁵ Միաժամանակ, ինչպես նշել է Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը, Ադրբեջանը ցանկանում է իմանալ, արդյոք ԼՂ հարցը դուրս է մնացել հայ-թուրքական մերձեցման գործընթացից: «Սա պարզ հարց է, որի համար մենք նույնքան պարզ պատասխան ենք ակնկալում»:²⁷⁶

Այստեղ հարկ է անդրադառնալ նաև տարածաշրջանային գործընթացների վրա որոշիչ ազդեցություն ունեցող արտաքին դերակատարների՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի և ԵՄ-ի ու մյուս եվրոպական կառույցների դիրքորոշմանը: Այսպես, ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի և Եվրասիայի գծով օգնականի տեղակալ Մ. Բրայզայի գնահատմամբ, թեև Ս. Սարգսյանի և Ա. Գյուլի հանդիպումը չլուծեց առկա խնդիրները, սակայն նոր մթնոլորտ ձևավորեց երկու երկրների հարաբերություններում:²⁷⁷ Միաժամանակ, ըստ նրա, երկկողմ հարաբերությունների կարգավորումը պետք է դիտարկել ԼՂ հիմնախնդրի կարգավորումից անկախ, թեև դրանք ընթանում են զուգահեռ: ԱՄՆ-ը ողջունեցին նաև «ճանապարհային քարտեզի» մասին հայտարարությունը՝ պնդելով, որ «Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունները պետք է հաստատվեն առանց նախապայմանների, խելամիտ ժամանակահատվածում»:²⁷⁸

Ռուսական կողմը բավական պրագմատիկ արձագանքեց այս փոփոխություններին: Սահմանի բացման հավանականության աճին ի պատասխան, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ը որոշում կայացրեց Լոզիստիկայի միջազգային կենտրոնի ստեղծման մասին, որն արդեն արժանացել է «Ռուսական երկաթգծեր» ԲԲԸ հավանությանը: Չուշացավ նաև պաշտոնական Մոսկվայի դրական արձագանքը հայ-թուրքական հարաբերությունների դրական

²⁷⁴ Armenian-Turkish relations not to hamper implementation of energy projects with Azerbaijan, 05.05.2009, Panarmenian.net

²⁷⁵ Baku avoids commenting on Armenian-Turkish agreement, 23.04.2009, Panarmenian.net

²⁷⁶ Azerbaijan doesn't meddle in other countries' affairs, 29.04.2009, Panarmenian.net

²⁷⁷ Sargsyan-Gul meeting gave hope that a long-overdue thaw has begun, Bryza says, 11.09.2008, Panarmenian.net

²⁷⁸ U.S. hails Armenian-Turkish agreement to normalize ties, 23.04.2009, Panarmenian.net

տեղաշարժին, որը կարող է բարերար ազդեցություն ունենալ ԼՂ հիմնախնդրի կարգավորման վրա:²⁷⁹

Ի սկզբանե ԵՄ-ն իր պատրաստակամությունն է հայտնել՝ աջակցելու հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը և ողջունել համատեղ հայտարարությունը: Միաժամանակ, վերջին շրջանում նկատվող «դադարը» Հարավային Կովկասում ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ Պ. Սեմներին գնահատեց որպես Թուրքիայի «մարտավարական հետքայլ»՝ պայմանավորված երկրի ներսում կոշտ արձագանքներով: Նա նաև հույս հայտնեց, որ դա ժամանակավոր դադար կլինի և քննարկումները կշարունակվեն:²⁸⁰

Գրական արձագանքներ հնչեցին նաև ԵՄ-ի անդամ-երկրներից: Ֆրանսիայի նախագահ Ն. Սարկոզին «խիզախ և պատմական քայլ» որակեց Ա. Գյուլի հայաստանյան այցը²⁸¹, իսկ արտգործնախարար Բ. Քուշները, կարևորելով Հարավային Կովկասի կայունությունն ու անվտանգությունը ԵՄ-ի և Ֆրանսիայի համար, անհրաժեշտ համարեց հայ-թուրքական հաշտեցումն օգտագործել ԼՂ հիմնախնդրի շուրջ ընթացող բանակցությունները դյուրացնելու համար:²⁸² Հարավային Կովկասում Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Բ. Ֆոլլը ևս ողջունեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, միաժամանակ, ընդգծելով, որ չնայած Թուրքիան տարածաշրջանի առանցքային և կարևոր երկիր է, նա չի կարող միջնորդ լինել ԼՂ հիմնահարցում:²⁸³

Վերջին խնդրի հետ կապված տեղին է ներկայացնել նաև հենց ԵԱՀԿ ՄԽ համանախագահների դիրքորոշումը: Ընդհանուր առմամբ, նրանք ևս դրական են համարում ցանկացած աջակցություն ԼՂ հիմնախնդրի կարգավորմանը, սակայն ընդգծում են, որ միջնորդական միակ հարթակը մնում է ԵԱՀԿ ՄԽ-ը, իսկ միջնորդներ՝ եռանախագահները: Նրանք ևս գտնում են, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը կարող է դրականորեն անդադառնալ ԼՂ հիմնախնդրի կարգավորմանը, սակայն մշտապես զգուշացնում են, որ այդ գործընթացները չի կարելի կապակցել, որ դրանք զուգահեռ զարգացող գործընթացներ են:²⁸⁴ Յու. Մերվլակովի խոսքերով, եթե նախկինում Թուրքիան հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում առաջ-

խաղացումը պայմանավորում էր ԼՂ հակամարտության կարգավորման գործում «զգալի բեկմամբ», ապա, «ճանապարհային քարտեզի» վերաբերյալ համատեղ հայտարարությունից պետք է ենթադրել, որ այլևս այդպիսի նախապայմաններ չկան: «Համանախագահների տեսանկյունից, գլխավորն այն է, որ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացը ոչ մի դեպքում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման պատանդը չդառնա»:²⁸⁵

Եթե ղեկավար շրջանակներում հայ-թուրքական երկխոսությունը գերազանցապես դրական արձագանքների արժանացավ, ապա նույնը չի կարելի ասել քաղաքական և վերլուծական շրջանակների մասին: Ինչպես հայտնի է, Հայ Յեղափոխական Դաշնակցությունը բողոքի ցույցեր կազմակերպեց Ա. Գյուլի երևանյան այցի դեմ: «Ճանապարհային քարտեզի» մասին համատեղ հայտարարությունը սուր քննադատության արժանացավ ՀՀԳԻ-ի տարածած հաղորդագրության մեջ, որում նշվում էր, թե Հայաստանի և Թուրքիայի միջև բարդորացիական հարաբերություններ կարող են հաստատվել միայն Անկարայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և հայ ժողովրդի ոսոնահարված իրավունքները վերականգնելու դեպքում: «Մերձեցման առաջին քայլերից պետք է լինի Թուրքիայի կողմից Հայաստանի շրջափակման վերացնելը և առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելը»:²⁸⁶ Կ. Մանույանի խոսքերով, ՀՀ ԱԳ-ն, ստորագրելով ոչինչ չպարունակող փաստաթուղթ, վնաս է հասցրել հայկական շահերին հենց նրանով, որ այն ստորագրվեց ապրիլի 24-ի շեմին:²⁸⁷ Նրանց համոզմամբ, հենց այդ համատեղ հայտարարությունն էլ պատրվակ հանդիսացավ ԱՄՆ նախագահի համար, որպեսզի նա իր ելույթում չօգտագործի «ցեղասպանություն» բառը: Այս ամենը գնահատելով որպես երկրի արտաքին քաղաքական կուրսի փոփոխություն, որի հետ կուսակցությունն ունի ընդգծված տարածայնություններ, ՀՀԳԻ-ը, մի քանի օր տևած ներկուսակցական քննարկումներից և նախագահ Ս. Սարգսյանի հետ հանդիպումից հետո, հայտարարություն տարածեց իշխող կուլիցիայից դուրս գալու մասին: ՀՀԳԻ ԳՄ ներկայացուցիչ Ա. Ռուստամյանն անգամ հայտարարեց, որ իրենց չեն գոհացրել նախագահի հավաստիացումներն այն մասին, որ Հայաստանը թույլ չի տա հայ-թուրքական հարաբերությունները կապել ԼՂ խնդրի հետ, կասկածի տակ դնել Յեղասպանության հար-

²⁷⁹ Moscow approves of Armenian Turkish relations, 29.04.2009, Panarmenian.net

²⁸⁰ Peter Semneby: Turkey has taken a "tactical step backwards", 18/06/2009, Panorama.am

²⁸¹ French President welcomed political courage of Gul and Sargsyan, 08.09.2008, <http://panarmenian.net/news/eng/?nid=26967&folder=2&attr=33&page=2>

²⁸² Kouchner: Armenian-Turkish dialog vital for peace in Caucasus, 24.04.2009, Panarmenian.net

²⁸³ Turkey cannot be mediator in Karabakh settlement process, 14.05.2009, Panarmenian.net

²⁸⁴ OSCE MG: The whole region would benefit from Armenian-Turkish ties normalization, 27.04.2009, Panarmenian.net

²⁸⁵ Nagorno Karabakh conflict shouldn't be hostage of Armenian-Turkish relations, 11.05.2009, Panarmenian.net

²⁸⁶ Dashnaksutuyon condemns Armenian-Turkish joint statement, 23.04.2009, Panarmenian.net

²⁸⁷ Turkish claims cause disadvantages to Armenia, 23.04.2009, Panarmenian.net

ցը:²⁸⁸ ՀՅԴ կարծիքով, Հայաստանի իշխանությունները կարող են անել ռիսկային քայլեր, որոնք կունենան բացասական հետևանքներ: Թուրքական կողմը պատրաստ չէ առանց նախապայմանների հարաբերություններ հաստատել, նա դնում է առնվազն երկու պայման՝ Արցախի խնդրի արդրեջանանպաստ կարգավորում և Հայոց Յեղասպանության ճանաչման կատեգորիա: Նրանք պնդում են, որ Հայաստանը կարող է հայտարարել, որ Թուրքիան պատրաստ չէ առանց նախապայմանների բանակցություններ վարել և դուրս գալ բանակցություններից:

Համատեղ հայտարարությունը մտահոգություն և դժգոհություն առաջ բերեց նաև ընդդիմադիր «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչների մոտ, կապված, մասնավորապես, հրապարակման օրվա, դրա շուրջ երկկողմ քննարկումների գաղտնիության և Թուրքիայի կողմից հակահայկական քաղաքականության վարման հետ: Կուսակցությունը հանդես եկավ «ճանապարհային քարտեզի» և «երկու երկրների հարաբերությունների կարգավորման համապարփակ շրջանակի» դրույթներն անհապաղ գաղտնագործելու եւ երկու երկրների հասարակություններին ներկայացնելու պահանջով:²⁸⁹ Կուսակցության մտահոգությունները չեն փարատվել անգամ ՀՀ արտգործնախարարի հետ ԱԺ-ում կազմակերպված հանդիպումից հետո:

«Ճանապարհային քարտեզի» բովանդակության անհապաղ հրապարակման պահանջով հանդես եկավ նաև արմատական ընդդիմությունը ներկայացնող Հայ ազգային կոնգրեսը,²⁹⁰ որի ներկայացուցիչների կարծիքով, Հայաստանն ընկել է Թուրքիայի պատրաստած դիվանագիտական թակարդի մեջ: չնայած հայտարարվում է, որ ԼՂ հիմնախնդրի և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացները զուգահեռ են, այժմ դրանք ինչ-ինչ պատճառներով խաչվել են: Քաղաքական այս հոսանքի որոշ ներկայացուցիչներ անգամ գտնում են, որ սահմանի բացումից Հայաստանն իրականում կտուժի, քանզի շատ կարճ ժամանակամիջոցում Թուրքիան կնվաճի Հայաստանի ներքին շուկան և դուրս կնդի տեղական արտահանողներին:²⁹¹

Կռալիցիոն մյուս կուսակցությունները հանդես եկան նախագահ Ս. Սարգսյանի նախաձեռնության աջակցությամբ: Այսպես, «Քարգաված Հայաստան» խմբակցության քարտուղար Ա. Մաֆարյանի համոզմամբ, Հայաստանի ներկա իշխանությունները չեն գնա Թուրքիայի հանրահայտ երեք նա-

խապայմաններին ընդառայ: Սակայն նա նաև գտնում է, որ սահմանի բացումը Հայաստանի իշխանությունների առջև լուրջ խնդիրներ ու մարտահրավերներ կծառայի: Մասնավորապես, կուսակցությունը հանդես է գալիս հոգուտ մինչ սահմանի բացումն ազգային անվտանգության, ներքին գործերի, սլաշտպանության, սահմանապահ գործերի, մաքսային և հարկային ծառայությունների, դատաիրավական համակարգի ոլորտներում բարեփոխումներ իրականացնելուն, որպեսզի երկիրը լիովին պատրաստ լինի բուրբ քաղաքացիների գանգվածային հոսքին:²⁹²

Անհրաժեշտ է նաև անդրադարձ կատարել այս հիմնահարցի շրջանակներում կարևոր նշանակություն ունեցող սփյուռքահայ կազմակերպությունների արձագանքներին, որոնք ևս միանշանակ չեն: Այսպես, Ամերիկայի Հայկական Համագումարը ողջունեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը և հույս հայտնեց, որ երկխոսության շարունակման դեպքում կողմերը կգտնեն առկա խնդիրների լուծումները: ԱՀՀ-ը նաև հանդես է գալիս հոգուտ սահմանի բացման՝ հաշվի առնելով, բնականաբար, դրա բացասական և դրական կողմերը, ողջունեց նաև համատեղ հայտարարությունը՝ հույս հայտնելով, որ, այդուհանդերձ, Հայոց Ցեղասպանության ճանաչման հարցը չի դառնա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գերին:²⁹³

Հայ-թուրքական երկխոսությունը ողջունեցին նաև Ռուսաստանի հայերի միությունն ու Համաշխարհային Հայկական Կոնգրեսը: Միևնույն ժամանակ, այդ կառույցներն ընդգծում են իրենց բացասական վերաբերմունքը հայ-թուրքական հարաբերությունների և ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացների փոխկապակցման միտումների նկատմամբ՝ պնդելով, որ Հայոց Ցեղասպանության հարցը չի կարող լինել սակարկության առարկա:²⁹⁴

Փոխարենը Ռուսաստանի ջավախահայության ներկայացուցիչները հանդես եկան համատեղ հայտարարության քննադատությամբ, գտնելով, որ ապրիլի 24-ի նախաշեմին հրապարակված այդ փաստաթուղթը հակասում է հայության շահերին, քանզի Թուրքիայի ղեկավար շրջանակները շարունակում են հանդես գալ ԼՂ խնդրի շուրջ հայտարարություններով և վարել հակահայկական քաղաքականություն:²⁹⁵

²⁸⁸ Dashnaksutyun entered the Opposition, 27.04.2009, Panarmenian.net

²⁸⁹ Heritage outraged over joint Turkish-Armenian statement, 25.04.2009, Panarmenian.net

²⁹⁰ ANC demands publication of Armenian-Turkish route map, 24.04.2009, Panarmenian.net

²⁹¹ Armenian-Turkish ties normalization to curtail production volumes in Armenia, 15.06.2009, Panarmenian.net

²⁹² «Քարգաված Հայաստան» կուսակցությունն աջակցում է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանին, 27.04.2009, Panarmenian.net

²⁹³ AAA commends RA for normalizing relations with Turkey, 27.04.2009, Panarmenian.net

²⁹⁴ Armenians all over the world to elaborate joint Genocide recognition plan, 25.05.2009, Panarmenian.net

²⁹⁵ Armenian-Turkish agreement damages Armenia's interests, 27.04.2009, Panarmenian.net

Հայաստանյան, թուրքական և ադրբեջանական վերլուծական շրջանակներում ևս չկա միասնական մոտեցում հայ-թուրքական «ֆուտուրային դիվանագիտության» և, մասնավորապես, համատեղ հայտարարության վերաբերյալ: 2009թ. մայիսին հրապարակվեցին Genar թուրքական ընկերության սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, ըստ որոնց, Թուրքիայի քաղաքացիների 67,6%-ը դեմ է արտահայտվել հայ-թուրքական սահմանի բացմանն ու Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և միայն 32,4%-ն է կողմ է նման առաջընթացին հայ-թուրքական հարաբերություններում:²⁹⁶ Միջազգային հարաբերությունների և ռազմավարական հետազոտությունների կենտրոնի ղեկավար Ս. Օհանի կարծիքով, «ճանապարհային քարտեզի» շուրջ պայմանավորվածությունը ներառում է ոչ միայն սահմանի բացման, այլև ԼՂ հակամարտության կարգավորման հարցը: Նա համոզված է, որ այդ համաձայնությունը ձեռք է բերվել ԱՄՆ-ի ճնշման տակ, քանզի Բ. Օբամային հարկավոր էր, որպեսզի Հայաստանը և Թուրքիան համաձայնության գային մինչև ապրիլի 24-ը, որպեսզի նա ստիպված չլիներ իր ելույթում օգտագործել «ցեղասպանություն» բառը, ինչը պետք էր ակնկալել նրա նախընտրական խոստումներից:²⁹⁷

Եթե թուրք պոպուլիստ Բ. Արասը համոզված է, որ հայ-թուրքական հարաբերությունները կարող են կարգավորվել նաև առանց ԼՂ հակամարտության կարգավորման²⁹⁸, ապա ադրբեջանցի վերլուծաբան Ռ. Ադաևի համոզմամբ, քանի դեռ Թուրքիան և Ադրբեջանը միասին չըջափակել էին Հայաստանը, նրանց հարաբերություններում ամեն ինչ կարգին էր, քայց այժմ Թուրքիայի ցանկությունը՝ կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ, լուրջ տարածայնություններ է առաջացրել նրանց մեջ: Ըստ նրա, Թուրքիան պետք է մինչև վերջ տաներ այս գործը՝ ստիպելով Հայաստանին փոխել իր դիրքորոշումը ԼՂ հակամարտության հարցում:²⁹⁹ Հայ-թուրքական սահմանի բացման նախաձեռնությունները կարող են Ադրբեջանին զրկել ԼՂ հակամարտության շուրջ բանակցություններում հաղթաթղթից, և ստիպում են պաշտոնական Բաքվին գտնել Երևանի վրա ազդեցության լրացուցիչ լծակներ:

²⁹⁶ Majority of Turks are against opening of Armenian-Turkish border, 11.05.2009, Panarmenian.net

²⁹⁷ Washington needed Armenia and Turkey to reach agreement before Apr. 24, 29.04.2009, Panarmenian.net

²⁹⁸ Normalization of Armenian-Turkish ties is possible without NKR conflict settlement, 28.04.2009, Panarmenian.net

²⁹⁹ Turkey's desire to normalize ties with Armenia arouses controversies in Baku, 29.04.2009, Panarmenian.net

ԱՊՀ երկրների ինստիտուտի Կովկասի բաժնի ղեկավար Մ. Ալեքսանդրովի գնահատմամբ, ներկա պահին Հայաստանի համար կենսական նշանակություն ունի Թուրքիայի հետ հարաբերությունների և բեռների տեղափոխման համար անընդհատ միջանցքի վերականգնումը: Բայց քանզի դեռևս լուծված չեն հայ-թուրքական հարաբերությունների երկու հիմնական հարցերը՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և ԼՂ-ին հարող շրջաններից հայկական զորքերի դուրսբերման Թուրքիայի պահանջը, անհրաժեշտ է փոխընդունելի որոշում, այն է՝ Հայաստանը չի հրաժարվում Հայոց ցեղասպանության ճանաչումից, բայց դադարում է այն առաջադրել միջազգային հրապարակում, իսկ Թուրքիան, ի պատասխան, չի պնդելու ԼՂ-ից զորքերի դուրսբերման վրա: «Հայաստանը պետք է ընտրություն կատարի տնտեսական արգելափակման և Յեղոսպանության ճանաչման միջև»:³⁰⁰

Ա. Արեշևի կարծիքով, հայ-թուրքական համատեղ հայտարարությունը իզուր չէր հայտնվել ապրիլի 24-ի նախօրյակին, պատահականություն չէր նաև այն, որ ԱՄՆ-ը շտապեցին ողջունել այդ հայտարարությունը: Վերլուծաբանը կասկածանքով է վերաբերում «ճանապարհային քարտեզի»՝ Հայաստանում և Թուրքիայում բարձր մակարդակով համաձայնեցված փաստաթղթի գոյությանը: Այս համատեքստում նա առանցքային է համարում հայ-թուրքական հարաբերությունների նորմավորման և ԼՂ հիմնախնդրի կարգավորման խնդիրների միմյանցից անկախ քննարկումը, այլապես դժվար թե ընդհանրապես հնարավոր լինի խոսել առաջընթացի մասին:³⁰¹ Ավելին, «ճանապարհային քարտեզի» իրագործումը շատ բարդ է լինելու ԼՂ-ի հարցում Բաքվի դիրքորոշման պատճառով, քանզի թուրքական դիվանագիտությունը կապված է Ադրբեջանի հետ:

Ս. Մարկեդոնովի կարծիքով, եթե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գինը ԼՂ-ն է, ապա Հայաստանի նախագահի «ճոր» մտածելակերպը կարող է փոխել «հին»: Հետևարար, ԼՂ հարցը պետք է անջատել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումից, անկախ այն հանգամանքից, որ Թուրքիան հենց այդ հակամարտության պատճառով է փակել սահմանը և սատարում է Ադրբեջանին:³⁰²

³⁰⁰ Mikhail Alexandrov: Armenia has to choose between economic blockade and Genocide recognition, 09.09.2008, Panarmenian.net

³⁰¹ Yerevan and Ankara have not yet agreed on a joint route map, 23.04.2009, Panarmenian.net

³⁰² What price Armenia will be asked to pay for opening of border with Turkey? 08.09.2008, Panarmenian.net

Անբրիկյան **Stratfor** վերլուծական կենտրոնի փորձագետների համոզմամբ «ճանապարհային քարտեզի» մասին համատեղ հայտարարությունն անբովանդակալից է և պայմանավորված է ԱՄՆ Պետքեպարտամենտի ճնշմամբ, որը ցանկանում էր, որպեսզի կողմերն այդ հայտարարությամբ հանդես գան ապրիլի 24-ի նախօրեին: Եվ այժմ ԱՄՆ-ն ավելի շատ մանրերկու հնարավորություն ունեն Հայոց Ցեղասպանության հարցում: Համանման հնարավորություն ստացան նաև Հայաստանի և Թուրքիայի ղեկավարները: Ավելին, փորձագետների կարծիքով, չնայած Ցեղասպանության հարցը կարևոր է Հայաստանի համար, հայ պաշտոնյաներն այնքան ամուր չեղան ճանաչման հարցում, որքան ԱՄՆ-ի հայկական լոբբին, որովհետև Հայաստանի ղեկավարությունը ստանում է երկարաժամկետ տնտեսական հեռանկարների մասին Թուրքիայի հետ սահմանի բացման դեպքում: Այդուհանդերձ, համաձայնությունն ու «ճանապարհային քարտեզը» կորոնեն Թուրքիային վերականգնել դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի հետ՝ անգամ առանց ԼՂ հարցի լուծման:³⁰³

Միջազգային ճգնաժամային խմբի փորձագետների համոզմամբ, լավագույնը, որ կարող է անել Թուրքիան ԼՂ հակամարտության կարգավորման համար, հենց Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելն է: Ս. Ֆրեյզերի կարծիքով, դա պետք է ներառի սահմանի բացումը, դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և երկկողմ հանձնաժողովի ստեղծումը բազմաբնույթ հարցերի պատմական կողմը հետազոտելու համար: Մակայն, չնայած սկզբնական լավատեսությանը, Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանն արգելակեց մերձեցման գործընթացը, երբ մայիսի 13-ին Բաքվում հայտարարեցին, որ «սահմանը փակվել է ադրբեջանական ինքնիշխանության հայկական օկուպացիայի պատճառով, և քանի դեռ օկուպացիան պահպանվում է, սահմանը փակ կմնա»:³⁰⁴

Հայաստանյան վերլուծական դաշտը ևս աչքի է ընկնում հակադիր, հաճախ նաև իրարանք մոտեցումներով: ՀՀ ԳԱԱ Արևելազիտության ինստիտուտի տնօրեն **Ռ. Սաֆրաստյանը** գտնում է, որ Թուրքիան չի փոխի իր արտաքին քաղաքականության հիմնասկզբունքները Հայաստանի հարցում: Մյուս կողմից, սակայն, նա իր ազգային շահերը չի զիջի նաև հանուն Ադրբեջանի: Ապրիլի 22-ի համատեղ հայտարարությունը նա գնահատում է որպես «ֆուտբոլային դիվանագիտության» և հայ դիվանագիտության ճիշտ քաղա-

քականության արդյունք, որը պայմանավորված է եղել նաև Անկարայի վրա ԱՄՆ-ի ճնշմամբ: Նրա կարծիքով, այդ համաձայնագրի ստորագրմամբ Թուրքիան հրաժարվեց Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործում մինչ այդ պնդած իր նախապայմաններից: Հենց այդ հանգամանքով է նա բացատրում նաև Ադրբեջանի անհանգստությունը, որ ԼՂ հիմնախնդիրն այլևս հայ-թուրքական հարաբերությունների հաստատման նախապայման չէ: Իսկ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման տրամաբանությանը հակասող՝ Թուրքիայի պաշտոնական շրջանակների կողմից երբեմն արվող հայտարարությունները, թուրքագետի համոզմամբ, միայն ներքին օգտագործման համար են և ուղղված են կառավարող ԱԶԿ-ի վարկանիշի բարձրացմանը:³⁰⁵

Ա. Գոյլի երևանյան այցից հետո հայ-թուրքական հարաբերություններում կտրուկ փոփոխություններ չէր ակնկալում նաև Կովկասի ինստիտուտի տնօրեն **Ա. Իսկանդարյանը**, ում գնահատմամբ, Թուրքիայի «ձախասական» քաղաքականությունն ու պաշտոնական հայտարարությունները պայմանավորված են մի շարք հանգամանքներով: Նախ, նրանք գիտակցում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը, բայց, փորձելով խուսափել միջազգային ճնշումներից, ցանկանում են ցույց տալ, որ դա բարդ խնդիր է: Երկրորդ, նրանք չեն ցանկանում կորցնել Ադրբեջանին՝ իրենց ռազմավարական էքսիկ դաշնակցին: Երրորդ, Թուրքիան գիտակցում է, որ ոչ մի փաստաթղթում ոչ մի կետ չի կարող լինել ԼՂ խնդրի վերաբերյալ, ինչին էլ հետևում է փոխարինող գործոնը՝ հայտարարությունները:³⁰⁶ Ներկայումս երկխոսության մեջ սկսվեց դադարի ավարտը նա կանխատեսում է աշնանը՝ երկու երկրների ֆուտբոլային քիմերի հանդիպման ժամանակ: Այս հարցում նա տեսնում է նաև ԱՄՆ- ճնշումը Թուրքիայի վրա:³⁰⁷

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հ. Դեմոյանի** համոզմամբ, Հայաստանն ու Թուրքիան հարաբերությունների կարգավորման դեպքում պետք է նոր միջպետական պայմանագիր կնքեն, իսկ Կարսի պայմանագրի մասին խոսք լինել չի կարող: Նա ակնկալում է նաև, որ միջպետական համաձայնագրում կամրազովի, որ Թուրքիան պատրաստակամ է վերացնել Հայոց ցեղասպանության հետևանքները: Պատմաբանը կարծում է նաև, որ հայ-թուրքական պատմության իրադարձություններն ուսումնասիրող

³⁰³ Currently US has more chances for maneuvers on Armenian Genocide issue, 24.04.2009, Panarmenian.net

³⁰⁴ ICG: Optimism about normalization of Turkey-Armenia relations faded, 26.05.2009, Panarmenian.net

³⁰⁵ Armenian-Turkish Agreement is a correct diplomacy result, 27.04.2009, Panarmenian.net
³⁰⁶ Alexander Iskandaryan: Armenian-Turkish ties normalization – imitation and game, 02.06.2009, Panarmenian.net

³⁰⁷ Ա. Իսկանդարյանը Թուրքիայի ներքաղաքական կյանքի զարգացումների մասին, 19/06/2009, Panorama.am

հանձնաժողովի ստեղծման հարցը լուրջ վտանգ է ներկայացնում Թուրքիայի ազգային անվտանգության համար, քանզի բացահայտումների արդյունքում բուրբ հանրությունը կդառնա սեփական պատմության անցանկալի մանրամասների վկա: Այս առումով, Թուրքիայի միակ հույսը նրանում է, որ Հայաստանը կիրառվի հանձնաժողովի ստեղծման գաղափարից՝ պնդելով, որ Հայոց ցեղասպանության փաստը չի կարող քննարկման առարկա լինել:³⁰⁸

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մեջ տեսնում է ավելացած նոր նախապայման՝ Հայաստանի կողմից Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչումը, որը ներկայումս մղվել է առաջին պլան նախկին նախապայմանների՝ ԼՂ հիմնահարցի և Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարման փոխարեն: Նրա կարծիքով, սակայն, Կարսի պայմանագիրն իրավական ուժ չունի Հայաստանի համար, քանի որ այն չի կնքվել նրա մասնակցությամբ: Պատմաբանը համոզված է նաև, որ Թուրքիայի համար տարածքային ամբողջականության հարցն ավելի կարևոր է, քան Հայոց Ցեղասպանության և ԼՂ հարցերը, և եթե առաջինը լուծվի, ապա Հայոց Ցեղասպանության հարցն անգամ չի քննարկվի. Թուրքիան ուղղակի քաղաքակիրթ ձևով ներողություն կխնդրի:³⁰⁹

Հայ-թուրքական համատեղ հայտարարության սուր քննադատությամբ հանդես եկավ Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ռ. Գիրագոսյանը, ում կարծիքով, այսօրինակ հայտարարություն տարածելով Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա նախաշեմին, Հայաստանի Հանրապետությունը, կարծես, հավանություն է տվել թուրքական փորձերին՝ ամեն կերպ ճնշում գործադրել ԱՄՆ նախագահի վրա, որպեսզի վերջինս իր ավանդական ուղերձում շրջանցի իր նախընտրական խոստումը:³¹⁰ «Աբրաբատ» ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ա. Այվազյանն էլ մեղադրում է հայկական իշխանություններին այն բանում, որ շուրջ 15 տարվա ընթացքում նրանք չեն կարողացել մշակել հայ-թուրքական հարաբերությունների հստակ ռազմավարություն: Նա սխալ է համարում նաև Թուրքիայի հետ հարաբերություններում միայն սահմանի բացման խնդրի առաջարկումը. Հայաստանը պետք է ներկայացնի նաև իր տարածքային պա-

հանցները: Նա նաև վերապահումով է մոտենում բուրբ-հայկական սահմանի բացմանը, ինչը կարող է լրջորեն վնասել Հայաստանի «փխրուն» տնտեսությունը, որը չի կարողանա դիմակայել թուրքական ապրանքների հոսքին: Նրա կարծիքով, համատեղ հայտարարությունը ևս միտված է հոգեբանորեն նախապատրաստել հայ ժողովրդին իր ազգային շահերից հրաժարվելուն: Այն նաև, նպաստեց նրան, որ ԱՄՆ նախագահը չարտասանեց «Հայոց ցեղասպանություն» քառալեզու հայտարարությունը, և անպաշտպանության զգացողություն ստեղծեց ողջ հայության մոտ:³¹¹

Այսպիսով, ակնհայտ է, որ վրաց-հարավօսական (ռուսական) հակամարտությունից հետո Հայաստանի դերն ու նշանակությունը համաշխարհային բոլոր ուժային կենտրոնների և տարածաշրջանային տերությունների հարավ-կովկասյան նախագծերում կտրուկ աճել են: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ այսօր Հայաստանը լիարժեք օգտագործում է այդ նոր հնարավորություններն իր արտաքին քաղաքականության մեջ: Հայաստանը Թուրքիային վաղուց է կոչ անում կարգավորել հարաբերություններն առանց նախապայմանների և, առաջին հերթին, բացել միջպետական սահմանը: Եվ միայն 2008թ. օգոստոսյան իրադարձություններից հետո Թուրքիան գործնական հարբության վրա արձագանքեց այդ կոչերին և դիմեց կոնկրետ գործողությունների, որոնց արդյունքում էլ հենց աճեց Հայաստանի նշանակությունը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական քարտեզի վրա: Սակայն Թուրքիայի դիվանագիտական ակտիվությունն առայժմ չի կարելի լիարժեք հիմք համարել երկկողմ հարաբերությունների շուտամույր կարգավորման համար: Դրա մասին են վկայում, թեկուզ, թուրքական հասարակական-քաղաքական շրջանակներում պարբերաբար, անգամ հայ-թուրքական բանակցություններին զուգահեռ հեշտոլ հայտարարություններն այն մասին, որ հարաբերությունների վերջնական կարգավորման համար դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Ս. Սարգսյանի՝ իր թուրք գործընկերոջն ուղղված հրավերը պայմանավորված էր Հայաստանի աշխարհառոտնեսական հնարավորություններն ընդլայնելու տրամաբանությամբ: Թուրք-ադրբեջանական շրջափակմանը ենթարկված Հայաստանի համար արտաքին շուկաներ ելքը Իրանի և Վրաստանի տարածքով չի կարելի բավարար համարել, քանզի Իրանի տարածքը կարող է ելք ապահովել մերձավորարևելյան անկայուն տարածաշրջան, իսկ Վրաստանի տարածքով անցնող և ռազմավարական նշանակություն ունեցող ճանա-

³⁰⁸ Հայ-թուրքական հանձնաժողովի ստեղծումը «Պանդորայի տուփն է», 30.04.2009, Panarmenian.net

³⁰⁹ Diaspora has the last word in normalization of Armenian-Turkish relations, 27.05.2009, Panarmenian.net

³¹⁰ Joint declaration of Armenian and Turkish MFA is one of the most serious strategic blunders by RA Government to date, 23.04.2009, Panarmenian.net

³¹¹ Ինչ սպանալիքներ է պարունակում իր մեջ «ճանապարհային քարտեզը», 30.04.2009, Panarmenian.net

պարիչ Հայաստանի համար անայլընտրանքայինության պատճառով միշտ էլ ազդեցության գործիչ է հանդիսացել վրացական իշխանությունների ձեռքին:

Իհարկե, տարածաշրջանային նախագծերի մեծամասնությունից դուրս մնացած Հայաստանի համար, հատկապես, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում բուրբ-հայկական սահմանի բացումն ունի ռազմավարական նշանակություն: Բայց հասկանալի է, որ այդ հարցի լուծման բանալին գտնվում է ոչ թե Անկարա-Երևան, այլ Անկարա-Վաշինգտոն-Բրյուսել-Մոսկվա առանցքի վրա: Եթե Հայաստանի համար Թուրքիայի տարածքն ու «Քարեկամական» վերաբերմունքն անհրաժեշտ են արևմտյան շուկաներ ելքի համար, ապա Թուրքիայի համար այդ հարցն ունի առավելապես աշխարհառազմավարական նշանակություն Հայաստանի միջոցով Հարավային Կովկասի վրա ազդեցության լրացուցիչ լծակ ձեռք բերելու, ինչպես նաև իր եվրասիական քաղաքականության ամրապնդման տեսանկյունից: Սակայն դա ևս չի կարող անպայմանորեն նշանակել, որ Թուրքիան շուտափույթ «գիջումների» կզմա, քանզի մինչ այժմ էլ նրան հաջողվում էր իրականացնել իր պլանները՝ շրջանցելով և, ամգամ, ի վնաս Հայաստանի: Հետևաբար, շնայած պաշտոնական շրջանակներից հեշտ լավատեսական կարծիքներին, թե սահմանի բացման հարցը կարող է լուծվել այս տարվա երկրորդ կեսին, կարծում ենք, կարճաժամկետ հետանկարում կարելի է ակնկալել միայն այս հարցով կողմերի միջև քննարկումների ակտիվացում: Ավելին, հաշվի առնելով Հայաստանի տնտեսական համակարգի յուրահատկությունները, պետք է ենթադրել որ պաշտոնական Երևանը ևս չի շտապի դեպի սահմանի լիարժեք բացում: Այս համատեքստում Հայաստանի համար լավագույն ընդունելի տարբերակը սահմանի մասնակի բացումն է՝ սկզբնապես արտոնելով միայն միջպետական և տարանցիկ բեռնափոխադրումները: Լիովին հավանական պետք է համարել կոնկրետ Գյումրի-Կարս երկաթուղային ճանապարհի շահագործմանը, որում շահագրգռված է նաև ՌԴ-ը, քանզի դա լուրջ հարված կորդ է հասցնել Կարս-Թբիլիսի-Բաքու երկաթուղային ճանապարհի նախագծին:

Թուրքիայի նախագահի կողմից հրավերն ընդունելը և նրա այցը հարկ է դիտարկել ռուս-վրացական հակամարտությունից հետո ընդհանուր աշխարհաքաղաքական իրադրության մեջ Թուրքիայի արտաքին քաղաքական հնարավորությունների մեծացման համատեքստում: Թերևս այդ տրամաբանությամբ էր պատճառաբանված Թուրքիայի կողմից Կովկասյան կայունության պլատֆորմի նախաձեռնությունը: Սա հենց պետք է դիտարկել որպես նոր աշխարհաքաղաքական իրավիճակում բուրբական արտաքին քաղաքականու-

յան նոր գործիչ: Սակայն այս նախաձեռնությունն ինքը բավական խոցելի է իրագործելության տեսանկյունից՝ ներքին բազմաթիվ հակասությունների պատճառով: Այս հարցում կարելի է առանձնացնել Հայաստանի արտաքին և անվտանգության քաղաքականության վրա էական ազդեցություն ունեցող առնվազը երեք առանցքային բաղադրիչ: Առաջինը, Թուրքիայի այս նախաձեռնությունը հանդիսանում է օգոստոսյան իրադարձություններից հետո տարածաշրջանային նոր իրավիճակն իր շահերին ծառայեցնելու և այստեղ իր գերակայությունն ամրապնդելու միջոց: Երկրորդ, ակնհայտ է, որ ՌԴ-ի դիվանագիտական հավանությունը ևս պայմանավորված էր հարավկովկասյան նոր աշխարհաքաղաքական իրադրությամբ, և իր դիրքերն ամրապնդելուց հետո նա այլևս շահագրգռված չի լինի Հարավային Կովկասում իր պատմական մրցակցի և տարածաշրջանում ԱՄՆ-ի ավանդական դաշնակցի ակտիվության մեջ: Այս տեսանկյունից հիմնավոր չի կարելի համարել նաև Հարավային Կովկասը Թուրքիայի և ՌԴ-ի միջև ազդեցության գոտիների բաժանելու մասին վարկածները³¹², քանզի անհասկանալի է, թե ազդեցության կոնկրետ ի՞նչ գոտիների կարելի է բաժանել աշխարհաքաղաքական տեսանկյունից այդքան փոքր տարածաշրջանը, ՌԴ-ին արդյո՞ք հարկավոր է «գործընկեր» Հարավային Կովկասում: Երրորդ, Հայաստանի ավանդական ռազմավարական գործընկերոջ՝ Իրանի չմասնակցությունը այս նախաձեռնությանն առավել ակնհայտ է դարձնում տարածաշրջանային գործընթացներից իր դարավոր մրցակցին բացառելու և մեկուսացնելու Թուրքիայի մտադրությունները: Իրանի բացասական վերաբերմունքն իրեն բացառող այս նախագծին ևս չի կարող դրական ազդել տարածաշրջանում ուժերի դասավորության վրա:

Դրական գնահատելով հայ-բուրբական հարաբերությունների կարգավորման հիմնական ուղեմիջներն ու ժամանակացույցը բովանդակող «ճանապարհային քարտեզի» մասին հայատարաբությունը՝ հարկ է նշել, որ դրա հրապարակման ժամանակն է հենց հանդիսացել քաղաքական հիմնական շահարկումների առարկան և հիմք տվել եզրակացնելու, որ դա հանդիսանում է ԱՄՆ-ի ճնշման արդյունքը: Այս տեսանկյունից որոշակի տրամաբանվածությամբ կա այն ենթադրություններում, թե այդ հայտարարությունն էլ հենց պատրվակ դարձավ ԱՄՆ-ի նախագահի համար՝ իր ամենամյա ելույթում «Հայոց Ցեղասպանություն» բառակապակցությունը չօգտագործելու հարցում: Սա-

³¹² Կարծում ենք, ավելորդ չէ նշել, որ Հարավային Կովկասում վճռորոշ ազդեցության ապահովման միակ բանալին տեղի և մերձտարածաշրջանային բոլոր երկրների հետ սերտ հարաբերությունների ապահովումն է: Սակայն այդ բանալուց ՌԴ-ը և Թուրքիան առայժմ զրկված են, առաջինը՝ Կլաստանի, երկրորդը՝ Հայաստանի հետ ունեցած ոչ քարիդրացիական հարաբերությունների պատճառով:

կայն, մյուս կողմից, պետք է հաշվի առնել նաև դրան հաջորդած ԱՄՆ-ի պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ հայ-թուրքական հարաբերությունները պետք է կարգավորվեն առանց նախապայմանների և խելամիտ ժամանակահատվածում:

Ինչ վերաբերում է հարաբերությունների կարգավորման նախապայմաններին, ապա կարող ենք ենթադրել, որ Հայաստանը կշարունակի դեմ հանդես գալ հայ-թուրքական հարաբերությունների օրակարգ ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցն ընդգրկելուն: Ալենկալեյի չէ Հայաստանի համաձայնությունը նաև ԵԱՀԿ ՄԽ կազմում Թուրքիային ներառվելու հարցին: Թուրքիան չի կարող լիարժեք ներգրավվել ԼՂ հակամարտության կարգավորման մեջ ոչ միայն Հայաստանի անհամաձայնության, այլև իր ունեցած կողմնակա դիրքորոշման պատճառով: Դրան չեն համաձայնի հենց ՄԽ համանախագահերկրները: Սակայն միանշանակ է, որ ԼՂ հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացները որոշակիորեն փոխկապակցված են, և դրանցից մեկում առաջընթացը նպաստավոր պայմաններ կստեղծի մյուսում ևս առաջընթաց արձանագրելու համար: Հենց այս հանգամանքը կարող է օգտագործել Թուրքիան՝ խուսաճակելով, մի կողմից, Հայաստանի հետ հարաբերությունները բարելավելու անհրաժեշտության, և, մյուս կողմից, Ադրբեյջանի պահանջների միջև: Հայոց Տեղապահության միջազգային ճանաչման գործընթացը ևս չի կարող միանշանակ շահարկման առարկա դիտարկվել, քանզի այն չի գտնվում Հայաստանի իշխանությունների բացառիկ տնօրինության տակ և մեծապես կրում է սփյուռքահայ կազմակերպությունների ազդեցության տակ:

Ինչևէ, Թուրքիան կշարունակի Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման իր քաղաքականությունը, սակայն չի կարելի ակնկալել, որ նա արմատական վերանայման կենթարկի այն՝ փոփոխելով դրա հիմնասկզբունքները: Ավելին, եթե արտաքուստ հարաբերությունների կարգավորման նախապայմանները երկրորդ պլան են մղվել, ապա իրականում դրանք շարունակում են մնալ Թուրքիայի քաղաքական և քաղաքագիտական օրակագրում: Ընդհանուր առմամբ, Թուրքիայի ներկայիս քաղաքականությունը որոշակի ադրեսներ ունի կոնվալենտարիզմի հետ, որն արտահայտվում է, մի կողմից, դեկավար շրջանակների կողմ, երբեմն հարաբերությունների կարգավորման գործընթացի տրամաբանությանը հակասող հայտարարություններով, իսկ մյուս կողմից, առկա խնդիրները կարգավորելու վերաբերյալ առավել կառուցողական հայտարարություններով: Այս գործընթացը, բնականաբար, որոշակի խթան կստանա աշնանը՝ երկու երկրների ֆուտբոլային թիմերի հանդիպ-

ման նախաչեմին: Կապահավորվի նաև այդ գործընթացին աջակցելու՝ ԱՄՆ-ի և ԵՄ-ի պատրաստակամությունը, որի շրջանակներում չի կարելի բացառել նաև պարբերական ճնշումները պաշտոնական Անկարայի վրա: Կարելի է անգամ ակնկալել, որ Հայաստանն ինքը կփորձի մախաձեռնություն ցուցաբերել և առաջ քաշել տարատեսակ նախագծեր, որոնց ևս Թուրքիան «պայմանականորեն» դրական արձագանք կտա: Այդուհանդերձ, Թուրքիան կօգտվի բանակցությունների գործընթացը՝ սպասելով հայակակն կողմի զիջումներին, բայց Ս. Սարգսյանի հայտարարությունն այն մասին, որ աշնանը նա կայցելի Թուրքիա՝ դիտելու ֆուտբոլային թիմերի պատասխան հանդիպումը միայն բաց սահմանով, վկայում է այն մասին, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը դրված է ժամանակային շրջանակների մեջ:

4/3 ՀՀ արտաքին առևտրի վերլուծությունը


Հայաստանի Հանրապետությունը փոքր, բնական ռեսուրսներով աղքատ և երկկողմ շրջափակման մեջ գտնվող երկիր է: Հայաստանը սահմանակից է Թուրքիային (արևմուտքից), Ադրբեյջանին (արևելքից), Վրաստանին (հյուսիսից) և Իրանին (հարավից): Հայաստանի անկախացումից անմիջապես հետո, ելնելով քաղաքական դրդապատճառներից, Թուրքիան և Ադրբեյջանը փակեցին իրենց սահմանները Հայաստանի հետ: Մինչև օրս Հայաստանի և Ադրբեյջանի միջև առկա հակամարտությունն զգալի ազդեցություն ունի Հայաստանի արտաքին առևտրի վրա: Հայաստանի հյուսիսային և հարավային սահմանները նույնպես բեռնափոխադրումների համար սահմանափակ հնարավորություններ ունեն: Այսպես՝ Իրանի հետ հիմնական ճանապարհը անցնում է լեռնաշղթայով և հաճախ շատ դժվարանցանելի է, իսկ Վրաստանի տարածքով անցնող հիմնական ճանապարհը չի շահագործվում իր առավելագույն հնարավորությամբ:

Այսպիսով, չնայած գոյություն ունեցող լուրջ քաղաքական և ֆիզիկական առևտրային սահմանափակումներին, Հայաստանն անկախացումից ի վեր շարունակում է պահպանել ազատական առևտրային ռեժիմ և իր առևտրային դասակարգման սխեմայով ԱՄՀ-ի կողմից արժանանում ամենաբարձր վարկանշների: Այստեղ հարկ է նշել, որ Հայաստանն ԱՊՀ երկրների շարքում առանձնացել է իր բավական ազատական առևտրային ռեժիմով: Բացի ազատական առևտրային ռեժիմից՝ բավական ազատական է նաև Հայաստանի

տնտեսությունը: Այսպես՝ ըստ 2007 թ. տնտեսական ազատականության ինդեքսի՝ Հայաստանը համաշխարհային տնտեսության մեջ գրավել է 32-րդ տեղը³¹³: Հայաստանը անդամակցեց ԱՀԿ-ին 2003 թ. փետրվարի 5-ին և համարվում է Սևծովյան տնտեսական համագործակցության (Black Sea Economic Cooperation, BSEC) անդամ, որը հիմնադրվել է 1992 թ.՝ մասնակից երկրների միջև տնտեսական համագործակցությունը խորացնելու և առևտրային սահմանափակումները վերացնելու նպատակով³¹⁴:

Սակայն, որպեսզի կարողանանք ամբողջական պատկերացում կազմել, թե կոնկրետ Հայաստանի դեպքում որքանով է ազատական առևտրային քաղաքականությունն արդարացրել իրեն, անհրաժեշտ է ուսումնասիրել ՀՀ առևտրային հաշվեկշիռը, մասնավորապես տարածքային տեղաբաշխման և ապրանքային կառուցվածքները: Այսպես՝ 1995 թ. սկսած մինչև օրս ՀՀ առևտրային հաշվեկշիռը բացասական է, որը հիմնականում պայմանավորված է արտահանման համեմատաբար փոքր և ներմուծման համեմատաբար մեծ ծավալներով (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1: ՀՀ առևտրային հաշվեկշիռի դինամիկան 1995-2006 թթ. ընկած ժամանակահատվածում (մլն դոլար)



Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի, ՀՀ վիճակագրության ծառայություն

³¹³ «Index of Economic Freedom», Heritage Foundation, The Wall Street Journal 2007.
³¹⁴ BSEC-ի անդամակցող երկրներն են՝ Ալբանիան, Հայաստանը, Ադրբեջանը, Բուլղարիան, Վրաստանը, Հունաստանը, Մոլդովան, Ռումինիան, Ռուսաստանը, Սերբիան և Չեռնոգորիան, Թուրքիան, Ուկրաինան:

Ինչպես վկայում է գծապատկեր 1-ը, ՀՀ առևտրային հաշվեկշիռի պակասորդն ընդհուպ մինչև 1998 թ. ունեցել է աճի միտում՝ կազմելով 672.3 մլն դոլար, որը նշված ժամանակահատվածում առևտրային հաշվեկշիռի պակասորդի ամենաբարձր ցուցանիշն է: Դա հիմնականում պայմանավորված է եղել ներմուծման ծավալների շարունակական մեծացմամբ, որը 1997-1998 թթ. գույճորդվել է նաև արտահանման կրճատմամբ: Առևտրային հաշվեկշիռի 1999 թ. պակասորդի կրճատումը բացատրվում է ներմուծման կտրուկ նվազմամբ, քան արտահանման աճով: Նախորդ տարվա հետ համեմատ արտահանումն աճել է ընդամենը 4.5%-ով՝ կազմելով 233.5 մլն դոլար, իսկ ներմուծումը կրճատվել է 10.4%-ով՝ կազմելով 801.7 մլն դոլար: 2001 թ. առևտրային հաշվեկշիռի պակասորդի նվազման պատճառն այն է, որ ներմուծման ծավալները կրճատվել են 10.8 մլն դոլարով, իսկ արտահանումն աճել է 45.3 մլն դոլարով՝ համապատասխանաբար կազմելով 874.3 և 342.8 մլն դոլար: Հակառակ դրան՝ 2002թ. առևտրային հաշվեկշիռի պակասորդի զգալի նվազումը բացատրվում է նրանով, որ արտահանման աճի տեմպը գերազանցել է ներմուծման աճի տեմպին: 2002 թ. արտահանման աճի տեմպը կազմել է 47.9%, իսկ ներմուծմանը՝ 13.3%, որի արդյունքում արտահանումը կազմել է 507.1 դոլար, իսկ ներմուծումը՝ 991.0 մլն. դոլար:

Տվյալները վկայում են, որ 2003-2007 թթ. կրկին գրանցվել է առևտրային հաշվեկշիռի պակասորդի քավական մեծ աճ: 2007 թ. առևտրային հաշվեկշիռի պակասորդը կազմել է 2115.4 մլն դոլար, որը 2002 թ. ցուցանիշի համեմատ աճել է ավելի քան հինգ անգամ: Սակայն առևտրային հաշվեկշիռի այս պակասորդի առանձնահատկությունն այն է, որ 2003-2005 թթ. ընկած ժամանակահատվածում թե՛ արտահանման, թե՛ ներմուծման ցուցանիշներով նկատվել են երկուստեք բավական մեծ աճի տեմպեր: 2003 թ. ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 28.1%՝ կազմելով 1269.4 մլն դոլար, իսկ արտահանման ծավալները աճել են 33.7%-ով՝ կազմելով 678.1 մլն դոլար: Չնայած նրան, որ 2003 թ. արտահանման ծավալների աճի տեմպը կազմել է 33.7%, իսկ ներմուծմանը՝ 28.1%, առևտրային հաշվեկշիռի պակասորդը նախորդ տարվա հետ համեմատ ավելացել է: Դա հիմնականում պայմանավորվել է նրանով, որ 2002 թ. ներմուծումը մոտ երկու անգամ գերազանցել է արտահանմանը: Ավելին, եթե 2006 թ. ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 21.6%-ով, իսկ արտահանման ծավալները՝ 1.1%-ով, ապա 2007 թ. ներմուծման ծավալները 2006 թ. համեմատ աճել են 49.1%, իսկ արտահանման ծավալները՝ 16.9%:

4/4 ՀՀ արտաքին տնտեսական կապերը ԵՄ հետ

Անկախությունից ի վեր եվրոպական կառույցներին ինտեգրվելը Հայաստանի համար եղել է շարունակում է մնալ արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Սա ակնառու կերպով արտացոլվում է Եվրամիության, Եվրոպայի խորհրդի, Հյուսիսատլանտյան դաշինքի (North Atlantic Treaty Organization՝ NATO) և այլ եվրոպական կազմակերպությունների, ինչպես նաև տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի երկկողմ հարաբերություններում:

ԵՄ հետ Հայաստանի համագործակցությունը սկիզբ առավ հենց անկախությունից հետո ԱՊՀ երկրներին տրվող տեխնիկական օգնության (Technical Assistance to the Commonwealth of Independent States, TACIS) ծրագրի և ԵՄ երկրների հետ Հայաստանի երկկողմ հարաբերությունների զարգացման շրջանակներում: Նշենք, որ TACIS ծրագիրը մեկնարկել է 1991 թ.-ին, և դրա հիմնական նպատակն է աջակցել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի՝ անցումային փուլում գտնվող 13 երկրների՝ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա, Ռուսաստան, Ղազախստան, Գրդզուստան, Թուրքմենստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Մոնղոլիա:

Հարկ է նշել, որ ԵՄ երկրների շրջանակներում Հայաստանը բավական սերտ կապեր ունի ներկայիս ԵՄ հիմնադիր երկրներից մեկի՝ Ֆրանսիայի հետ, որտեղ բնակվում է ամենամեծ բովո սփյուռքահայությունն ամբողջ Եվրոպայում:

ԵՄ հետ Հայաստանի Հանրապետության իրավական համագործակցության հիմքը դրվել է 1996 թ. ապրիլի 22-ին՝ ԵՄ և ՀՀ միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրի (Partnership and Cooperation Agreement, PCA) ստորագրումով, որը ուժի մեջ է մտել 1999 թ. հուլիսի 1-ին³¹⁵: Թե ինչու 1996 թ. ստորագրված համաձայնագիրը ուժի մեջ մտավ միայն 1999 թ. բացատրվում է նրանով, որ 1997 թ. Հայաստանի և ԵՄ միջև կնքվեց մեկ միջամեյլայ պայմանագիր, որը պետք է կարգավորեր Գործընկերության և համագործակցության համաձայնագրում արտացոլված առևտրին և հարկերին վերաբերող հիմնախնդիրները: Իրականում համաձայնագիրը ներառում է ՀՀ և ԵՄ միջև համագործակցության բոլոր ոլորտները՝ բացի ռազմականից: Ընդհանուր առմամբ համաձայնագրի հիմնական նպատակն է Հայաստանում հաստատել և զարգացնել շուկայական համակարգ:

Համաձայնագրի տնտեսական նպատակները հետևյալներն են՝

³¹⁵ Ներկայումս ԵՄ հետ Գործընկերության և համագործակցության համաձայնագիր ունեն հետևյալ երկրները՝ Ռուսաստան, Ուկրաինա, Մոլդովա, Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ուզբեկստան, Ղազախստան, Գրդզուստան, Տաջիկստան:

- աջակցել Հայաստանի տնտեսության զարգացմանը և ավարտին հասցնել շուկայական տնտեսության անցման գործընթացը

- խթանել առևտուրը, ներմուծումները և համաչափ տնտեսական հարաբերությունների զարգացումը կողմերի միջև [Հայաստան և Եվրամիություն] և խթանել տեղական տնտեսական աճը

- ապահովել անհրաժեշտ հիմք տնտեսական համագործակցության համար³¹⁶:

Սակայն պետք է նշել, որ Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը չի նախատեսում ազատ առևտրի գոտու ստեղծում կողմերի միջև³¹⁷:

2004 թ. մայիսին ԵՄ ընդլայնման հետևանքով փոփոխվեցին ԵՄ արտաքին սահմանները: Որպես հետևանք՝ փոփոխվեց նաև ԵՄ քաղաքականության աշխարհագրությունը՝ ընձեռելով նոր հնարավորություններ՝ խորացնելու առկա հարաբերությունները ԵՄ և իր նոր՝ արևելյան և հարավային հարևան երկրների միջև:

Արդյունքում 2003-2004 թթ. Եվրահանձնաժողովը նախատեսեց նոր ծրագիր՝ Եվրոպական հարևանության քաղաքականություն անվամբ (European Neighborhood Policy, ENP): ENP ներառում է հետևյալ երկրները՝ Ալժիր, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Եգիպտոս, Վրաստան, Իսրայել, Լիբանան, Լիբիա, Մոլդովա, Մարոկկո, Պաղեստինի Հանրապետություն, Սիրիա, Թունիս և Ուկրաինա³¹⁸: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ ի սկզբանե Հարավային Կովկասի երկրները ներառված չեն եղել Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրում, ինչպես նաև նախատեսվում էր Ռուսաստանի մասնակցությունը այս ծրագրին: Սակայն Ռուսաստանը հրաժարվեց այս ծրագրում ընդգրկվելու առաջարկից, և Հարավային Կովկասի ներառման հարցը վերանայվեց: Այսպիսով՝ Հարավային Կովկասի երկրները ներառվեցին ENP մեջ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ էներգետիկ տեսանկյունից այս տարածաշրջանը զգալի կարևորություն ունի, ինչպես նաև այն հանգամանքը, որ Թուրքիան ԵՄ անդամակցության թեկնածու երկիր է, և հետևաբար Հարավային Կովկասի երկրները ԵՄ պոտենցիալ հարևան երկրներ են:

³¹⁶ The European Union and the Republic of Armenia, Partnership and Cooperation Agreement.

³¹⁷ Steven Blockmans and Adam Łazowski, The European Union and its Neighbours: A Legal Appraisal of the EU's Policies of Stabilisation and Integration, The Hague: T.M.C. Asser, 2006, p. 597.

³¹⁸ Պայմանագրային հարաբերությունների քաղաքականության պատճառով ԵՀԶ նախատեսված օգուտները դեռևս գործողության մեջ չեն դրվել Բելառուսի, Լիբիայի և Սիրիայի համար:

Արդյունքում Հայաստան-ԵՄ ինտեգրման գործընթացներն էլ ավելի զարգացան, երբ 2004 թ. հունիսին Եվրոպական հանճնաժողովի առաջարկով Հայաստանն ընդգրկվեց եվրոպական հարևանության քաղաքականության մեջ: ԵՄ եվրոպական հարևանության քաղաքականությունն ընդգրկում է նոր մտայնություններ, որոնք առաջանցիկ են ԵՄ և հարևան երկրների միջև առկա հարաբերություններից և համագործակցությունից: Քաղաքականության հիմնական նպատակն է ԵՄ ընդլայնման օգուտները կիսել բոլոր ցամաքային հարևան երկրների հետ՝ երկուստեք բարձրացնելով կայունությունը, անվտանգությունը, բարեկեցությունը, ինչպես նաև խուսափել ընդարձակված ԵՄ և հարևան երկրների միջև նոր՝ տարանջատող սահմանային վերածախման երևույթների առաջացումից: Եվրոպական հարևանության քաղաքականության իրագործման համար ԵՄ պետք է տրամադրի նշանակալից ֆինանսական և տեխնիկական օգնություն: Այդ նպատակով եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված երկրների համար ստեղծվեց Եվրոպական հարևանության և գործընկերության ծրագիր (European Neighborhood and Partnership Instrument, ENPI), որը, 2007 թ.-ի հունվարի 1-ից սկսած, փոխարինելու եկավ Եվրամիության կողմից իրականացվող մի շարք ծրագրերի (TACIS, MEDA, EIDHR): Այն էլ ավելի լայն հնարավորություններ ստեղծեց ԵՄ և եվրոպական հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված երկրների միջև համագործակցության համար՝ ներառելով օժանդակության նոր ձևեր և մասնակից երկրներին հնարավորություն տալով առավելագույնս համապատասխանեցնելու եվրոպական նորմերը և ստանդարտները՝ ԵՀԲ շրջանակներում ընդունված Գործողությունների ծրագրի առաջնություններին համապատասխան: Հաջորդ բյուջետային ժամանակահատվածի համար (2007-2013) մոտավորապես 12 մլրդ եվրո է նախատեսվում տվյալ ծրագրի ամրապահության համար՝ իրականացվող բարեփոխումներին աջակցելու համար, որը 32%-ով ավելի է նախորդ բյուջետային ժամանակահատվածի համեմատությամբ: Այս ծրագրի շրջանակներում Հայաստանին հատկացվելիք գումարը կազմում է 98.4 մլն եվրո³¹⁹:

Հայաստան-ԵՄ համագործակցությունը զարգանում է նաև բարձր տեխնոլոգիաների, կրթության և սոցիալական ոլորտներում. հատկապես պետք է նշել Պարենային անվտանգության ծրագիրը (Food Security Program, FSP)³²⁰: Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակներում շատ նշանակալից է ԵՄ կողմից Հայաստանին տրամադրվող ֆինանսական և տեխնիկական օգնությունը: Այսպես՝ 1991-2005 թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ տար-


³¹⁹ European Commission, European Neighbourhood Policy: Funding, 25.03.08. Available at: http://ec.europa.eu/world/enp/funding_en.htm.
³²⁰ Sh u Sergey Minasyan, EU-Armenia cooperation and the new European neighborhood policy, 2006:

բեր ծրագրերի շրջանակներում (մասնավորապես ECHO, TACIS և FSP) Հայաստանին տրամադրվել է ավելի քան 380 մլն եվրո և երկարաժամկետ վարկեր՝ ավելի քան 86 մլն եվրո ընդհանուր արժույթյամբ³²¹:

ԵՄ և Հայաստանի միջև արտաքին առևտրի ծավալները սկզբնական ժամանակաշրջանում (1993-1998 թթ.) զգալի զիջում էին ԱՊՀ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալներին, սակայն, ի տարբերություն ԱՊՀ երկրների, ԵՄ հետ արտաքին առևտուրը ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում: Ընդհանուր առմամբ 1993-2002 թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտուրն ունեցել է «պարուրաճն քնույթ»:

Այսինքն, երբ նվազել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները, աճել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները, իսկ երբ նվազել են ԵՄ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները, աճել են ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի ծավալները: Այսպիսով, եթե 1993-1997 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998 թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի անենացված գործընկերը ԵՄ-ն է:

Գծապատկեր 2. ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ հետ



Արդյուր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 1993-2007 թթ. ընկած ժամանակահատվածում ԵՄ հետ արտաքին առևտուրն ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում: Այսպես՝ 1993-2000 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ երկրների հետ անընդհատ աճել է, ընդ որում միաժամանակ ա-

³²¹ Sh u “European Neighboring Policy”, Country Report, Armenia, COM(2005) 72 final:

ճկ են և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները³²²: Սակայն պատկերը փոխվում է 2001 թ., երբ 17.1%-ով կրճատվում է դեպի ԵՄ արտահանման ծավալը՝ կազմելով 88.6 մլն դոլար³²³: Այնուհետև 2002 թ. ավելի քան երկու անգամ աճում են Հայաստանից ԵՄ արտահանման ծավալները: Ընդհանուր առմամբ ԵՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտուրը (թե՛ արտահանման և թե՛ ներմուծման կտրվածքով) զգալի տեմպերով սկսել է աճել 2002 թ.-ից: 2003-2007 թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանից ԵՄ արտահանման ծավալը աճել է 117.6%-ով, իսկ ԵՄ-ից Հայաստան ներմուծման ծավալը՝ 158.8%-ով: ԵՄ հետ արտաքին առևտրաշրջանառության մնան աշխուժացումը կարելի է բացատրել այն փաստով, որ 2003 թ. սկզբին Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը ԵՄ երկրների շուկաները էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական ապրանքների համար: Միևնույն ժամանակ ԱՀԿ անդամակցությունը մաս էլ ավելի հասանելի և շահավետ դարձրեց հայկական շուկան եվրոպական ապրանքների համար: Մյուս կողմից հարկ է նշել, որ ԵՄ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ավելացումը մաս ունեցել է ավտոմոբիլային արտաքին ապրանքաշրջանառության ավելացումը և միջև Հայաստանի ԱՀԿ անդամակցությունը, իսկ ԱՀԿ անդամակցությունը լրացուցիչ խթան եղավ այդ գործընթացի համար:

Աղյուսակ 1: ՀՀ արտաքին առևտուրը ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ 2007 թ. (մլն դոլար)

	Գերմանիա	Բելգիա	Նիդերլ.	Ավստրիա	Իտալիա	Մեծ Բրիտանիա	Ֆրանսիա
Արտահանում	169.6	100.2	156.0	5.5	30.0	2.7	9.4
Ներմուծում ³²⁴	116.0	157.3	22.2	124.7	95.0	117.9	65.6
Բաժինը ԵՄ ընդհ. ապրանք. մեջ (%)	18.7%	16.8%	11.6%	8.5%	8.1%	7.8%	4.9%

Աղյուսակ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն

³²² Երե 1993-1997 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998 թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի ամենազգալի գործընկերը ԵՄ-ն է:

³²³ Նմանապես 2001 թ. 16.5%-ով կրճատվել է նաև ԵՄ-ից ներմուծման ծավալը՝ կազմելով 252.2 մլն դոլար:

³²⁴ Ներմուծման ծավալները ներկայացված են ըստ առևտուր անող երկրի հատկանիշի:

ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի և՛ աշխարհագրական, և՛ ապրանքային կառուցվածքը, ինչպես ՀՀ ընդհանուր արտաքին առևտրի դեպքում շատ կենտրոնացված է (տե՛ս աղյուսակ 1 և աղյուսակ 2): ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի կենտրոնացվածությունը մեկնաբանվում է այն փաստով, որ ԵՄ 15 երկրներից Հայաստանի գլխավոր առևտրային գործընկեր երկրներն են՝ Գերմանիան, որին բաժին է ընկնում ընդհանուր ապրանքաշրջանառության 18.7%, Բելգիան (16.8%), Նիդերլանդները (11.6%), Ավստրիան³²⁵ (8.5%), Իտալիան (8.1%), Մեծ Բրիտանիան (7.8%), Ֆրանսիան (4.9%) և Հունաստանը (3.9%): Ընդհանուր առմամբ նշված երկրներից բաժին է ընկնում ԵՄ 27 երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ավելի քան 80.0%, իսկ ԵՄ 15 երկրների հետ արտաքին առևտրի՝ 90.5%³²⁶:

Աղյուսակ 2: ԵՄ հիմնական գործընկեր երկրների հետ առևտրում գլխավոր ապրանքախմբերը 2006թ. (մլն դոլար)

	Գերմանիա		Բելգիա		Նիդերլանդներ		Ավստրիա		Իտալիա	
	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.	արտ.	ներմ.
Սև մետաղներ և իրեր	98.6	-	-	-	138.5	-	3.0	-	-	9.0
Պղինձ	62.2	-	-	-	3.3	-	1.8	-	-	5.7
Սարքավորումներ	-	23.0	-	-	-	1.9	-	1.7	-	33.6
Տրանսպորտային միջոցներ	-	132.3	-	-	-	-	-	1.9	-	5.1
Թանկարժեք քարեր և մետաղներ	-	-	96.5	104.4	-	-	-	112.4	-	2.0
Տրիկոտաժն հագուստ	-	-	-	-	-	-	-	-	23.8	14.4
Էլեկտրական սարքավորումներ	-	10	-	-	-	-	-	-	-	4.5
Կեղագործական մրեքք	-	6.4	-	-	-	2.0	-	1.6	-	3.2
Բժշկական ապարատներ	-	9.2	-	-	-	1.5	-	-	-	2.4

Աղյուսակ՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն

³²⁵ Այստեղ հարկ է նշել, որ 2006 թ. տվյալներով արտաքին ապրանքաշրջանառության ծավալը Ավստրիայի հետ կազմել է 50.4 մլն դոլար (ԵՄ 27 երկրների հետ արտաքին առևտրի 4.3%): 2007 թ Ավստրիայի հետ արտաքին ապրանքաշրջանառության ավելացումը հիմնականում պայմանավորվել է ներմուծման աճով (2007 թ., 2006 թ. հետ համեմատած, ներմուծումը Ավստրիայից ավելացել է 167.5%-ով):

³²⁶ Հարկ է նշել, որ ԱՊՀ երկրների հետ ՀՀ արտաքին առևտուրը էլ ավելի կենտրոնացված է (միայն Ռուսաստանին բաժին է ընկնում 61,2%), քան ԵՄ երկրների հետ:

³²⁷ Ներմուծման ծավալները ներկայացված են ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի:

Արը նշված ԵՄ 15 երկրներից հիմնական գործընկեր երկրների հետ կատարվող արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը ուսումնասիրելիս նկատվում է որոշ ապրանքախմբերի զգալի կենտրոնացում (տե՛ս աղյուսակ 2): Այսպես՝ ՀՀ և ԵՄ հիմնական գործընկեր երկրների միջև արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում հիմնականում գերակշռում են մետաղները (մասնավորապես սև մետաղները, պղինձը և այլ ոչ թանկարժեք մետաղները), թանկարժեք քարերը, տրանսպորտային միջոցները, մեքենաներն ու սարքավորումները, տրիկոտաժե հագուստը, էլեկտրական սարքավորումները, դեղագործական մեքերը և բժշկական ապարատները:

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 2-ից, ԵՄ 15 հիմնական գործընկեր երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում զգալի կենտրոնացում է նկատվում Բելգիայի, Նիդերլանդների և Ավստրիայի հետ արտաքին առևտրում: Առաջինի դեպքում դա բացառապես թանկարժեք քարերի գծով է, իսկ Նիդերլանդների և Ավստրիայի հետ՝ համապատասխանաբար մետաղների և թանկարժեք քարերի գծով: Գերմանիայի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ արտաքին առևտրում նկատվում է հարաբերականորեն որոշակի տարբերակվածություն (հիմնականում ներմուծման գծով): Ավելին՝ ընդհանրացնելով կարող ենք փաստել, որ ԵՄ 15 երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի (արտահանման կտրվածքով) թե՛ աշխարհագրական և թե՛ ապրանքային կառուցվածքը խիստ կենտրոնացված է, իսկ ներմուծման կտրվածքով առկա է հարաբերական տարբերակում:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք նշել, որ Հայաստանից ԵՄ արտահանման մեջ մեծ տեսակար կշիռ են կազմում մետաղները և դրանցից պատրաստված իրերը: Մետաղները արտահանվում են հիմնականում Գերմանիա և Նիդերլանդներ: 2005-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում դեպի ԵՄ արտահանման մեջ մետաղների ընդհանուր բաժինը կազմել է համապատասխանաբար 55.0%, 61.9% և 65.1%³²⁸: Հայաստանից ԵՄ արտահանվող մյուս զխավոր ապրանքախումբը թանկարժեք քարեր և մետաղներն են (18.3%), որոնք արտահանվում է բացառապես Բելգիա: 2007 թ. տվյալներով ԵՄ դեպի Հայաստան արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել թանկարժեք քարերն ու մետաղները³²⁹ (26.5%), մեքենաները և սարքավորումները, ինչպես նաև էլեկտրական սարքավորումները (24.4%), տրանսպորտային միջոցները (7.1%) և քիմիական ապրանքները (6.9%):

³²⁸ Տե՛ս “Eurostat”, Statistical regime 4, Armenia.

³²⁹ Թանկարժեք քարեր և մետաղները ներմուծվում են հիմնականում Բելգիայից, իսկ սկսած 2006 թ.՝ նաև Ավստրիայից:

4/5 ՀՀ արտաքին տնտեսական կապերը Թուրքիայի հետ և դրա զարգացման հեռանկարները

Չնայած Հայաստանի և Թուրքիայի միջև առկա քաղաքական ոչ կայուն վիճակին՝ Հայաստանն այսօր բավականաչափ առևտրատնտեսական կապեր ունի Թուրքիայի հետ, որը կարող է էլ ավելի զարգանալ, եթե երկու երկրների միջև լուծվեն քաղաքական տարածայնությունները: Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության ծավալը Թուրքիայի հետ 1995-2003 թթ. ընկած ժամանակաշրջանում տատանողական բնույթ է ունեցել (տե՛ս աղյուսակ 3): 1995-1997 թթ. զգալի տեմպերով աճել են և՛ ներմուծման, և՛ արտահանման ծավալները՝ 1997 թ. կազմելով համապատասխանաբար 38.4 և 7.1 մլն դոլար: Հարկ է նշել, որ 1997 թ. գրանցված արտաքին ապրանքաշրջանառության ծավալը Թուրքիայի հետ (45.5 մլն դոլար) դիտարկվող ժամանակաշրջանում (1995-2003 թթ.) ամենամեծ ցուցանիշն է: Այնուհետև 1998-2003 թթ. ընկած ժամանակաշրջանում կտրուկ նվազել են արտահանման ծավալները, իսկ ներմուծումը գրեթե մնացել է անփոփոխ: 2004 թ.-ից սկսած՝ Թուրքիայի հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը զգալի աճել է՝ 2007 թ. կազմելով 128.5 մլն դոլար: Այսպես՝ 2004-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում Թուրքիայի հետ արտաքին ապրանքաշրջանառությունն աճել է ավելի քան երեք անգամ, որը պայմանավորված է բացառապես ներմուծման ավելացմամբ:

Աղյուսակ 3. Թուրքիայի հետ արտաքին առևտրի դինամիկան 1995-2007 թթ. (մլն դոլար)

Թուրքիա	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընդհանուր ապրանքաշրջ	5.2	12.2	45.5	31.5	41.2	41	34.8	39.6	37.4	41.8	63.7	90.8	128.5
Արտահանում	2.6	6.0	7.1	2.9	1.1	1.5	1.1	1.4	1.1	2.0	2.5	2.3	3.0
Ներմուծում	2.6	6.2	38.4	28.6	40.1	39.5	33.7	38.2	36.3	39.8	61.2	88.5	125.5
Տեսակ. կշիռ (%)	0.5	1.0	4.0	2.8	3.9	3.4	2.8	2.5	1.9	2.0	2.3	2.8	2.9

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն

Հայաստանի արտաքին առևտուրը Թուրքիայի հետ ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել հետևյալ փուլերով.

1. 1995-1997 թթ. ընկած ժամանակաշրջան. միաժամանակ աճել են և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները.

2. 1998-2004 թթ. ընկած ժամանակաշրջան. արտահանման և ներմուծման ծավալները մնացել են գրեթե անփոփոխ.

3. 2005-2007 թթ. ընկած ժամանակաշրջան. արտահանման ծավալները մնացել են գրեթե անփոփոխ, իսկ ներմուծման գծով նկատվել է զգալի աշխուժություն:

Թուրքիայի հետ արտաքին առևտրի վերաբերյալ ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վերլուծել արտաքին առևտրի (այս դեպքում բացառապես ներմուծման) կառուցվածքը: Այսպես՝ իրականում Թուրքիայից ներմուծումը բավական տարբերակված է, իսկ ներմուծման մեջ առավել գերակշռող ապրանքախմբերը բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4: Թուրքիայից Հայաստան ներմուծման ապրանքային կառուցվածքը 2004-2007 թթ. (մլն դոլար)

	2004	2005	2006	2007
Մաքրող միջոցներ և քսուքներ	1.7	3.2	4.6	7.7
Պլաստմասսա և դրանից իրեր	3.4	6.3	14.3	17.0
Փայտ և փայտից իրեր	1.4	2.4	6.7	12.4
Տրիկոտաժն հագուստ և իրեր	0.6	1.8	2.3	3.1
Կերամիկական իրեր	1.5	1.1	2.1	4.6
Սև մետաղներ	2.9	4.8	9.2	17.1
Իրեր սև մետաղներից	1.2	2.7	6.0	11.6
Ալյումին և ալյումինից իրեր	2.1	2.9	5.3	5.8
Սարքեր և մեխանիկական մասեր	4.3	4.7	5.4	9.9
Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ	1.9	2.4	3.0	3.9
Տրանսպորտային միջոցներ	0.25	1.7	1.5	3.7

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, Թուրքիայից Հայաստան ներմուծման ծավալների զգալի աճ է գրանցվել մաքրող միջոցներ և քսուքներ, պլաստմասսա և դրանից իրեր, փայտ և փայտից իրեր, սև մետաղներ և իրեր սև մետաղներից ապրանքախմբերի գծով:

Առևտրային հարաբերությունները մեր տարածաշրջանում բնութագրվում են որոշ առանձնահատկություններով, որոնցից Հայաստանի համար ամենակարևորը փակ սահմանների առկայությունն է: Այն երկրները, որոնք չունեն ելք դեպի ծով, բախվում են մի շարք բարդությունների, որոնց շարքում մասնավորապես կարելի է առանձնացրել հետևյալ խնդիրները.

- միջազգային շուկաներից հեռու գտնվելը,
- ոչ բավարար չափով զարգացած ենթակառուցվածք,
- առևտրի ծավալներ, որոնք չեն համապատասխանում իրական պոտենցիալ ծավալներին,
- ոչ զարգացած մաքսային համակարգ և ինստիտուցիոնալ միջավայր,
- հարևան երկրներից, որոնք բեռնափոխադրումների համար տրանզիտ են, կախվածության բարձր մակարդակ:

Հետևաբար, դեպի ծով ուղղակի ելք չունենալը ստեղծում է մի շարք տնտեսական և քաղաքական խնդիրներ: Այդուհանդերձ, դեպի ծով ելք չունեցող երկրները կարող են նվազեցնել դրա հետևանքները կամ հաղթահարել դրանք պետության կամ տարածաշրջանային մակարդակով քաղաքականությունների ճիշտ համադրությամբ³³⁰:

Տվյալ տարածաշրջանում (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Իրան և Թուրքիա) առևտրային հարաբերությունները բնութագրվում են որոշակի առանձնահատկություններով: Այս հինգ երկրները, առանձին վերցրած, զգալի ծավալներով առևտուր են իրականացնում ամբողջ աշխարհի հետ: Մյուս կողմից տարածաշրջանային առևտրի ծավալներն այս երկրների միջև (փոխադարձ արտաքին առևտուր) զգալիորեն փոքր են:

³³⁰ United Nations, 'Report of the International Ministerial Conference Landlocked and Transit Developing Countries and Donor Countries and International Financial and Development Institutions on Transit Transport Cooperation', Almaty, Kazakhstan, August, 2003. Available at: http://www.unctad.org/en/docs/aconf202d3_en.pdf.

Աղյուսակ 5: ՀՀ արտաքին առևտրատնտեսական հարաբերություններն Իրանի, Վրաստանի և Թուրքիայի հետ 1995-2007 թթ. ընկած ժամանակաշրջանում (մլն ԱՄՆ դոլար)³³¹

Իրան	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընդհանուր ապրանքաշրջ.	124.8	193.7	131.3	95.5	112.7	110.6	110.6	93.5	92.7	106.8	136.6	162.2	192.9
Արտահանում	35	43.9	42.6	31.7	34.2	27.7	32.5	31.1	22.5	30.5	28.5	29.6	38.5
Ներմուծում	89.8	149.8	88.7	63.8	78.5	82.9	78.1	62.4	70.2	76.3	108.1	132.6	154.4
Տեսակ. կշիռ (%)	13.3	16.8	11.6	8.5	10.9	9.3	9.1	6.2	4.7	5.1	4.9	5.1	6.0
Վրաստան	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընդհանուր ապրանքաշրջ.	64.5	54	49.1	37	38.1	34.9	30.8	48.1	51.6	77.6	97.6	130.2	221.3
Արտահանում	2.7	2.8	10.7	10.2	11.2	15.4	12.4	16.6	18.7	29.1	46.8	54.6	87.8
Ներմուծում	61.8	51.2	38.4	26.8	26.9	19.5	18.4	31.5	32.9	48.5	50.8	75.6	133.5
Տեսակ. կշիռ (%)	6.9	4.7	4.4	3.3	3.7	2.9	2.5	3.2	2.6	3.7	3.5	4.0	6.9
Թուրքիա	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Ընդհանուր ապրանքաշրջ.	5.2	12.2	45.5	31.5	41.2	41	34.8	39.6	37.4	41.8	63.7	90.8	128.3
Արտահանում	2.6	6.0	7.1	2.9	1.1	1.5	1.1	1.4	1.1	2.0	2.5	2.3	3.0
Ներմուծում	2.6	6.2	38.4	28.6	40.1	39.5	33.7	38.2	36.3	39.8	61.2	88.5	125.3
Տեսակ. կշիռ (%)	0.5	1.0	4.0	2.8	3.9	3.4	2.8	2.5	1.9	2.0	2.3	2.8	4.0

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուր, ՀՀ վիճակագրության ծառայություն

Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, տարածաշրջանի երկրներին բաժին է ընկնում ՀՀ արտաքին առևտրի միայն 17%: Սա բնականաբար որոշակի խնդիրների հետևանք է, որոնց շարքում հատկապես կարևորվում են փակ սահմանների խնդիրը, տարածաշրջանում երկրների զարգացման մակարդակի զգալի տարբերությունները և ազգային ու մշակութային առանձնահատկությունները: Սակայն ակնհայտ է, որ տվյալ տարածաշրջանը կարող է ունեն

³³¹ Աղբյուրների հետ արաքին առևտուրը չի դիտարկվել պաշտոնական տվյալների բացակայության պատճառով :

նալ տնտեսաառևտրային հարաբերությունների բավական մեծ ներուժ, երե լուծվեն տարածաշրջանում առկա տնտեսական ու քաղաքական խնդիրները:

Այսօր, երբ շատերը խոսում են հայ-թուրքական սահմանի բացման և քաղաքացիական տնտեսական և քաղաքական հարաբերությունների հաստատելու մասին, հիմնական փաստարկը վերաբերում է սահմանի բացումից սկսվող տնտեսական շահերին: Պարզ է, որ փակ սահմանը բացասական ազդեցություն ունի Հայաստանի արտաքին առևտրի վրա, ինչպես նաև արգելափակում է արևելյան Թուրքիայի սոցիալտնտեսական զարգացումը:

Հայաստանի արտաքին առևտրի զարգացման կարևորագույն արգելք է արտահանման և ներմուծման ծախսերում եղած տրանսպորտային ծախսերի զգալի մասնաբաժինը: Տրանսպորտային ծախսերը Հայաստանում կրկնակի գերազանցում են միջազգային միջին ծախսերը և տարածաշրջանում համարվում են ամենաբարձրը: Դրանք կարող են համեմատվել Մոնղոլիայի տրանսպորտային ծախսերի հետ՝ որպես երկրի, որը նույնպես ելք չունի դեպի ծով և տասն անգամ ավելի հեռու է մոտակա նավահանգստից, քան Հայաստանը: Բարձր տրանսպորտային ծախսերն անդրադառնում են նաև երկրի առևտրային կառուցվածքի վրա, քանի որ արտահանողներն ու ներմուծողները հակված են առևտուր անելու այնպիսի ապրանքների գծով, որոնք կապահովեն բարձր արժեք/կշիռ համապատասխանություն³³²: Դրա հետևանքով առևտուրը սահմանափակվում է բերել արդյունաբերության ցածր արժողության ապրանքներով: Ի հակադրություն այլ անցումային փուլում գտնվող տնտեսությունների՝ Հայաստանի արտահանման ծավալները տեքստիլի, հագուստեղենի և կոշիկեղենի գծով սահմանափակ են: Մինչդեռ այնպիսի ապրանքների տրանսպորտային ծախսը, ինչպիսիք են ադամանդներն ու զարդեղենը, որոնք հնարավոր է տեղափոխել օդային տրանսպորտով, և որոնք արժեքավոր են, կազմում է դրանց գին փոքր մասը, և առավել ձեռնտու է դառնում այս ապրանքատեսակների առևտուրը:

Այսպես՝ վերլուծելով 2007 թ.-ի ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը՝ պետք է նշել, որ Հայաստանից արտահանվող ապրանքների մեջ բարձր տեսակարար կշիռ ունեն հետևյալ ապրանքախմբերը՝ սև մետաղներ (21.1%), բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (18.1%), ոգելից և ոչ ոգելից խմիչքներ (11%), հանքաքար, խարամ և մոխիր (10.9%), մինչդեռ տեքստիլ հագուստի և կոշիկեղենի արտահանումը կազմում է համապատասխանաբար 1.8% և

³³² Sergey Sargsyan, ‘Transportation and Administrative Costs: Unearned Surplus’, Institute of Economic Research, Armenia.

0.1%³³³; Մյուս կողմից տվյալ ապրանքախմբերի գծով արտահանման փոքր ծավալների նման միտումը հնարավոր է նաև, որ հետևանք լինի տվյալ ապրանքախմբերի գծով ոչ մրցունակ տեղական արտադրությունների առկայության: Մեր կարծիքով, եթե նույնիսկ բացառենք փակ սահմանի գործոնը, ապա արտահանման ծավալների հետագա աճի հիմքում պետք է ընկած լինի տեղական մրցունակ արտադրությունների զարգացումը:

Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, փակ սահմանները հատկապես բացասական հետևանքներ են ունենում դեպի Թուրքիա և այլ երկրներ արտահանման ծավալների վրա, քան դեպի Հայաստան ներմուծման վրա: Մասնավորապես, դեպի Թուրքիա արտահանումների քանակը բավական փոքր է Թուրքիայի կողմից Հայաստանից ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվող սահմանափակման պատճառով³³⁴: Մասնավորապես ըստ 2007 թ. վիճակագրական տվյալների՝ Հայաստանը դեպի Թուրքիա արտահանել է 3.0 մլն դոլարի ապրանքներ, մինչդեռ Թուրքիայից Հայաստան ներմուծման ծավալը կազմել է 125.3 մլն դոլար:

1990 թ-ից ի վեր, երբ հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցն սկսեց կարևոր տեղ զբաղեցնել երկրի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական օրակարգում, տարատեսակ հետազոտություններ են իրականացվել՝ նպատակ ունենալով պարզելու, քննարկելու վերաբացումն ինչ ազդեցություն կարող է ունենալ Հայաստանի արտաքին առևտրի, ինչպես նաև ընդհանուր տնտեսության վրա:

Մասնավորապես ըստ AEPLAC ուսումնասիրության՝ սահմանների վերաբացման հետևանքով տրանսպորտային ծախսերը կնվազեն ոչ միայն այն պատճառով, որ Հայաստանը կնախընտրի առևտուր իրականացնել Թուրքիայի տարածքով, այլ նաև այն պատճառով, որ վրացական տրանսպորտային ընկերությունները ստիպված կլինեն նվազեցնել իրենց ծառայությունների գինը՝ մրցակցության պատճառով: Ինչպես վկայում են AEPLAC կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները, սահմանի վերաբացումից հետո 1 տարվա ընթացքում տրանսպորտային ծախսերը կնվազեն 4.1%-ով, որի հետևանքով ներմուծման ծավալները կավելանան 4.7%-ով, իսկ արտահանման ծավալները՝ 5.9%-ով: Միջմասնակետ հատվածում (մինչև 5 տարի) դեպի Թուրքիա արտահանման ծավալները կաճեն 17.4 անգամ՝ 2003 թվականի համեմատությամբ, իսկ Թուրքիայից ներմուծման ծավալները կաճեն 2.3 անգամ:

³³³ Statistical Yearbook of Armenia 2008.

³³⁴ Sergey Sargsyan, "Transportation and Administrative Costs: Unearned Surplus", Institute of Economic Research, Yerevan, Armenia, p. 109.

Մակայն, ըստ տվյալ ուսումնասիրության, սահմանի վերաբացման հետևանքով ՀՀ ՀՆԱ-ն կավելանա միայն 0.67%-ով³³⁵: Հետևաբար, ըստ վերոնշյալ ուսումնասիրության, Հայաստանը շահում է հիմնականում տրանսպորտային ծախսերի նվազման շնորհիվ:

AEPLAC ուսումնասիրության այն եզրակացությունը, որ հայ-թուրքական սահմանի վերաբացումն զգալի ազդեցություն չի կարող ունենալ Հայաստանի տնտեսական աճի վրա, սուր քննադատության ենթարկվեց: Մասնավորապես, այս ուսումնասիրության արդյունքները հակասում էին Համաշխարհային բանկի 2000 թ-ի ուսումնասիրությանը, ըստ որի՝ Հայաստանի ՀՆԱ-ն կաճի 30%-ով, եթե և Թուրքիան, և Ադրբեջանը բացեն իրենց սահմանները ՀՀ հետ³³⁶:

Մեկ այլ ուսումնասիրության մեջ Համաշխարհային բանկի տնտեսագետ Էվգենի Պոլյակովը գնահատել է թուրքական ապրանքները հիմնական ճանապարհով Հայաստան ներմուծելու և տրանսպորտային ծախսերը նվազեցնելու հնարավորությունները: Ըստ նրա հաշվարկների՝ հնարավոր կլինի տրանսպորտային ծախսերը նվազեցնել 0.9-1.2 մլն դոլարով: Տրանսպորտային ծախսերը կրճատելու մեկ այլ միջոց է թուրքական մավահանգիստներից օգտվելը, որի շնորհիվ տրանսպորտային ծախսերը կկրճատվեն 1.8-2.0 մլն դոլարով: Այդուհանդերձ պետք է հաշվի առնել, որ տվյալ ուսումնասիրությունը հիմնված է 1997-1999 թթ. տվյալների վրա, երբ Հայաստանի ներմուծման և հատկապես արտահանման ծավալները բավական փոքր էին: Տվյալ ուսումնասիրությունը չի դիտարկում նաև Հայաստանից Թուրքիա արտահանման տարբերակ³³⁷:

Համաշխարհային բանկի մեկ այլ տնտեսագետի՝ Հարի Բրոդմանի կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն՝ սահմանի վերաբացման շնորհիվ 20 տոննա տարողությամբ բեռնատարի տեղափոխման ծախսերը Փոքիից Երևան կնվազեն 30-35%-ով կամ որ նույնն է՝ 450-750 դոլարով³³⁸: Նշենք, որ ներկայումս 40 տոննա տարողությամբ բեռնատարի՝ Փոքիից Երևան տեղափոխման արժողությունը կազմում է մոտավորապես 1600 ԱՄՆ դոլար (dry container):

³³⁵ Armenian-European Policy and Legal Advice Center (AEPLAC), 2005, "Study of the Economic Impact on the Armenian Economy from Re-Opening of the Turkish-Armenian Borders", Yerevan, Armenia, p.13. Available at: <http://www.aiprg.net/UserFiles/File/Final%20Papers/Arm-Turk%20border%20article-AEPLAC.pdf>.

³³⁶ Haroutian Khachatryan, "Report: No Big Gains to Armenia if Turkey Lifts Blockade", 8/09/05. Available at: <http://www.eurasianet.org/departments/business/articles/cav080905.shtml>.

³³⁷ Evgeny Polyakov, "Changing Trade Patterns after conflict resolution in the South Caucasus", the World Bank, 2001, p. 29. Available at: http://www-wds.worldbank.org/servlet/WDSContentServer?WDSID=2001/05/24/000094946_0105050456527/Rendered/PDF/multi0page.pdf.

³³⁸ Harry G. Broadman, "From Disintegration to Reintegration, Eastern Europe and the Former Soviet Union in International Trade", The World Bank.

Ըստ մեկ այլ ուսումնասիրության՝ հայ-թուրքական սահմանի բացման դեպքում թուրքական ներմուծումների ծավալը Հայաստան կավելանա 50%-ով: Ի հավելումն դրա՝ սահմանի բացման հետևանքով տարածության յուրաքանչյուր 10% կրճատման արդյունքում Թուրքիայից ներմուծման ծավալները կավելանան 15.6%-ով: Ինչ վերաբերում է Հայաստանից դեպի թուրքական շուկա արտահանման ծավալներին, ապա դրանք կավելանան 38%-ով: Սահմանի վերաբացման հետևանքով 10%-ով հեռավորության կրճատման արդյունքում Հայաստանից արտահանման ծավալը կավելանա 12.6%-ով: Սակայն ըստ հեղինակների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի և Թուրքիայի ինչպես ընդհանուր ՀՆԱ-ն, այնպես էլ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն աճի միտում ունեն, առևտրային հոսքերը երկու երկրների միջև էլ ավելի բարձր աճի տեմպեր կունենան³³⁹:

Ըստ Համաշխարհային բանկի տնտեսագետների՝ Հայաստանի ներկայիս առևտրային ցածր արդյունավետության հիմնական պատճառը ՀՀ կառավարության կողմից իրականացվող մակրոտնտեսական և կառուցվածքային քաղաքականությունը չէ, քանի որ 1990-ականներից ի վեր Հայաստանը համարվում է ԱՊՀ երկրների շարքում կարևորագույն բարեփոխումներ իրագործողներից մեկը: Հետևաբար առևտրի ցածր արդյունավետությունը կարող է բացատրվել հարևանների հետ փակ սահմանների ազդեցությամբ, որը շարունակում է սահմանափակել հայկական արտահանման ներուժը³⁴⁰:

Չմայած ազատ առևտրային ռեժիմին՝ Հայաստանի ինտեգրվածությունը համաշխարհային արտադրական ցանցին այնքան էլ մեծ չէ: Բարձր տրանսպորտային ծախսերը խոչընդոտում են այդ գործընթացին, քանի որ կիսավերանշակված հումքի ներմուծումը հետագա վերանշակման նպատակով կամ արտադրված մասերի ներմուծումը հավաքման համար, ինչպես արվում է կենտրոնական Եվրոպայի շատ երկրներում, Հայաստանի դեպքում տնտեսական տեսանկյունից ձեռնտու չէ³⁴¹:

Դեպի ԵՄ Հայաստանի արտահանման կառուցվածքը լավագույն ինդիկատոր է բացահայտելու այն մարտահրավերները, որոնց բախվում է Հայաս-

տանը փակ սահմանների հետևանքով: Անցումային տնտեսությամբ շատ երկրների համար առևտուրը ԵՄ հետ վճռորոշ շարժիչ ուժ է եղել արտահանման ծավալների ընդլայնման, գրադվածության ավելացման և տնտեսական աճի ապահովման համար: Ուշագրավ է այն հանգամանքը, որ դեպի ԵՄ արտահանվող ապրանքների կառուցվածքում չափազանց փոքր մասնաբաժին են կազմում տեքստիլ ապրանքները և հագուստեղենը, որոնք այլ անցումային տնտեսություններում դեպի ԵՄ արտահանվող ապրանքների ցանկում կարևոր տեղ են գրադեցնում: Որպես օրինակ նշենք այն հանգամանքը, որ 2001 թ.-ի դրությամբ այս երկու ապրանքատեսակները կազմում էին Լատվիայի արտահանման 1/4-ը, իսկ Մոլդովայի արտահանման կեսից ավելին:

Մյուս կողմից հարկ է նշել, որ Հայաստանի տնտեսական շրջափակման ուղղակի ազդեցությունը ՀՀ առևտրի ծավալների վրա այնքան մեծ չէ, որքան անուղղակի ազդեցությունը՝ ներդրողների սպասելիքներ, բարձր ներդրումային դիսկ և ՕՈՒՆ-երի փոքր ծավալներ, որն էլ ուղղակիորեն անդրադառնում է երկրի տնտեսական աճի վրա³⁴²:

Այսպիսով՝ Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումն զգալի ազդեցություն կունենա Հայաստանի տնտեսության վրա: Այս երեքստեքստում առաջնային խնդիր է փակ սահմանը, որն առաջին հերթին ստեղծում է սահմանափակ տրանսպորտային (բեռնափոխադրումների համար) ուղիներ՝ հարաբերականորեն բարձր սպասարկման գներով: Ինչպես տեսանք, կան բազմաթիվ աշխատանքներ, որոնցում քննարկվում է մեկնաբանվում է փակ սահմանի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Օրինակ՝ Պոլյակովը գնահատել է, որ շրջափակման վերացումը և տրանսպորտային ցանցի զարգացումը կարճ ժամանակահատվածում կարող է կրկնապատկել Հայաստանի արտահանման ծավալը և ավելացնել ՀՆԱ-ն ավելի քան 30%-ով³⁴³: Վերջին հետազոտություններում արդեն ցույց է տրվում, որ սահմանի բացումից ստացվող տնտեսական արդյունքները հարաբերականորեն փոքր կլինեն³⁴⁴:

³³⁹ Richard Beilock, Karine Torosyan, "A Phased Strategy for Opening Armenia's Western Border", Draft, p.21. Available at: <http://www.aiprg.net/UserFiles/File/Final%20Papers/Rich%20Beilock%20and%20Karine%20Torosyan%20Paper%20Final.pdf>.

³⁴⁰ Lev Freinkman, Evgeny Polyakov, Carolina Revenco "Armenia's Trade Performance in 1995-2002 and the Effect of Closed Borders: A Cross-Country Perspective", the World Bank, Armenian International Policy Research Group, Working Paper No. 04/04, January 2004, p. 2. Available at: http://mpr.aub.uni-muenchen.de/10065/1/MPRA_paper_10065.pdf.

³⁴¹ Lev Freinkman, Evgeny Polyakov, Carolina Revenco "Armenia's Trade Performance in 1995-2002 and the Effect of Closed Borders: A Cross-Country Perspective", the World Bank, Armenian International Policy Research Group, Working Paper No. 04/04, January 2004, p. 2. Available at: http://mpr.aub.uni-muenchen.de/10065/1/MPRA_paper_10065.pdf.

³⁴² Lev Freinkman, Evgeny Polyakov, Carolina Revenco "Armenia's Trade Performance in 1995-2002 and the Effect of Closed Borders: A Cross-Country Perspective", the World Bank, Armenian International Policy Research Group, Working Paper No. 04/04, January 2004, p. 2. Available at: http://mpr.aub.uni-muenchen.de/10065/1/MPRA_paper_10065.pdf.

³⁴³ Evgeny Polyakov (2002) "Changing Trade Patterns after Conflict Resolution in South Caucasus", Washington D. C.: World Bank.

³⁴⁴ AEPLAC (2005). "Study of the Economic Impact on the Armenian Economy From Re-Opening of the Armenian-Turkish Borders: Implications for External Trade".

Մեր կարծիքով կան մասնավոր կարևոր «ծախսեր», որոնք փակ սահմանի հետևանք են: Փակ սահմանն իրականում Հայաստանի և Թուրքիայի միջև կարգավորված քաղաքական հարաբերությունների բացակայության արդյունք է: Մյուս կողմից կարգավորված քաղաքական հարաբերություններ չկան մասն Հայաստանի և Ադրբեջանի միջև: Մեր կարծիքով Հայաստանի և Թուրքիայի միջև կարգավորված քաղաքական հարաբերությունների զարգացումը կարող է հետագայում հիմք դառնալ Հայաստանի և Ադրբեջանի միջև քաղաքական հարաբերությունների զարգացման համար: Այստեղից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև ապագայում կարող է հակամարտություն բռնկվել, Հայաստանը վերածվում է ռիսկային գոտու: Այսպես՝ 1999-2006 թթ. ընկած ժամանակաշրջանում Հայաստանը դասվել է աշխարհի 10 ամենաոսկային (արտաքին կոնֆլիկտ) երկրների շարքին՝ միջին առումով գրավելով 8-րդ տեղը³⁴⁵: Այս գործոնն իր հերթին անկախ փակ սահմանի գործոնից (բարձր տրանսպորտային ծախսեր) իր ազդեցությունն է բողոնում ՀՀ տնտեսության վրա (օրինակ ՕՌՆ-ի ռ քաղաքար մակարդակ):

Այսպիսով՝ արտաքին կոնֆլիկտի գործոնով պայմանավորված բարձր ռիսկայնությունն իր ազդեցությունն է ունենում ՀՀ տնտեսության մեջ ՕՌՆ-ի հոսքի վրա ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների մակարդակում: Օտարերկրյա ներդրողներն ունեն բազմաթիվ այլընտրանքային հնարավորություններ ներդնելու իրենց միջոցներն այլ երկրներում, քանի որ նրանց ներդրումային որոշումները հիմնականում պայմանավորված են հարաբերական ռիսկայնության և այլընտրանքային հնարավորությունների գնահատումով: Մյուս կողմից մի շարք տեղական ներդրողներ, մասնավորապես նրանք, ովքեր տիրապետում են հարաբերականորեն խոշոր կապիտալ միջոցների, մույնպես հնարավորություն ունեն ներդնելու արտասահմանյան ակտիվներում: Կան մի շարք հետազոտություններ, որոնցում ցույց է տրվում, որ ՕՌՆ-ի հոսքը դեպի Հայաստան զգալի փոքր է, քան կարող էր իրականում լինել, և դրա հիմնական պատճառներից մեկը բարձր ռիսկայնությունն է³⁴⁶:

Ընդհանուր առմամբ համաշխարհային տնտեսության մեջ ՕՌՆ հոսքերը հիմնականում ուղղվում են դեպի այն երկրներ և տարածաշրջաններ, որտեղ կապիտալից ստացվող հատույցը առավելագույնն է՝ հաշվի առնելով հարաբերական աշխատավարձի մակարդակը, տեղական շուկայի տարողունակությունը, քաղաքական ռիսկը և այլ գործոններ, որոնք ազդում են կամ կարող են

ազդել կապիտալի սպասվող հատույցի վրա: Հարկ է նշել, որ այլ հավասար պայմաններում տեղական շուկայի տարողունակությունը կարևոր գործոն է ՕՌՆ-ի ներգրավման համար: Մակայն հնարավոր է, որ այս գործոնի կարևորությունը մեղմանա, եթե դա փոխհատուցվի արտահանման հարաբերական փոքր ծախսերով: Նշենք մաս, որ Հայաստանի ներքին շուկան բավական փոքր, իսկ արտահանման ծախսերը զգալի բարձր են Թուրքիայի և Ադրբեջանի հետ փակ սահմանի առկայության հետևանքով:

4/6 «Նաբուկո» գազատարի նախագիծը և դրա (հնարավոր) քաղաքական ազդեցությունը ԵՄ-Թուրքիա հարաբերությունների վրա

Բնական գազն այսօր հանգուցային նշանակություն ունի ԵՄ-ի էներգետիկ անվտանգության ապահովման գործում, որն իրենով պայմանավորում է ԵՄ-ի և նրա առանձին երկրների հատուկ ուշադրությունը ածխաջրածնային պաշարների արդյունահանման և տարանցման խնդիրներին: Էներգակիրների ներկրումից հսկայական կախվածությունը քաղաքական տեսանկյունից մեծ ազդեցություն է բողոնում ԵՄ-ի և մատակարար ու տարանցիկ երկրների ու տարածաշրջանների փոխհարաբերությունների վրա՝ պայմանավորելով մի կողմից աղբյուր և տարանցիկ երկրների ակտիվ ներգործությունը ԵՄ-ի քաղաքականության մշակման վրա, մյուս կողմից ԵՄ-ի ներգրավվածությունն այդ երկրների ու տարածաշրջանների ներքին խնդիրներում: Թերևս հենց այս հանգամանքներով պետք է բացատրել տարեսկզբին ռուս-ուկրաինական հերթական «գազային հակամարտությունից» հետո «Նաբուկո» նախագիծը վերակենդանացումը: Չնայած ընդգրկում քննարկումներին ու հայտարարություններին՝ այդ նախագծային գազատարն առաջիկայում ներկա ձևաչափով չի կարողանա ԵՄ-ի համար ձեռք բերել ռազմավարական նշանակություն այն չափով, որ դառնա աշխարհաքաղաքական խոշոր շահարկումների, առևտրի առարկա:

Բնական գազը անշուշտ հանգուցային նշանակություն ունի ԵՄ-ի էներգետիկ անվտանգության ապահովման գործում³⁴⁷ և պայմանավորում է ԵՄ-ի ու

³⁴⁵ International Country Risk Guide Indicators.

³⁴⁶ Brada, Josef, Ali M. Kutan, and Taner M. Yigit (2005). "The Effects of Transition and Political Instability on Foreign Direct Investment in ECE Emerging Markets".

³⁴⁷ Համաձայն ԵՄ-ի Վիեննական կամ ծառայության (ԵՎՌՈՍՍՍ) տվյալների՝ 2005 թ. ԵՄ-27 էներգապահովման 29%-ը կազմել է միջուկային վառելիքը, 22%-ը՝ կոչտ վառելիքը, 21,2%-ը՝ բնական գազը, 14,4%-ը՝ նավթը, իսկ 13,5%-ը՝ վերականգնվող էներգապաշարները (Figure 11.1: Production of primary energy, EU-27, 2005, Europe in figures, Eurostat yearbook 2008, p. 438):

նրա առանձին երկրների հատուկ ուշադրությունը ածխաջրածնային պաշարների արդյունահանման և տարանցման խնդիրներին: Թերևս անհրաժեշտություն չկա ներկայացնելու և հիմնավորելու ԵՄ-ի երկրների տնտեսությունների աճող կախվածությունը էներգապաշարներից, սակայն հարկ է հակիրճ անդրադարձ կատարել մասնավորապես բնական գազի օգտագործման ծավալներին և դրա ստացման աղբյուրներին: Այսպես՝ Եվրոտատի տվյալների համաձայն, եթե 1995 թ. ԵՄ-ի ներկայիս անդամների էներգետիկայի կախվածությունը բնական գազից կազմել է 43,6%, ապա 2005 թ. այդ կախվածությունը կազմել է 57,7%³⁴⁸: Ըստ որում, էներգետիկ պաշարների տեսանկյունից ոչ ինքնաբավ ԵՄ-ի համար գազի խոշորագույն մատակարար-երկրներ են Ռուսաստանը, Նորվեգիան և Ալժիրը³⁴⁹: Էներգակիրների ներկրումից այդչափ կախվածությունը քաղաքական տեսանկյունից եռակի ազդեցություն է բողոնում ԵՄ-ի և մատակարար ու տարանցիկ երկրների/տարածաշրջանների փոխհարաբերությունների վրա: Մի կողմից լիովին օրինակալի են դառնում էներգատարների անվտանգության, հետևաբար տարանցիկ պետությունների և տարածաշրջանների կայունության նկատմամբ ԵՄ-ի կենսական շահագրգռվածությունը, ինչպես նաև մեկ աղբյուրից իր տնտեսաքաղաքական կախվածությունը թուլացնելու նպատակով այլընտրանքային էներգապաշարների աղբյուրներ գտնելը: Մյուս կողմից բնական պետք է համարել տարանցիկ պետությունների՝ իրենց կարգավիճակը ԵՄ-ի հետ փոխհարաբերություններում խաղաքարտ դարձնելու հաճախակիացած «գայրակողությունները»: Թերևս հենց այս համագամներն էր պետք է բացատրել տարեսկզբին ռուս-ուկրաինական հերթական «գազային հակամարտությունից» հետո «Նաբուկո» նախագծի վերակենդանացումը:

Խոսքն այստեղ նոր գազամուղի կառուցման մասին է, որը թույլ կտա ԵՄ-ին թրթափել Ռուսաստանից գազային կախվածությունը: Այդպիսի նոր գազա-

տարի կառուցման նկատմամբ ԵՄ-ի հետաքրքրությունը բարձրացավ հատկապես ռուս-ուկրաինական գազային ճգնաժամից հետո, երբ Եվրոպան վերապրեց գազային շրջափակման մեջ լինելու դառը զգացողությունը: Այդ մասին են վկայում ԵՄ-ի պաշտոնական ներկայցուցիչների կողմից վերջին ելույթների ժամանակ կատարված հայտարարությունները: Մասնավորապես, Եվրոպական հանձնաժողովի նախագահ ժոզե Մանուել Բարոզոն 2009 թ. հունվարի 20-ին տված հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ Ռուսաստանի և Ուկրաինայի ղեկավարներն ավելի քիչ վստահելի են, քան որոշ աֆրիկյան երկրներ, և դա օրբյեկտիվ փաստ է, որ Ռուսաստանից ու Ուկրաինայից եկող գազն անվտանգ չէ³⁵⁰:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ պաշտոնական Բրյուսելն սկսել է հանդես գալ «Նաբուկո» գազամուղը կառուցելու, ընդհուպ այդ ծրագրի ֆինանսավորման մեջ որոշակի ներդրում ունենալու, ինչպես նաև վարկեր և վարկային երաշխիքներ տրամադրելու հայտարարություններով: Գազատարի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 7.9 մլրդ եվրո, իսկ դրանում ԵՄ-ի ֆինանսական մասնակցությունը կազմելու է շուրջ 2 մլրդ եվրո³⁵¹: Եվրոպական զարգացման և վերակառուցման բանկը նույնպես հայտնել է իր պատրաստակամությունը ծրագրին օժանդակելու համար:

Վրաց-թուրքական կամ թուրք-իրանական սահմանից մինչև Ավստրիա մոտավորապես 3300 կմ երկարություն և 31 մթն թողունակությամբ նախագծային այս գազատարը նախատեսում է Կենտրոնական Ասիայից (Ղազախստան, Թուրքմենիա), Կասպյան ավազանից (Ադրբեջան, Ռուսաստան), Մերձավոր Արևելքից (Իրան, Իրաք, ԱՄՆ), Եգիպտոսից բնական գազը Թուրքիայի, Բուլղարիայի, Ռումինիայի տարածքով հասցնել Ավստրիա, այստեղից՝ Կենտրոնական և Արևմտյան Եվրոպա: «Նաբուկո» ընկերությունը պատրաստվում է ապահովել 2030 թ. ԵՄ-ի, բավական երկրների և Շվեյցարիայի 816 մլն խմ (ներկայումս՝ 512 մլն) գազի պահանջարկի 83,140 մլն-ը՝ առաջ անցնելով Ռուսաստանից (ներկայումս՝ 47,820 մլն):

Նախնական հաշվարկներով նախագիծը պահանջում է 7.9 մլն եվրո ներդրում³⁵²: Նախագծի մեկնարկը նախատեսված է 2011 թ., իսկ ավարտը՝ 2015 թ.: Նախագծի ներկայիս մասնակից-ընկերություններն են OMV Gas & Power GmbH (Ավստրիա), Transgaz S.A. (Ռումինիա), BOTAS (Թուրքիա), MOL Hungarian Oil and Gas Plc (Հունգարիա), Bulgarian Energy Holding (Բուլղարիա), RWE Supply & Trading GmbH (Գերմանիա):


³⁴⁸ Euobserver.com (<http://euobserver.com/19/27442>).

³⁵¹ St'u article by Eubusiness (<http://www.eubusiness.com/news-eu/1233064024.34>).

³⁵² Project Description / Pipeline Route - <http://www.nabucco-pipeline.com/project/project-description-pipeline-route/project-description.html>.

³⁴⁸ Համեմատության համար նշենք, որ, նույն աղբյուրի համաձայն, նշված ժամանակահատվածում քարածխից կախվածությունը 28,2%-ից հասել է 53%-ի, նավթից կախվածությունը՝ 74,4%-ից 82,2%-ի:

³⁴⁹ Եվրոտատի տվյալներով, Ռուսաստանից ներկրվող գազը 2005 թ. կազմել է 41,9%, Նորվեգիայից՝ 22,3%, Ալժիրից՝ 19,1% (Europe in figures, p. 440): Ապագայում գազից կախվածությունը կհասնի 34%-ի, որի 80%-ը 2030թ. կներկրվի (Markets for Nabucco <http://www.nabucco-pipeline.com/company/markets-sources-for-nabucco/markets-sources-for-nabucco.html>): Եվրոպական քաղաքական ուսումնասիրությունների շվեդական ինստիտուտի տվյալներով՝ Ռուսաստանից գազի խոշորագույն մատակարարը «Գազպրոմ» ընկերությունն է (29%), Նորվեգիայից՝ «Մտասոյլ» ընկերությունը (17%), Ալժիրից՝ «Սուարբաք» ընկերությունը (13%) (Le Coq Ch., Paltsava E., Common Energy Policy in the EU: The Moral Hazard of the Security of External Supply – SIEPS 2008:1 – Swedish Institute for European Policy Studies, p. 23):



«Նաբուկո» նախագծի «վերակենդանացման» առաջին քայլը կատարվեց հենց 2009 թ. տարեկազմին, երբ ԵՄ-ում նախագահող Չեխիայի վարչապետ Մ. Տոպոլանեկի նախաձեռնությամբ Բուդապեշտում կրակվեց «Նաբուկո» նախագծի մասնակից երկրների ներկայացուցիչների հանդիպումը: Այդ գազատարի կառուցումն աներկբաորեն նոր հարթության վրա կդնի Թուրքիայի ու ԵՄ-ի հարաբերությունները՝ թույլատրելով ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը դիտարկել նոր զարգացումների լույսի ներքո: Մասնավորապես, այդ գազատարի կառուցումը ոչ միայն տնտեսապես, այլ նաև քաղաքականապես շահեկան է Թուրքիայի համար, քանի որ այն անցնելու է Թուրքիայի տարածքով և կարող է ազդեցիկ գործիք դառնալ Թուրքիայի ձեռքերում ԵՄ-ին անդամակցելու ճանապարհին: Թուրքիայի քաղաքականության այսպիսի ձևաչափը նախքան գազատարի կառուցումը արդեն իսկ նախանշվում է:

Դեռևս հունվարի 19-ին, ի պատասխան Թուրքիայի վարչապետ Ռ. Թախիլի Էրդողանի այն հայտարարությանը, թե ԵՄ-ին անդամակցության քանակությունների սառեցման դեպքում Թուրքիան կվերանայի իր դիրքորոշումը այդ գազատարի կառուցման հարցում, ըստ որում՝ դեռ հարցականի տակ է այդ նախագծի տնտեսական արդյունավետությունը, Եվրոպական հանձնաժողովի նախագահ Շ. Մանուել Բարոզոն կոչ արեց չմոխրակապակցել այդ երկու հարցերը: Նա միաժամանակ հավելեց, որ եթե Թուրքիան օգնի Եվրոպային

բուլացնել ռուսական մատակարարումներից կախվածությունը, ապա դա կարող է դրական ազդեցություն բողնել եվրոպական հասարակական կարծիքի վրա ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում: Ի վերջո նրանց հաջողվեց համաձայնության գալ այն հարցում, որ այդ գազատարն իսկապես անհրաժեշտ է: Թուրքիայի վարչապետը վստահեցրեց, որ Թուրքիան պատրաստ է հանգուցային դերակատարություն ստանձնել Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման գործում և մտադիր չէ գազի տարանցումն օգտագործել որպես քաղաքական զենք³⁵⁴:

Հատկանշական է, որ Կիպրոսի հունական հատվածի ղեկավարությունն արդեն հայտարարել էր, որ չեն համաձայնի վերսկսել ԵՄ-Թուրքիա էներգետիկ քանակություններն այնքան ժամանակ, քանի դեռ Կիպրոսի և Թուրքիայի միջև չեն կարգավորվի նավթարդյունահանման խնդիրները:

Նույն այդ ժամանակահատվածում ԵՄ-ը որոշեց էներգետիկ խնդիրների համար իր բյուջեից հատկացնել 3,5 մլրդ եվրո, որից 250 մլն կհատկացվի «Նաբուկո» նախագծին՝ սակայն դրա կալուցությունն ապահովելու նպատակ ունեցող հիմնադրամի ստեղծման համար³⁵⁵:

Հունվարի 27-ին Բուդապեշտում կայացած հանդիպման ընթացքում որոշվեց մինչև հունիսի 30-ը կնքել նախագծի տեխնիկական և իրավական կողմերին վերաբերող համաձայնություն: Եվրոպական ներդրումային բանկը պատրաստակամություն է հայտնել ֆինանսավորելու գազատարի շինարարության մինչև 25%-ը, Ջարգացման և վերակառուցման եվրոպական բանկը ևս պատրաստակամություն է հայտնեց քննարկելու ֆինանսավորման տարբեր առաջարկություններ³⁵⁶:

«Նաբուկո» գազատարի կառուցման ջատագովներից է նաև ԱՄՆ-ը: Դեռևս հունվարի 15-ին ԱՄՆ պետքարտուղարի թեկնածու Հ. Քլինթոնը հայտարարել էր, որ Բ. Օրամայի վարչակազմն ԱՄՆ-ի դաշնակիցներից ակնկալում է այդ գազատարի կառուցման վերաբերյալ քաղաքական համաձայնությունների կնքում³⁵⁷:

³⁵⁴ Jozwiak R., Nabucco discussed by EU, Turkey - <http://www.europeanvoice.com/article/2009/01/nabucco-discussed-by-eu-turkey/63670.aspx>.

³⁵⁵ Leviev-Sawyer C., Nabucco summit ends with political support but uncertainty about funding - http://www.sofiaecho.com/article/nabucco-summit-ends-with-political-support-but-uncertainty-about-funding/id_34256/catid_68.

Nabucco summit ends with political support but uncertainty about funding.

³⁵⁶ EU banks back non-Russian gas pipeline - <http://euobserver.com/19/27485>.

³⁵⁷ "Газовая опера" от ЕС и Турции: газопровод "Набукко" построит в обход Украины и России? - <http://www.qwas.ru/ukraine/vitrenko/Gazovaya-opera-ot-ES-i-Turcii-gazoprovod-Nabukko-postrojat-v-obhod-Ukrainy-i-Rossii/>.

³⁵³ Markets for Nabucco - <http://www.nabucco-pipeline.com/company/markets-sources-for-nabucco/markets-sources-for-nabucco.html>.

Կենտրոնական Ասիայում ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչ Պ. Մորելը ռուսական «Նեգոպլիսիմայա գազետա» թերթին տված հարցազրույցում կասկած է հայտնել, որ «Նաբուկո» գազատարը կմեկնարկի 2013 թ.: Դրա համար անհրաժեշտ կլինի 5-12 տարի: Նրա խոսքերով՝ ԵՄ-ն անշուշտ հետաքրքրված է «Նաբուկո» նախագծով, սակայն նրա ամբողջական մոտեցումն արտացոլված է էներգահոսքերի ցանց ներառող «Հարավային միջանցքի» հայեցակարգում: Կենտրոնական Ասիայից մեկնարկող այդ «միջանցքի» համանմաններն են «Հյուսիսային միջանցքը»՝ Նորվեգիայից և Հյուսիսային ծովից, «Արևելյանը»՝ Ռուսաստանից և «Միջերկրածովյանը»՝ Աֆրիկայից ներկրումների իրականացման համար:

Ըստ որում, «մենք ընդունում ենք Ռուսաստանի շահերը Կենտրոնական Ասիայում: Մենք տեսնում ենք, որ կենտրոնաասիական երկրները ցանկանում են բազմազանցնել իրենց գործընկերներին՝ միաժամանակ Ռուսաստանին դիտարկելով հանգուցային գործընկեր: Բայց մենք բոլորս կարող ենք խաղալ մեր դերը տարածաշրջանում: Այդ ամենը կարելի է ներկայացնել եռանկյունու տեսքով, որի գագաթներն են ԵՄ-ը, ՌԴ-ը և Կենտրոնական Ասիան»³⁵⁸:

Շատերը կարծում են, որ «Նաբուկոն»-ն ԵՄ-ի երկրների՝ ռուսական «Գազպրոմ»-ից կախված լինելուց ազատվելու ամենավաղ խորհրդանշան է, որը, սակայն, վաղուց այդքան հանդիպում է լուրջ խոչընդոտների: Ինչպես նշում է ֆրանսիական «Լը Տեմպլ», Արցախյան հիմնահարցում միջնորդի դերակատարություն ստանձնելու Ռուսաստանի պատրաստակամության հիմքում ընկած է տարածաշրջանային գազային մրցապայքարում առաջատար դիրքեր գրավելու նրա ձգտումը: Այս իմաստով պատահական չի համարվում նաև Ռուսաստանի՝ ԵԱՀԿ դիտորդների մանդատը Հարավային Օսիայում երկարած գնդում առնչվող անհամաձայնության համընկնումը Հարավային ու Հյուսիսային Օսիաները կապող գազատարի կառուցմանը: Հենց «Հարավային հոսանքն» է Ռուսաստանը հակադրում «Նաբուկո» նախագծին, որում որպես գլխավոր գործընդեր հանդես է գալիս Իտալիան³⁵⁹: Եվ եթե առաջիկայում այս հարցը չկարգավորվի, ապա Ռուսաստանը կարող է հայտարարել, որ «ձաղթել» է հարավային ուղու համար մղվող պայքարում:

Փորձագետները կասկածում են, որ Ռուսաստանի հետ սերտորեն համագործակցող կենտրոնաասիական երկրների գազային հզորությունները կբա-

վարարեն այս խողովակաշարը լցնելու համար³⁶⁰: Դրա համար անհրաժեշտ կլինի իրանական գազը, սակայն Արևմուտքի ներկայիս հարաբերություններն իսլամական այս հանրապետության հետ բույլ չեն տալիս այդ լուծումը տեսնել կարճաժամկետ հեռանկարում: Ինդիքն էլ ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ նախ՝ անհրաժեշտ ծավալով գազ դեռևս չկա³⁶¹, երկրորդ՝ տվյալներ են շրջանառվում այն մասին, որ իր բողոնակության սահմանափակության պատճառով «Նաբուկո» գազատարը ռազմավարական դեր չի խաղա: Թուրքիայի մասնաբաժինը դրանից կկազմի գրեթե 1/3-ը, իսկ Բուլղարիային, Ռումինիային, Հունգարիային, Ավստրալիային և Իտալիային³⁶² բաժին կհասնի նրանց պահանջարկից էականորեն պակաս խմբաքանակ³⁶³: Այս համատեքստում ԵՄ-ի էներգետիկ ռազմավարության առավել օպտիմալ ուղղությունը դառնում է գազի հիմնական մատակարար եղող ՌԴ-ին չհակադրվելը:

³⁶⁰ Որոշ տվյալների համաձայն՝ «Նաբուկո» գազատարը կարող է բավարարել ԵՄ-ի պահանջարկի ընդամենը 5%-ը (EU pipeline scheme gains momentum - <http://news.bbc.co.uk/2/hi/europe/7854208.stm>).

³⁶¹ Սկզբնապես նախատեսվում էր գազատարը լցնել հենց իրանական գազով, սակայն, երբ 2006 թ. Իրանը հայտարարեց, որ զարգացնելու է իր միջուկային ծրագիրը, նրան րացատեցին ծրագրից՝ փոխարենը նախատեսելով կենտրոնաասիական և արբեքանական գազը: Բայց Ռուսաստանն իր հերթին գնեց ողջ դազախառնուրդը և ուղիղ կախված, մասամբ նաև բյուրենական գազը: Արդյունքում մնաց միայն Ադրբեյջանը, որն ինքնուրույն ի վիճակի չէ ապահովելու գազի անհրաժեշտ ծավալով մատակարարում: Ըստ որում, Կասպից ծովում ցանկացած տնտեսվարում պետք է համաձայնեցված լինի «կասպյան տերությունների»՝ Ռուսաստանի, Ադրբեյջանի, Իրանի, Գազախաստանի և Թուրքմենիայի միջև:

³⁶² ԵԶՈՒԵԻ տվյալներով, Սլովակիան, Ֆինլանդիան, Բարբան կերկրները ռուսական մատակարարումից կախված են 100%-ով, Հունաստանը՝ 86.8%, Չեխիան, 80.8%, Ավստրիան՝ 73.4%, Հունգարիան՝ 63.4%, Լեհաստանը՝ 50.2%, Գերմանիան՝ 36%, Ֆրանսիան՝ 26.8%, Իտալիան՝ 26% (Le Coq Ch., Paltseva E., Ibid. p. 24).

³⁶³ Балмасов С., Евросоюз мятается между российским газом - <http://www.pravda.ru/world/europe/east-europe/19-01-2009/298899-ukraine-0>

³⁵⁸ Спецпредставитель ЕС по Центральной Азии высказал сомнение, что газопровод Nabucco будет запущен в 2013 г - <http://www.oilru.com/news/103317>.

³⁵⁹ Nabucco против "Газпрома", еще одна газовая война - <http://www.inopressa.ru/letemps/2009/01/15/16:29:01/gazprom>.

Եզրակացություն

ԵՄ-ին ձեռնադրելու թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացումը: Իհարկե, ԵՄ ուզում է, որ բանակցային գործընթացն ինչքան հնարավոր է երկար ձգվի՝ հետաձգելով մաս վերջնական որոշման ընդունումը: Այդ պատճառով ԵՄ առաջ է քաշում Կիպրոսյան խնդիրը, որը Թուրքիայի բռնած անգիջում դիրքորոշման պատճառով նրա ձեռքին լավ գործիք է դարձել անդամակցության հարցը դանդաղեցնելու համար: Կամ մաս մի շարք այլ փաստարկներ ԵՄ-ի «հակաթուրքական» զինանոցում՝ Թուրքիայի ժողովրդավարացման հարցը, նրա բնակչության բանակը, սոցիալական զարգացածության մակարդակը, թուրքական բանակի՝ չափից ավելի մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին, աշխարհագրական դիրքը, ինչպես նաև այլ հարցեր: Այս շարքը կարելի է ընդլայնել, եթե հարկ լինի. օրինակ՝ մի օր էլ եվրոպական դեկավարները որպես պաշտոնական նախապայման առաջ կբաշեն Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, երբ զինանոցում այլևս այլ փաստարկ չլինի:

Թուրքական կառավարությունն էլ իր հերթին պետք է բարեփոխումները շարունակի ոչ միայն ԵՄ-ին հաճոյանալու, այլև երկրի ժողովրդավարացմանը նպաստելու համար: Ռ՝Պ գիտե, միզուցե Թուրքիային էլ այլևս ցանկալի չլինի միանալ ԵՄ-ին, երբ պետությունն արդեն հասած կլինի զարգացածության այն մակարդակին, որն ընդունելի կլինի եվրոպական ընտանիքին ինտեգրվելու համար: Սակայն սա բիչ հավանական է, քանի որ ԵՄ անդամակցությունից եկող օգուտներն անզմահատելի կլինեն Թուրքիայի համար: ԵՄ-ն իր հերթին բիչ օգուտներ չի ստանա Թուրքիայի անդամակցությունից. նախ Թուրքիան զբաղեցնում է ռազմավարական առումով շատ բարենպաստ աշխարհագրական դիրք, որը թույլ կտա ԵՄ-ին ընդլայնել իր ռազմաքաղաքական ազդեցության ոլորտը՝ որպես համաաշխարհային դերակատար, կշահի մաս ԵՄ-ի տնտեսությունը՝ ձեռք բերելով սպառման մեծ շուկա և աշխատուժ, ինչպես նաև, Թուրքիայի անդամակցության կողմնակիցների կարծիքով, հնարավոր կլինի կամ-խել հետագա բախումները քրիստոնեական և մուսուլմանական համայնքների միջև:

ԵՄ-ը պետք է քայլեր ձեռնարկի ցույց տալու համար, որ ինքը շահագրգռված է տեսնել Թուրքիային իր կազմում, իհարկե այն ժամանակ, երբ Թուրքիան պատրաստ կլինի: ԵՄ-ը պետք է հենց ինքը շահագրգռի Թուրքիային գնալ բարեփոխումների, այլ ոչ թե կարուկ բնադատությամբ ու մերժողական կեցվածքով հետ մղի: Թուրքիան էլ իր հերթին պետք է շարունակի բարեփո-

խումների իրագործումը և զբաղվի Կիպրոսյան հարցի լուծումով, հակառակ դեպքում անդամակցության բանակցությունները կարող են անցանկալի հետևանքներ ունենալ Թուրքիայի համար: Ամեն դեպքում ԵՄ-ին շատ ավելի ձեռնադրել է գործ ունենալ կանխատեսելի և եվրոպական արժեքներին հետևող Թուրքիայի հետ, քան նրան մերժել և մղել դեպի մահմեդականությունը ու ծայրահեղականությունը: Իրոք, ԵՄ-ին անդամակցության հարցում անհաջողությունը կհանգեցնի երկրում իսլամիստների դիրքերի ուժեղացմանը, որոնք հետզհետե կամրապնդեն իրենց քաղաքական դիրքերը Թուրքիայի աշխարհիկ զարգացման կողմնակից քաղաքական ուժերի համեմատությամբ: Հարկ է նշել, որ ներկայումս Թուրքիայում կառավարող Արդարության և զարգացման կուսակցությունը չափավոր իսլամիստական կուսակցություն է և երկու անգամ համոզիչ հաղթանակ է տարել խորհրդարանական ընտրություններում:

ԵՄ-Թուրքիա հարաբերությունների հետագա զարգացումը կնպաստի Թուրքիայի՝ որպես հարևան երկրի իրավական առումով կանխատեսելիությանը, քանի որ անդամակցության գործընթացի համատեքստում Թուրքիայի հիմնական պարտավորություններից մեկը Միության իրավական համակարգին ինտեգրումն է: Դա նշանակում է, որ այդ գործընթացի հետևողական շարունակման և արդեն ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության պարագայում կարող ենք խոսել մարդու իրավունքների և ազատությունների պատշաճ երաշխիքների առկայության, գործարար հարաբերությունների, առևտրատնտեսական հարաբերությունների ծավալման համար բարենպաստ գործարար միջավայրի ու ժամանակակից մտեցումներին համահունչ օրենսդրության առկայության, վեճերի լուծման քաղաքակիրթ և մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորող գործուն համակարգի առկայության մասին: Այս ամենը անկասկած կարևորվում է մաս Հայաստանի համար, քանի որ վերջինս ընդհանուր առմամբ իր շահարժիճն ունի իրավական և ժողովրդավարական մուսուլմանական հարևան երկրի բարեկեցության հարցում և շահագրգռել է այդ երկրում գտվող ՀՀ քաղաքացիների իրավական պաշտպանվածության առումով:

Ավելին՝ Թուրքիայի ինտեգրումը Եվրոպական միությանը ժողովրդավարական ավանդույթներից հեռու մի երկրի կողմից իր արժեքների վերաիմաստավորման և դեպի ժողովրդավարական և իրավական պետություն կերտելու ուղին բռնելուն ուղղված քաղաքական կամքի դրսևորման հրաշալի օրինակ է, որը Թուրքիան կկարողանա ցույց տալ աշխարհի բոլոր այն երկրներին, որոնք դեռևս գտնվում են ժողովրդավարական արժեքներին հարմարվելու և ազգային մտածելակերպի (մեթոդիստի) հետ դրանց բախումների հաղթահարման պայքարում: Այս առումով իրավամբ ժողովրդավար Թուրքիան ու-

սաննի կարող է լինել նաև Հայաստանի Հանրապետության համար, որի անբարյոց ձգտումներից և հետահար նպատակներից մեկը Եվրոպական միությանն ինտեգրվելն է: Միության սահմանների մերձեցումը Հայաստանի սահմաններին էլ ավելի մոտ կդարձնի Եվրոպական ժողովրդավարության շունչն ու Եվրոպական իրավական կուլտուրան Հայաստանի համար՝ նոր ուժ հաղորդելով Եվրոպական օրենսդրության հետ ՀՀ օրենսդրության մոտարման գործընթացին և ՀՀ կողմից Եվրոպական իրավունքի ոեցեպցիային:

Թուրքիայի ինտեգրումը Եվրոպական միությանը լիովին նոր մակարդակի վրա է դնում արդեն ԵՄ անդամ հանդիսացող Թուրքիայի և Հայաստան հարաբերությունները, քանի որ Հայաստանի Հանրապետությունը ԵՄ-ի հետ գտվում է սերտ փոխգործակցության մեջ: Արդյունքում այն իրավական ռեժիմը, որն արդեն հաստատվել է կամ կարող է հաստատվել ԵՄ-ի հետ Հայաստանի հարաբերություններում, անմիջականորեն գործելու է նաև Թուրքիայի համար: Արդյունքում ԵՄ-Հայաստան փոխգործակցության համատեքստում Թուրքիան ստիպված կլինի վերանայելու Հայաստանի Հանրապետության նկատմամբ տարբեր միջազգային պայմանագրերում արված վերապահումները: Այսպես, օրինակ, Թուրքիան Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) շրջանակներում օգտվել է Մարաքեշի համաձայնագրի 13 հոդվածի հնարավորությունից՝ հրաժարվելով Հայաստանի նկատմամբ կիրառել ԱՀԿ համաձայնագրերը և փաստորեն Հայաստանի հետ առևտրատնտեսական հարաբերություններում չճանաչելով ԱՀԿ բարենպաստ իրավական ռեժիմը: Ավելին՝ Թուրքիա-Հայաստան հարաբերությունների բարձր մակարդակը կնպաստի նաև Միության հետ նոր արտապայմանագրային հարաբերությունների ու փոխգործակցության հաստատմանը՝ ներառյալ իրավական օգնության, հանցագործություն կատարած անձանց հանձնման, դատական ակտերի ճանաչման ու կատարման և նույնիսկ պաշտոնական դիվանագիտական հարաբերությունների հաստատման ոլորտները:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում Թուրքիայի տնտեսությունը ենթարկվել է արժատական վերափոխումների: Այս ժամանակահատվածում երկու տնտեսական ճգնաժամեր են տեղի ունեցել՝ Թուրքիայի տնտեսության մեջ լուրջ խնդիրներ առաջացնելով: Տնտեսությունը վերականգնելու համար Թուրքիան որդեգրել է նոր տնտեսական բարեփոխումների ծրագիր, որը ներկայացվել է 2001 թ. ապրիլին: Բարեփոխումների այս ծրագիրը հիմնականում կենտրոնացած էր բանկային և ֆինանսական ոլորտների վրա: Չնայած այն հանգամանքին, որ 2005 թ. Թուրքիային տրվել է գործող շուկայական տնտեսության կարգավիճակ, տնտեսության մեջ մակրոտնտեսական անկայունուր-

յունը դեռևս շարունակվում է պահպանվել: Թուրքիայի տնտեսության այլ ակնբախ խնդիր է երկրի ներսում տնտեսական զարգացման անհամաչափությունը: Թուրքիայում տարածաշրջանային զարգացման անհավասարությունը ԵՄ-ի անդամ այլ երկրների համեմատ զգալիորեն մեծ է:

2007 թ. տվյալներով Թուրքիային բաժին էր ընկնում համաշխարհային ներմուծման մոտ 1,6% և արտահանման 1%: Ընդ որում Թուրքիայի մասնաբաժինը համաշխարհային առևտրում աճի միտում ունի: 2003-2007 թթ. ընկած ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին առևտրի ծավալը գրեթե կրկնապատկվել է՝ 2007 թ. կազմելով 277.2 մլրդ դոլար: Նման միտում առկա է նաև նաև Թուրքիայի և Եվրամիության հետ արտաքին առևտրում: Այստեղ նույնպես 2003-2007 թթ. ընկած ժամանակահատվածում արտաքին առևտրի ծավալը աճել է գրեթե երկու անգամ՝ 2007 թ. կազմելով 99.5 մլրդ եվրո: Հարկ է նշել, որ Թուրքիայի տնտեսությունը (շուկան) բավական ինտեգրված է Եվրամիությանը: Այսպես՝ 2007 թ. տվյալներով դեպի ԵՄ արտահանումը կազմել է Թուրքիայի ընդհանուր արտահանման 66.2%, իսկ ԵՄ-ից ներմուծումը՝ 37.20%: Եթե փորձենք գուգահեռներ անցկացնել Հայաստանի հետ, ապա նույն բվակայնից դեպի ԵՄ արտահանումը կազմել է Հայաստանի ընդհանուր արտահանման 48.8%, իսկ ներմուծումը՝ 29.5%: Սակայն, ի տարբերություն Հայաստանի, Թուրքիայի արտաքին առևտրը ԵՄ հետ բավական տարբերակված է: Թուրքիայի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը բավական տարբերակված է (չնայած և՛ արտահանման, և՛ ներմուծման կտրվածքով հիմնական ապրանքախմբերը համարվում են արդյունաբերական ապրանքները): Թուրքիայի արտահանման ապրանքային կառուցվածքում ավելի քան 90%, իսկ ներմուծման՝ 79% բաժին է ընկնում արդյունաբերական ապրանքներին:

ԵՄ-ի և Հայաստանի միջև արտաքին առևտրի ծավալները սկզբնական ժամանակաշրջանում (1993-1998 թթ.) զգալի զիջում էին ԱՊՀ երկրների հետ Հայաստանի արտաքին առևտրի ծավալներին, սակայն, ի տարբերություն ԱՊՀ երկրների, ԵՄ հետ արտաքին առևտրը ունեցել է գրեթե անընդհատ աճի միտում: Այսպիսով, եթե 1993-1997 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ծավալների մեծ մասը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, ապա արդեն 1998 թ. մինչև օրս ՀՀ արտաքին առևտրի անճնազիսավոր գործընկերը ԵՄ-ն է: Այստեղ հարկ է նշել, որ ԵՄ հետ Հայաստանի արտաքին առևտրի և՛ աշխարհագրական, և՛ ապրանքային կառուցվածքը, ինչպես և ՀՀ ընդհանուր արտաքին առևտրի դեպքում, խիստ կենտրոնացված է:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի արտաքին առևտուրը Թուրքիայի հետ կարելի է բնութագրել հետևյալ փուլերով. ա) 1995-1997 թթ. ընկած ժամանակաշրջան. միաժամանակ աճել են և՛ արտահանման, և՛ ներմուծման ծավալները, բ) 1998-2004 թթ. ընկած ժամանակաշրջան. արտահանման և ներմուծման ծավալները մնացել են գրեթե անփոփոխ, գ) 2005-2007 թթ. ընկած ժամանակաշրջան. արտահանման ծավալները մնացել են գրեթե անփոփոխ, իսկ ներմուծման գծով նկատվել է զգալի աշխուժություն: Դեպի Թուրքիա արտահանման ծավալների նման փոքր մակարդակը կարող է պայմանավորված լինել հետևյալ հանգամանքներով: Չճայած նրան, որ երկու երկրների միջև բացակայում են պաշտոնական հարաբերությունները, Հայաստանի կառավարությունը «ճանաչում» է արտաքին առևտուրը Թուրքիայի հետ, իսկ Թուրքիայի կառավարությունը «չի ճանաչում» արտաքին առևտուրը Հայաստանի հետ: Մյուս կողմից դեպի Թուրքիա արտահանման նման փոքր մակարդակը կարող է պայմանավորված լինել ոչ մրցունակ հայկական համապատասխան ապրանքներով: Ինչպես արդեն նշել ենք, Թուրքիայի արտահանման ապրանքային կառուցվածքի ավելի քան 90%, իսկ ներմուծման՝ 79% բաժին է ընկնում արդյունաբերական ապրանքներին, մասնավորապես՝ մեքենասարքավորումներ, տրանսպորտային սարքավորումներ, քիմիական ապրանքներ և տեքստիլ արտադրանք:

Հայաստանի արտաքին առևտրի և տնտեսական զարգացման կարևորագույն արգելք է արտահանման և ներմուծման ծախսերում տրանսպորտային ծախսերի զգալի մասնաբաժինը: Տրանսպորտային ծախսերը Հայաստանում կրկնակի զերազանցում են միջազգային միջին ծախսերը և տարածաշրջանում համարվում են ամենաբարձրը:

Կան բազմաթիվ աշխատանքներ, որտեղ քննարկվում և մեկնաբանվում է փակ սահմանի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Մեր կարծիքով կան մաս ալ կարևոր «ծախսեր», որոնք փակ սահմանի հետևանք են կամ կապված չեն սահմանի բացման հետ: Փակ սահմանն իրականում Հայաստանի և Թուրքիայի միջև կարգավորված քաղաքական հարաբերությունների բացակայության արդյունք է: Մյուս կողմից կարգավորված քաղաքական հարաբերությունները բացակայում են նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև: Մեր կարծիքով Հայաստանի և Թուրքիայի միջև կարգավորված քաղաքական հարաբերությունների զարգացումը կարող է հետագայում հիմք դառնալ Հայաստանի և Ադրբեջանի միջև քաղաքական հարաբերությունների զարգացման համար: Այստեղից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը (կոնֆլիկտը) կարող է թունկվել ապագայում՝ Հա-

յաստանը վերածվում է ռիսկային գոտու: Այսպես՝ 1999-2006 թթ. ընկած ժամանակաշրջանում Հայաստանը դասվել է աշխարհի 10 ամենառիսկային (արտաքին կոնֆլիկտ) երկրների շարքին՝ միջին առումով զբաղվելով 8-րդ տեղը³⁶⁴: Այս գործոնն իր հերթին, անկախ փակ սահմանի գործոնից (բարձր տրանսպորտային ծախսեր), իր ազդեցությունն է թողնում ՀՀ տնտեսության վրա (օրինակ ՕՈՒՆ-ի ոչ բավարար մակարդակ):

Այսպիսով՝ արտաքին կոնֆլիկտի գործոնով պայմանավորված բարձր ռիսկայնությունն իր ազդեցությունն է ունենում ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ-ի հոսքի վրա ինչպես տեղական ներդրողների, այնպես էլ օտարերկրյա ներդրողների մակարդակում, որը «ոչ մի կապ չունի» սահմանի բացման հետ: Մյուս կողմից, եթե մի պահ ենթադրենք, որ արտաքին կոնֆլիկտ վերացել է, ապա այլ հավասար պայմաններում տեղական շուկայի տարողունակությունը կարևոր գործոն է ՕՈՒՆ-ի ներգրավման համար: Սակայն հնարավոր է, որ այս գործոնի կարևորությունը մեղմանա, եթե դա փոխհատուցվի արտահանման հարաբերական փոքր ծախսերով: Փաստորեն, Թուրքիայի հետ սահմանի բացումը հետագայում պետք է միանշանակ զուգորդվի նաև Ադրբեջանի հետ արտաքին կոնֆլիկտի վերացմամբ, և միայն այս պայմաններում դա կարող է զգալի ազդեցություն ունենալ Հայաստանի տնտեսական զարգացման վրա:

ԵՄ-ի էներգետիկ անվտանգության ապահովման համար ռազմավարական նշանակություն չունեցող «Նարուկո» նախագիծը ներկայիս ձևաչափով չի կարող դառնալ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության որոշիչ գործոն: Այդուհանդերձ, Թուրքիայի աջակցությունը նախագծին կարող է որոշակիորեն նպաստել ԵՄ-ի երկրներում նրա դրական կերպարի (իմիջի) ձևավորմանը, որն էլ իր բարենպաստ ազդեցությունը կունենա անդամակցության բանակցությունների վրա:

«Նարուկո» նախագծի նշանակությունը ԵՄ-ի համար կարող է աճել միմիայն դրան Իրանի գազի պաշարների միացման դեպքում³⁶⁵, և իր ռազմավարական կարգավիճակին կարող է հասնել միայն նախատեսված հեռանկարային ձևաչափի (Կենտրոնական Ասիա, Իրան, Իրաք, ԱՄԷ, Եգիպտոս) ապահովման դեպքում: Հենց այդ դեպքում կտրուկ կաճեն Թուրքիայի մանիպուլյացիոն հնարավորությունները:

³⁶⁴ International Country Risk Guide Indicators.

³⁶⁵ Որոշ տվյալներով, Իրանի տարեկան հնարավորությունները կազմում են 80-100 մլն խմ, որը նշանակալիորեն գերազանցում է այդ զազատարի շահագործման համար անհրաժեշտ ծավալները (Эксперт: Ирано-турецкое сотрудничество реабилитирует NABUCCO и снизит роль Азербайджана - <http://www.oilru.com/news/103405>).

Այս գնահատականը բոլորովին չի նշանակում, քե եՄ-ն իր ուշադրությունից դուրս կբողնի նախագիծը: Այս խնդիրը դեռ տևական ժամանակահատված կմնա վերլուծական շրջանակների ուշադրության կենտրոնում, կօգտագործվի թուրքական և որոշ արևելաեվրոպական ղեկավար շրջանակների կողմից Ռուսաստանի հետ վիրտուալ էներգետիկ բանավեճերում³⁶⁶:

Նախագիծի իրագործումն առանց Իրանի մասնակցության կմնծացնի Կասպյան-Մեծովյան տարածաշրջանային մրցապայքարում եՄ-ի ներքաշվածության ռիսկը՝ դրանով խոցելի դարձնելով նրա անվտանգության քաղաքականությունը, մինչդեռ Իրանի մասնակցությունը կնպաստի տարածաշրջանային հավասարակշռության ապահովմանը և, հնարավոր է, եՄ-Իրան համագործակցության շնորհիվ մերձավորարևելյան մի շարք խնդիրների կարգավորմանը:

Հետաքրքրական է այս հարցում Հայաստանի պատիվ, դիտորդական վերաբերմունքը: Չպետք է բացառել այն հնարավորությունը, որ գազատարի հարցում ՀՀ կառավարության՝ ակտիվ քաղաքականություն վարելու և դիվանագիտական հմտություններ դրսևորելու դեպքում այն կարող է անցնել Հայաստանի տարածքով: Դա քաղաքական ամենատարբեր պահանջմունքների բավարարման համար նրա ձեռքում մանիպուլյացիայի կենսական միջոց կդառնա:

Հայաստանի համար իրավիճակն ավելի շահեկան կլինի, եթե նա կարողանա հասնել այն բանին, որ այդ գազատարն անցնի Լեռնային Ղարաբաղի տարածքով՝ այն դարձնելով տարածաշրջանում անվտանգության և խաղաղության ապահովման երաշխիք՝ այդ կերպ նվազեցնելով նաև Ադրբեջանի ու Հայաստանի միջև ռազմական ակտիվ գործողությունների վերսկսման հավանականությունը:

³⁶⁶ Այսպես՝ Գերմանիայի վարչապետ Ա. Մերկելին չհաջողվեց ստանալ Լեհաստանի քաղաքական աջակցությունը Բալթյան գազատարին («Հյուսիսային հոսանք»): ԵՄ-ի հետ կապերի հարցով Լեհաստանի նախարար Ն. Դովժիլևիչի պատճառաբանմամբ՝ այդ գազատարը կարող է մեծացնել Եվրոպայի կախվածությունը ռուսական գազից: Փոխարենը նա և նրա որոշ արևելաեվրոպական գործընկերներ աջակցում են «Նաբուկո» նախագիծին, որն իբր դուրս կլինի Մոսկվայի վերահսկողությունից (Financial Times Deutschland: Меркель не удалось убедить Польшу в пользу Северного Потокa - <http://www.oilru.com/news/103499>):

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐԱՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԹՈՒՐԿԻԱ — ԵՄ — ՀԱՅԱՍՏԱՆ.

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջմասնագիտական հետազոտություն

CENTRE OF EUROPEAN LAW AND INTEGRATION

TURKEY — EU — ARMENIA:
OPPORTUNITIES AND CHALLENGES

INTERDISCIPLINARY RESEARCH

Զևակորումը՝ Ա. Պետրոսյան